ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

7

ИНОЯЗЫЧНЫЕ ИСТОЧНИКИ
ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ТУРЕЦКИЕ ИСТОЧНИКИ

IV

ПЕРЕВОД С ОРИГИНАЛА

А. Х. САФРАСТЯНА
и
Г. О. САНТУРДЖЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1972

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Դ

II / 49063

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԳՐԻՑ

Ա. Խ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻ
ԵՎ
Գ. Հ. ՍԱՆԹՈՒՐՋՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1972

9 (C 43) + 9 П (թուրք.)
Թ 98

ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ Ս. ԵՐԵՄՅԱՆ (գլխավոր խմբագիր), ակադեմիկոս Ա. ՂԱՐԻԲՅԱՆ, ակադեմիկոս Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, Հ. ԻՆՃԻԿՅԱՆ, Գ. ՍԱՐԳՍՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ), Հ. ՓԱՓԱԶՅԱՆ, Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ (գիտական քարտուղար)։

«Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» սույն մատենաշարի առաջին երեք հատորները հրապարակվել են համապատասխան համարների տակ. դրանք են.

1. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին։ Թարգմանություն թուրքերեն բնագրից, ներածությունով, ծանոթագրություններով, տերմինաբանական բառարանով և հավելվածով, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հատոր Ա., Երևան, 1961։

2. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին։ Թարգմանություն թուրքերեն բնագրից, ներածական ակնարկով, ծանոթագրություններով և հավելվածով, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հատոր Բ., Երևան, 1964։

3. Թուրքական աղբյուրներ. Էվլիյա Չելեբի, գիրք Գ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Խ. Սաֆրաստյանի, Երևան, 1967։

4. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին. կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965։

5. Բյուզանդական աղբյուրներ, գիրք Ա., Պրոկոպիոս Կեսարացի։ Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի։

6. Բյուզանդական աղբյուրներ. գիրք Բ., Կոստանդին Ծիրանածին։ Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970։

1—6—1

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

«Թուրքական աղբյուրները» գրքի չորրորդ հատորը ընդգրկում է XIX դարի երկրորդ կեսի և XX դարի առաջին տասնամյակի թուրք տարեգիրների և պատմաբանների աշխատություններից քաղվածաբար թարգմանված նյութեր Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին։

Ներկա ժողովածուով ավարտվում է թուրքական աղբյուրների սույն մատենաշարը[1]*։*

Այս չորս հատորներում ընդգրկվել են թուրքական այն տարեգիր-պատմաբանների երկերը, որոնք առավել հավաստի են և ունեն որոշակի կարևորություն։ Ուշադրության արժանացած հեղինակները իրենց երկերում շարադրելով այդ դարերի Թուրքիայի քաղաքական իրավիճակը, միաժամանակ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում Հայաստանի և հարևան երկրների ժողովուրդների պատմության, պատմական աշխարհագրության, սոցիալ-տնտեսական կյանքի լուսաբանման և այլ հարցերի վերաբերյալ։

Ինչ խոսք, որ այս մատենաշարում ընդգրկված տարեգիր-պատմաբաններից բացի կան նաև մի շարք տարեգիրներ և պատմագիրներ (այդ թվում Խալիլ Նուրի էֆ., Մյութերջիմ Ասըմ էֆ., Հյուսեյնը, Մեհմեդ Հեմդեմին, Այնի Ալի էֆ., Հասան բեյ զադեն, Քարաչելեբի զադե Աբդուլ Ազիզը, Ֆընդըկլըլը Մեհմեդը և ուրիշներ), որոնք այս կամ այն առիթով, թեկուզ հարևանցիորեն, անդրադարձել են Անդրկովկասում տեղի ունեցած պատմական դեպքերին։

---

1 Նախորդ հատորները տե՛ս Ա. Խ. Սաֆրաստյան, *Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա., Երևան, 1961, հ. Բ., 1964։* Ա. Խ. Սաֆրաստյան, *Թուրքական աղբյուրներ, հ. Գ, Էվլիյա Չելեբի, Երևան, 1967։*

ի տարբերություն նախորդ հրատարակությունների, ներկա՝ չորրորդ հատորում, սլետական պաշտոնական տարեգիրներից բացի, ընդգրկված են նաև նոր շրջանի թուրքական բուրժուական պատմագրության ներկայացուցիչները։ Դա կատարված է լոկ այն պատճառով, որ Աբդուրահման Շերեֆը 1909 թ. տարեգրի պաշտոնին նշանակվելով, չի զբաղվել տարեգրությամբ, այլ գրել է Օսմանյան կայսրության պատմությունը սկզբից մինչև XIX դարի վերջը՝ 2 հատորով։ Բացի այդ, ժողովածուն կազմողները, նկատի ունենալով ժամանակաշրջանի հույժ կարևոր քաղաքական իրադարձությունները՝ ինչպես թանզիմաթի շրջանը, սահմանադրության հաստատումը, ազգային-ազատագրական լայն շարժումների ալիքը թուրքական բռնապետության դեմ և այլն, որոշ առումով դուրս են եկել խորագրի սահմաններից և թարգմանաբար ընթերցողին ներկայացրել են նաև այնպիսի նյութեր, որոնք վերաբերում են Թուրքիայի ներքին կառուցվածքին և Օսմանյան կայսրության արևելյան շրջաններում, ինչպես նաև Բալկաններում, ծավալված իրադարձություններին, որոնք, անկասկած, առնչվում են նաև հպատակ մյուս ժողովուրդների ճակատագրի հետ։

Այս տեսակետից, հայ ընթերցողին, անտարակույս, կհետաքրքրի ծագած կնճռոտ հարցերին տվյալ ժամանակաշրջանում թուրք պատմաբանների տված գնահատականներն ու մեկնաբանությունները (դրական թե բացասական)։

Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում XIX դարի վերջին և XX դարի սկզբին թուրքական կառավարության կողմից հրապարակված օրենքներն ու փաստաթղթերը (հրամանագրերը), որոնց մի ստվար մասը անմիջականորեն առնչվում է ոչ միայն հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների, այլ ընդհանրապես Օսմանյան կայսրության շրջանակներում ապրող ազգային փոքրամասնությունների հետ։ Այս կապակցությամբ Արևելագիտության ինստիտուտը մտադիր է մոտակա տարիներին լույս ընծայել նաև օսմանյան օրենսդրական ակտերը և փաստաթղթերը, որոնք ցույց կտան ազգային փոքրամասնությունների իրավա-քաղաքական վիճակի պարզ պատկերը։

* * *

Ներկա ժողովածուում օգտագործված են հետևյալ հեղինակների աշխատությունները.

Ահմեդ Լուտֆին (1815—1907) Օսմանյան կայսրության 28-րդ տարեգիրն է։ Նրա ութ հատորանոց «Պատմությունը» («Թա-

րիխ-ի Լութֆի») ընդգրկում է Օսմանյան կայսրության պատմությունը 1825 թվականից մինչև 1872 թվականն ընկած ժամանակաշրջանը։

Աբդուրահման Շերեֆը *(1853—1925)* եղել է օսմանյան տարեգրության վերջին ներկայացուցիչը։ Նրա «Օսմանյան կայսրության պատմությունը» ընդգրկում է Թուրքիայի պատմությունը՝ սկզբից մինչև XIX դարի վերջն ընկած ժամանակաշրջանը։

Մեհմեդ Քյամիլ փաշան *(1832—1912)* եղել է բարձրաստիճան պետական գործիչ՝ սադրազամ և դիվանագետ։ Գրել է «Օսմանյան պետության քաղաքական պատմությունը», որը ընդգրկում է Թուրքիայի պատմությունը՝ սկզբից մինչև սուլթան Աբդուլ Մեջիդի իշխանության վերջը (1861)։

Օսման Նուրին *(1875—1909)* «Աբդուլ Համիդ երկրորդը և նրա իշխանության շրջանը» 3 հատորանոց աշխատությունն ընդգրկում է Օսմանյան կայսրության պատմությունը 1876 թ. մինչև 1909 թ.։

Թարգմանված որոշ նյութերի տարեթվերը տրված են հիջրեթի թվականով, իսկ փակագծերում՝ մեր համապատասխան թվականները։

Ժողովածուն ունի համառոտ կենսագրական տեղեկություններ հեղինակների մասին, ծանոթագրություններ, թաքրիրների ֆաքսիմիլեներ՝ իրենց թարգմանություններով, անձնանունների և տեղանունների ցանկեր։

* * *

Հանգուցյալ Արամ Խաչատուրի Սաֆրաստյանի ձեռնարկած թուրքական աղբյուրների սույն մատենաշարի երեք հատորների նյութերը վերաբերում են XVI—XIX դարերի իրադարձություններին։ Դժբախտաբար նրան չհաջողվեց ավարտել աշխատության չորրորդ հատորը։ Կիսատ մնացած աշխատանքը բովանդակում է Ահմեդ Լութֆիի, Աբդուրահման Շերեֆի և Քյամիլ փաշայի աշխատություններից քաղվածաբար բերված թարգմանությունները։ Սույն հատորը լրացրել և հրատարակության է պատրաստել հանգուցյալ Գ. Հ. Սանթուրջյանը։ Բացի տեքստի քննական ստուգումից և բնագրի հետ համեմատությունից, նա Օսման Նուրիի գրքից թարգմանել է առանձին հատվածներ, ինչպես նաև հավելվածներում բերված մի քանի վավերագրեր։

ԱՀՄԵԴ ԼՈՒԹՖԻ

Տարեգիր Հաֆըզ Ահմեդ Լութֆին ծնվել է Ստամբուլում 1231 (1815) թվականին, արհեստավորի ընտանիքում։ Սկզբում սովորել է թաղային դպրոցում, ապա մտել է «Հենդեսե խանե», որը այն ժամանակ զինվորական դպրոց էր։ Կարճ ժամանակ հետո իր հորեղբորորդի Հյուսեին փաշայի մեդրեսեում սովորել է իբրև մենաստանավոր։ Իր ընդունակությունների շնորհիվ մեդրեսեում տիրապետում է արաբական գիտություններին և պարսկերեն լեզվին։

Ավարտելով ուսումը մեդրեսեում, 1247 (1831) թվականին սկսում է աշխատել տարբեր կրթական հաստատություններում իբրև դասատու, հետո Վիդինի և Նիշի շրջաններում ծառայում է իբրև թարգման։ Վերադառնալով Ստամբուլ, ծառայել է սադրազամության գրասենյակներում։ Այնուհետև աշխատել է «թաքվիմխանեում» (տպարան) և բժշկական դպրոցում՝ իբրև թուրքերեն լեզվի դասատու։ 1281 (1864) թվականին նշանակվել է «Թաքվիմ-ի վեքայի»-ի խմբագիր, նույն թվականին ստացել է տարեգրի (վաքաա-նյուվիս) պաշտոնը։

Ահմեդ Լութֆին ծառայել է նաև պետական բարձր պաշտոններում. եղել է պետական խորհրդի[1] անդամ, Ռումելիի կազասքեր[2] Ամեդի[3] դիվանում հարաբերական դիվանապետ և այլն։

Իր կյանքի վերջին տարիներին Ահմեդ Լութֆին Բոսֆորի իր ապարանքում զբաղվել է օսմանյան պետության պատմությունը գրելով։ Ունի նաև այլ գիտական աշխատություններ և թարգմանություններ։

Մեռել է 1325 (1907) թվականին, 93 տարեկան հասակում։

Լութֆին Օսմանյան կայսրության քսանութերորդ տարեգիրն է։ «Թարիխ-ի Լութֆի» խորագիրը կրող իր ութ հատորանոց պատմությունով և այդ գրքի ընդգրկած ժամանակի իրադարձությունների կարևորությամբ Լութֆին կարևոր տեղ է գրավում Թուրքիայի տարեգիրների շարքում։

Լութֆիի տարեգրությունը սկսվում է 1241 (1825) թվականից և շարունակվում է մինչև 1280 (1876) թվականը։ Լութֆին փաստորեն շարունակում է տարեգիր Ջևդեթ փաշայի տարեգրությունը։

«ԹԱՐԻԽ-Ի ԼՈՒԹՖԻ»

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Տարեգիրը գրքի առաջաբանում խոսում է պատմության նշանակության մասին։ Հետո խոսում է նաև օսմանյան պետության մեջ «Շահնամե» գրող հայտնի

պատմագիրների մասին, որոնք պատմությունը գրում էին ոտանավորով։ Դրանցից հիշում է Ֆեթուլլահ էֆենդիին, որը սուլթան Սուլեյման Կանունիի «սրբազան պատերազմների» մասին գրել է թուրքերեն և պարսկերեն լեզուներով պատմություններ։ Ապա հիշում է շահնամեխան Լոկմանին, Քյաթիբ Մեհմեդին, Հյուքմի էֆենդիին և ուրիշներին։ Ինչպես նշում է տարեգիրը, վերոհիշյալ «շահնամե» գրողների գործերը չեն պահպանվել։

Տարեգիր Լութֆի էֆենդին այնուհետև թվում է օսմանյան պետության տարեգիրներին սկսած Իշանջի վեզիր Աբդուրրահման փաշայից, որը տարեգիր է նշանակվել 1074 (1663) թվականից։ Այդ թվականից էլ սկսվում է պետական պաշտոնական տարեգրությունը և գրեթե առանց ընդմիջման շարունակվում է մինչև XIX դարի վերջը՝ Լութֆի էֆենդիին հաջորդած Աբդուրահման Շերեֆը։ Լութֆի էֆենդին հիշում է թվով 28 տարեգիրներ, տալով նրանց մասին համառոտ տեղեկություններ։

1241 (1825) թվականի դեպքերից

Իր պատմության առաջին հատորում Լութֆին մոտ հարյուր էջ նվիրել է Մորեայի (Հունաստան) ապստամբության հետ կապված դեպքերին, մանրամասն նկարագրել է պատերազմական գործողությունները, դիվանագիտական բանակցությունները և այլն։ Այս մասում կարևոր տեղ է հատկացրել նաև այսպես կոչված «բարեբաստիկ դեպքին», այսինքն՝ ենիչերիական բանակի (օջախի) լիկվիդացման հետ կապված իրադարձություններին։

ԼՈՒՐԵՐ ՉԵՐՔԵԶՍՏԱՆԻՑ

Այդ ժամանակ [1241 թվականին] չերքեզական ցեղերի մի քանի պարագլուխներ գալով Տրապիզոն, վալիին ներկայացրած գրությամբ պատմում են ռուսների («ռուսյալու») կատարած բռնությունների մասին, հայտնում, որ եթե սրանից հետո իրենց օգնություն ցույց չտրվի, կարճ ժամանակում բոլորը [չերքեզները] կոչնչանան։ Նրանք խնդրում են, որ իրենց նշած բազմաթիվ վայրերում փալանդաներ[1], բերդեր և ամրություններ կառուցվեն, թընդանոթներ և ռազմամթերք ուղարկվեն և Չերքեզստանի կառավարության համար կանոնագիրք կազմվի։ Նրանք ներկայացնում են վերջին 50—60 տարիների ընթացքում կրած վնասների ցուցակը։

Տրապիզոնի վալին հաղորդում է, որ չերքեզների խնդրանքով նրանք նավով Ստամբուլ են ուղարկվել։ Սակայն այստեղ որոշ ժամանակ սպասելուց հետո, իրենց պահանջները բավարարող պատասխան չստանալով, չերքեզները հուսալքված վերադարձել են։

Ռուսների հետ հարաբերությունները չփչացնելու համար [օսմանյան կառավարությունը] չի հարգել չերքեզների խնդրանքը։

(Հատ. I, էջ 125)

1242 (1829) թվականի դեպքերից

ԼՈՒՐԵՐ ԷՐԶՐՈՒՄԻՑ

«Բարեբաստիկ դեպքի» կապակցությամբ ձեռնարկված բոլոր միջոցառումները մանրամասնորեն հայտնվել են փադիշահական բովանդակ երկրին։

Էրզրում ուղարկված հրամանագրի համաձայն ենիչերիության վերաբերյալ բոլոր նշաններն ու շինությունները ոչնչացվել էին։ Քանի որ Էրզրումը և նրա շրջակայքի մեծ մասը ենիչերիների որջեր էին, նկատի առնվեց, որ հարցի անմիջական և ուղղակի ծանուցումը կարող է որոշ հուզումների պատճառ հանդիսանալ։ Սակայն Էրզրումի վալի, նախկին սադրազամ Ղալիբ փաշայի հեռատեսության և ուշիմության, ինչպես նաև տեղական օջախների սպաների խոհեմության և օրինապահության շնորհիվ փադիշահական հրամանագիրը հաջողությամբ գործադրվեց և Էրզրումում ձեռնամուխ եղան անհրաժեշտ քանակությամբ կանոնավոր զորքերի «նոր կարգով» զինվորագրմանը։ Վերոհիշյալ սպաներին բավարարելու համար Ղալիբ փաշան խնդրեց, որ նրանց կափուջիբաշիության և հրացանակրության (սիլահշորության, թյուֆենքչիության)[2] աստիճաններով խալաթներ շնորհվեն։ Ղալիբ փաշայից ստացված գրության համաձայն, նրա այդ խնդրանքը բավարարվեց։

(Հատ. I, էջ 171—172)

Լութֆի էֆենդին մանրամասնորեն խոսում է նաև Սվազում և Թոքաթում ենիչերիական մնացորդները ոչնչացնելու գործում տեղական իշխանությունների թույլ տված կամայականությունների մասին, որոնց հետևանքով սպանվել են հարյուրավոր մարդիկ։ Ինչպես նշում է տարեգիրը, նման դեպքերում տեղական ղեկավարների անհատական հաշիվների, որոշ մարդկանց նկատմամբ նրանց ունեցած լավ կամ վատ տրամադրության հետևանքով թույլ են տրվել անիրավություններ և ապօրինություններ։ Իբրև օրինակ հիշում է Այնթաբում տեղի ունեցած բազմաթիվ սպանությունները։ Այս կապակցությամբ հետաքրքիր է տարեգրի արձանագրած «Լուրեր Կեսարիայից» վերնագրով հատվածը, որտեղ նշում է, որ «վիլայեթներում ենիչերիական օջախի մնացորդները ոչնչացնելու գործում Կեսարիայի վալի Հաֆըզ Ալի փաշան նույնպես գործել է մեծ ջանասիրությամբ»։ Այս առթիվ տարեգիրը մեջ է բերում սուլթանի հետևյալ գրությունը, որ նա ուղարկել է Բարձրագույն Դուռը։

«Իմ կայսերականությանը հայտնի է Հաֆըզ Ալի փաշայի թըշնամական վերաբերմունքը [ենիչերիների] մնացորդների նկատմամբ։ Հայտնի է նաև, որ նա «աղքատ ժողովրդի» նկատմամբ և»

անդուլթ է։ Այս բանը պատրվակ համարելով ինձ ներկայացնելիք քո դրության մեջ դու պետք է ցույց տաս [Հաֆըզ Ալի փաշայի] կատարած բռնությունները և հարստահարությունները։ Խոսվում է նաև Նուրի փաշայի բազմաթիվ բռնությունների մասին։ Թեև ներկայումս բազմաթիվ գործեր կան, սակայն անհրաժեշտ է մտածել մեր Օսմանյան երկրի աղքատների[3] վիճակի մասին։ Այդ պատճառով դու պետք է միշտ ջանադիր և հոգատար լինես նրանց դրությունը ստուգելու գործում»։

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Կառավարությունը տեղեկացել է, որ հակառակ ընդունված կարգի և սովորությունների, տարբեր անուններով և պատրվակներով, աղքատ ժողովրդից փող են կորզում։ Քանի որ նման արարքները իրավապես և օրենքով արգելված են, հանցավորներին պատժելու սպառնալիքով, բովանդակ Օսմանյան երկրին ուղարկվեցին հրամանագրեր, որոնցով հրամայվում էր, որ անհրաժեշտ է ամենուրեք պահպանել ժողովրդի ապահովությունը և ոչ ոքից ոչինչ չառնել ապօրինի կերպով։

(Հատ. I, էջ 220)

ՉԵՐՔԵԶ ՑԵՂԻ ՄԱՍԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԼԱՎ ԿԱՆՈՆՆԵՐ

Աբաղա և չերքեզ ցեղերը մինչև վերջին ժամանակներս զուրկ են եղել իսլամության փառքից։ Ֆերեհ Ալի փաշայի ջանքերով այդ ցեղերի մեջ տարածվեց և փայլեց իսլամի լույսը։ Սակայն վայրենի բարքերի պատճառով նա չկարողացավ ըստ արժանվույն կրթել նրանց։ Նրանցից շատերը պատկանում են «շասի» կոչված կռապաշտական հավատքին[4] և զբաղվում են գողությամբ ու ասպատակությամբ։ Նրանք կողոպտում են Անապայի ծովեզերքը ժամանող նավերը և դրանով խաթարում այդ շրջանի ապահովությունը։

Տրապիզոնի վալի Չիչեն-զադե Հասան փաշան, կառավարությանը հայտնելով այդ մասին, նրանց պատճառած վնասների առաջքն առնելու համար անհրաժեշտ է համարում Անապա եկող առևտրական նավերին ծանուցել, որ նրանք առանց ուղեցույց (կլավուզ) և պահապան վերցնելու տեղերից չշարժվեն։ Այդ մասին Ստամբուլի նավահանգստի [վարչության] կողմից տեղեկություն տրվեց նավապետներին։

Քանի որ փադիշահի համբավին վայել չէր վերոհիշյալ ցեղերին թողնել այդպիսի մոլորյալ վիճակի մեջ, վեքիլների ժողովում

քննության դրվեց նրանց ուղիղ ճանապարհի բերելու հարցը և, նկատի առնելով, որ մուսուլման լինելու ցանկություն ունեցողներն էլ տգիտության պատճառով հետզհետե նմանվելու են մյուսներին [ոչ մուսուլմաններին], որոշվեց, որ Հասան փաշան անձամբ գնա Անասյա և ցեղապետերին իր մոտ կանչելով, նվիրական շարիաթի և մուսուլմանների իմամի անունից նրանց պատվերներ ու խրատներ տա և անհրաժեշտ միջոցներ գործադրի...

Վերոհիշյալ ճիշտ և նպատակահարմար միջոցառումների հետևանքով հիշյալ ցեղերը սկսեցին նորից արժանանալ իսլամի շնորհներին։ Տրապիզոնի վալիին և մաքսատան պաշտոնյաներին ծանուցվեց, որ չի թույլատրվում Շեյխ-ուլ-իսլամին դիմելով, իսլամական կրոնը ընդունողներին գերի դարձնել, նրանց գնել ու վաճառել և առանց նիքյահի (իսլամական օրենքով ամուսնական ակտ) իբրև հարճ պահել։ Սրանից հետո բերված գերիներից վաճառել թույլատրվում է միայն այնպիսիներին, որոնք իրենց արտաքինով և բարքով կարող են վաճառքի հանվել, իսկ իսլամի շնորհին արժանացածների առուծախը արգելված լինելու հարցին պետք է առանձին ուշադրություն դարձնել։

Որոշ ժամանակ անց վերոհիշյալ ցեղերի նկատմամբ պետության ցուցաբերած այս նախաձեռնության մասին Ստամբուլի ռուսական դեսպանը պաշտոնական թաքրիրով գանգատ ներկայացրեց, հայտնելով, որ Տրապիզոնի վալին փոխում է ցեղերի հնագույն կարգը և ստիպում է օսմանյան պետությանը հպատակության երդում տալ, նրանց կրոնական գործերը հանձնել է Ստամբուլից ուղարկված կադիներին, հարկադրում է զինվորական և հրետանային վարժություններ կատարել, նավերին չի թույլատրում մոտենալ չերքեզական ծովեզերքին, մի բան, որ հակասում է առևտրական պայմանագրին։

Այդ մասին Տրապիզոնի վալիից տեղեկություն պահանջվեց և դեսպանին պատասխան տրվեց...

(Հատ. I, էջ 221—223)

ՄՈՒՇԻ ՄՈՒԹԱՍԱՐՐԻՖ ՍԵԼԻՄ ՓԱՇԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Քանի որ Էրզրումի էյալեթին ենթակա Մուշի սանջաքի մութասարրիֆ Սելիմ փաշան պետությանը հակառակ գործեր էր կատարում, անհրաժեշտ համարվեց նրան զսպել՝ և էյալեթի կենտրոնից զինվորական ուժեր ուղարկվեցին նրա դեմ, իսկ Սելիմ փաշան

անկարող լինելով դիմադրություն ցույց տալ, փախավ և ապաստանեց աշիրեթների շրջանում։ Այդ շրջանի ազնվականներից Ախլաթի Ահմեդ բեյը միրմիրանության աստիճանով մութասարրիֆ նշանակվեց, այդ մասին ստացվեց նաև էրզրումի վալիի համաձայնությունը։ Մուշի խռովության այսպիսի բարեհաջող ելքի և, մասնավորապես, էրզրումում ենիչերիների հարցի նման հեշտ լուծման գործում գնահատելով էրզրումի վալի, նախկին սադրազամ Ղալիբ փաշայի մատուցած ծառայությունները, նրան շնորհվեց 200 հազար ղուրուշ փադիշահական նվեր և էրզրումի մաքսատնից ամսական 12,500 ղուրուշ ռոճիկը բարձրացվեց 25.000 ղուրուշի։ Հրամաններ ուղարկվեցին Ադանայի, Հալեպի, Շամի, Սեյդայի, Դիարբեքիրի և Եգիպտոսի վալիներին, որ Սելիմ փաշային ձեռք գցելու դեպքում վերջ տան նրա կյանքին, իսկ նրա գլուխը ուղարկելու համար կարժանանան բարձր շնորհների...

(Հատ. I, էջ 241—242)

1242 (1826—1827) թվականի դեպքերը

ՍԱՐՐԱՖ ԹԸՆԳԸՐ-ՕՂԼՈՒ ՀԱԿՈԲԻ և ՀՈՎՍԵՓԻ ԱՔՍՈՐԸ

Վերոհիշյալ սեղանավոր Հակոբը և Հովսեփը, լինելով կաթոլիկ հասարակությունից, օսմանյան կառավարության շնորհիվ մեծ քանակությամբ փող էին վաստակել և բազմապիսի շահեր ձեռք բերել։ Սակայն ծառայելով իրենց դավանակից էֆրենջիին [ֆրանսիացիներին], Օսմանյան երկրին և կրոնին բազմատեսակ վնասներ էին պատճառել։ Իբրև սարրաֆ իրենց շահերը ապահովելու համար օգտագործելով իրենց ամբողջ հմտությունն ու բոլոր միջոցները, ագահությամբ ձեռք բերած ոսկիներով շլացրել էին մի շարք պարզամիտների և, դասվելով ազնվատոհմերի շարքը, մըշտապես զբաղվում էին օսմանյան պետության դրությունը հետախուզելով և գաղտնաբար հավաքած լուրերը որոշ ագահ մարդկանց միջոցով ուղարկում էին օտարներին։ Երբ արթնամիտ փադիշահին հայտնի դարձան պետական հարստությանը և քաղաքացիական գործերին պատճառած նրանց բազմաթիվ վնասները, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար տեղի ունեցած խորհրդակցությունից հետո թեև անհրաժեշտ համարվեց սպանել վերոհիշյալներին, սակայն այս անգամ սպանության հարցը մեկ կողմ թողնվեց և որոշվեց այդ հայերին իրենց ընտանիքների հետ միասին աքսորել Ստամբուլից, պայմանով, որ նրանք այլևս ոտք չկոխեն այդ քաղա-

քը, իսկ նրանց առևտրական գործերի համար Ստամբուլում թողնել մեկական քարտուղար և մի քանի ծառայողներ։ Այդ մասին տրվեց փադիշահական հրամանագիր, որի համաձայն հիշյալ Հակոբը աքսորվեց Սվազ, իսկ Հովսեփը՝ Կեսարիա։

Այս կաթոլիկական հարցի հիմնական պատճառների և որոշման մասին չկարողացա ձեռք բերել պաշտոնական փաստաթղթեր, ուստի ես հանցավոր չեմ, եթե չկարողացա իրականությունը գրի առնել։ Այնուամենայնիվ ինձ հաջողվեց որոշ բանավոր տեղեկություններ հավաքել դրսից...

* * *

...Փողերանոցի (ղարբհանեի) պետը՝ սալոնիկցի Աբդուրրահման բեյը մահվան է դատապարտվում և կաթոլիկ Դյուզ-օղլիների[6] ոտքը կտրվում է փողերանոցից։ Դրանից հետո հայ երևելիներից Ղազազ Արթինը ձեռք է բերում փողերանոցի պետի և սուլթանի սարրաֆության պաշտոնը։ Ղազազ Արթինը արտաքուստ պետությանը հավատարմություն ցույց տալով, թե իր դավանանքին ծառայելու և թե Դյուզ-օղլի ընտանիքին հեռու պահելու նպատակով, մեծ ջանքեր գործ դրեց այդ ժամանակ Օսմանյան երկրում կաթոլիկական դավանանքը ընդունած հայերին իր կողմ գրավելու համար։ Այսպիսով, Օսմանյան պետության ռայաներից որոշ հայեր, թողնելով ռայաներին հատուկ իրենց կենցաղը, ընդունեցին ֆրենգի դավանանքը։ Քանի որ այդպիսի մարդկանց թվի ավելացումը վտանգավոր համարվեց օսմանյան կառավարության համար, պետությունը անհրաժեշտ գտավ նրանց իրենց ընտանիքներով Ստամբուլից արտաքսել։ Նրանցից շատերը անկարացիներ էին։ Նշանավոր Թընգըր ղադեները և ուրիշներ հատուկ ֆերմանով ուղարկվեցին իրենց ծննդավայրերը։ Օտար վարդապետներից 50—60 մարդ նավերով արտաքսվեցին դեպի Միջերկրական ծովը։ Արգելվեց արտաքսվածների վերադարձը։ Որոշվեց հայկական թաղամասերից դուրս նրանց ունեցած տները վաճառել, որի համար նշանակվեց հատուկ պաշտոնյա։ Էսադ էֆենդիի հաղորդած տեղեկությունների համաձայն, Անատոլիայի տարբեր կողմերն էին աքսորվել 1800 հայ կաթոլիկներ։ Սակայն հայոց պատրիարք Կարապետ վարդապետի կողմից Բարձրագույն Դռանը ներկայացված ցուցակում աքսորված տղամարդկանց թիվը ցույց է տրված 2445 մարդ...

Տարեգիրը ասում է, որ այս հատորի նյութերը մեքենագրելուց հետո, հայ կաթոլիկների հարցի մասին որոշ պաշտոնական գրություններում տեսել է նոր մանրամասնություններ։

...Ինչպես հայտնի է, հունական հարցի քննարկման ժամանակ երեք պետությունների դեսպանները թուրքական դեսպանի հետ միասին գնացել էին դեպի Միջերկրական ծովը։ Ստամբուլի մաքրումը ապահովելու համար նպատակահարմար էր համարվել արտաքսել որոշ թափառական տարրերի, այդ թվում նաև վերջին ժամանակներս ֆրանսիական դավանանքին հարած և արագորեն ավելացող հայ կաթոլիկներին և հույն խռովարարներին։ Այդ կապակցությամբ ձեռնարկվեցին որոշ միջոցառումներ։ Ղալաթայի և Բերայի (Բեյօղլի[7]) թափառաշրջիկ ֆրենգների արտաքսումը հանձնարարվեց ծովակալ Իզզեթ Մեհմեդ փաշային։ Արտաքսվողների թվում կային արհեստավորներ և առևտրականներ։

Այդ ժամանակ որոշ նկատառումներով անհրաժեշտ համարվեց հայ կաթոլիկ սարրաֆներից ևս որոշ մարդկանց արտաքսել։ Արտաքսվող սարրաֆների փոխարեն երևան պիտի գան ձրիաբար (բաղհավա) դրամ շահող նոր սարրաֆներ։ Նկատի առնելով, որ Ստամբուլում հազարից ավելի հայ սարրաֆներ կան, նպատակահարմար համարվեց նրանց բոլորին արտաքսելու և հին դավանանքին վերադարձնելու հարցը համաձայնեցնել հայոց պատրիարքարանի հետ։ Անհրաժեշտ համարվեց նախապես կանչել պատրիարք Կարապետ վարդապետին և նրա հետ խորհրդակցելուց հետո պարզել հետևյալ հարցերը. մարդահամարի ժամանակ պատրիարքի կազմած նոր գաղտնի ցուցակով Ստամբուլում ցույց տրված հազարից ավելի հայ կաթոլիկներից խռովության պատճառ հանդիսացող մոտ հարյուր վարդապետների աքսորի հարցը, բնակավայրը և ինքնությունը անհայտ անձանց մեկ օրում հավաքելով նավերով դեպի Միջերկրական ծովը աքսորելու հարցը, պատրիարքարանի կողմից մերժված քաղաքացիների և այլ տարրերի աքսորի հարցը, գավառների կաթոլիկ վարդապետներին երկրից արտաքսելու, իսկ վղջացողներին Սկյութարի և Ստամբուլի հայկական թաղամասերում ապրել թույլատրելու հարցը, պայմանով, որ նրանք այսուհետև կապ չպահպանեն Ղալաթայի և Բերայի ֆրենգների հետ և այլն։

Այս հարցերի շուրջը տեղի ունեցած խորհրդակցությունից հետո հայոց պատրիարքը այն կարծիքը հայտնեց, որ նախապես

պետք է աքսորել վարդապետներին, իսկ մյուսների նկատմամբ նախկինում ընդունված պայմանները պահել ուժի մեջ։ Այս միջոցառումը չէր ապահովում հիմնական նպատակը՝ Ստամբուլի մաքրման գործը, և թեպետ բոլորի արտաքսումը ցանկալի չէր, այնուամենայնիվ նպատակահարմար համարվեց նախ արտաքսել ամենից ավելի խռովարար դավաճաններին, իսկ մնացածների նկատմամբ կիրառել երկրորդ և երրորդ կետերը։

Դրանից հետո հայոց պատրիարքի ներկայացրած ցուցակում նշված երևելի սարրաֆներից 8 անձի և 35 արհեստավորների աքսորման մասին թույլտվություն խնդրվեց, աքսորվելիք սարրաֆների հաշիվները հանձնվեցին փողերանոցի և մուքաթաայի[8] վարչություններին, որպեսզի նրանց նկատմամբ անարդարություններ տեղի չունենան։

Այս մասին գրված հրովարտակով փադիշահը հրամայում էր այդ հարցը նորից քննել ներկայիս և նախկին պատրիարքի (որին փադիշահը համարում էր խելացի անձնավորություն) մասնակցությամբ և արդյունքի մասին զեկուցել իրեն։ Այդպես էլ արվում է։ Խորհրդակցությունը նպատակահարմար է գտնում պատրիարքարանին հրաման տալ՝ իրենց բնակարաններում կաթոլիկ վարդապետներ պահող հայտնի սարրաֆներին պատրիարքարան կանչել և նրանց առաջարկել այդ վարդապետներին 10—15 օրվա ընթացքում հանձնել պատրիարքին, հանձնված վարդապետներին ֆրանսիական նավերով արտաքսել Օսմանյան երկրից, անկարացի և մյուս հայտնի խռովարարների մի մասին աքսորել անմիջապես, մնացածների մասին կազմել ցուցակներ՝ կաթոլիկական դավանանքից հրաժարվողների համար առանձին, չհրաժարվողների համար առանձին, իսկ ցուցակներից դուրս մնացածների նկատմամբ ձեռք առնել առանձին միջոցներ։ Անմիջապես աքսորման ենթակա վարդապետների հարցը նորից խորհրդակցության դնելու համար առաջարկվեց, որ ներկայանան երեք՝ այժմյան, նախորդ և նախկին պատրիարքները միասին։ Նրանք իրենց միտքը արտահայտեցին այսպես. կաթոլիկ վարդապետներին փոխանակ դավանանքի անվան տակ աքսորելու, ավելի հարմար կլինի մեկ այլ պատրվակով հրամայել, որ 12 օրվա ընթացքում վերադառնան իրենց վիլայեթները։ Նախքան այդ, որպեսզի սպառնալիքը ունենա իր արդյունքը, իրենց ծննդավայրերն ուղարկվեց անկարացի բուն խռովարարներից 8 սարրաֆ, այսինքն՝ Թընգըր ղադեներից բացի. Կալչի-օղլու Գրիգորը, Դավիդ-օղլու Հովսեփը, Սարի Սիմոն-օղլու

Հովսեփը, Միրզա-օղլու Գրիգորը, էթեյի Ուզուն-օղլու Պողոսը, Նարին-օղլու Աբրահամը, Ջերդոս-օղլու Գևորգը, Ռաքայա-Խանըմ Վիչենը, դեղագործ Գևորգը, Հեքիմ Մանեյը և 13 այլ երևելիներ։

Պատրիարքի ներկայացրած ցուցակի համաձայն՝ նախ վարդապետների հետ միասին իրենց ծննդավայրերն ուղարկվեցին Թրնդըրների նման անձինք, պայմանով, որ նրանք նշանակեն իրենց գործակատարները և Ստամբուլ չվերադառնան, այնուհետև արտաքսվեցին օտարերկրացիներն ու այլ քաղաքներից եկածները, դարձյալ առանց նշելու, թե մեղադրվում են կաթոլիկության մեջ։

Անհրաժեշտ համարվեց արտաքսել նաև այն հայ ռայաներին, որոնք ռայաների շրջանում չեն հարգում ռայայության պայմանները, իսկ իրենց նախկին վիճակին վերադարձողներին, չթույլատրելով սրանից հետո բնակվել Ղալաթայում և Բերայում, որոշվեց տեղափոխել Ստամբուլի և Սկյութարի հայկական թաղամասերը։ Հարմար համարվեց պատրիարքարանին հատուկ հրաման տալ, որ պատրիարքը ներկայացնի բոլոր կաթոլիկների ցուցակը։ Հրամանագիր շնորհվեց գործադրել այս իմաստով կազմված խնդրագիրը։

Հրամանի համաձայն, պատրիարքների օժանդակությամբ [կաթոլիկ] վարդապետներն արտաքսվեցին Միջերկրական ծովի կողմերը, մի մասն էլ դեպի էֆլաքի [Վալախիա] սահմանները։

Երբ պարզվեց, որ Օսմանյան երկրում կաթոլիկական դավանանքը տարածող կենտրոնը Ջեբել-Դրյուզի նշանավոր եկեղեցին է, որ Հռոմից եկող վարդապետներն այնտեղից են ցրվում Օսմանյան երկրով մեկ, որոշվեց Ստամբուլից արտաքսված վարդապետներին չթույլատրել այնտեղ գնալ։ Սեյդայի վալիին հայտնվեց, որ վերոհիշյալ եկեղեցու մասին ներկայացնի իր դիտողությունները։

Որոշվեց Իզմիրի, Անկարայի և այլ վայրերի վարդապետների մասին հետաքննությունը կատարել տեղական առաջնորդների միջոցով և նրանց նավերով էլ արտաքսել մոտակա նավահանգիստները։ Դրանցից բացի, պետք է արտաքսվեն նաև այն մայրապետները, որոնք շրջելով հայերի տները, մոլորեցնում են հայ կանանց։

(Հատ. I էջ 272—277)

Վերոհիշյալ հարցերի մասին գրքի հավելվածում, 16 համարի տակ տրված է հայոց պատրիարքարանի թաքրիրի պատճենը։

Այդ թաքրիրից պարզվում է, որ պատրիարքարանի խնդրած բարձրագույն հրամանագրով պատրիարքարանը գործի է ձեռնար-

կել։ Արտաքսված նշանավոր հայ սարրաֆները և այլ անձինք իրենց բնակարաններում և ծովափնյա տներում թողել են պահապաններ և այլ ծառայողներ։ Քանի դեռ այդ տները իրենց տերերի ձեռքում էին, նրանց վերադառնալու սպառնալիքը միշտ մնում էր։ Ուստի, ինչպես հիշվեց վերևում, Ահմեդ Խուլուսի էֆենդիին հանձնարարվեց այս տները, եթե հարմար են մահմեդականների բնակության համար, աճուրդով վաճառել (սուք-ի սուլթանի)[9] և դրամը տալ տիրոջը։

Քանի որ այդ տները գնելու ցանկություն ունեցողներ չգտնվեցին, դրանց մեծ մասը վաճառվեց շատ ցածր գներով, իսկ Թընգըր-ղադեների տունը Բերայում, իր տեղի և կառուցվածքի պատճառով անհամապատասխան լինելով մահմեդականների բնակության համար, թողնվեց նույն վիճակում։

Տարեգիր Լութֆին նշում է, որ հայ-կաթոլիկական հարցի շարունակությունը գրվելու է իր աշխատության երկրորդ հատորում։

(Նույն տեղում)

«Կանոններ Ստամբուլի բնակչության մարդահամարի մասին» վերնագիրը կրող հատվածում տարեգիրը ասում է, որ երկրում կարգ ու կանոնը պահպանելու համար անհրաժեշտ միջոցառումներից է եղել նաև Ստամբուլում ապրող տղամարդկանց թվի ճշտումը։ Սակայն, որովհետև կատարված մարդահամարները եղել են շատ թերի, անհրաժեշտ համարվեց կազմել և կիրառության մեջ դնել 19 հոդվածից բաղկացած մի կանոնագիր։

1242 (1827) թվականի մարդահամարով Ստամբուլում ապրում էր 45 հազար մահմեդական, 30 հազար հայ և 25 հազար հույն տղամարդ, ընդամենը 100 հազար՝ առանց կաթոլիկների։

(Հատ. I, էջ 278—279)

«ԹԱՐԻԽ-Ի ԼՈՒԹՖԻ»

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

1244 (1828—1829) թ. դեպքերից

Լութֆիի «Պատմության» II հատորում մեծ տեղ են գրավում 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետ կապված դեպքերը, որոնց մասին տարեգիրը խոսում է ամենայն մանրամասնությամբ, հաճախ մեջ բերելով նաև պաշտոնական կարևոր գրություններ և փաստաթղթեր։ Պատերազմական դեպքերի շարքում տարեգիրը հիշատակում է նաև թուրք-իրանական բանակցությունների մասին, որոնք ուղղված էին իրենց «ընդհանուր թշնամու»՝ Ռուսաստանի դեմ միացյալ ուժերով պայքարելու նպատակին։

1244 (1828) թվականին այդ երկու երկրների դիվանագիտական ներկայացուցիչների միջև տեղի ունեցած բանակցությունների հետևանքով կնքված է երեք հոդվածից բաղկացած հատուկ համաձայնագիր, որի տեքստը բերված է պատմության II հատորի 20—21 էջերում։

Այդ համաձայնագրի հիման վրա երկու կողմերը որոշում են ծովից և ցամաքից, իրարից անկախ, ընդհանուր թշնամու դեմ ուղարկել ռազմական ուժեր և պատերազմով պաշտպանել երկու երկրների անկախությունն ու շահերը։ Համաձայնագիրը երկու կառավարություններին ազատ է թողնում հաշտության պայմանագիր կնքելու գործում, պայմանով, որ կնքվելիք պայմանագիրը չվնասի մյուս կողմին։

(Հատ. II, էջ 20—21)

ՍՈՎԻ ՆՇԱՆՆԵՐ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

Քանի որ ռուսական նավերը մոտեցել էին Սև ծովի նեղուցի [Բոսֆորի] շրջանին, իսկ Միջերկրականի նեղուցը [Դարդանել] պաշարված էր և շրջակա ծովեզերքի մի մասը գրավված, դադարել էր հացահատիկ և սննդամթերք մատակարարող նավերի մուտքը Ստամբուլ։ Ֆերման է տրվում, որ Կեսարիայից և այլ հեռավոր քաղաքներից 3000 ուղտի բեռ հացահատիկ ուղարկեն, սակայն դրանից ոչինչ չի ստացվում... Դժվարությունների պատճառով Ստամբուլում և շրջակայքում մտցվում է հացի բաշխման քարտային սիստեմ...

Շտապ կարգով կատարված մի հաշվից պարզվում է, որ Ստամբուլի բնակչության թիվը հասնում է 359.089 շնչի։ Պատերազմից առաջ Ստամբուլի հացի փռերին շաբաթական տրվում էր 40 հազար քիլե[10] հացահատիկ։ Նեղուցները փակվելուց հետո բաց թողնվող հացահատիկի քանակը կիսով չափ պակասեց... Անատոլիայից Ռումելի մեկնող զինվորները ճանապարհին 2—3 օրով քաղցած էին մնում, և մի մասը քաղցից մահանում էր... Ծանր դրության պատճառով զանազան շտեմարաններում պահվող շատ հին և լրիվ փչացած կորեկի, հաճարի և եգիպտացորենի պաշարները տալիս էին հացի փռերին և դրանցից թխված հացը բաժանում ժողովրդին։ Մզկիթների և եկեղեցիների միջոցով ամեն մի շնչին տրվում էր բռունցքի մեծությամբ սեփ—սև հաց, որը անհնար էր ուտել։ Փռերում հաց բաժանելու ժամերին, նրանց առաջ խռնրված մեծ բազմության պատճառով փողոցներում կանգ էր առնում երթևեկությունը։ Այդ հացը ուտողները տառապում էին զանազան հիվանդություններով և հաճախ մահանում...

Ինչպես տարբեր առիթներով ու պատրվակներով, այս անգամ էլ կառավարությունը Ստամբուլից հեռացնում է մի քանի հազար «դավառացիների»։

(Հատ. II, էջ 63—64)

ԿԱՐՍԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Ռուսաստանը պատերազմ հայտարարելուց անմիջապես հետո հարձակվեց Արևելքի սահմանի վրա և, մեծ քանակությամբ զինվոր ուղարկելով, պաշարեց Կարսը։ Հեռավորության պատճառով մի անգամից հնարավոր չեղավ այդ կողմն ուղարկել զորք և ռազմամթերք։

Էրզրումի վալի և Արևելքի սերասքեր Ղալիբ փաշան պահանջել էր փող, ռազմամթերք և թնդանոթաձիգ։ Նրան ուղարկվեցին սակավաթիվ թնդանոթաձիգներ, պայմանով, որ գավառից գավառ անցնեն մենզիլներով, սակայն դրանք էլ ճանապարհին մնացին, փոխադրության համար անհրաժեշտ ձիեր չգտնելու պատճառով։

1244 (1828) թվականի մուհարրեմ ամսի սկզբին, մի շարք ավազակների և դավաճանների օժանդակությամբ Կարսի բերդը հանձնվեց ռուսներին։ Այդ դեպքից հետո պատերազմական ծախքերի համար առաջին կարգի նախկին դեֆթերդար Արիֆ էֆենդին Արևելքի դեֆթերդարի[11] պաշտոնով 1500 քիսե գումարով ուղարկվեց Էրզրում։

Այս դեպքերի մանրամասնությունը հետևյալն է։ Ռուսաստանը պատերազմ հայտարարելուց անմիջապես հետո հարձակվելով կայսերական սահմանի վրա, ինչպես վերևում հիշվեց, պաշարեց Կարսը։ Արևելքի սերասքեր, նախկին սադրազամ Ղալիբ փաշան, մարդկային ուժի հնարավորության սահմաններում դիմադրություն ցույց տվեց, Կարսի ամրացման համար Էրզրումից ռազմամթերք և թնդանոթաձիգ ստանալու գործում մեծ ջանքեր գործ դրեց, և Կարսում մոտ 10 հազար զինվոր կենտրոնացրեց։ Սակայն մի քանի մարտերից հետո Կարսի բնակիչները բերդը հեշտությամբ ռուսներին հանձնեցին։ Ժողովրդի այս դավաճանության հետևանքով [բերդի] պաշտպան Էմին փաշան բավական քանակությամբ զինվորներով ներքին բերդում ամրանալով, հնարավոր հաստատակամություն ցուցաբերելով հանդերձ, քաղաքի մյուֆթիի, դատավորի և ավագանիի պնդումով, ստիպված եղավ անձնատուր լինել ռուս-

ներին։ Բերդում գտնվող հեծյալ զինվորների մի խումբ թեև կարողացավ այդտեղից ճողոպրել, սակայն բերդապահը և 5—6 սերբերդներ[12] ընկան ռուսների ձեռքը և ուղարկվեցին Թիֆլիս...

(Հատ. II, էջ 74—75)

ԱԽԱԼՑԽԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ախալցխա ուղարկված օսմանյան զինվորները կանգ էին առել Թաշ-թեփե կոչված վայրում։ Ոչ-կանոնավոր զինվորական խմբերը, տեսնելով նրանց վրանների տեղաշարժը, կարծում են թե ռուսները հարձակվում են, սկսում են փախչել. Հրամանատար Սվաղի վալի Մեհմեդ փաշայի զինվորներն էլ հետևում են փախչողներին։ Ռուսները իմանալով այդ, հեշտությամբ գրավեցին թողնված 9 թնդանոթները։ Զինվորական պետերը որոշ քանակությամբ զինվորներով ամրացան բերդում։

Ախալցխայի ժողովուրդը, միանալով բերդում ամրացած զինվորներին, հաստատակամորեն կռվեց և արյունալի մարտեր մղեց։ Ամբողջ ժողովուրդը, նույնիսկ կանայք, գիշեր-ցերեկ անդադար կռիվ էին մղում։ Մեծ էր երկուստեք տված զոհերի թիվը։ Այդ ժամանակ լիվանեցի (աջարացի) Ալի բեյ անունով մեկը, 1500 զինվորներով, օրը ցերեկով բերդից դուրս գալով, փորձեց փախուստի դիմել։ Թշնամին նկատելով այդ, տարբեր կողմերից կրակ բացեց, շրջանի բազմաթիվ վայրեր կրակի մատնեց։ Ժողովրդից շատ մարդիկ, կանայք և երեխաներ զոհվեցին կրակների մեջ և խորտակված տների փլատակների տակ, իսկ ողջ մնացած զինվորների մեծ մասը գիշերով փախուստի դիմեց։ Ռուսները սովորական երթով գրավեցին բերդը։ Այս ծանր վիճակը թեև «հավատացյալ զինվորներին» վիշտ և հուսահատություն պատճառեց, բայց նախապես իրենց տված երդման համաձայն, հաշվի չառնելով անգամ իրենց անձին սպառնացող վտանգը, դուրս եկան մերկացրած սրերով և կոտորեցին իրենց դեմ կանգնածներին. Նրանցից շատերը նահատակվեցին։ Թշնամին բազմամարդ էր։ Մեհմեդ փաշան Ահմեդ փաշայի հետ միասին որոշ թվով զինվորներով, Թուզչու-զադեի զինվորների և նրանց սպաների հետ, ընդամենը 200 հոգով փակվեցին բերդում։ Սակայն, ուժասպառ լինելով, ստիպված եղան վիրայով[13] դուրս գալ դեպի Օլթի։ Շրջանի ժողովուրդը, իմանալով այդ, սարսափի մատնվեց, առանձնապես մեծ շփոթություն առաջ բերեց ռուսների անարգել շարժումը դեպի Էրզրում։

Էրզրումի շուրջը կառուցվել էին բավականաչափ ամրություններ. այստեղ հավաքվել էին բավական թվով զինվորներ ու ռազմամթերք։ Սակայն շրջանի ժողովուրդը կորցրել էր իր նախկին ջանասիրությունն ու եռանդը։ Փոխադրող սայլերի հետ միասին ոչնչացվել էին դեպի Ախալցխա, Կարս և Արդահան ուղարկված հացամթերքն ու սննդամթերքը. Էրզրումում կառքեր չէին մնացել։ Այս պայմաններում հնարավոր չէր հացահատիկ ուղարկել այդ կողմերը։ Հայերը մաս-մաս հպատակություն էին ցույց տվել ռուսներին, իսկ Բայազիդի սանջաքում հայ և հույն հպատակները, դավաճանելով մուսուլմաններին, ամեն տեսակ բռնություններ և տանջանքներ էին պատճառել նրանց։ Էրզրումի վալի Ղալիբ փաշան այդ բոլորի մասին տեղեկացնելով Բարձրագույն Դռանը, խնդրել էր ռազմամթերք հասցնել, միաժամանակ հայտնելով, որ գործը մնացել է Աստծո օժանդակությանը։ Այս մասին իր զեկուցագրի լուսանցքում սեփական ձեռքով գրել էր. «Այս ընթացքով ռուսների հարձակումը դժվարությունների պատճառ կդառնա. պաշտպանությունը անհնար լինելով, հայտնում եմ, որ անհրաժեշտ է հարմար միջոցներ գտնել և ձեռնարկել հաշտության գործին»։

Վեքիլների բարձր մեջլիսում Ղալիբ փաշայի այս գրությունը ընդունվեց իբրև արդյունք նրա վախկոտության և անտեղյակության։ Ախալցխայի գրավումով աշխարհը կործանվե՞ց, Չըլդըրի էյալեթի ժողովրդի ռազմատենչ մարդկանց ի՞նչ պատահեց։ Առանց մտածելու, թե որքան դժբախտությունների պատճառ կարող է լինել հաշտության առաջարկը ամբարտավանությամբ պատնբաղմ սկսած թշնամու համար, նման անտեղի բաներ գրելը զարմանք միայն կարող է պատճառել։ Այսպիսի խորհրդածություններից հետո նրան պատասխան տրվեց, որ առանց հուսահատվելու պետք է աշխատել ավելացնել ուժերը, հայրենասիրության և միության կոչ անել իսլամ ժողովրդին։ Իր պահանջած թնդանոթաձիգներն արդեն ուղարկվել են. Ստամբուլումն էլ քիչ է թնդանոթաձիգների թիվը, եթե նորից պահանջվի, այդ մասին միջոցներ ձեռք կառնվեն։

Ահա այս ոգով տեղի ունեցած խորհրդակցությունների արդյունքը գրի առնվեց մաքուր թղթի վրա և ներկայացվեց փադիշահին։ Այս հանդամանքը ավելի հրահրեց փադիշահի կուտակված զայրույթը Ղալիբ փաշայի նկատմամբ, և նա անմիջապես հրամայեց վեզիրության աստիճանը ետ վերցնելով, աքսորել նրան և փո-

խարենը մի այլ անձնավորության նշանակելու համար դարձյալ մեջլիս գումարել և որոշումը ներկայացնել իրեն։

Հրամանի համաձայն խորհուրդը որոշեց, որ, ընդունելով հանդերձ Ղալիբ փաշայի վախկոտությունը, Կարսի և Ախալցխայի դրությունը պիտի համարել աստվածային պատուհաս, որ Էրզրումում թշնամուց պաշտպանվելու համար կան բավականաչափ զինվորական ուժեր։ Կարսի և Ախալցխայի բերդերը ազատելու և Էրզրումում կուտակված զինվորների կանոնավոր ծառայությունը ապահովելու գործին պետք է առանձին ուշադրություն դարձնել, որի համար պետք է այնտեղ նշանակել Սալիհ փաշային, իսկ Ղալիբ փաշային իր մարդկանց հետ միասին ուղարկել Գելիբոլի։ Այս որոշումը կատարվեց ճշտությամբ...

...Որոշ ժամանակ հետո, Ախալցխան ետ առնելու համար հավաքվեց մեծ քանակությամբ զորք, պատրաստվեց ռազմամթերք և ուղարկվեց։ Երբ մոտ էր Ախալցխայի գրավումը, որոշ թվով խայամ զինվորներ ցանկացան հափշտակել Ախալցխայի մոտ բնակվող քրիստոնյա և հրեա համայնքների ընտանիքներին ու զավակներին և ստրկացնել նրանց։ Այդ դեպքը մյուս հավատարիմ զինվորական դասերի հետ թշնամանալու պատճառ դարձավ։ Հափշտակվածները վերադարձվեցին՝ Նման բռնությունները արգելելու համար միջոցներ ձեռք չառնելու հետևանքով ոչինչ չարվեց և բավական մարդ զոհ գնաց, ռազմամթերք ոչնչացավ...

Ախալցխան գրավելուց հետո ռուսական բանակի գլխավոր հրամանատար Պասկևիչը թուրքերեն լեզվով հրահանգներ հրատարակեց, որոնցով [շրջակա ժողովրդին] կոչ էր անում առանց պատերազմի ընդունել Ռուսաստանի հպատակությունը։

Որոշ գրություններում տեսել եմ տեղեկություններ այդ մասին։

(Հատ. II, էջ 75—77)

ԱՋԱՐԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Չըլդըրի բեյլերբեյի աջարացի միրմիրան Ահմեդ փաշան, որը նշանակված էր Աջարայի վրա հարձակում գործած ռուսական բանակին դիմադրություն ցույց տալու համար, ռուսական զինվորների բանակատեղը կրակի մատնելով, կողոպտել էր նրանց ապրանքներն ու գույքը։ Ահմեդ փաշան իր տրամադրության տակ եղած զինվորներով առյուծի նման մտնելով ռուսական բանակը. մի քանի օր տևած մարտերում հաղթեց նրան և 800-ից ավելի

թշնամի զինվոր սպանելով, վերադարձավ և իր կտրած գլուխներից հիսունը ուղարկեց Ստամբոլ։

ԱՆԱՊԱՅԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Ռուսները 25 ռազմանավով ծովեզերքից 45 օր շարունակեցին իրենց հարձակումը Անապայի վրա։ Բերդապահը, զինվորները, ժողովուրդը և աբազա ցեղերը կրծքով դիմագրեցին հարձակվողներին։ Բայց հիշյալ ցեղերը, խաբվելով Ռուսաստանի աղով և այլ խոստումներով, հրաժարվեցին օգնություն ցույց տալ և ետ քաշվեցին։ Չնայած բերդը ավերվել էր թնդանոթների արկերից, բայց պաշտպանվողները շարունակեցին կռիվը, մինչև բերդում մնաց ընդամենը 400 մարդ։ Ռուսները գրավեցին Տրապիզոնից Անապա ուղարկված զինվորների երկու նավերը, և քանի որ սկսվել էր նավագնացության փակման ժամանակը, օգնություն ստանալու հույսը կտրվեց՝ Բերդը հանձնելու առաջարկով ռուսների կողմից եկած դեսպանին բերդի պահապան Օսման փաշան ասաց. «Ես Տրապիզոնի դերեբեյիներից [կալվածատերերից] եմ, այստեղ էլ դերեբեյի եմ, և անկարելի բան է, որ ես չմեռած՝ փադիշահի բերդը հանձնեմ»։

Սակայն [Ստամբուլում] լուր ստացվեց, որ ռուսները գրավել են բերդը և նրա բնակիչներին գերի վերցնելով, ուղարկել են Ղրիմ։

(Հատ. II, էջ 77—78)

ՖԱՇԻ ԲԵՐԴԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Ռուսները գրավել էին Տրապիզոնի սանջաքին ենթակա Ֆաշի [Փոթիի] բերդը։ Ասում են, թե իբր բերդի գրավման պատճառը եղել է այն, որ Բաթումի երևելիներից Արսլան բեյը ռուսներից փող է վերցրել և բերդը հանձնել նրանց։ Այդ ամբաստանությամբ նա մահվան դատապարտվեց՝ Սակայն Տրապիզոնի վալի Օսման փաշան Բարձրագույն Դռանն ուղարկած իր գրության մեջ հայտնում էր, որ վերոհիշյալը իր 500 զինվորներով բոլորից առաջ հարձակվել էր թշնամու վրա և բավականին մեծ վնաս պատճառել նրան և որ նրան ներկայացված մեղադրանքը անհիմն է եղել։

Ափսոս, որ այդպիսի առյուծանման քաջարի մարդը անիրավության սրի զոհ գնաց...

(Հատ. II, էջ 78)

ՉՅՈՒՐՈՒՔ-ՍՈՒԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Երբ Չյուրուք-սուից տեղեկություն ստացվեց, որ այդ գետի և Շեքումթել գետի բաժանման կետում շրջող օսմանյան պահակազորը կռվում է ռուսական զորքերի դեմ, որոնց թվում կան նաև վրացիներ, օգնության հասած զորքերի շնորհիվ կռիվը ավելի բորբոքվեց և հաղթության քամին սկսեց փչել իսլամական զինվորների կողմը։ Մուսուլմանները տվեցին միայն 16 սպանված և վիրավոր, իսկ սպանված ռուսների թիվը ավելի էր։ Հաջորդ օրը օսմանյան զինվորները նորից հաղթող հանդիսացան։ Երկրորդ մարտում ռուսների կորուստը հինդ հարյուրից ավելի էր։ Այս մարտերում ցուցաբերած եռանդի համար բանակի հրամանատարի տեղակալ Իմին աղային զինակրի աստիճան տրվեց։

ԲԱՅԲՈՒՐԴԻ ՄՈՏ ՆՎԱՃՎԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Մուհարրեմ ամսի վերջին օրը ռուսները զինվորական մեծ ուժերով կատաղի հարձակում գործեցին Բայբուրդի մոտ գտնվող Օֆի ու Սյուրմենեի զորամասերի վրա։ Իսլամական զինվորները պաշտպանվեցին մինչև վերջին շունչը. օսմանցիներից սպանվեց 150 մարդ, իսկ ռուսների կորուստը հազար զինվորից ավելի էր։

Բայբուրդը քաջության զորզով զարդարված յուրդ դարձավ։

(Հատ. II, էջ 78)

ԱՐԽՎԵԼՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես վերևում նշվեց, երբ ռուսները գրավեցին Կարսի և Ախալցխայի բերդերը, այդ շրջանների օսմանյան զորքերը թուլացան և ժողովուրդը վախի ու սարսափի մատնվեց։ Թե՛ զինվորների և թե՛ ժողովրդի մեջ այլևս եռանդի ու արժանապատվության նշույլ անգամ չէր նկատվում։

Ստորև հիշվող մանրամասնությունների համաձայն, հայ հպատակներից շատերը, ռուսական հպատակություն ընդունելով և ավազակությամբ զբաղվելով, վախի և հուսահատության էին մատնել Արևելքի բանակի պաշտոնյաներին։ Էրզրումն ու շրջակայքը շրջապատված էին թշնամական զորքերով։ Բանակի տրամադրության տակ գտնվող Սվազի վալին՝ վեզիր Մեհմեդ փաշան մնացել էր 5—6 զինվորով։ Վերոհիշյալ փաստերի մասին ընդհա-

նուր մեջլիսում ընթերցեցին Էրզրումի վալի Սալիհ փաշայի և նրա դեֆթերդարի ուղարկած գրությունը և ամենից առաջ հարցրին Արևելքի գործերին ամենից ավելի գիտակ սերասքեր Խուսրև փաշայի կարծիքը։ Նկատի առնելով Ջանիկի հարկահավաքի տեղակալ խազինեդար-օղլու Սուլեյման փաշայի որդի Օսման բեյի ունեցած ազդեցությունը և հարգանքը, ինչպես նաև նրա անձնական արժանիքներն ու ընդունակությունները, վեքիլության աստիճանով և վեքիլությունը պահելու պայմանով նրան տրվեց Սվազի էյալեթը։ Նրան հրամայվեց, որ այդ շրջանից մեծաքանակ զինվորներով շտապ Էրզրում գնա։ Միաժամանակ, զինվոր հավաքագրելու համար որոշվեց միրախոր[14] Աբբաս բեյին անհապաղ ուղարկել Սվազ, իսկ մյուս կափուջի բաշիներին ուղարկել տարբեր շրջաններ և ստեղծված դրության մասին հայտնել տեղական պաշտոնյաներին։ Սալիհ փաշային հանձնարարվեց նաև հայտնել այդ միջոցառումների մասին։ Փադիշահական բարձր հրամանագրով այդ որոշումները գործադրվեցին։

Էրզրումում բնակվող Կարսի նախկին պահապան Օսման փաշան վեզիրության աստիճանով վերահաստատվեց իր պաշտոնում և նրան հանձնարարվեց Արևելքի զորաբանակն[15] ուղարկել բոլոր այն մուսուլման բնակիչներին, որոնք խանգարում էին իրեն։

Անապայի շրջանում տեղի ունեցած պատերազմական գործողությունները ուժեղացնելու համար Տրապիզոնի շրջանի սերասքերությունը[16] տրվեց Տրապիզոնի վալի Հասան փաշային։ Պատերազմական ծախսերի համար փողերանոցից նրան ուղարկվեց 500 քիսե փող։

(Հատ. II, էջ 79)

1245 (1829) թվականի դեպքերից

Ռուս-թուրքական պատերազմի 1245 թ. դեպքերից տարեգիր Լութֆին խոսում է հատկապես եվրոպական մասում տեղի ունեցած պատերազմական գործողությունների մասին։ Դրանցից հիշատակում ենք միայն մի քանի բնորոշ կետեր։

«Օգնություն պատերազմին» նշանաբանով՝ երկրում սկսում են հավաքել փող և հացահատիկ։ Սնյդայի վալին հայտնում է, որ Արևելյան բանակի համար պահանջվում է 500 զինվոր և 150 հազար քիլե հացահատիկ՝ մեկ քիլեն վեց ղուրուշով պետական ամբարին հանձնելու պայմանով։ Զինվորների հավաքագրումը դժվար լինելու պատճառով նրանց փոխարեն ուղարկվում է 1500 քիսե փող և 100 հազար քիլե հացահատիկ։

Հատուկ հրամանով գոհունակություն է հայտնվում վալիին]։

(Հատ. II, էջ 79)

ԷՐԶՐՈՒՄԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Այդ ժամանակ ռուսները գրոհով գրավել էին Էրզրումի բերդը։ Դրա պատճառը Արևելքի սերասքեր Սալիհ փաշայի և [քաղաքի] բնակիչների անհոգությունն էր։ Այս կապակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունը, հավանական համարելով, որ ռուսները, Էրզրումը հենակետ դարձնելով, կամենում են այնտեղից Բայբուրդի վրայով շարժվել դեպի Տրապիզոն, որոշեց այդ շրջանի գրությանը լավ ծանոթ և զինվորներ հավաքագրելու գործում աչքի ընկած Տրապիզոնի վալի Օսման փաշային նշանակել կայսերական հանքերի վարչության պետ և սերասքեր, նրան հատկացնելով Բոզոքի սանջաքը։ Դա համարելով անհետաձգելի միջոցառում, անմիջապես հայտարարվեց Օսման փաշայի նշանակումն այդ պաշտոնում։

Որոշ ժամանակ անցնելուց հետո լուր ստացվեց, որ ռուսները, Էրզրումից շարունակելով առաջ շարժվել, հասել են Կարահիսար-ի Շարքիի մերձակայքը։

Լրացում: Այն ժամանակ, երբ Անատոլիայի բանակի հրամանատարներից Սվազի վալի Հաքքը փաշան զգալի քանակությամբ զինվորական ուժերով Էրզրումի մոտ դիմադրություն էր ցույց տալիս ռուսներին, Էրզրումի վալի Սալիհ փաշան որոշում է իր զորքերով դուրս գալ Էրզրումից, չնայած ժողովուրդը դեմ էր դրան։ Սալիհ փաշան, հաշվի չառնելով այդ, 5—6 հազար զինվորներով Հասան-կալայի մոտ ընդհարվելով ռուսական բանակի հետ, ստիպված եղավ դժվարին դրության մեջ վերադառնալ Էրզրում։ Պարտություն կրեց նաև Հաքքը փաշան։ Այսպիսով, Սալիհ փաշայի թույլ տված սխալի հետևանքով ռուսները գրավեցին Էրզրումը։

(Հատ. II, էջ 95—96)

* * *

Տարեգիրը մանրամասնորեն խոսում է նաև օսմանյան պետության եվրոպական մասում տեղի ունեցած պատերազմական գործողությունների մասին։

«Էդիրնեի դեպքերը» վերնագրով հատվածում խոսում է սուլթանի հատուկ հրամանով գումարված մեջլիսի խորհրդակցության մասին։ Մեջլիսը գտնում է, որ հետագա դիմադրության համար հնարավորություններ չկան։ Փադիշահական հրովարտակով առաջարկվում է շուտով հաշտության բանակցություններ սկսել մեծ պետությունների դեսպանների հետ։

Այն պահին, երբ օսմանյան կառավարությունը զբաղված էր նման բանակցություններով, 1245 (1829) թվականի սեֆեր ամսի առաջին օրը ռուսական բանակը, առանց մարտերի, մտավ Էդիրնե քաղաքը և գրավեց Կըրք-Քիլիսեի շրջանը։

Երբ ռուսները հասնում են Այդոսի և Կարին-Աբաղի[17] կողմերը, իսլամական ժողովուրդը պատրաստվում է գաղթելու։ Քաղաքապետական օրգանները նկատի առնելով, որ աննպատակահարմար է մեծաքանակ ժողովրդի գաղթը և, մասնավորապես, տեղեկանալով, որ մի քանի վեզիրներ մեծաքանակ զինվորական ուժերով ուզում են գաղթել, որոշում են արգելել այդ գործողությունը, տեղից շարժվողներին կախաղան բարձրացնելու և նրանց կանանց անարգանքի ենթարկելու[18] սպառնալիքով։ Տարեգիր Լութֆին մանրամասն խոսում է հաշտության բանակցությունների կապակցությամբ տեղի ունեցած երկարատև դիվանագիտական զրույցների, տեսակցությունների, առաջարկների և հակաառաջարկների մասին, մեջբերելով բազմաթիվ փադիշահական ֆերմաններ, որոշումներ և այլ փաստաթղթեր։

Միայն այդ բոլորից հետո, նույն թվականի ռեբի-ուլ-էվվել ամսի 15-ին (1829 թ. սեպտեմբերի 14-ին) Թուրքիայի և Ռուսաստանի միջև կնքվեց էդիրնեի հաշտության դաշնագիրը, որով վերջ տրվեց 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմին։

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԴԵՊՔԵՐԸ

Հաշտության կնքումից երկու ամիս հետո հրապարակված ֆերմանով մի քանի տարվա ընթացքում պատերազմի կապակցությամբ ժողովրդի վրա նշանակված [հարկերի] գումարից չգանձված ավելի քան 16 միլիոն ղուրուշը առանձին մարդկանց վրա թողնելու վերաբերյալ կայսերական հրամանը ծանուցվեց բոլորին։

Արքունական դիվանում արձանագրված ֆերմաններից պարզվեց, որ այդ «շնորհված» գումարից Ռումելիին պատկանող մասը գերազանցապես գոյացել էր ոգելից խմիչքների վրա նշանակված հարկերից։

(Հատ. II, էջ 125)

* * *

Ջըլդըրի էյալեթի որոշ վայրերի իսլամ բնակիչները երբ լսեցին, որ հաշտության պայմաններով այդ վայրերը թողնվելու են Ռուսաստանին, Ախալցխայի բերդին դիմումներ ներկայացնելով, հայտնեցին, որ հայրենիքի սիրուն պատրաստ են զոհելու իրենց կյանքն ու ունեցվածքը։

(Հատ. II, էջ 127)

ԼՈՒՐԵՐ ՉԵՐՔԵԶ ՑԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Տրապիզոնի վալի Հասան փաշայի օրով չերքեզական ցեղերի Ջինդեզի գերդաստանից մի շարք սուլթանների և 62 չերքեզ միր-

դաների[14] տարեկան 18025 ղուրուշ ռոճիկ էր հատկացված Անապայի պետական գանձարանից։ Անապայի գրավումից հետո այդ ռոճիկները կտրվել էին. ռոճիկ ստացողներից ոմանք Տրապիզոն գալով, իրենց ձեռքին ունեցած բերաթներով (արքայական պարգևագիր) պահանջեցին իրենց ռոճիկները։ Բարձրագույն Դռան տված ցուցումով դիմողներին հայտնեցին, որ Անապան գրավված է թշնամու կողմից, եթե մոտ ժամանակում հնարավոր լինի ետ վերցնել, նրանց ռոճիկները առաջվա նման կվճարեն։

Ես կարծում եմ, որ Ռուսաստանի և օսմանյան պետության միջև ամրակուռ պարիսպ հանդիսացող և ցեղային կապով մեզ հետ կապված Չերքեզստանի ժողովրդին սիրաշահելու քաղաքականության համար տարեկան այդպիսի մի գումար վճարելուց հրաժարվելը հարմար չի եղել։

(Հատ. II, էջ 145)

[ՏՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒՄԸ]

Ստամբուլի թաղերի տները համարակալելու համար Հաշվառման վարչությունը դիմում է սերասքեր Խուսրև փաշային, խնդրելով թույլ տալ տների դռներին համարներ փակցնել։ Սակայն այդ առաջարկը անհետևանք է մնում։

«Բարեփաստիկ դեպք»-ից հետո օսմանյան կառավարությունը քաղաքացիական և զինվորական մի շարք բարենորոգումներ էր ձեռնարկել։ Սակայն, քանի որ անհնար էր արագորեն փոխել տարիներ շարունակ արմատացած սովորությունները, այդ բարենորոգումները իրականացվեցին միայն նպատակահարմար ժամանակ։ Տների համարակալման առավելությունը հասկացել էին դեռևս այն ժամանակ, բայց դրանից 40 տարի հետո էլ մեծ դժվարությամբ հնարավոր եղավ իրագործել այդ համարակալումը։

(Հատ. II, էջ 172—173)

ԿԱԹՈԼԻԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Այդ ժամանակ նորից հրապարակ եկավ կաթոլիկության հարցը։ Ֆրանսիայի դեսպանը, հատուկ թաքրիր ներկայացնելով, խնդրում էր վերադարձնել աքսորված կաթոլիկներին, ետ տալ վաճառված ծովափնյա բնակարանները (յալը) և նշանակել անկախ պատրիարք։

Ստամբուլցիների վերադարձի թույլատվությունն ստացվեց, իսկ մյուսներինը՝ անուշադրության մատնվեց։

Այդ օրերին հունական հարցի լուծման կապակցությամբ կաթոլիկությունն անուշադրության մատնվեց նույնիսկ ֆրանսիական դեսպանի կողմից։ Հետագայում նորից երևան եկավ կաթոլիկների հովանավորության հարցը։

Չնայած Ստամբուլում տարածված էին կաթոլիկական ծիսակատարությունները, սակայն հայ-կաթոլիկների ծեսերը և մեռելների թաղումը, առաջվա նման կատարվում էր հայ (լուսավորչական) հոգևորականների կողմից։ Կաթոլիկ վարդապետների հետ նրանք սուսկ բանավիճում էին, որը վերջացավ հայ վարդապետների հետ հարաբերությունների խզումով։ Դրանից հետո մահացած հայ-կաթոլիկների թաղման մասին երկու կողմի հոգևորականների միջև տեղի ունեցած վեճերի հետևանքով, ֆրանսիական դեսպանի պնդումով, մեռյալների դագաղները հայ հոգևորականների ձեռքից առնվեցին և տրվեցին կաթոլիկ հոգևորականներին։ Տեղի ունեցավ մեծ թափոր՝ բուրվառով և երգերով, բազմաթիվ ֆրենգների մասնակցությամբ, թափորն անցավ Ղալաթայից։

Հայերի պարագլուխ համարվող երևելի Ղազազ Արթինը, վաղ առավոտյան ֆրանսիական դեսպանատուն գնալով, շտապ տեսակցություն ունեցավ դեսպանի հետ. ի պատասխան կաթոլիկ վարդապետների միջամտությունն արգելելու մասին նրա առաջարկին, դեսպանն ասաց, որ դա դավանական վեճ է, իմ թագավորը կաթոլիկ է, ես էլ այդ դավանանքի մոլեռանդներից եմ. կրոնի համար մարդիկ կյանք են զոհում։

Այս խոսքերով դեսպանը Ղազազ Արթինին անարգանքով դուրս արեց։

Էսադ էֆենդին մանրամասնությունները տալուց հետո ասում է. «Այս գործերը և դրանց պատճառ հանդիսացած չարամիտները եթե այսպես շարունակեն, բոլոր հայերը կաթոլիկ կդառնան և հետո դրա հետևանքով ինչքա՜ն խռովություններ երևան պիտի գան»։ Էսադ էֆենդին խոսքը այստեղ վերջացնում է։

Պաշտոնական գրություններից պարզվում է, որ կաթոլիկների աքսորից, նրանց տների ու կալվածքների վաճառքից հետո, ֆրանսիական դեսպանը ինքը դավանակից լինելով կաթոլիկներին, պաշտոնապես հովանավորեց նրանց, շարունակեց միջամտել այդ գործին և ամեն օր Բարձրագույն Դռանը ներկայացրած բանավոր և գրավոր թաքրիրներում վճռականապես առաջարկում էր, որ հայ-

կաթոլիկների համար նշանակվի անկախ պատրիարք, աքսորվածները վերադառնան, նրանց տները ետ տրվեն և նրանց համար եկեղեցիներ կառուցվեն։ Ֆրանսիական դեսպանը ամեն անգամ գալիս էր [Բարձրագույն Դուռ] և ժամերով վիճաբանում ռեիս էֆենդիի[20] հետ։

Ի վերջո, մի օր սերասքեր Խուսրև փաշան և ռեիս էֆենդին, գնալով նավաշինարան, այնտեղ են կանչում ֆրանսիական դեսպանին և տեղի ունեցած ոչ պաշտոնական տեսակցության ժամանակ երկար խոսակցություն են ունենում։ Իբրև եզրակացություն որոշվեց հայ-կաթոլիկների պատրիարքի տրամադրության ներքո մուսուլմաններից նշանակել մի տեսուչ (նազիր) եպիսկոպոսի աստիճանով։ Հիմք ընդունելով վերոհիշյալ որոշումը, մանրամասնությունների գործադրությունը հանձնարարվեց տեսուչներին։ Այս մասին փադիշահին մատուցված մանրամասն թաքրիրի առթիվ շնորհվեց հետևյալ կայսերական դրությունը (հաթթ-ը շերիֆ)[21]։

«Քայմաքամ փաշա.

Կաթոլիկության հարցի վերաբերյալ ֆրանսիական դեսպանի հետ տեղի ունեցած բանակցությունների երկու կետի առթիվ գրված մանրամասն թաքրիրը արժանացել է իմ կայսերական ուշադրությանը։ Կաթոլիկության այս հարցի վերաբերյալ առայժմ որոշված է մուսուլմաններից տեսուչ նշանակել։ Սակայն միանգամայն պարզ է, որ հիշյալ դեսպանը այդ հարցում որոշ միջամտություն ցույց տալով, սրանից հետո էլ այդ բանից ետ չի կանգնի։ Այսուհետև, որպեսզի եկեղեցական և այլ նման հարցերի լուծումը ամբողջապես չթողնենք ֆրանսիացիներին, անհրաժեշտ է միջոցներ գտնել, որ այդ հարցերը լուծվեն օսմանյան կառավարության կողմից, որը, անտարակույս ավելի հեշտ կլինի։ Խորհրդակցելով սերասքեր փաշայի հետ, երկրորդ կետում շարադրվածի համաձայն, վերոհիշյալ տեսչության գործի համար հարմար է դիտվում մաքսապետ էդհեմ էֆենդին։ Գործը նրան պետք է հանձնել «ի գործադրություն» և այլն։

Այս կարգադրության հետևանքով ֆրանսիական դեսպանը հրաժարվեց պատրիարք նշանակելու իր առաջարկից։ Որոշվեց օսմանյան պետության և կաթոլիկների միջև, իբրև միջնորդ, էդհեմ էֆենդիին նշանակել տեսուչ և նրա տրամադրության ներքո եպիսկոպոսի աստիճանով նշանակել կաթոլիկ վարդապետներից մեկին։ Իսկ եկեղեցու կալվածքներն ու իրերը վերադարձնելու հարցերի վերաբերյալ դեսպանը բավարարվեց այն բանով, որ խոստացան առա-

չիկայում լուծել դրանք։ Այս մասին նշված է հիշյալ թաքրիրի համվելվածում։

Էդհեմ էֆենդիի պաշտոնի հարցը վճռվեց Բարձրագույն Դռանում և տրվեց բանավոր հրահանգ, որ կաթոլիկների գործերի մասին թաքրիրով տեղեկություն տրվի։ Էդհեմ էֆենդին իր պաշտոնի հետ կապված հարցերի մասին ներկայացրեց հինգ կետից բաղկացած մի թաքրիր

Համառոտ բովանդակություն: *Դավանաբանական վեճերն ու անախորժությունները հայ ժողովրդի մեջ հետագայում համարվել են անվնաս և երկու կողմերն էլ վայելել են պետության հովանավորությունը։ Հայ-կաթոլիկները սակայն, հաճախելով ֆրենգների [կաթոլիկ] եկեղեցիները, արտաքուստ իրենց ցույց են տվել իբրև հայ հպատակներ, իսկ ներքուստ ֆրենգներին սիրահար լինելու պատճառով պատժվել են և արտաքսվել։ Հատուկ ֆերմաններով աքսորված գավառացիներից բացի, գավառների հետ կապ չունեցողների և քաղաքացիների (ստամբուլցիների) աքսորում գտնված ժամանակը պետք է համարել բավարար պատիժ և վերադարձնել նրանց։ Ֆրենգների եկեղեցիների հետ նրանց կապը արգելելու նպատակով նրանց համար կառուցել հատուկ տաճար, ռայաներից նշանակել եպիսկոպոս, ետ վերադարձնել այն տները, որոնց ներկը և կառուցվածքը փոխված չեն և որոնք գտնվում են ռայաներին հատկացված թաղամասերում։ Վերոհիշյալ թաքրիրում ցույց են տրված այս կետերը։*

Այս թաքրիրի հիման վրա Բարձրագույն Դուռը հայտնում էր. որ հիշված կետերի գործադրությունը նպատակահարմար է։ Ֆրանսիայի դեսպանը նախագահությանն էր հանձնել իր պետությունից ստացած նոր հրահանգը, որ դեսպանատան թարգմանի կողմից թարգմանվել էր թուրքերենի։ Վերևում հիշված կետերը գործադրվեցին. եպիսկոպոսական աստիճան տալու և նման հարցերը կիրագործվեն ըստ պահանջի։

Էդհեմ էֆենդիին ցուցում էր տրվել գործը չհասցնել ֆրանսիական դեսպանատուն։ Այդ բոլորի մասին [սուլթանից] թույլտվություն խնդրվեց։

Այս առթիվ փադիշահը իր ֆերմանում նշում է, որ կաթոլիկների նկատմամբ գործադրված միջոցառումները եղել են ժամանակի պահանջ. Ներկայումս մեծ մասամբ ընդունված են Ֆրանսիայի կողմից ներկայացված պահանջները, սակայն, ասում է փադիշահը, «...Քանի որ հայ կաթոլիկները օսմանյան պետության

հարկատու (չեզիե գյուզար)[22] ռայաներ են, նրանց բոլոր գործերի կարգավորումը օտար պետության միջամտությամբ բազմաթիվ անպատեհություններ է առաջացնում։ Ամեն պարագային անհրաժեշտ է միջոցներ գտնել այս խռովության առաջն առնելու համար...»[23]։

Հայ կաթոլիկներն էլ նորին վսեմություն սուլթանին դիմում ներկայացնելով, խնդրել էին իրենց համար եկեղեցի կառուցելու բերաթ շնորհել, միաժամանակ սարրաֆները վեքիլներից [մինիստրներից] խնդրել էին իրենց առաջվա նման ծառայելու իրավունք տալ, վերադարձնել Ղալաթայում և Բերայում իրենց ներկված և չներկված տներն ու կալվածքները, սուլթանի բերաթով շարիաթական թույլտվություն տալ Ղալաթայում եկեղեցի կառուցելու համար։

Շնորհված փադիշահական ֆերմանով հրամայվեց վերադարձնել տներն ու կալվածքները, թույլտվություն տալ եկեղեցիներ կառուցելու, իսկ սարրաֆ դասի ծառայության հարցում առայժմ չշտապել։

* * *

Այդ ժամանակ ենթադրվում էր, որ Օսմանյան կայսրության մեջ ապրում է մոտ 150 կաթոլիկ։ Սակայն, հայոց պատրիարքի մատյանում, Ստամբուլում և եռյակ քաղաքներում[24] կաթոլիկների թիվը ցույց է տրված 24450 շունչ։

Ինչպես նշվեց, ֆրանսիական դեսպանությունը արտակարգ կերպով պաշտպանում էր հայ կաթոլիկներին, այնպես որ Երուսաղեմի Կամամե եկեղեցում[25] նրանց ունեցած բարձր ֆերմանի արձանագրությունը ջնջվեց, և հենվելով այն բանի վրա, որ Կամամեի կաթոլիկ հայերը ենթարկվում էին ֆրենգներին, այդ մասին ներկայացվեց մի հրահանգի թարգմանություն։

Սակայն Բարձրագույն Դուռը մերժեց այդ թարգմանությունը։

* * *

Ավստրիական կառավարությունն էլ «բարյացակամորեն» էր զբաղվում հայ կաթոլիկների հարցով։ Օսմանյան պետության դեսպանորդը [Ավստրիայում] այդ ժամանակի Ավստրիայի գլխավոր մինիստր, նշանավոր Մետերնիխի որոշ խոսքերը պաշտոնապես հայտնել էր Բարձրագույն Դռանը, որով, ի միջի այլոց, հանձնարարվում էր թույլատրել կաթոլիկների ծիսակատարությունները։

(Հատ. II, էջ 185—189)

194—3

«Մեր բարձր պետության ռայաներին, ինչ կրոնի էլ պատկանեն, ընդունված կարգով պաշտպանություն է ցույց տրվում, իսկ ովքեր համարձակվում են գործել հպատակությանը (ռայայությանը) հակառակ, ինչ կրոնի էլ պատկանեն, կպատժվեն, իսկ ովքեր մեր բարձր պետության ռայայությունը ընդունելով, ապրում են մեր երկրում, այդպիսիներին վարձատրելու կամ պատժելու անհրաժեշտություն լինելու դեպքում, բոլոր պետություններն էլ պետք է ընդունեն, որ անթույլատրելի է օտար պետությունների միջամտությունը»։

(Հատ. II, էջ 189)

* * *

Կաթոլիկ պատրիարքի նշանակման մասին ֆրանսիական դեսպանի թաքրիրին կցված պաշտոնական գրության վերևում տրված է փադիշահական հետևյալ հրամանագիրը։

«Քայմաքամ փաշա.

Ծանոթացել եմ սույն թաքրիրի և հիշյալ դեսպանի թաքրիրի թարգմանությանը։ Օգտվելով մեր Օսմանյան պետության բազմաթիվ դժվարություններից, ֆրանսիացիները աշխատում են կարգադրել իրենց բոլոր գործերը՝ Կաթոլիկության այս զզվելի հարցը առաջիկայում կարող է բազմաթիվ խռովությունների պատճառ հանդիսանալ։ Այդ պատճառով անհրաժեշտ է, որ հայոց պատրիարքի և հայազգի բոլոր պարագլուխների հետ խորհրդակցելով, ընդունեք փոքրագույն չարիքը և արդյունքը նորից հայտնեք ինձ»։

(Հատ. II, էջ 189—190)

* * *

Սուլթանի հրամանագրի համաձայն, տեղի ունեցավ հայոց պատրիարքի և ժողովրդի պարագլուխների խորհրդակցություն. հանձնարարվեց կաթոլիկ խռովարարների և հանցավորների, ինչպես նաև «թույլերի» առանձին-առանձին ցուցակներ կազմել և այդ մասին հայտնել իրենց կարծիքն ու մտքերը։

Այդ ժամանակ ֆրանսիական դեսպանը իր թարգման Ժոբերին ուղարկեց Բարձրագույն Դուռ և հարցրեց իր թաքրիրի պատասխանի մասին։ Տրված պատասխանում հայտնվում էր, որ այդ հարցում օսմանյան կառավարության նպատակն է իր երկրում վերացնել

խռովություն առաջացնող պայմանները, մինչդեռ օսմանյան պետության ռայաներ հանդիսացող կաթոլիկներից շատերը դավանանքի տարբերությունը խռովության պատրվակ են դարձնում։ Այդ պատճառով կառավարությունը ցանկանում է վերացնել այդ ոչ նորմալ վիճակը։ Ճիշտ է, կաթոլիկների շարքում կան նաև անմեղ և խեղճ մարդիկ. ակներև է, որ այդպիսիներին պետք է թույլ տրվի։

Ահա այսպիսի պատասխանով թարգմանը ետ ուղարկվեց։

Դրանից հետո դեսպանը բավական ժամանակ լռեց։

Որպեսզի գործը քաղցրությամբ վերջանա և ցույց տրվի, որ օսմանյան կառավարությունը նպատակ չունի կրոնի դեմ հարձակում սկսել, հայոց պատրիարքը շտապ կարգով ներկայացրեց աղատվելիք անձանց ցուցակը։

Քանի որ որոշ մարդիկ ազատ են արձակվելու ցուցակով, մնացածներն էլ դիմում ներկայացնելու դեպքում կարող են մեկական-երկուական հոգի ազատվել։ Աքսորից պետք է վերադարձվեն պատրիարքի մի այլ դեֆթերով ներկայացված ցուցակում եղած և փադիշահական հրամանով Անկարա աքսորվածներից սարրաֆ Կըլչի-օղլուն, Վիչեն և Թընգըր-օղլուն, Հակոբի որդի Միքայելը, նորից Թընգըր-օղլու Գրիգորը, Պետրոսը, Անթուանը, Դավիդ-օղլու Պետրոսը։ Նկատի առնելով, որ կաթոլիկների մասին պատրիարքի ներկայացրած և երեք հոդվածից բաղկացած գրության մեջ նշված հարցերի գործադրությունը կարող է դիտվել իբրև հարձակում կրոնի դեմ, դրանցից հրաժարվելու մասին որոշվեց փադիշահին հայտնել։

Ահա այդ մասին փադիշահական հրամանագիրը՝

«Քայմաքամ փաշա.

Ես ծանոթացա հիշյալ պատրիարքի թաքրիրին և նրա հետ ներկայացված դեֆթերին։ Պարզվում է, որ ֆրանսիացիները [կաթոլիկներին] կողմնապահություն ցույց տալու պատճառով ոչինչ չեն ասում խռովարարների և հանցավորների մասին։ Այդ պատճառով օսմանյան կառավարությունը չի կարող բոլորի նկատմամբ ցույց տալ միևնույն վերաբերմունքը, ցանկանալով երևան հանել սոսկ հանցավորներին։

Առաջնորդվելով ժամանակի և դրության պահանջներով, թող ազատվեն գթության արժանի անձինք, ինչպես նշված է թաքրիրում։

(Հատ. II, էջ 191)

«ԹԱՐԻԽ-Ի ԼՈՒԹՖԻ»

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

Տարեգիրը հատորի նախաբանում նշում է, որ իր «Պատմության» III հատորում նա խոսում է Աբդուլ Ազիզ սուլթանի և նրա սուլթանության շրջանի [1277—1293 (1861—1876) թվականների] դեպքերի մասին։ Հիշատակում է, որ հատորի նյութերը շարադրելիս իբրև աղբյուր ունեցել է. 1. «Գրությունների գանձարանի» որոշ փաստաթղթեր և հին գրություններ. 2. Տարեգիր Ջևադ էֆենդիի որոշ գրությունները, 3. 1247 (1831) թվականից հրատարակվող «Թաքվիմ-ի վեքայի» թերթի համարները և այլն։

Այս հատորը տպագրվել է 1292 (1875) թվականին պետական տպարանում։ Հատորում տարեգիրը մեծ տեղ է հատկացնում (մոտ 120 էջ) հունական ապստամբության հետ կապված դեպքերին։ Նա մանրամասն խոսում է հունական հարցի վերաբերյալ մեծ պետությունների դեսպանների անվերջ խորհրդակցությունների, ներկայացված թաքրիրների մասին, հաճախ նույնությամբ մեջ բերելով դիվանագիտական բանակցությունների վավերագրերը, օսմանյան կառավարության պատասխանները, փադիշահի հաթթ-ը հյումայունները և այլն։

Երրորդ հատորում դրեթե չկան անմիջականորեն մեզ հետաքրքրող նյութեր Հայաստանի և Անդրկովկասի վերաբերյալ։ Ուստի թարգմանաբար տալիս ենք միայն փոքր հատվածներ, որոնք բնորոշում են Օսմանյան երկիրը այդ տարիներին։

* * *

«Երկրի մարդահամարի մասին» հատվածում տարեգիրը խոսում է Օսմանյան երկրում մարդահամարի անհրաժեշտության մասին, մանավանդ վերջին՝ հունական և ռուսական պատերազմներից հետո ստեղծված պայմաններում։ Տարեգիրը ասում է, որ մինչ այդ երկրում մարդահամար գրեթե չի կատարվել։ Որոշվում է մարդահամար կատարել նախ Ստամբուլում և ապա երկրի մյուս մասերում։ Ուշադրավ է հետևյալ հանգամանքը։ «Որպեսզի [մարդահամարը] ժողովրդին վատ գործ չթվա, դրան մասնակից են դարձնում շարիաթի պաշտոնյաներին։ Այդ սովորությունը շարունակվում է մինչև վերջին ժամանակները։ Նույնիսկ այն ժամանակ, երբ Ստամբուլում անհրաժեշտ է լինում կարանտին հաստատել, այդ գործի համար նշանակվում են նշանավոր ուլեմաներից Աբդուլհաք էֆենդին և տարեգիր Ջևադ էֆենդին։

Մարդահամարից դուրս են մնում Ադանան (էյալեթը) և մի քանի հեռավոր էյալեթներ Արևելյան Անատոլիայում։

Մարդահամարի նյութերը կարգի բերելու համար կազմակերպվում է հատուկ վարչություն՝ «նեզարեթ»։

Մարդահամարի նյութերից պարզվում է, որ զինվորներից բացի, մուսուլման և ոչ-մուսուլման տղամարդկանց թիվը հասնում է մոտ հինգ միլիոնի (չհաշված մարդահամարից դուրս մնացած շրջանները)։

Տարեգրի վկայությամբ, իր ձեռքի տակ եղած նյութերը ցույց են տալիս, որ մարդահամարից հետո, վեքիլների շրջանում խոսակցություններ են եղել այն մասին, որ ցուցակագրված բնակչությունից, տասանորդական հարկից բացի, գանձվեն միատեսակ գլխահարկ՝ յուրաքանչյուր շնչից տարեկան միանվագ 150 ղուրուշ։ Հաշվել են, որ այդ հարկից ստացված եկամտով պետության ծախսերը

ծածկելուց հետո կավելանա 196 հազար քսե, որը կհատկացվի փադիշահական հրամանագրով կատարվելիք ծախսերին։

Չգանձված հարկերի ներումը: *Ռուսական և իրանական պատերազմների կապակցությամբ իբրև վարձատրություն Ռումելիի և Անատոլիայի բնակչության կրած նեղություններին, որոշվեց ներել որոշ տարիներից ի վեր չգանձված հարկերը։ Այդ գումարը հասնում էր 30 հազար քսե ակչեի, որի մեծ մասը կազմում էին ոչ-մուսուլման բնակչության վրա բարդված ոգելից խմիչքների տուրքերը։*

(Հատ. III, էջ 145—146)

Տարեգիրը պատմելով Դիարբեքիրում և այլ վայրերում վալիների և այլ պետական պաշտոնյաների՝ ժողովրդի նկատմամբ գործադրած բռնությունների ու անիրավությունների մասին, բերում է Մահմուդ II սուլթանի ֆերմանը, որը գրվել է իբրև պատասխան այդ թաքրիրին.

Միայն էբուլբուդ փաշայի հեռացմամբ Անատոլիայում բռնությունը չի վերանա։ Անատոլիայի ժողովրդի վիճակը շատ ծանր է։ Քանի դեռ աղքատները այդ վիճակում են, մեր օսմանյան պետությունը փորձանքներից չի կարող ազատվել։ Մեր կրած նեղություններ և հոգսերի պատճառը աղքատների լացն ու կոծն է։ Դու և մյուս պաշտոնյաները ձեռք-ձեռքի տված պետք է աշխատեք և ջանաք թեթևացնել այդ բռնություններն ու անիրավությունները։ Մինչև որ աղքատների բարեկեցությունն ու անվտանգությունը չապահովվի, պարզ է և ակնհայտ, որ ամեն մի գործ դժվարությունների և խոչընդոտների կհանդիպի, իսկ այդ բոլորի պատճառը բռնությունն է.

...Այս իմաստալի հրամանի և ֆերմանի համաձայն վեքիլները խորհրդակցեցին, որպեսզի գտնեն բռնությունների պատճառները... Ես կարծում եմ, որ այդ ժամանակի պահանջների բերմամբ, Օսմանյան երկրում արդարության մասին ֆերմաններ հրատարակելուց բացի այլ միջոցներ գտնել չեն կարողացել։ Այդ վիճակը առաջացել էր այն բանի հետևանքով, որ քաղաքացիական վարչությունը ամուր հիմքերի վրա չէր դրված և երկրում դեռ շարունակվում էր իլթիզամի սիստեմը[26]*։ Իսկ նման ֆերմանների հաճախակի հրատարակումը թուլացնում էր նրանց ուժը և վերածում սովորական հրամանի։ Դրանից բացի, այդ ֆերմանները տեղերը հասցնող պաշտոնյաների ճանապարհածախսերը, նրանց համար իբրև փոխադրամիջոց ծառայող անասունների վարձը և մյուբաշիրների*[27] *ծառայության ծախսերը բարդվում էին աղքատների վրա, այնպես որ բռնությունների դեմ ձեռք առնված միջոցները նոր ճնշումների*

պատճառ էին դառնում։ Այդ պայմանները մեծ մասամբ շարունակվել են մինչև թանզիմաթը («թանզիմաթ-ի հայրիյե»)[28]։

Դեպքեր Վանում: Այդ ժամանակ Վանի մյութասարրիֆ միրմիրան[29] Թեմուր փաշայի ապստամբության պատճառով, էսադ փաշան նրա դեմ զորք ուղարկելով ցանկացել էր նրան Վանից դուրս հանել։ Սակայն այն պահին, երբ շարունակվում էր լարված դրությունը Բաղդադի և Ալբանիայի հետ, մի այլ դժվարություն չստեղծելու համար Բարձրագույն Դռնից հայտնեցին էսադ փաշային, որ այդ գործը հետաձգի... Ի վերջո Թեմուր փաշան պաշտոնից ազատվում, և Վանի սանջաքը միացվում է էրզրումի էյալեթին։

(Հատ. III, էջ 151)

[«ԹԱՔՎԻՄ-Ի ՎԵՔԱՅԻ» ԹԵՐԹԻ ՀԻՄՆՈՒՄԸ]

Այս թերթի հրատարակության մասին տրված ֆերմանից.

«Քայմաքամ փաշա.

Վաղուց ի վեր իմ ցանկությունն է եղել կարգավորել այդ հարցը։ Բայց քանի որ դրա ժամանակը դեռ չէր եկել, լռում էի, գործը թողնելով հարմար ժամանակի։ Ահա, փառք Աստծո, կարգը և ժամանակը եկել է, և այդ գործն էլ ոչ մի բանով հակառակ չէ մեր շարիաթի կանոններին և, դրանից բացի, վարչական տեսակետից ունի շատ օգուտներ, որը հաստատված է բոլորի կողմից։

Ինչպես հայտնված է ձեր թաքրիրում, այդ գործին հսկելու համար թող նշանակվեն էսադ էֆենդին և Սայիգ բեյը...»։

Մինչև 1247 (1831) թվականը նվիրական ֆեթվայի կողմից թույլատրված գրքերն ու ռիսալեները[30] տպագրվում էին, բայց թուրքերեն լեզվով թերթեր չէին հրատարակվում։ Ժամանակի ընթացիկ դեպքերի և լուրերի մասին ժողովրդին տեղյակ պահելու համար սկսեց հրատարակվել «Թաքվիմ-ի վեքայի» («Դեպքերի օրացույց») անունով թուրքերեն թերթը տարեկան 120 ղուրուշ արժողությամբ։

Թերթի անունը տվել է ինքը՝ սուլթան Մահմուդը։ Տարեգիր էսադ էֆենդին կառավարում է նոր տպարանը։ Բոլոր կարևոր պետական ծառայողները, քաղաքացիական և զինվորական պաշտոնյաները բաժանորդագրվում են թերթին։ Շաբաթաթերթը լույս է տեսնում 5000 օրինակով։

(Հատ. III, էջ 156—157),

ՕՍՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՈՒՄ ՈՉ-ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՏԱՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ՏՐՎՈՒՄ

Այս մասին տրված փադիշահական ֆերմանում ասված է. «Իմ փադիշահական ցանկությունն է ապահովել մեր Օսմանյան երկրում բնակվող ու իսլամական շարիաթի և մեր փադիշահական արդարադատության սալերի ներքո գտնվող բոլոր ռայաների բարեկեցությունը և պաշտպանել նրանց քայքայումից և ցրումից։ Մեր սերը անպակաս է եղել ռայաների նկատմամբ, նրանց ապահովության համար անհրաժեշտ բոլոր միջոցների գործադրումը միշտ եղել է մեր ցանկությունը»։

Պատրիարքները, մետրոպոլիտները և առաջնորդները համարվում են բերաթ ունեցող ծառայողներ և նրանք պարտավոր են մյուս ռայաներից ավելի շատ հավատարմություն ցույց տալ։ Պատրիարքների վկայության և երաշխավորության հիման վրա նշանակված և Անատոլիա ու Ռումելի ուղարկված մետրոպոլիտներին ու առաջնորդներին պատրիարքները պետք է պատվիրեն, որ իրենց ծառայած վայրերում պաշտպանություն ցույց տան ռայաներին, աղոթեն մեր կայսերական իշխանության համար և նրա փառքն ու եռանդը ապահովող վերաբերմունք ցույց տան։

Կաթոլիկ ազգի[3] Ղալաթայի և Բերայի կալվածքները իրենց տերերին վերադարձնելու, ինչպես նաև Բոսֆորի նրանց ամառանոցները վերադարձնելու մասին նրանց ներկայացրած դիմումները բավարարելու համար հատուկ պաշտոնյաներ են նշանակվում.

(Հատ. III, էջ 163—164)

«ԹԱՐԻԽ-Ի ԼՈՒԹՖԻ»

ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ

Տարեգիրը նշում է, որ այս հատորի համար ևս օգտագործված են այն աղբյուրները, որոնք հիշատակված են նախորդ հատորում։ Հատորի հիմնական նյութը 1248 (1839) թվականից հետո Եգիպտոսում ծավալված դեպքերը և Անգլիայի ու Ռուսաստանի դիվանագիտական բանակցություններն են։

Այդ թվականներին Եգիպտոսի Մեհմեդ Ալի փաշայի ծառայության մեջ կար Պողոս [Նուբար] անունով մի հայ, որը Ստամբուլի բարձր ֆերմանով թարգմանի պաշտոնով ուղարկվել էր Եգիպտոս։ Այդ ժամանակ հազվագյուտ էին օտար լեզուներ իմացող մարդիկ։ Պողոսը, լավ ծանոթ լինելով ընթացիկ դեպքերին և ժամանակի

պահանջներին, Մեհմեդ Ալի փաշայի մոտ արժանացել էր վստահության և պատվի ու մուտք գործել նրա գաղտնի գործերի մեջ։

Երբ [եգիպտական] հարցը ծագեց, որպեսզի նրան [Պողոսին] հորդորեն թողնելու Եգիպտոսը և գալու Ստամբուլ, նրա ընտանիքի անունից նամակներ ուղարկեցին, բայց դա ոչ մի արդյունք չտվեց։

(Հատ. IV, էջ 38)

ԱՋԱՐԱ

Ախալցխայի սահմաններում Օլթիի միրլիվա[33] Շերիֆ փաշազադե Սայիդ բեյը անիրավացի կերպով սպանել էր Աջարայի Ահմեդ փաշայի եղբայր Քյոր Հյուսեին բեյին։ Պարզվում է, որ այս սպանության պատճառը եղել են հնուց ի վեր երկու գերդաստանների միջև ժառանգաբար շարունակվող հակառակությունն ու թշնամությունը։

Ենթադրվում էր, թե Ահմեդ փաշան այդ գործին մասնակից չի եղել։ Սակայն Բարձրագույն Դուռը հայտնել էր Ահմեդ փաշային, որ նա կարդարացվի այն դեպքում միայն, եթե վերոհիշյալ մարդասպանը իր պատիժը կրի։

Ինչպես կպարզվի հետագայում, Աջարայի հարցը սկիզբ է առել այս գործից։

(Հատ. IV, էջ 56)

1249 (1833) թ. դեպքերից
ՀԱՆԳՍՏՅԱՆ ՕՐՎԱ ՄԱՍԻՆ

Պատմագիրը նշում է, որ հին սովորության համաձայն պետական պաշտոնատները փակ էին լինում շաբաթվա մեջ երկու օր՝ երեքշաբթի և հինգշաբթի։ Որոշ շրջանում հանգստյան օր ընդունվեց միայն կիրակին։

Երբ ծագեց եգիպտական հարցը, գործերն ավելացան և հանգստյան օրը բոլորովին վերացվեց։ Սակայն երբ գործերը նորից պակասեցին, որոշվեց, որ գրասենյակները հանգստանան շաբաթական մեկ օր՝ հինգշաբթի։

(Հատ. IV, էջ 100)

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՄԵԾ ՀՐԴԵՀԸ

1249 (1833) թվականի ռեբի-ուլ ախրի 15-ին Ստամբուլում՝ Ջիբալիում, Թյուֆենքխանեից ծագած հրդեհը ուժեղ քամու պատճառով կարճ ժամանակում տարածվեց բոլոր կողմերը. մեկ օրվա

ընթացքում հրո ճարակ դարձան և ոչնչացան բազմաթիվ բնակարաններ, սարաչխանե, հաֆաֆխանե և այլ շուկաներ։ Ստամբուլի թաղամասերից մեծ մասում բազմաթիվ բնակիչներ մնացին անօթևան և ստիպված եղան ապաստանել մզկիթների բակերում և ողբ ու կոծ բարձրացնել։ Ստամբուլի կադին հրաման տվեց, որ հրդեհից տուժածներին պատսպարելու համար վրաններ բաժանեն այն ընտանիքներին, որոնք ցանկանում են...

Հիշեցում: *Այս պատմությունից երևում է, թե Ստամբուլի կադիները ինչպիսի կարևոր պարտականություններ ունեն նման մեծ աղետների առաջն առնելու համար։ Այս սոսկալի հրդեհի կապակցությամբ Բարձրագույն Դուռը բավականացավ միայն այն բանով, որ 5—10 տողից բաղկացած հրաման արձակեց...*

Ստամբուլի այս մեծ հրդեհի կապակցությամբ «բնակարանային հատուկ վարչության» կողմից տպագրվեց սակացուցակի մասյան հրդեհից տուժածների համար բնակարանների կառուցման անհրաժեշտ նյութերի, բանվորների օրավարձի մասին և հայտարարվեց ժողովրդին։

Լրացում: *«Բարեբաստիկ դեպք»-ից առաջ, Ղալաթայում ծագած հրդեհի կապակցությամբ հրդեհից տուժած մուսուլման և ոչմուսուլման ժողովրդին առատ նվերներ էին բաշխել։ Այդ հրդեհի ժամանակ ավստրիական դեսպանատնից բացի այրվել էին ուրիշ դեսպանատներ և թարգմանների բնակարաններ։ Կառավարությունը բոլոր դեսպաններին ցավակցական գրություններ, ծաղկեփնջեր և մրգեր էր ուղարկել. փադիշահի կողմից էլ ականագարդ տուփեր էին նվիրվել։ Երբ թարգմանները հայտնել էին, որ իրենք մեծ կարիքի մեջ են, իսկ Պրուսիայի թարգմանը հայտնել էր, որ ինքը ողորմության կարոտ է մնացել, սրանց դրամական օժանդակություն էր տրվել։*

(Հատ. IV, էջ 105—106)

ՓՈՍՏԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Մինչև այդ [Թուրքիայում] փոստի սիստեմ գոյություն չի ունեցել։

Նկատի առնելով փոստի անհրաժեշտությունը, իբրև օրինակ, Սկյութարից մինչև Իզմիր փոստային ճանապարհ կառուցելու համար [ղեկավար] նշանակվեց մյուշիր (մարշալ) Ֆեզի փաշան։ Նրա

գործադրած ջանքերով կարճ ժամանակում այդ ճանապարհը կառուցվեց և պաշտոնական բացման համար նորին վսեմություն փադիշահը իր տրամադրության ներքո եղած պաշտոնյաներով, փոստային կառքերով Սկյութարից ուղևորվեց մինչև Քարթալ, հրամայեց, որ պետության վեքիլներն ու ղեկավարները նույնպես ներկա լինեն այդ հանդեսին։ Վերջիններս խումբ-խումբ գալով, դիտեցին փոստային ճանապարհը՝ Սկյութարից մինչև Իզմիր կառուցվեցին սովորական փոստատներ և յուրաքանչյուր քառորդ ժամ տարածության վրա տնկվեցին նախապես պատրաստված սյուներ։

(Հատ. IV, էջ 162)

1250 (1834—1835) թ. դեպքերից

ՄԻ ՔԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄ

Ինչպես վերևում նշվեց, երբ փորձով ապացուցվեց Իզմիրի փոստային ճանապարհի օգտակարությունը, անհրաժեշտ համարվեց աստիճանաբար նման ճանապարհներ կառուցել։ Կայսերական հրամանով կարգադրվեց փոստային ճանապարհներ կառուցել առաջին հերթին Ստամբուլից մինչև Էդիրնե. աղքատների և սովածների համար կառուցել հիվանդանոցներ, գիտության և լուսավորության տարածման համար բոլոր վայրերում դպրոցներ կառուցելով, ժողովրդի զավակներին փրկել տգիտության խավարից։ Ճանապարհների անվտանգությունը, առևտրական գործերը և երկրի ապահովությունը պահպանելու համար հիմնել ոստիկանական կարգ, իրականացնել երկրի շահերին նպաստող միջոցառումներ՝ Եվրոպայում գործող բոլոր տեսակի կարգ ու կանոններին համապատասխան։

Հույն, հայ և կաթոլիկ պատրիարքներին փադիշահի ներկայությամբ «իֆթիհար»-ի (պատվո պարծանքի) նշաններ շնորհվեցին։

(Հատ. IV, էջ 165)

...Այս թվականին Ստամբուլում հիմնադրվում է նաև զինվորական դպրոց...

...Նկատի ունենալով, որ հայ ազգի պատրիարքների կողմից անհրաժեշտ համարված որոշ մարդկանց ղսպելու և դաստիարակելու ցանկությունը դիմադրության է հանդիպում կաթոլիկ ազգին պատկանողների նկատմամբ կիրառելիս, և այդ հանգամանքը խանգարում է նաև բնակչության գրանցման գործին, ուստի, այդ

Երկու ազգերի միջև նման անախորժությունները կանխելու համար անհրաժեշտ կանոններ սահմանելու մասին հայոց պատրիարքը թաքրիրով դիմում և խնդրանք էր ներկայացրել։ Կաթոլիկ պատրիարքը նույնպես գրավոր դիմում էր տվել։ Այս երկու ազգերն էլ օսմանյան պետության ռայաներն են և նրանց համար առանձին-առանձին պատրիարքների ընտրությունը, իրարից բաժանվելու փաստը ծնունդ է առել նրանց միջև առաջացած դավանաբանական տարաձայնություններից։ Հայ ազգի մեջ վատ վարք ունեցողները անցնում են կաթոլիկների կողմը, նրանց ենթարկվում, և եթե այդպիսիների նկատմամբ հանդուրժողականություն ցույց տրվի, ազգի մեջ կարգապահությունն ու կանոնները լրիվ կխախտվեն, բացի դրանից, օսմանյան պետության քաղաքացիական կանոններից գրանցման օգտավետ գործն էլ կդժվարանա, գրանցման մատյանում իբրև հայ արձանագրվածներին այնուհետև կարիք կլինի արձանագրել կաթոլիկների մատյանում, կաթոլիկներից հայ ազգին վերադարձողների գրանցման մատյանները ևս սրբագրության պիտի ենթարկվեն, այս բոլոր փոփոխությունները, պարզ է, խառնաշփոթության պատճառ կդառնան, ուստի մինչև այս հարցը չկարգավորվի, երկու ազգերի միջև պիտի շարունակվեն անհամաձայնությունն ու վեճերը։

Հետևաբար անհրաժեշտ է վերջ դնել այս դրությանը։ Ռայաների նկատմամբ սուլթանական բարձր իշխանության տածած սիրո և գթության պահանջին համապատասխան որոշվեց, որ հայերի կողմից կաթոլիկներին և կաթոլիկների կողմից հայերի վերադարձը չպետք է թույլ տալ, այդ մասին հատուկ կանոն պիտի հաստատվի, որի նպատակը կլինի պահպանել օսմանյան պետության կարգն ու կանոնը։ Դրանից հետո, երկրի կանոնների համաձայն, երկու ազգերի միասնականությունը ապահովելու համար, մեկ կողմից դավանելով մյուսին անցնելը արգելվում է և չի ընդունվում։ Այս մասին պատրիարքներին հաստատ և խիստ պատվերներ տալու մասին արձակվեց փադիշահական վճռական հրամանագիրը և դրան համապատասխան դրվեցին բույրուլթիներ։

(Հատ. IV, էջ 169—170)

ՄԻ ՔԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Այդ ժամանակ Բարձրագույն Դռանը քաղաքական, այսինքն դիվանագիտական գործերում ծառայող պաշտոնյաներ հաղվա-

գյուտ էին և, բացի դիվանի թարգմաններից, օտար լեզուներ իմացող մարդիկ չկային, դեսպանների հետ գրագրությունները և բանակցությունները վարում էին թուրքերեն լեզվով։

Քանի որ «բարեբաստիկ դեպքից» հետո օրեցօր աշխուժանում էին օսմանյան պետության հարաբերությունները Եվրոպայի հետ և այդ կապակցությամբ ավելանում էին փոստերի և շոգենավերի նման հաղորդակցության և կապի հեշտ միջոցները, Վիեննայում, Բեռլինում, Անգլիայում և Փարիզում օսմանյան պետության հիմնած դեսպանատները, լուրերի փոխանակումը և հարաբերությունների հաստատումը պահանջում էին, որ պետությունը իր արտաքին գործերում ունենա ավելի մեծ թվով պաշտոնյաներ։ Այդ բանի համար բացվեցին հատուկ գրասենյակներ, որոնք կոչվեցին «թարգմանության գրասենյակ» և ամենից առաջ որպես պաշտոնյա այնտեղ նշանակվեցին այնպիսի արժանավոր մարդիկ, ինչպես Խալիս էֆենդին, Ալի էֆենդին և Սավֆեթ էֆենդին...

«ԹԱՐԻԽ-Ի ԼՈՒԹՖԻ»

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Այս հատորում տարեգիրը խոսում է 1251—1255 (1835—1839) թվականների դեպքերի մասին։

1251 (1835) թվականի դեպքերը

ԿԱԹՈԼԻԿ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԱՀԸ

Այդ ժամանակ կաթոլիկ ազգի պատրիարքը մահացավ և նրա տեղը իբրև կաթոլիկ պատրիարք նշանակվեց Գրիգոր վարդապետը Բարձրագույն Դռանը, սահմանված կարգի համաձայն, տեղի ունեցավ ընդունելություն։

ՔՈՒՐԴԻՍՏԱՆ

Դիարբեքիրի և Քուրդիստանի շրջաններում քուրդ ցեղերը վաղուց ի վեր ավազակությամբ և կողոպուտով էին զբաղվում, Սվազի վալի և նախկին սադրազամ Ռեշիդ Մեհմեդ փաշան նրանց պատճառած վնասները վերացնելու համար նրանց նկատմամբ բռնի ուժ գործադրեց և համապատասխան վայրերում բնակեցնելով, վերահաստատեց ապահովությունն այդ շրջաններում։

Մուրդ ավազակներից իշխանությունների ձեռքն ընկած Զերքի բեյերը իրենց բնակավայրերից ընտանիքներով և երեխաներով ուղարկվեցին Ստամբուլ։ Նորին վսեմության փադիշահը նրանց ապրուստի միջոցներ շնորհելով, բնակեցրեց Ռումելիի կողմերում։

(Հատ. V, էջ 28)

ՌԱՅԱՆԵՐԻՑ ԶԵՆՔԵՐԸ ԱՌՆՎՈՒՄ ԵՆ

Այդ ժամանակ պետությունը նպատակահարմար գտավ Ռումելիի որոշ վայրերում ռայաների ունեցած զենքերը իրենց արժեքով գնել և վաճառել մուսուլման ժողովրդին։ Պահպանված գրություններում կա արձանագրություն այդ մասին...

(Հատ. V, էջ 35)

ՄՈՒԽԹԱՐՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

«Բարեբաստիկ դեպքից» հետո հաստատված և գործադրված քաղաքապետական կարգերից մեկն էլ Ստամբուլում և եռյակ քաղաքների մուսուլմանական թաղամասերում բնակչության համար առաջին և երկրորդ կարգի պատվավոր մարդկանց երկու մուխթարի, իսկ ռայաների թաղամասերում դարձյալ երկու անձի՝ քեհյայի և մուխթարի ընտրությունն էր։ Իմամի և վարդապետի կողմից սրանց մուխթարի և քեհյայի կնիքներ տրվեցին։ Այսպիսով ձեռնարկվեց վարչական կարգ ու կանոն հաստատելու գործը։ Այս կարգը գավառներում էս գործադրելու համար վիլայեթների վալիներին տրվեցին անհրաժեշտ հրամաններ։

(Հատ. V, էջ 35)

1252 (1836) թվականի դեպքերից
ՀԱԳՈՒՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԸ

Այդ ժամանակ գործադրության մեջ եղած կանոնների համաձայն, հատուկ հրամաններ տրվեցին քաղաքացիական և զինվորական դասերի պաշտոնյաների և ծառայողների, ոչ մուսուլման հպատակների հագուստների, ինչպես նաև ֆես հագնող ոչ-մուսուլմանների ֆեսերի վրա հատուկ նշան կրելու մասին։ Իզզեթ փաշայի վերջին սադրազամության ժամանակի այս կանոնը նրա կարևոր գործերից էր։

Ամեն մի պետության մեջ էլ զինվորականներն ունեն իրենց հատուկ տարազը (համազգեստը), որով նրանք տարբերվում են

ժողովրդի մյուս դասերից։ Ոչ-զինվորականները, քաղաքի սովորության համաձայն, իրավունք ունեն հագնվելու իրենց ցանկացած ձևով։ Այսպիսով, քանի որ վերոհիշյալ հրամանի գործադրությունը հակասում էր բանականությանը, կարճ ժամանակում այդ կարգը կորցրեց իր նշանակությունը՝

(Հատ. V, էջ 43)

1253 (1837) թվականի դեպքերից

ՄԻ ՔԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ ՔՈՒՐԴԻՍՏԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Անցյալ տարի Սվազի մյուշիր նշանակված Հաֆըզ փաշան մեծաթիվ զինվորական ուժերով մեկնեց իր պաշտոնատեղը։ Մինչև այդ, հիշյալ շրջանի ժողովուրդը շատ տեղերում որևէ իշխանության ենթակա չէր և ապրում էր վայրենի վիճակում։ Նրանց զսպելու համար անհրաժեշտ եղավ ամենից առաջ գնալ ավազակների կենտրոնը, Սենջար լեռան վրա, որտեղ անգութ դավաճանների դեմ տեղի ունեցած մարտում գերի վերցվեց 150 մարդ. ձեռք գցված որոշ քանակությամբ իրերն ու ապրանքները իբրև ավար բաժանվեցին զինվորների միջև։ Այնտեղից բանակը շարժվեց քուրդ ավազակների ապաստարանը հանդիսացող Թելաֆեր բերդի վրա։ Այստեղ բանակը սկսեց զսպել և հպատակեցնել տեղական ամբոխին, որը տարիներ շարունակ չէր խորշում այնպիսի չարագործություններից, ինչպես բնակիչների սպանությունը, նրանց գույքի հափըշտակությունն ու թալանը։ Այս ձևով հնարավոր եղավ ապահովել ժողովրդի հանդիստն ու անվտանգությունը։ Դրանից հետո ձեռնարկվեցին Ակչա-Դաղի և այլ շրջանների աշիրեթներին, վրանաբնակներին և ավազակներին զսպելու գործը։

Հաֆըզ փաշան այդ բոլորի մասին հայտնեց Բարձրագույն Դռանը։

Վերոհիշյալ գործերի համար փադիշահական հրամանագրով Հաֆըզ փաշան արժանացավ հատուկ պարգևների՝

Քուրդիստանի բարենորոգումների ժամանակ Հաֆըզ փաշան հաջողությամբ նվաճել էր այդ շրջանի Ղարզա անունը կրող լեռներն ու վայրերը և այդ կերպ ապահովել կարգն ու կանոնը։

Էրզրումի ռուսական հյուպատոսը լսելով այդ դեպքերի մասին, ցանկություն հայտնեց այցելել և անձամբ տեսնել Գրուհի

անունով վայրը։ Նա եկավ Հաֆըզ փաշայի բանակատեղը և երկու օր հյուր եղավ փաշայի մոտ։ Հյուպատոսի նվիրած ականակուռ մատանու փոխարեն, փաշան նրան նվիրեց 22500 ղուրուշ արժողությամբ մի մարգարիտ, մի քեհլան ձի և չորս ընտիր ջորի...

(Հատ. V, էջ 98—99)

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1253 (1837) թվականի զիլհիջջե ամսի 3-ին փադիշահական հատուկ հրամանագիր է տրվում ֆինանսների մինիստրություն կազմակերպելու մասին։

Նշելով կայսերական գանձարանի և կայսերական փողերանոցի գործերի կանոնավորման, ինչպես նաև այդ երկու հիմնարկների միջև տեղի ունեցած անհամաձայնություններին և վեճերին վերջ տալու անհրաժեշտությունը, կազմակերպվում է առանձին մինիստրություն, որին է հանձնվում պետության եկամտի և ծախսերի կանոնավորման գործը։

(Հատ. V, էջ 104—105)

ՍԱԴՐԱԶԱՄՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՎՈՒՄ Է ԲԱՇ-ՎԵՔԱԼԵԹԻ

Սուլթանական հատուկ հրամանագրով սադրազամությունը վերածվում է բաշ-վեքալեթի։ Քանի որ օսմանյան պետության գործերի մեծ մասը բաժանված էր մինիստրությունների [նեզարեթ] միջև, բնականաբար սադրազամության համար անելիք չէր մնացել։ Սակայն, նկատի ունենալով, որ բոլոր մինիստրություններին կից անհրաժեշտ է ունենալ մեկական նախագահ, այսուհետև սադարեթ անունը փոխարինվելու է բաշ-վեքալեթով, այնպես որ այս պաշտոնը անկախ չլինելով, մեծ պաշտոնների նշանակված մինիստրներից մեկը պետք է նշանակվի բաշ-վեքիլ և նրան պետք է տրվի կայսերական կնիքը...[35]

Նախկին սադրազամ Ռեուֆ փաշան նշանակվում է ներքին գործերի մինիստր և միաժամանակ բաշ-վեքիլ։

(Հատ. V, էջ 113—114)

ԱՆՑԱԳՐԻ ՍԻՍՏԵՄԻ ՄԱՍԻՆ

Մինչև այդ ժամանակ, սովորության համաձայն, օսմանյան պետության հպատակները Եվրոպա ուղևորվելու համար իրենց գնալիք երկրի դեսպանությունից անցագիր էին ստանում։

Այժմ պաշտոնապես հայտարարվեց որ, ինչպես այլ եռկրնեռում, նույնպես օսմանյան պետության հպատակներից այլ երկըրներ ուղևորվողներին Բարձրագույն Դուռը արտաքին գործերի մինիստրության միջոցով պետք է տա անցագիր, որը պիտի ներկայացվի այն երկրի դեսպանին, ուր նա մեկնում է։

Այս որոշումը պաշտոնապես հայտարարվեց օտար պետությունների Ստամբուլի դեսպաններին։

(Հատ. V, էջ 116—117)

ՎԱՌՈԴԱԳՈՐԾ ՕՀԱՆԵՍԻ ՄԱՍԻՆ

Բարութչի Օհանեսը[36], որը վառոդ պատրաստելու գործում անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու համար ուղարկվել էր Եվրոպա և ուսումն ավարտելուց հետո վերադարձել երկիր, իր ստացած գիտելիքների հիման վրա ձեռնարկել էր որոշ գործերի։ Նրա գործերը քննելու համար նորին վսեմություն փադիշահը շոգենավով այցելեց վառոդի գործարան, մեկ-մեկ ստուգեց նոր կառուցված շենքերը, նոր մեքենաներն ու գործիքները։ Վառոդի գործարանի պետի մատուցած ծառայությունների և գործերի համար նրան և նրա քեռայր Պողոսին տրվեցին ականազարդ տուփեր և այլ նվերներ, հատուկ հրամանով նրա ընտանիքը ազատվեց բոլոր տեսակի սովորութային հարկերից... Վեքիլները և ավագ պաշտոնյաները, շարիաթական և զինվորական պետերը, հատուկ օրերին, խումբ-խումբ այցելում էին գործարանը և դիտում այդ բնագավառում կատարված նոր գյուտերը։

Եվրոպայից վերադառնալուց հետո վառոդագործ Օհանեսի իրականացրած արդյունաբերական օգտակար գործերից էր նաև ասվիի արտադրության վերաբերյալ նրա ներկայացրած նախագիծը։ Այդ նախագծով նա հայտնում էր, որ Ստամբուլում ասվիի ֆաբրիկա կառուցելու համար անհրաժեշտ գործիքներն ու մեքենաները պետք է բերել Եվրոպայից։ Այդ գործի համար նա տալիս էր նաև անհրաժեշտ գումարը։ Արտադրությունը առաջին հերթին ասվի պիտի ապահովեր կանոնավոր զորքերին, իսկ հետագայում, եթե հնարավոր լինի ընդարձակել նրա արտադրությունը, երկրում կմնա մոտ 40—50 հազար քիսե գումար. բացի դրանից, ժողովըրդից մեծ թվով մարդիկ, աշխատելով այդ արտադրության մեջ, կապահովեն իրենց ապրուստը՝ Եթե պետական միջոցներով հնարավոր չլինի ապահովել արտադրության բոլոր ծախսերը, Օհանեսը

առաջարկում էր, որ այդ գործը իբրև մենաշնորհ տրվի իրեն։ Նա կձեռնարկի ասվլիի արտադրությունը։

Կայսերական ֆերմանով հրամայվեց սերասքերին, ծովակալ փաշաներին, որպեսզի այդ հարցի մասին խորհրդակցեն և իրենց կարծիքը հայտնեն։

(Հատ. V, էջ 117—118)

ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Հարկերի գանձման գործում վաղուց նկատվող անիրավությունները վերացնելու միջոցով ժողովրդին գոհացնելու համար. պետությունը օրինական և չափավոր հարկեր հավաքելու անհրաժեշտ միջոցառումներ էր ձեռնարկել։ Առաջին հերթին Խուդավենդիգյարի սանջաքում և Գելիբոլիի շրջանում, իսկ հետագայում ամեն կողմ տարածելու պայմանով, կալվածքների և եկամուտների հաշվառման համար նշանակվեցին ընդունակ պաշտոնյաներ, վերացվեցին որոշ իրերից և սննդամթերքներից գանձվող հարկերը։

Մանրամասնությունը հետևյալն է։

Հարկերը ժողովրդից պետք է գանձվեն կանոնավոր և արդարացի կերպով, պետք է լրիվ վերացնել և չեղյալ հայտարարել բոլոր տեսակի նորամուծությունները, գործակալների և նարկահավաքների ծառայությունները, ապօրինության և ոճիրի բնույթ կրող ամեն տեսակ բռնությունները։ Անհրաժեշտ է հարկեր նշանակել և գանձել ամեն մեկի վիճակի և կարողության համապատասխան, ոչ ոքի չազատել պետական օրինական պահանջներից։

Վերոհիշյալ պայմանները իբրև կանոն ընդունելով, հողի, կալվածքների, առևտրի և եկամտի համապատասխան, հունձքի ժամանակ յուրաքանչյուրի վճարելիք հարկը պետք է գանձել գործին ծանոթ մարդկանց միջոցով՝ արդարության և շարիաթի կանոններին համաձայն։

Տարեսկիզբը ընդունելով մարտ ամիսը, յուրաքանչյուրին պետք է տալ մեկ տարում վճարելիք հարկի գումարը ցույց տվող կնքված փաստաթուղթ, և գանձել տարեկան երկու մասնավճարով՝ Վերոհիշյալ պայմաններից դուրս ոչ մի անվան տակ կամ պատրվակով, կամ տարապարհակի ձևով ոչ ոքի չպետք է նեղել։ Որպեսզի ամեն ոք հանգիստ և ապահով լինի իր ունեցվածքի և ապրանքների համար, օսմանյան պետության բոլոր մասերում պետք է նշանակել հաշվառման պաշտոնյաներ և ամրապնդել ապահո-

վությունը։ Իբրև օրինակ, առաջին հերթին հաշվառում անցկացնել Խուդավենդիգյարի էյալեթում և Գելիբոլիի սանջաքում. սննդամթերքների և մրգերի համար տուրքերը վերացնել և «բարեբաստիկ դեպքից» հետո մահացածների ժառանգության գրավման կարգը վերացնելու համար տրված հրամանը հաստատել. սրանից հետո կառավարության կողմից ոչ հարուստի և ոչ էլ աղքատի ժառանգության նկատմամբ ոտնձգություն տեղի չպետք է ունենա։

Վերոհիշյալ հարցերի մասին արդարադատության մեջլիսում տեղի ունեցավ խորհրդակցություն, և արդարադատական այս նախաձեռնությունները հատուկ հրամանով հայտարարվեցին օսմանյան ժողովրդին։

Լրացում. Այս միջոցառումները հանդիսացել են թանզիմաթի սիստեմի սկիզբը։

(Հատ. V, էջ 122—123)

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՄԵՋԼԻՍԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Երկրի բարեշինության ամենահիմնական գործոնների՝ երկրագործության և առևտրի զարգացման պայմանները ուսումնասիրելու համար Բարձրագույն Դռանը կից կազմակերպվեց «երկրագործության և առևտրի հատուկ մեջլիս», որը հետագայում վերանվանվեց «հանրային շինարարության մեջլիս»։

(Հատ. V, էջ 128)

ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՌՈՃԻԿԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Մինչև այդ ժամանակը պաշտոնյաներն ու քարտուղարները նշանակված ռոճիկ չունեին։ Գավառների բարձրաստիճան պաշտոնյաները տարեկան մեկ անգամ վալիից ստանում էին իրեր «արժեքավոր բոխչա» (ծրար) անվան տակ և հին կարգով տրվող նվերներ։ Իսկ մյուս պաշտոնյաներն ու գրասենյակային ծառայողները գործի համար դիմողներից ստանում էին որոշ գումար «խարջ» (ծախք) և «ուջրեթ» (վարձ) անվան տակ և դրանով ապրում։ Կայսերական դիվանի գրասենյակների աշխատողներն ու մյուս պաշտոնյաները ապրում էին իրենց զեամեթների եկամտով։ «Բարեբաստիկ դեպքից» հետո օսմանյան պետության ներքին, արտաքին և ֆինանսական պաշտոնյաների դրությունը չէր փոխվել։ Թեև

ձեռնարկվել էին մի շարք բարենորոգումներ, սակայն զինվորականներից բացի, պաշտոնյաների, ծառայողների և քարտուղարների դրությունը մնացել էր նախկինը...

Միայն 1253 (1837) թվականի մարտ ամսի 3-ից սկսած պետության գանձարանից պաշտոնյաներին ռոճիկ նշանակվեց։

(Հատ. V, էջ 121—122)

«ԹԱՐԻԽ-Ի ԼՈՒԹՖԻ»

ՀԱՏՈՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Այս հատորում տարեգիրը խոսում է 1255—1256 (1839—1840) թթ. դեպքերի մասին։

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

Հայոց պատրիարքը հիվանդության պատճառով հրաժարական էր ներկայացրել։ Ակոբոսը պատրիարք է ընտրվում և հաստատվում փադիշահի կողմից։

(Հատ. VI, էջ 30)

ՍՈՒԼԹԱՆ ՄԱՀՄՈՒԴԻ ՄԱՀԸ

Սուլթան Մահմուդ II-ը 1255 (1839) թվականի ռեբի-ուլ ախըրի 9-ին մահանում է. գահակալում է սուլթան Աբդուլ Մեջիդը... Սուլթան Մահմուդը իշխել է 31 տարի՝ 1223—1255 (1808—1839) թթ.։

(Հատ. VI, էջ 31)

ԱՌԵՎՏՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ստամբուլի բնակչության համար անհրաժեշտ հացահատիկը գնվում էր շրջակայքից։ Ամբարված հացահատիկը բաժանվում էր հացագործների էսնաֆին[37]։

Այդ ժամանակ հացահատիկների գնումը մեծ անիրավությունների պատճառ էր լինում երկրագործ ժողովրդի համար։ Հետևաբար, քանի դեռ շարունակվում էր այդ վնասակար կարգը և ուժի մեջ էր մնում երկրից դուրս հացահատիկի վաճառքի արգելքը, երկ-

րագործությունը երբեք չէր զարգանա և երկիրը չէր կարող բարգավաճել։ Այս բանը հաստատվել էր փորձով։ Վերացնելով այդպիսի բռնի կարգը, երկրի բարօրության մասին հոգ տանելու, երկրագործությունը, առևտուրը, արդյունաբերությունը զարգացնելու անհրաժեշտ միջոցների իրականացման համար որոշվեց կազմակերպել առևտրի մինիստրություն։ Մինիստրի պաշտոնում նշանակվեց նախկին սերասքեր Խալիլ փաշան։ Հանրօգուտ շինությունների մեջլիսում Եվրոպայի հետ առևտրական գործերի կարգավորումը բերաթով հանձնարարվեց Առևտրի մինիստրությանը...

(Հատ. VI, էջ 28)

[ԴԱՇՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ]

Սուլթանը սովորություն չուներ կարևոր պետական գործերը անձամբ լուծելու և դրանց մասին վճիռներ կայացնելու։ Նա շատ գործեր թողնում էր վեքիլների հայեցողությանը։ Սակայն Եգիպտոսի պատերազմի սկզբին՝ Քոնիայի պատերազմում սադրազամ Ռեշիդ փաշայի՝ եգիպտացիների մոտ գերի ընկնելու և Իբրահիմ փաշայի բանակի մինչև Քյութահյա հասնելու կապակցությամբ, սուլթան Մահմուդը առանց Բարձրագույն Դռանը իրազեկ դարձնելու, գաղտնի նամակով դիմում է Ռուսաստանի ցարին և նրանից ռազմական օգնություն խնդրում։ Դրանից հետո կնքում է Հյունքյար Իսքելեսիի[38] դաշնագիրը։ Այդ անձնական համարձակությունը արժանի է ամենայն գնահատանքի...

Այս քայլով փադիշահը թե՛ սահմանափակեց թշնամու հաղթանակը և թե՛ գրգռեց եվրոպական պետություններին։ Այսինքն՝ Ռուսաստանի հետ կնքած Հյունքյար Իսքելեսիի դաշնագիրը հրահրեց եվրոպական պետությունների մրցակցությունը, որը հետագայում կարևոր նշանակություն ունեցավ Եգիպտոսի դեմ վճռական որոշում ընդունելու գործում։

(Հատ. VI, էջ 36—37)

ԹԱՆԶԻՄԱԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԸ և ԳՅՈՒԼԽԱՆԵԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

1839 թվականին սուլթան Աբդուլ Մեջիդի հայտարարած նոր և համեմատաբար ավելի լայն ռեֆորմները պատմության մեջ հայտնի են «Թանզիմաթ» (հաճախ «Թանզիմաթ-ի հայրիյե») անունով։

Թանզիմաթը հայտարարվեց Գյուլխանեի կայսերական հրովարտակով, որը մեծ հանդիսավորությամբ կարդաց Մուստաֆա Ռեշիդ փաշան։ Այդտեղ ներկա

էին ինքը՝ սուլթան Աբդուլ Մեջիդը, մինիստրները, ուլեմաները, քաղաքացիական և զինվորական բարձր պաշտոնյաները, հայոց և հունաց պատրիարքները, հրեաների խախամը, էսնաֆի կազմակերպությունների ներկայացուցիչները, օտար պետությունների դեսպանները և այլն։

Փադիշահը երդում տվեց, որ հավատարիմ է մնալու կայսերական հրովարտակին և նրա հիման վրա առաջիկայում դրվելիք օրենքներին։ Դրանից հետո թանզիմաթի կայսերական հրովարտակը պահվեց նվիրական «խըրքա»-ի շերիֆում...39

Ահա այսպես սկսվեց թանզիմաթի շրջանը։

Թանզիմաթի առաջին փուլը շարունակվում է մինչև 1856 թվականը, երկրորդ փուլը սկսվում է 1856 թվականին հայտարարված «բարենորոգումների ֆերմանով»40։

ՈՉ-ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԱԶԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻ ՔԱՆԻ ԿԱՐԳԵՐ

Փադիշահական հրամանագրով որոշվել էր, որ եթե երկրում ապրող մի ազգի տոնակատարությունները վնաս պատճառեն մյուս ազգերին, այդ մասին գիմում լինելու դեպքում, հարցը նախ պետք է հանձնարարել պատրիարքներին ու խախամապետին։ Այդ մասին նրանք իրենց ընդունած որոշումը պիտի հայտնեն Բարձրագույն Դռանը։ Վերջինս այդ ուղղությամբ քննություն կատարելուց հետո ըստ այնմ լուծում է հարցը։ Որոշման ձևը պաշտոնապես կծանուցվի ազգերի պետերին։

«Թաքվիմ-ի վեքայի»-ի համարներում վերոհիշյալ կանոնի մասին ծանուցվեց օսմանյան պետության բոլոր ռայաներին41։

(Հատ. VI, էջ 66—67)

ԻԼԹԻԶԱՄԻ ՍԻՍՏԵՄԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ42

«Թանզիմաթ-ի հայրիյե»-ի գործադրության սկզբում բոլորովին վերացվեց իլթիզամի սիստեմը և սկսվեց հարկերի թեթևացման և կարգավորման վերաբերյալ արդար կանոնների գործադրումը։ Անհրաժեշտ վայրերում նշանակվեցին պետական պաշտոնյաներ, որոնք կոչվեցին «գույքեր հավաքողներ» և ուղարկվեցին տեղերը։

Հաջի Սայիբ էֆենդին նշանակվեց ֆինանսական գործերի անկախ պաշտոնյա՝ ֆինանսների մինիստր...

(Հատ. VI, էջ 68—69)

ՋԵԶԻԵԻ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

Թանզիմաթի համաձայն հարկերի գանձման բոնի կարգը բոլորովին վերացնելու, ջեզիեի43 պաշտոնյաների նկատմամբ աղքատ

ռայաների բողոքներին վերջ տալու և ռայաների ամբողջ դասին շնորհ և արդարություն ցույց տալու նպատակով, շարիաթական ջեզիեի գանձման գործում շարիաթի հիման վրա տրված ֆեթվայով որոշվեց. ռայաների ապրած բոլոր գավառների (կազա) և գյուղերի հնուց ի վեր գոյություն ունեցող միավորները առանձնացնել և ռայաների ծերերի գլխավորի (կոջա բաշի) և փոխանորդների (վեքիլ) միջոցով գանձել այդ գավառների և գյուղերի յուրաքանչյուր անհատի և ընդհանուրի համար բաժին ընկած գումարը և ամբողջովին ուղարկել գանձարանին։

Հատուկ հրամանով բոլորին ծանուցվեց, որ անցյալ 1254 (1838) թվականի մուհարրեմ ամսից սկսած հարկերի գանձումը հանձնվել է հարկահավաքներին։

(Հատ. VI, էջ 69—70)

ՉԵՐՔԵԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կայսերական կալվածքներից Չիֆթիլերի ագարակը [Չիֆթլիք] այդ ժամանակ բնակեցված էր աղքատ և կարիքավոր 40 տուն չերքեզներով։ Գթալով նրանց վիճակին, այդ ագարակը վարելու և ցանելու համար, կայսերական հրամանով նրանց նվիրվեց 50 հազար ակչե։ Կայսերական գանձարանին և աղքատներին բեռ չլինելու համար, փադիշահական հրամանով այդ գումարը պիտի վճարեին Կարահիսարի և Էսքիշեհիրի մյութասարրիֆները՝ իրենց անձնական եկամուտներից։

Լրացում. *Այդ ժամանակվանից էլ սկսվում է կովկասյան ժողովուրդների գաղթելու պարտավորությունը։*

(Հատ. VI, էջ 89)

«ԹԱՐԻԽ-Ի ԼՈՒԹՖԻ»

ՀԱՏՈՐ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

Հնուց ի վեր հայ ազգի ազգային գործերը և ցեղի ծախսերը կատարվում էին պատրիարքարանի և ազգի մի շարք ղեկավարների միջոցով։ Ծախսերը վարելու համար, ազգի խնդրանքով, սկզբում իրավունք էր տրվել ընտրել 24 մարդ։ Վերջիններս, դուրս գալով իրենց իրավասության սահմանից, միջամտել էին կրոնի հարցերին, ընդհուպ մինչև պատրիարքի պաշտոնին վերաբերող հարցերը։ Նրանցից ոմանց դրդմամբ մի շարք օտար մարդիկ, գալով Բարձրագույն Դուռը, անկիրթ վարք ցուցաբերեցին։ Սրանց

գանգատները մանրամասն քննելու և արդարությունը ի հայտ բերելու համար, սադրազամի ներկայությամբ արդարադատության և հանրօգուտ գործերի մեջլիսներում երկու կողմից էլ հարցաքննվեցին որոշ մարդիկ։ Անթույլատրելի գործերով զբաղվողներից 8—10 անձ դատապարտվեց աքսորի և պատժվեց։ Հաշվի առնելով, որ պատրիարք Ստեփանը ծերության պատճառով չի կարող ըստ արժանվույն վարել գործերը, որպես հայոց պատրիարք հաստատվեց ժողովրդի ընտրած Աստվածատուր վարդապետը։

(Հատ. VII, էջ 18—19)

1258 (1842) թվականի դեպքերից

ՋԵԲԵԼ—ԴՐՅՈՒԶ[44]

Տեղեկություն ստացվեց, որ Բեյրութ-ուլ-Շամում[45] Ջեբել-Դրյուզում տեղի են ունեցել խառնակություններ և ապստամբություններ։ Նկատի առնելով այդ վայրերի կարևորությունը, տեղի ունեցած անկարգությունները խելացի և նպատակահարմար կերպով վերացնելու և երկրամասի ապահովությունը վերահաստատելու համար Բեյրութ-ուլ-Շամ ուղարկվեց սերասքեր Մուստաֆա Նուրի փաշան՝ որոշ քանակությամբ զինվորներով։

Մուստաֆա փաշան իր այդ անկախ պաշտոնը արժանվույն կատարելու և դրյուզների ու մարոնիների միջև առաջացած հակառակությունները և անհամաձայնությունը վերացնելու համար իրագործեց մի շարք անհրաժեշտ միջոցառում. Նկատի ունենալով Ջեբելի իշխող Բեշիր-ալ-Քասըմի կառավարելու անընդունակությունը, խռովության ժամանակ իր պարտականությունները իրագործելու անկարողությունը, նրան ուղարկեց Ստամբուլ և ժողովրդի պահանջով նրա զինվորականներից միրլիվա Օմեր փաշային նշանակեց Ջեբելի իշխող։ Այս ձևով երկրում վերահաստատվեց ապահովությունը, որի մասին Մուստաֆա փաշան տեղեկացրեց Բարձրագույն Դռանը։

(Հատ. VII, էջ 34)

ՏԱՍԱՆՈՐԴԻ ՀԱՐԿԱՀԱՎԱՔՆԵՐԻ (ՄՈՒՀԱՍՍԸԼ) ՎԵՐԱՑՈՒՄԸ

Նախորդ հատորում հիշվեց, որ թանզիմաթի հայտարարումից հետո յուրաքանչյուր կաղայում և սանջաքում Ստամբուլից հարկահավաքներ էին նշանակվել։ Չնայած կարգադրված էր, որ աշարի

անվան տակ երկրի ոչ մի մասում շարիաթական տասանորդի (աշար) մեկ տասներորդից ավելի ոչինչ չառնել, սակայն տասանորդի հավաքման գործում թույլ են տրված բազմաթիվ ապօրինություններ և անկարգություններ։

Այսպես, սկզբում հարկահավաքների միջոցով ստացված եկամուտը նախորդ տարիների համեմատությամբ շատ պակաս է եղել։ Դրա պատճառը այն է եղել, որ շատ տեղերում գործը առանց գլխացավանքի իր բնական ընթացքին է թողնվել և ավանդաբար գանձված աշարի եկամուտը շատ պակաս է եղել՝ Որոշ վայրերում էլ, պետության գովասանքին արժանանալու ցանկությամբ, հարկահավաքները, իրենց տրված հրահանգները ի չարը գործադրելով, խաբել են որոշ միամիտ մարդկանց, հավաքել են ավելի տասանորդ։ Քննությամբ պարզվեց, որ այդ տեղերում բռնություններով արձանագրված հարկերը մի քանի անգամ ավելի են եղել թանզիմաթի հայտարարումից առաջ գանձված գումարից... Այդպես է եղել Այդընի շրջանում, ուր հարկերը շատ ծանր են եղել, մի գլուխ ավանակ ունեցող գյուղացին տարեկան 400—500 դուրուշ հարկ է վճարել...։

Ռիզա փաշան իր շրջանում հարկահավաքների փոխարեն նշանակել է զինվորական էմիրներ։ Եղել են դեպքեր, երբ առաջվա նման իլթիզամի կարգով և աճուրդով տասանորդի գանձումը տրվել է տեղացի երևելիներին և ազդեցիկ մարդկանց, որոնք 1256—1257 թթ. հաշվով միանվագ տասանորդ են գանձել... Վերոհիշյալ և նման բազմաթիվ ակնհայտ ապօրինությունները, թանաքը դեռ չչորացած թանզիմաթի կայսերական հրովարտակով ամբողջ աշխարհին հայտնի իլթիզամի սիստեմը խպառ վերացնելու մասին պետության ընդունած կարգին լրիվ հակառակ դուրս եկան։

Նոր նշանակված մինիստրները, իրենց ուշադրությունը կենտրոնացնելով ֆինանսական վարչության գործերի վրա, բոլորովին անուշադրության մատնեցին քաղաքական ասպարեզը։ Այդ պատճառով, ինչպես հետո կպարզվի, կարճ ժամանակում այնպիսի փոփոխություններ առաջ եկան, որոնք ստիպեցին նորից սկսել թանզիմաթի բարենորոգումները....

(Հատ. VII, էջ 34—36)

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԿՈՄՊԱՆԻԱ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Երևելի սարրաֆները կազմակերպեցին «Անատոլիայի և Ռումելիի կոմպանիա» անունով երկու ապահովագրական ընկերու-

թյուն։ Այս ընկերություննների կողմից օսմանյան երկրի եկամուտները ստացվում էին կանխիկ կամ փոխանակագրով և ժամանակը լրանալուց հետո Ստամբուլի ընկերությունների միջոցով հանձնվում էին կայսերական գանձարանին կամ գանձարանի հանձնարարած վայրերին։ Այս կարգը հաստատված էր այն նպատակով, որ հեշտացվի գանձարանի գործունեությունը։

Մենաշնորհի կարգով ընկերության սարրաֆները ֆեսերին թուղրայի նշան էին կրում։ Բաշ-սարրաֆ [սարրաֆների գլխավոր] Ուղուն Արթինի տղային ևս մի նշան էր տրվել։

Այս կարգը շարունակվեց բավական երկար, բայց հետո վերացվեց, իսկ գանձարանի սարրաֆների ֆունկցիաները կամաց-կամաց դուրս գալով նրանց ձեռքից, ընկան օտար բանկիրների ճանկը։

(Հատ. VII, էջ 38—39)

1259 (1843) թվականի դեպքերից

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵՋԼԻՍԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Օսմանյան երկրում հողագործությունը ընդարձակելու և զարգացնելու անհրաժեշտ միջոցները ապահովելու համար, ֆինանսների մինիստրության տրամադրության ներքո կազմվեց «Երկրագործական մեջլիս» անունով նոր մեջլիս։

(Հատ. VII, էջ 66)

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՌԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Ինչպես հիշված է անցյալ տարիների պատմության մեջ, Բարձրագույն Դռան շենքը այրվել էր և Դուռը ժամանակավորապես փոխադրվել էր մասնավոր շենքեր։ Քանի որ շատ անպատշաճ էր այդ շենքերը անվանել Բարձրագույն Դուռ, անցյալ տարի, հենց Բարձրագույն Դռան հողամասում, ավելի ընդարձակ տերիտորիայի վրա կառուցվեց քարուկրից նոր շենք։ 1259 թվականի ռամազան ամսին ավարտվեց շենքի կառուցումը և կահավորումը...

Բարձրագույն Դռան շենքը կառուցող Իստեֆան քալֆային[40] շնորհվեց պատվի նշան։

(Հատ. VII, էջ 69—70)

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Մինչև 1259 (1843) թվականը զինվորական ծառայության համար որոշակի ժամանակ չէր սահմանված. զորակոչիկները ըստ վիճակի չէին հավաքագրվում. երկրի բոլոր կողմերում, քաղաքացիական պաշտոնյաների և սպաների միջոցով, զինվորական ծառայության ենթակա, ոչ ոք չունեցող աղքատ և անօգնական երիտասարդներին, ինչպես ավազակների, զոռով բռնում և տանում էին զորանոցները։

Զինվորական ծառայության նոր նախագծով զինվորների ծառայության ժամկետը սահմանվում է հինգ տարի, զինվորների հավաքագրումը կատարվում է ըստ վիճակների։

Զինվորական ծառայության կոչվածները քանի դեռ ողջ էին, ծառայությունից չէին ազատվում. խաղաղ ժամանակ, ով միջոց ուներ, հրամանով կարող էր գնալ ընտանիքը տեսնելու։

Այս վիճակը շարունակվեց 1242 թվականից մինչև 1259 թվականը, ուղիղ 17 տարի։

Թեև ամենուրեք կազմակերպվեցին պահեստի դասի զինվորներ և տրվեցին կանոնավոր բանակին, սակայն սրանք բացառիկ պայմաններում ծառայության էին կանչվում և օրենքով, տարեկան մի քանի անգամ իրենց ապրած վայրերում զբաղվում էին զինավարժությամբ։ Կանոնավոր զինվորական ծառայության համեմատությամբ պահեստայինների ծառայությունը թեթև էր...

(Հատ. VII, էջ 74—75)

ՆՈՐ ԶՈՐԱՀԱՎԱՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԸ

Քանի որ եկել էր զինվորական ծառայությունը կարգավորելու ժամանակը, Բաբ-ը սերասքերում[47] հրավիրված մեջլիսի խորհրդակցության առթիվ տրված հրամանագրով, այս տարվա մարտ ամսվա սկզբից զորակոչված զինվորների ծառայության ժամկետը սահմանվում է հինգ տարի։ Ծառայության ժամկետը լրանալուց հետո զինվորները ազատ էին արձակվում և փոխարինվում նորերով։ Ազատ արձակվելուց հետո, որպեսզի զինվորական ծառայությունը չմոռանան, հերթով, տարեկան մեկ ամիս ծառայում էին իբրև պահեստի [ռեդիֆ] զինվոր՝

Նկատի ունենալով զինվորական ծառայության կարևորությունը, սպաները քաղաքական գործերով չպետք է զբաղվեին։ Կանոնավոր զորքերը բաժանվում էին հետևյալ բանակների.

1. Հատուկ (հասսա) անձնապահ բանակ[48]
2. Ստամբուլի բանակ
3. Ռումելիի բանակ
4. Անատոլիայի բանակ
5. Արաբիայի բանակ։

Այս բանակների համար նշանակվեցին զինվորական բարձրաստիճան հրամանատարներ և բազմաթիվ քաղաքացիական ու զինվորական անձանց ներկայությամբ մեծ հանդիսավորությամբ կարդացվեց փադիշահական բարձր հրամանը, որից հետո զոհեր [մատաղ] մատուցվեցին. աղոթքից հետո տրվեց թնդանոթի հազար համազարկ և տեղի ունեցավ զինվորական պաշտոնական շքերթ։

Սկզբում բանակային կազմը սահմանափակվում էր երեք բանակով։

Այնուհետև հրաման արձակվեց նույն ձևով բանակ կազմակերպել նաև Բերիյեթ ուլ-Շամում և Էրզրումում։

(Հատ. VII, էջ 77—80)

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Քանի որ Հայոց պատրիարք Աստվածատուրը ծերացել էր, ֆիզիկապես անկարող էր վարել ժողովրդի գործերը, նրա ներկայացրած հրաժարականի հիման վրա նոր պատրիարք նշանակվեց Իզմիրի առաջնորդ Մատթեոս վարդապետը։

(Հատ. VII, էջ 90)

«ԹԱՐԻԽ-Ի ԼՈՒԹՖԻ»

ՀԱՏՈՐ ՈՒԹԵՐՈՐԴ

Ինչպես վերևում նշվեց, Լութֆին կարողացել է տպագրել տալ իր աշխատության յոթ հատորները միայն, իսկ 8-րդ հատորի նյութերը ձեռագիր վիճակում ներկայացրել է սուլթանին։

Լութֆիի պատմության 8-րդ հատորը լրացրել և հրատարակել է թուրք հայտնի գրող և պատմագիր Աբդուրահման Շերեֆը, որը Լութֆիից հետո փաստորեն եղել է օսմանյան պետության վերջին տարեգիրը։

Աբդուրահման Շերեֆը Լութֆիի պատմության 8-րդ հատորի առաջաբանում այդ մասին գրում է.

«Լութֆի էֆենդին իր տարեգրությունը չի վերջացրել 1260 (1844) թվականին և իր գրի առածները (7-րդ հատորից հետո) հայտնի չէ ինչ պատճառով չեն տպագրել։ Այդ թվականին հաջորդած տարիներին վերաբերող նյութերը ներկայացրել է սուլթանին... Հետագայում ինձ հաջողվեց Յըլդըզի պալատի[49] գրադարանում փնտրել և գտնել Լութֆիի շարադրած նյութերը մինչև 1284 (1867) թվակա-

նը, որոնք կազմում էին չորս հատոր։ Այս հատորների բովանդակությունը նախորդ հատորների նման հիմնված չէր նոր ուսումնասիրությունների և գիտական քննադատության վրա, ինչպես խոստովանում էր ինքը՝ հեղինակը...

Ընթերցողներին օգտակար լինելու դիտավորությամբ, համապատասխան մասերում ավելացրել եմ արտաքին քաղաքականության հարցերին և պետությունների քաղաքական հարաբերություններին վերաբերող առանձին հոդվածներ։

(Հատ. VIII, էջ 2—3)։

1261 (1845) թթ. դեպքերից

ՓԱԴԻՇԱՀԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՈՒՌ

Անբավարար գտնելով զինվորական գործի կարգավորումը և ծրագրված կարգերի իրականացումը, նորին վսեմություն սուլթան Աբդուլ Մեջիդը անձամբ գալիս է Բարձրագույն Դուռ և բոլորի ներկայությամբ կարդացվում է նրա բարձր հաթթը (հրովարտակը)։

Փադիշահը իր հաթթում առաջարկում էր ընդհանուր բարենորոգումների իրականացմանը հսկելուց բացի 1. կառուցել և բաց անել դպրոցներ. 2. Ստամբուլում հիմնել հիվանդանոցներ զարիբների (պանդուխտ) և աղքատների համար. 3. նման հիմնարկներ բաց անել նաև գավառներում։ Վերոհիշյալ միջոցառումների արդյունքի մասին զեկուցել փադիշահին։

(Հատ. VIII, էջ 9—10)

ԹԱՆԶԻՄԱԹԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Ինչպես հայտնի է, թանզիմաթը սկզբում բոլոր էյալեթների վրա միանգամից չտարածվեց. փորձի համար վերցվեցին միայն որոշ շրջաններ։ Հաշվի առնելով թանզիմաթի օգտակարությունն ու առավելությունները, որոշվում է այդ նոր կարգերը իրագործել նաև Անատոլիայում՝ Էրզրումի և Դիարբեքիրի էյալեթներում։ Այդ էյալեթների համար դեֆթերդար են նշանակվում. Էրզրումի էյալեթում՝ Վեյի փաշա-զադե Սելիմ բեյը, Դիարբեքիրի էյալեթում՝ Բաղդադի վալի Օմեր բեյը։

(Հատ. VIII, էջ 18)

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Փադիշահական հաթթի հիման վրա այս հարցը նորից քննության է առնվում բարձր մեջլիսում։ Որոշվում է Բարձրագույն Դռնում հրավիրել գիտական, զինվորական և գրասենյակային մաս-

նագետներից ժամանակավոր մեջլիս (մեջլիսին մասնակցում էր նաև տարեգիր Էսադ էֆենդին)։ Մեջլիսը կազմում է թաղային դըպրոցների բարեկարգման նախագիծ։ Որոշվում է հիմնել նաև միջնակարգ դպրոցներ։

(Հատ. VIII, էջ 19)

ՀԱՑԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ «ֆրանջելե» անունով հայտնի հացը բազմատեսակ լինելու պատճառով գները խախտվում են և ժողովուրդը վնասներ է կրում, կառավարությունը որոշեց արտադրել երեք տեսակի հաց։ Լավագույն տեսակի հացի օքքան[50] վաճառել 90 փարայով[51], միջին և հասարակ տեսակի հացի օքքան՝ 50 փարայով։

Սրա հիման վրա կարգի բերվեց նաև այլ տեսակի հացերի վաճառքը։

(Հատ. VIII, էջ 20)

ԲԺՇԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Բժշկական գործերի կարգավորման համար փադիշահական հրամանով մի շարք միջոցներ գործադրվեցին։

Նկատի առնելով, որ Ստամբուլում բժիշկների մեծ մասը ապրում է Բերայում և Ղալաթայում, իսկ բուն Ստամբուլի[52] բնակիչները դժվարությամբ են օգտվում բժիշկների ծառայությունից, Ստամբուլի կենտրոնում սուլթան Բայազիդի շրջանում հիմնվեց դեղատուն և սահմանվեց բժշկական դպրոցի բժիշկներից 10 բժշկի և երկու վիրաբույժի հերթապահություն։ Բժիշկներին ռոճիկ նշանակելու և աղքատներին ձրի դեղ բաց թողնելու համար պետական գանձարանից հատկացվեց որոշ դումար։ Հրաման տրվեց աղքատներից բժշկության համար վարձ չպահանջել։

(Հատ. VIII, էջ 21)

ՌՈՒՍԱԿԱՆ ԳԱՀԱԺԱՌԱՆԳԸ ԱՅՑԵԼՈՒՄ Է ՍՏԱՄԲՈՒԼ

Ցարի որդին՝ Մեծ դուքս Կոստանդինը իր ճանապարհորդության ընթացքում ոչ պաշտոնական այցով լինում է Ստամբուլում. Փադիշահի կարգադրությամբ, Մեծ դուքսին դիմավորում և ընդու-

նում են մեծ հանդիսավորությամբ։ Նյուրին հնարավորություն է տրվում այցելել և դիտել իր ցանկացած վայրերը և շինությունները Ստամբուլում (կայսերական նավատորմը, նավաշինարանը, զորանոցները և այլն)։ Սուլթանական պալատում Մեծ դուքսի պատվին տեղի է ունենում մեծ ընդունելություն։ Մեծ դուքսը այցելում է նաև Իզմիր, Բրուսա քաղաքները, Միջերկրական ծովի նեղուցը [Դարդանել] և էգեյանի կղզիները։

Այս առթիվ Ռուսաստանի ցարից ստացվում է հատուկ շնորհակալական գրություն։

(Հատ. VIII, էջ 26)

* * *

Ինչպես գրվեց, 1261 (1845) թվականի դեպքերի շարքում, Էրզրումի էյալեթը ևս դասվել է այն շրջանների շարքը, որտեղ գործադրվում է թանզիմաթը։ Սակայն այդ էյալեթի մասերից Վանի սանջաքի բնակիչները անկարող էին գնահատել [թանզիմաթի] արդարության շնորհները՝ Նրանց այդ տգիտության ճիրաններից ազատելու և արթնացնելու համար Վան է ուղարկվում բարձր մեջլիսի (մեջլիս-ի վալա)[53] անդամներից Մեհմեդ Քյամիլ փաշան։ Այս մասին «Թաքվիմ-ի վեքայի»-ում պաշտոնապես հայտարարվել է հետևյալը.

«Հայտարարություններից երևում է, թե իբր Վանի ժողովուրդը չի ընդունում «Թանզիմաթ-ի հայրիյեն»։ Քանի որ Վանում ևս որոշ ազդեցիկ մարդիկ բացասական վերաբերմունք են ցուցաբերում բարձր հրամանին, Վան ուղարկվեց վերոհիշյալ Քյամիլ փաշան»։

ԾՈՎԱՅԻՆ ԿԱՄՐՋԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Նկատի ունենալով Ստամբուլի ծովեզերքին, հին մաքսատան և Ղալաթայի միջև կամրջի կառուցման անհրաժեշտությունը, հրաման շնորհվեց կառուցել նոր, ամուր կամուրջ։ Ներկայիս երկաթե կամրջի փոխարեն կառուցվեց կանոնավոր կամուրջ և երթևեկությունը հեշտացվեց։ Անհարմար համարվեց հիշյալ վայրում կամրջի կառուցումը ծովային հին կամրջի նման լաստերի վրա։

Որպեսզի կամրջի տակից ծովային երթևեկությունն ապահով և անվտանգ լինի և վատ եղանակի ժամանակ կամուրջը չվնասվի,

համար համարվեց կամուրջը կառուցել դուբաների[34] վրա։ Երբ վերջացավ կամրջի շինարարությունը, որոշված օրը մի շարք բարձրաստիճան անձանց հետ փադիշահի կառքը Կարա-Քյոյից անցավ նորակառույց կամրջի վրայով։ Փադիշահը հրամայեց, որ երեք օր կամրջի վրայով անցնողներից վարձ չվերցնեն։ Շինության ծախսերը ծածկելու համար կամրջից անցուդարձի համար նշանակվեց հետևյալ սակագինը.

հետիոտն անցորդներից	5	փարա
բեռով բեռնակրից	10	»
չբեռնված ձիուց	20	»
բեռնված ձիուց	40	»
դատարկ կառքից	100	»
բեռնված կառքից	200	»
ոչխարի, այծի և գառան մեկ գլխից	3	»

(Հատ. VIII, էջ 75)

1263 (1846) թվականի դեպքերից

ԳԵՐԻՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Մինչև այդ Ստամբուլում, Մեծ շուկայի մոտակայքում էսիր փազար (գերիների շուկա)[35] կոչված տեղում, ապրանքի ու իրերի նման գնվում ու վաճառվում էին բազմաթիվ խեղճ մարդիկ «ստրուկ» ու «ստրկուհի» անվան տակ։ Առևտուրը տեղի էր ունենում ամեն օր աճուրդի կարգով։ Այնտեղ բնակվող գերեվաճառ էսնաֆները իրենց օդաներում պահում էին մեծ ու փոքր, սպիտակ ու սև, հաբեշ ստրուկներ և ստրկուհիներ։ Ստրուկների և ստրկուհիների առուծախով զբաղվողները գալիս էին այս շուկան և առևտուր անում։ Ժողովրդից շատերը այնտեղ գնում էին դիտելու համար։

Սովորության համաձայն ամեն տարի մուհարրեմ ամսի սկզբին նորին վսեմություն փադիշահը այցելում էր Բարձրագույն Դուռ։ Այս տարի ևս նորին վսեմության ներկայությամբ գումարված ընդհանուր մեջլիսում, երբ քննվում էին բարենորոգումների և արդարադատության հարցերը, նորին վսեմություն փադիշահը, խոսելով գերիների շուկայում գոյություն ունեցող զրկանքների, անիրավությունների վերաբերյալ իր լսածների մասին, հայտնեց, որ շարիաթին և մարդկությանը հակառակ նման վիճակը շարունա-

կել անթույլատրելի է։ Հետայսու ժողովրդի վիճակին վերաբերող գործերը պետք է կատարվեն շարիաթի թույլտվության սահմաններում և պետք է անմիջապես ցրել գերիների շուկան։

Այս մասին շնորհված փադիշահական հրամանով և ֆերմանով գերիների շուկան անմիջապես վերացվեց։

(Հատ. VIII, էջ 133—134)

ԲԵԴԻՐԽԱՆ ԲԵՅԻ ՀԱՐՑԸ

Բեդիրխան բեյը[36] բռնությամբ և ապօրինի գրավել էր Մոսուլի վիլայեթին կցված Ջիզրեի գավառի գավառապետությունն ու շրջանը և բոլորովին անուշադրության էր մատնում Բարձրագույն Դռան բազմաթիվ խրատներն ու նախազգուշացումները։ Հետևաբար այդ շրջանում արդարադատությունը և կարգը վերականգնելու համար անհրաժեշտ համարվեց վերջ դնել Բեդիրխան բեյի անկարգություններին։ Անատոլիայի բանակի մարշալ Օսման փաշան բավականաչափ զինվորական ուժով շարժվեց դեպի Ջիզրե։ Բեդիրխան բեյը չզգաստացավ նախազգուշացումներից, չլսեց մարշալ Օսման փաշայի խրատները և գիշերով հարձակվեց օսմանյան բանակի վրա։ Անհրաժեշտ եղավ զսպել ու պատժել Բեդիրխան բեյին։ Տեղի ունեցած մի շարք մարտերից հետո նրա խռովությունը ճնշվեց։

Բեդիրխան բեյը չկարողացավ դիմանալ իր ապաստանած Ուտակ բերդում, Օսման փաշայի հրամանատարությամբ աջ և ձախ ճակատի կողմից երեք թևով կատարված ճնշմանն ու պաշարմանը և «աման» ու ներում խնդրեց։ Օսման փաշայի հրամանի համաձայն Բեդիրխան բեյը իր երկու որդիների հետ ապաստանեց օսմանյան բանակում։ Նրա հետ գործող հայտնի Մահմուդ խանն էլ դիմեց գնդապետ Ահմեդ փաշային։

Երբ այս լուրը Ստամբուլ հասավ, նրանց շնորհված բարձր հրամանը հայտնվեց Օսման փաշային։

Բեդիրխան բեյի և Մահմուդ խանի խռովությունը այդ ժամանակ բավականին կարևոր իրադարձություն էր, որովհետև նրանց ապաստանած բերդը խիստ ամրակուռ էր և բերդի վրա հարձակումը շատ դժվար։ Նրանք [ապստամբները] փակվեցին բերդում և հարձակվող փադիշահական բանակի վրա քարեր էին թափում, և մեկ-մեկ էլ հրացան և թնդանոթ էին արձակում։ Անատոլիական բանակի շտաբի պետ, նշանավոր Սաբրի փաշան ձախից, մարշալ Օմեր փաշան կենտրոնից առաջ շարժվելով, ամեն կողմից թնդա-

նոթ և հրացան կրակելով, «հավանից» խումբարա[57] արձակելով, երեք գիշեր բերդը պահեցին պաշարված վիճակում։ Չորրորդ օրը Բեդիրխան բեյը բերդի բարձունքից «աման» կանչելով խնդրեց դադարեցնել պատերազմական կրակը։ Եվ քանի որ իրենց ընտանիքին և մերձավորներին «աման» տրվեց, իր երկու զավակների և հատուկ հպատակների հետ եկավ կայսերական բանակը, խոստովանեց իր հանցանքն ու ոճիրը և մեծ ամոթով գթասիրտ փադիշահից գթություն և ներում խնդրեց։ Հրաման ստացվեց նրան Ստամբուլ ուղարկելու մասին։

Ահա այս կերպ վերջ դրվեց Բեդիրխան բեյի խռովությանը։ Հիշյալ միրը այդ շրջանում բավական երկար ժամանակ անկախություն էր ձեռք բերել ու հոչակ վաստակել և չենթարկվելով, չհպատակվելով Մոսուլի վալիներին, ապստամբել էր։

Իր շրջանի դիրքն ամուր էր և Քուրդիստանում նրա ունեցած ուժն ու կարողությունը պատճառ էին եղել, որ ավելանան նրա անհնազանդությունն ու համառությունը։ Կառավարությունը, որպեսզի կարողանա առանց խռովությունների շարունակել իր իշխանությունը, երբեմն հատուկ պաշտոնյաներ էր ուղարկում նրան կառավարության կողմը գրավելու համար։ Սակայն այդ բոլոր փորձերն ու ջանքերը մնացին ապարդյուն, նույնիսկ վսեմաշուք ծերակույտական, հանգուցյալ Քեմալ փաշան այդ հարցով մի քանի անգամ Մոսուլ ուղարկվեց։ Չնայած մինչև այդ պետական պաշտոնյաներից ոչ ոք չէր կարողացել գնալ Ջիզրե, Քեմալ փաշան գնում է և իրեն տրված պաշտոնն ու հրամանները անձամբ զգուշորեն հայտնում Բեդիրխան բեյին։ Քանի որ Բեդիրխան բեյը թուրքերեն չէր իմանում, Քեմալ փաշան իր նպատակը բացատրում է պարսկերեն։ Եվ որովհետև փաշայի խոսքը ազդեցություն չի գործում, ինչպես վերևում նշվեց, հարցը վճռվում է զենքի ուժով։

Բեդիրխան բեյին Ստամբուլ ուղեկցելու համար Դիարբեքիրի նախկին քայմաքամ Ույուշտի բեյին ու Բաղդադի Աբդուլքադեր աղային միրմիրանություն է տրվում։ Այս Աբդուլքադերը հետագայում երկար ժամանակ եղել է Իզմիրի մաքսապետ...

(Հատ. VIII, էջ 142—144)

ԲԵԴԻՐԽԱՆ ԲԵՅԸ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

Բեդիրխան բեյը հայտնի քուրդ էմիրներից է։ Նա 1263 (1845) թվականին Քուրդիստանում Թիարի ասորիներին ենթարկել էր իր հպատակությանը։ Այդ ժամանակ Մոսուլում անգլիական հյուպա-

տոս սըր Հանրի Լայարդի հաղորդած տեղեկության հետևանքով Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները միաձայն և կտրականորեն պահանջում են, որ նա հեռացվի Քուրդիստանից։

Սադրազամ Ռեշիդ փաշան որոշել էր Բեդիրխան բեյին Ստամբուլ կանչել։ 1263 (1846) թվականին Բեդիրխան բեյը գալիս է Ստամբուլ և արժանանում նորին վսեմություն փադիշահի տեսությանը։ Փադիշահը հրամայեց և ֆերման տվեց, որ [Քուրդիստանի] դեպքերի մասին բացատրություններ տա։ Նա արտասանում է խայամի հետևյալ քառյակը.

Մեղք չգործած մարդը աշխարհում ո՞վ է, ասա,
Այն մարդը, որ մեղք չգործեց, ի՞նչպես ապրեց, ասա,
Ես վատություն անեմ, դու վատ պատիժ տաս,
Ապա իմ և քո մեջ ի՞նչ տարբերություն կա, ասա։

Այս քառյակը փադիշահին մեծ հաճույք և բավականություն պատճառեց։ Բեդիրխան բեյի վարմունքը արժանանում է շահի բարձր հավանությանը։ Բեդիրխան բեյին բավարարելու, թե՛ ներկայում և թե՛ ապագայում նման վատ մտքերով չտարվելու համար. Ռեշիդ փաշան Բեդիրխան բեյին ցույց տալով սեղանի վրա եղած սև կազմով մատյանը, ասում է. «Բեդիրխան բեյ, ձեր գործերը արտաքուստ թեև այդպես սև են երևում, սակայն իրականության մեջ մեր պետությունը ընդունում է, որ նրանք զերծ են մատյանի միջի սև կետերից...»։

Բայց, քանի որ եվրոպացիները սպասում էին, թե Թիարի դեպքերի համար օսմանյան կառավարությունը ինչպիսի վերաբերմունք ցույց կտա Բեդիրխանի նկատմամբ, վերջինս Ստամբուլ գալուց երեք շաբաթ հետո ուղարկվեց Կանդիա։

Նորին վսեմություն դրախտաբնակ Ղազի սուլթան Աբդուլ Մեջիդը Կրետե այցելելու ժամանակ, Բեդիրխան բեյը մի քանի անգամ նորից արժանանում է փադիշահի տեսությանը։ Հաշվի առնելով, որ նա բազմաթիվ զավակների տեր է, փադիշահը նրան պարգևների է արժանացնում։

... Բեդիրխանը տասը տարի Կրետեում ապրելուց հետո լուր է ստանում, որ արժանացել է փադիշահական ներման, և հրամայվում է գալ Ստամբուլ։ Միաժամանակ սադրազամ Ռեշիդ փաշան Կրետեի վալի Վելիեդդին փաշային հայտնում է, որ անհրաժեշտ է սիրաշահել Բեդիրխան բեյին և Ստամբուլ ուղարկել։ Անձամբ Բեդիրխան բեյին 150 հազար ղուրուշ ճանապարհածախս է

հատկացվում, նրա միհմանդար[58] նշանակված վիլայեթի կնքապահ Իբրահիմ էֆենդիին՝ 25 հազար ղուրուշ, և հատուկ շոգենավով Ստամբուլ են ուղարկվում։

Ստամբուլ գալուց հետո Բեդիրխան բեյին 5000 լիրա նվեր է տրվում, և նա շատ պարգևների է արժանանում։ Նրան հրամայվում է, որ նորին վսեմություն փադիշահին ներկայացնի իր պահանջները։ Այս կերպ փադիշահը ապահովում է նրա ներկան և ապագան։ Բեդիրխան բեյին այլևս ոչինչ չի մնում անել, քան աղոթել փադիշահի կյանքի և փառքի համար։

Բեդիրխան բեյը նորից Կրետե է վերադառնում և այնտեղ ապրում ևս 8 տարի։ Կրետեի հեղափոխության ժամանակ Կանդիայում և Հանիաւում քրիստոնյա և իսլամ բնակիչների միջև ծագած թշնամությունը վերացնելու համար դիմում են նրա միջնորդությանը։ Նա Կանդիայի քրիստոնյա բնակիչներին իր տանն է պահում։ Մի այլ անգամ վիլայեթի կողմից ուղարկված շոգենավով հրավիրվում է Հանիա, ուր հորդորներով և ազդու միջոցառումներով վերջ է տալիս ծագած խռովություններին։ Դրանից հետո իր ընտանիքով նորից Ստամբուլ է գալիս։ Այստեղ 7 տարի ապրելուց հետո փոխադրվում է Շամ, որտեղ 2 տարի հետո մեռնում է։

Բեդիրխան բեյը մահանալու ժամանակ ուներ 21 տղա և 21 աղջիկ զավակ։ Իր կյանքում ունեցել է 91 զավակ։

Սըր Հանրի Լայարդը Ստամբուլում դեսպան է եղել 1877—1879 թթ.։ Դեսպանությունից հեռացվել է իբրև թոշակառու*։

* * *

Մինչ վերևում հիշված Ջիզրեի խռովությունը Քուրդիստանի այդ շրջանում մի շարք հարստահարիչ (մյութեղալիբե)[59] քուրդ ղեկավարների իշխանության սահմաններում գրեթե գոյություն չուներ օսմանյան պետական ղեկավար ուժ։ Սրա պատճառն այն էր, որ վերոհիշյալ շրջանները գրավելու ժամանակ սուլթանական հաթթերով և ֆերմաններով այգ վայրերի իշխանությունը իբրև «յուրթլուք» և «օջաքլըք» իր բոլոր կողմերով տրվել էր տվյալ երկրի ղեկավարներին։ Որոշ ժամանակ անց այդ ղեկավարները, անտեղյակ ժամանակի պայմաններին և պահանջներին, գործել են վայրենաբար։ Այնպես որ, այդպիսիներին կարգի բերելու գործը [այսինքն՝

---

* Բեդիրխան բեյի մասին վերոհիշյալ տեղեկությունները առնված են մի թուրք դիվանագետի քաղաքական գրություններից (ծանոթ. հրատարակչի)։

կենտրոնական իշխանությանը ենթարկելու գործը] դարձել էր անհրաժեշտություն։

Ինչպես նկարագրվեց վերևում, Բեդիրխան բեյի խռովության ճնշումը հանդիսացավ Քուրդիստանում բարենորոգման սկիզբը։ Օսմանյան պետությունը առանց ժամանակ կորցնելու ձեռնարկեց այդ բարենորոգումների իրականացմանը։

Այս խռովությունը ճնշելու գործում ծառայություն մատուցած էմիրներին, սպաներին և այլ պաշտոնյաներին վարձատրելու համար հատուկ հրամանով պատրաստված նշանները, վեքիլների հատուկ մեջլիսի ստորագրությամբ կազմված գրությունը ներկայացվեց փադիշահին, և կայսերական հատուկ հաթթով հրամայվեց իրագործել այդ։ Այդ գրությունը իրենց կնիքներով կնքողներն էին՝ սադրազամ Ռեշիդ փաշան, շեյխ-ուլ-իսլամ Արիֆ Հիքմեթ էֆենդին, սերասքեր Սայիդ փաշան և ուրիշներ, մոտ 20 մինիստր և բարձր աստիճանավոր...

(Հատ. VIII, էջ 148—149)

1264 (1848) թվականի դեպքերից

Անցյալ տարվա դեպքերի շարքում հիշվեց, որ Բեդիրխան բեյի խռովության ճնշումով Քուրդիստանում հաստատվեց ապահովություն և նոր կազմակերպված էյալեթում կառավարման գործերը կարգի բերելու համար վալի նշանակվեց նախկին անվանի վեզիրներից էսադ Մուխլիս փաշան։

Օսման փաշան, որ Բեդիրխան բեյի խռովությունը ճնշելու գործում մեծ ծառայություն էր մատուցել և հատուկ պարգևի արժանացել, Ստամբուլ կանչվեց, որտեղ հիվանդացավ և մի քանի օր հետո մահացավ։ Նրա փոխարեն Անատոլիայի բանակի մարշալ նշանակվեց գնդապետ Գյոզլյուքլյու Ռեշիդ փաշան...

ՏԱՐԲԵՐ ՀԱՐՑԵՐ

Դյուզ-օղլու խոջա Կարապետի և խոջա Միհրանի[60] թղթի ֆաբրիկայի կառուցումը Իզմիրում արդեն ավարտվել էր, Ստամբուլում ստացվեց նրա արտադրությունը և սկսեց գործածվել պետական հիմնարկներում և այլ վայրերում։

Հավելված: Երկրում երկար ժամանակ գործածվում էին Իզմիրի ֆաբրիկայի թղթերը, իսկ օտար երկրներից ներմուծված թղթե-

րը, գոնե կառավարության կողմից, չէին գնվում, որից պետությունը մեծ օգուտ էր ստանում։ Կամաց-կամաց այդ արտադրությունն արժանանում էր ընդհանուր հավանության... Սակայն որոշ ժամանակ հետո ֆաբրիկան փակվում է, չկարողանալով մրցել արտասահմանյան ապրանքների հետ։

Թղթի ներմուծման համար ամեն տարի մեր երկրից միլիոններով ակչե է դուրս գնում։

(Հատ. VIII, էջ 153—154)

1265 (1849) թվականի դեպքերից

ՀԵՔՅԱՐԻ ԷՅԱԼԵԹԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Երկար ժամանակ կողոպուտով և ավազակությամբ զբաղվող քուրդ ավազակ Նուրի բեյը, չանսալով իրեն տրված խրատներին ու խիստ պատվերներին, շարունակում էր իր ավազակությունները։ Անատոլիայի բանակի մարշալը բավականաչափ մեծ զինվորական ուժերով ուղարկվեց նրա դեմ։ Չդիմանալով ուժեղ հարձակման, Նուրի բեյը ստիպված եղավ փախչել։ Դրանից հետո նվաճվեց Հեքյարի կոչված ընդարձակ երկրամասը, կառավարության կողմից բավարարվեցին այդ երկրամասի վարչական կարիքները։ Այսպես, Հեքյարի սանջաքին միացվեցին շրջակա մի քանի լիվաները և կազմվեց Հեքյարիի էյալեթ անունով մի ընդարձակ նահանգ, որտեղ վալի նշանակվեց Թերհալեի մութասարրիֆ, նախկին վեզիր Զիյա փաշան։ Բայց, քանի որ անհրաժեշտ համարվեց, որ նա գնա Վիդին, Հեքյարիի վալի նշանակվեց գնդապետ Իզզեթ փաշան, որը Հեքյարիի վարչությունը բարելավելու պաշտոնով գործում էր այդ շրջանում։

(Հատ. VIII, էջ 175)

ՇԵՅԽ ՇԱՄԻԼԻ ՄԱՍԻՆ

...Կովկասի նվաճումը Ռուսաստանին մեծ դժվարություններ է պատճառել։ Այս երկրամասում ապրող լեռնցի ցեղերը և աշիրեթները մինչև վերջին շունչը պաշտպանել են իրենց երկիրը։ Նրանց հաստատակամությանն ու համարձակությանը պետք է ավելացնել նաև երկրի ամրությունն ու անառիկությունը, որոնց շնորհիվ բնիկների [դիմադրական] ջանքերը բավական ժամանակ հաջողություն են ունեցել։

Բայց, քանի որ վերոհիշյալ ցեղերը չէին կարող դիմադրել կանոնավոր զորքերի վիթխարի ուժերին, առանձին-առանձին գրավվեցին Կաբարթայը, Չերքեզիստանը, Դաղստանը, Իմերեթիան, Մեգրելիան, Վրաստանը և Շիրվանը։ Այնպես որ, այդ ժամանակ կովկասյան բանակում նշանակված ռուս սպաների համար կենդանի հայրենիք վերադառնալը դարձել էր հազվագյուտ երևույթ։ Սակայն շեյխ Շամիլը ռուսներին զբաղեցրել է 25 տարի։

Շեյխ Շամիլը Դաղստանի հայտնի շեյխերից է։ Երբ Դաղստանի բեյերը հավաքվեցին Ռուսաստանի հարձակումների դեմ անհրաժեշտ միջոցառումները մասին խորհրդակցելու, այդ մեջլիսին հրավիրեցին նաև շեյխ Շամիլին։ Նա իր ելույթում ասաց. «Մինչև չվերացնեք ձեր միջև եղած անհամաձայնությունն ու թշնամությունը և չմաքրվեք ձեր մեջ տարածված, բայց շարիաթով արգելված վատ սովորություններից, ի՞նչ երեսով կարող եք հույս դնել Աստծո օգնության վրա»։ Շեյխ Շամիլի այս հարցը բոլորը արդարացի համարեցին և նրա ներկայությամբ թողություն խնդրեցին։ Նրանք ջիհադի[61] դրոշակը հանձնեցին հերոսական շեյխին, նրան իրենց բաշբուղ[62] ընտրեցին և Աստծո անունով երդվեցին հպատակվել նրա բոլոր հրամաններին։

Այդ օրվանից շեյխ Շամիլը դարձավ կովկասյան լեռների ահն ու սարսափը և մինչև իր վերջին ուժն ու շունչը պայքարեց ռուսների դեմ։ Սակայն ի վերջո ստիպված եղավ հանձնվել։ Վերջում նա եկավ իսլամության և խալիֆայության կենտրոն՝[63] Ստամբուլ, ուր քաղաքի ժողովուրդը փողոցներում և մզկիթներում փարվում էր նրան և համբուրում նրա նվիրական ձեռքերը։

Շեյխ Շամիլը սպիտակամորուք, նուրբ և բարձր հասակով տղամարդ էր, նա հայտնի մյուջահիդ[64] և փիր էր։

(Հատ. VIII, էջ 320)

ԱԲԴՈՒՐԱՀՄԱՆ ՇԵՐԵՖ

Պատմագիր, գրականագետ և դասախոս Աբդուրահման Շերեֆը Լութֆիից հետո օսմանյան պետության վերջին տարեգիրն էր։ Սակայն, հայտնի չէ, թե ինչո՞ւ, Աբդուրահման Շերեֆը փաստորեն չի զբաղվել տարեգրությամբ, եթե չհաշվենք Լութֆիի տարեգրության VIII հատորի լրացման և հրատարակման նրա կարևոր նախաձեռնությունը։ Լութֆիի VIII հատորի հրատարակության առաջաբանում նա նշել է. «Սուլթան Մեհմեդ Ռեշադ V-ը իր գահակալությունից հետո (1909) ինձ նշանակեց տարեգրի պաշտոնում և այս գործի շարունակությունը, սկսած 1261 (1845) թվականից հանձնվեց նվաստիս»։ Մի այլ առիթով Աբդուրահման Շերեֆը ավելացնում է, որ ինքը իր բազմաթիվ պարտականությունների և աշխատանքների պատճառով չի կարողացել զբաղվել տարեգրության ծանր և պատասխանատու գործով։

Աբդուրահման Շերեֆը իր «Օսմանյան պետության պատմությունը» կարևոր աշխատությունը գրել և տպագրել է երկու հատորով՝ իբրև դասագիրք Ստամբուլի բարձրագույն դպրոցների համար։ Դասագիրքը բովանդակում է օսմանյան պետության պատմությունը սկզբից մինչև XIX դարի վերջերը։ Ի տարբերություն նախկին տարեգիրների «Թարիխ»-ների նա իր պատմությունը կազմել է ոչ թե տարեգրության ձևով, այլ ըստ քաղաքական կարևոր իրադարձությունների։

Աբդուրահման Շերեֆը թուրքական բուրժուական պատմագրության առաջին ներկայացուցիչն է, որը, չբավականանալով քաղաքական դեպքերի և հարցերի ուսումնասիրությամբ ու վերլուծությամբ, զբաղվել է նաև երկրի սոցիալ-տնտեսական հարցերի քննությամբ։ Այսպես, իր պատմության առաջին հատորում նա տալիս է «Օսմանյան պետության բաժանումը դարաշրջանների», որը որոշ չափով ունի պատմության պերիոդիզացիայի բնույթ, լայն տեղ է հատկացնում Թուրքիայում «հողերի կառավարման» հարցին, եվրոպական ֆեոդալիզմը համեմատում է թուրքական ֆեոդալիզմի հետ, նշելով վերջինի «առավելությունները» (խաս, զեամեթ և թիմարի ձևով հողի օգտագործման սիստեմը եվրոպական ժառանգական սիստեմի փոխարեն), քննության է առնում երկրի ֆինանսները, պետության եկամուտներն ու ծախսերը, կայսրության վարչական բաժանումը և այլն։ Աբդուրահման Շերեֆը ուսումնասիրում է նաև կուլտուրան և գրականությունը։ Երկրորդ հատորում նա տալիս է Թուրքիայի տարեգիր-պատմագիրների լրիվ ցուցակը, խոսում է մի շարք գիտնականների մասին, նշելով գիտության տարբեր ասպարեզներում նրանց կատարած դերի մասին։ Առանձնապես կանգ է առնում XVII դարի անվանի գիտնական Քյաթիբ Չելեբիի (Հաջի Կալֆա) վրա, նրան համարելով իրենց «միջնադարյան լուսավորության պարծանքը»։

Աբդուրահման Շերեֆի «Օսմանյան պետության պատմություն»-ից մենք քաղվածաբար թարգմանել ենք այն նյութերը, որոնք շարունակում են տարեգիր Լութֆիի պատմությունը սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից և որոնք որոշ չափով առնչվում են մեր թեմայի հետ։

ԱԲԴՈՒՐԱՀՄԱՆ ՇԵՐԵՖԻ «ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

Սուլթան Մահմուդ 2-րդի իշխանության (1223—1255/1808—1839 թթ.) շրջանից սկսած Օսմանյան կայսրության վարչությունը կազմակերպվեց և ամրապնդվեց նոր հիմունքներով։ Գյուլհանեի «Հաթթը հյումայուն»-ով հին ձևերը փոփոխվեցին։ Թանզիմաթի բարենորոգումները տվեցին լավ արդյունքներ։ Կայսրության բոլոր հպատակները, ինչ կրոնի և ազգության էլ պատկանելու լինեին, հավասար էին օրենքի առջև։ Անձի, գույքի և պատվի անձեռնմխելիության, հարկերի նշանակման և բաշխման գործում արդարության ապահովումը, պետության համար կենսական նշանակություն ունեցող ֆինանսական գործերի կարգավորումը, զինվորական ծառայության նոր կանոնադրության լավագույն ձևով իրագործումը, իբրև թանզիմաթի նոր և հիմնական սկզբունքներ, մի կողմից, ապահովում էին երկրի անվտանգությունը, հանգստությունը, բարեկեցությունը, ժողովրդի միաբանությունը և գանձարանի կանոնավորումը, մյուս կողմից էլ՝ ուժեղացնելով մեր զինվորական կարգապահությունն ու զինավարժությունները, ապահովում էին մեր ցամաքային ու ծովային անվտանգությունը և ուժը։ Կայսրության վիլայեթները հետզհետե ավելի ուժեղ կապելով կենտրոնի հետ, որոշ վայրերում պետությունը իր գերիշխանությունը տարածում և գործադրում էր նաև առանձնաշնորհյալ էյալեթների վրա։ Այս ամենը բարերար ազդեցություն էր ունենում նաև արտաքին քաղաքականության վրա։

Նշանավոր ծովակալ Ջենգել-օղլու Թահիր փաշան, սուլթան Մահմուդի իշխանության վերջին տարիներին կարգի բերեց օսմանյան նավատորմը։ Սերասքեր Ռիզա փաշան էլ զինվորական ուժերը վարչական սկզբունքով բաժանեց բանակների, Եվրոպայից սպաներ հրավիրեց և զինվորական կրթության գործը պատշաճ բարձրության վրա դրեց։

Նյութական և բարոյական առաջադիմությունները ուրախություն և գոհունակություն էին պատճառում պետության ղեկավարներին։

(Հատ. II, էջ 326—327)

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ
[1853 թ.]

Իշխան Մենշիկովի[1] գործերի և արտահայտությունների պարունակած կոպտության ու գոռոզամտության պատճառով, Ստամբուլում և Եվրոպայի քաղաքական շրջաններում ենթադրում էին, որ նա, հավանաբար, չի վայելում Ռուսաստանի կառավարության վստահությունը։ Սակայն Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր և գլխավոր մինիստր կոմս Նեսսելրոդից ստացված գրությունը լուծեց այդ տարակուսանքը։ Այդ գրության մեջ Մենշիկովի գործելակերպն ու մտքերը գովասանքի և լիակատար հավանության էին արժանացել։ Գրության մեջ այնուհետև ասված է. «Նկատի ունենալով նրա առաջարկների չափավորությունն ու ճշտությունը, նորին վսեմություն կայսրը, նրա այդ աստիճան բարեկամական և անկեղծ ցանկությունների հանդեպ առանց պատճառի նրան անվստահություն և անարգանք ցույց տալու հարցը» համարելով անարդարացի, առաջարկում է օսմանյան պետությանը մի անգամ ևս ուշադրության առնել այդ հարցը և փոխել իր տված որոշումը։

Նվիրական ռամազան ամսի վերջին գեներալ Գորչակովի հրամանատարությամբ ռուսական բանակը անցնելով Պրուտ գետը, տարածվեց Էֆլաքի (Վալախիա) և Բոգդանի (Մոլդավիա) էյալեթներում։ Նույն օրը պարոն Դիմիտրի Նեսելրոդեն մեծ պետություններին ուղղած գրության մեջ ասում է. «Գրավում ենք երկու երկրները, սակայն դա օսմանյան պետության դեմ հարձակողական պատերազմի նպատակով չէ։ Բարձրագույն Դուռը մերժելով մեր սպասած բարոյական ապահովությունը, ստիպեց մեզ դրա փոխարեն ժամանակավորապես հաստատել նյութական ապահովություն»։

Բարձրագույն Դուռը անմիջապես բողոքեց ռուսական բանակի՝ երկու երկրները մտնելու դեմ։ Մեծ պետությունները երկու կողմերի հարաբերությունները բարելավելու համար Վիեննայում հրավիրեցին մի կոնֆերանս և համաձայնության ոգով պայմաններ պարունակող մի արձանագրություն կազմելով, ուղարկեցին Ս. Պետերբուրգ և Ստամբուլ։

Սակայն օսմանյան Բարձր կառավարությունը այդ արձանագրության որոշումները ևս չընդունեց։ Զիլհիջե ամսի 20—22 և 23-ին Բարձրագույն Դռանը գումարված արտակարգ ընդհանուր բարձր մեջլիսում Ռուսաստանի՝ Պրուտ գետը անցնելը համարվեց պայմանագրի խախտում։ Ընդհանուր որոշմամբ Ռուսաստանին պատերազմ հայտարարվեց, և Ռումելիի բանակի հրամանատար Օմեր փաշան ռուսական հրամանատարությանն ուղարկեց մի գրություն, պահանջելով 15 օրում դատարկել երկու երկրները։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՆՈՒԲՈՒՄ

1270 (1853) թվականին

Առաջին կարևոր և մեծ պատերազմը Օլբանիցայի պատերազմն էր, երկրորդը՝ Չեթանեի պատերազմը։ Այս պատերազմներում ուժեղ հարձակումների հետևանքով ռուսները լրիվ պարտություն կրեցին։

Թե՛ վերոհիշյալ մարտերում և թե՛ հաջորդ 4—5 ամիսներում ռուսները մեծ պարտություններից հետո ստիպված եղան նահանջել...

«...Օսմանյան կայսրության բարեկամ պետությունները շատ գոհ մնացին այս հաջողություններից, ուստի Ռուսաստանը ստիպված եղավ ավելի մեծ կարևորություն տալ ռազմական գործողություններին։ Նրանք նոր ուժերով պաշարեցին Սիլիստրեն։ (Այդ ժամանակ Ռուսաստանի զինվորական ուժերը 70—80 հազար զինվոր էր, իսկ Թուրքիայինը՝ 8—10 հազար զինվոր)։

Ռուսներին չի հաջողվում գրավել Սիլիստրեն։ Այդ ժամանակ հասնում են նաև Անգլիայի և Ֆրանսիայի օգնական ուժերը։ Փոխվում է պատերազմի ընթացքը։ Գեներալ Պասկևիչը մեծ կորուստներ կրելով ստիպված է լինում թողնել պաշարումը և վերադառնալ Դանուբի մյուս կողմը (1270 թ. ռամազանի 21)։

Սիլիստրեի պատերազմը Դանուբի մարտերից ամենամեծն էր։

(Հատ. II, էջ 334—335)

ՍԻՆՈՊԻ ԱՂԵՏԸ
(1853 թ.)

Պատերազմի սկզբին Անատոլիայի և Ռումելիի ծովեզերքները պաշտպանելու համար կազմակերպվեց և Սև ծով դուրս բերվեց

հնգական կալիոնից[2] և մեկ շոգենավից բաղկացած երկու փոքր նավատորմ։ Սաստիկ փոթորիկի պատճառով այս տորմիղները ստիպված եղան իրար հետևից ապաստանել Սինոպի նավահանգիստը։

Երբ նավատորմը խարիսխ գցած կանգնել էր նավահանգըստում, ռուսական նավերը մոտենալով սկսեցին կրակ բացել։ Տեղի ունեցած կռվում թեև թշնամին ևս ունեցավ շատ կորուստներ, սակայն մեր 12 նավերից 11-ը այրվեցին և ընկղմվեցին. միայն «Թայիֆ» շոգենավը վնասվածք ստացած փախավ և հասնելով Ստամբուլ հայտնեց ցավալի լուրը...

(Հատ. II, էջ 337—338)

* * *

Ռուսական նավատորմի փոխ-ծովակալ Նախիմովը իր գերազանց ուժերի շնորհիվ տարավ լրիվ և վճռական հաղթանակ։

Սինոպի աղետի հետևանքով օսմանցիների գործողությունները Սև ծովում լրիվ կանգ առան։ Անհրաժեշտ եղավ դիմել անգլիական և ֆրանսիական նավատորմների օգնությանը, որովհետև լուրջ վտանգ էր սպառնում Ստամբուլին և նեղուցներին։ Որոշ ժամանակ անց անգլիական և ֆրանսիական նավատորմները, անցնելով Չանաք-կալեի (Դարդանելի)[3] նեղուցից, եկան Ստամբուլ։ Ռուսաստանը բողոքեց։ Վիկտորյա թագուհին և Նապոլեոն III-ը առաջարկեցին իրենց միջնորդությունը՝ Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև ստեղծված անհամաձայնությունը լուծելու համար։ Նիկոլայ ցարը մերժեց այդ առաջարկը։ Դրանից հետո Լոնդոնի և Փարիզի կառավարությունները վերջնագիր ներկայացրին Ռուսաստանին։ Ցարը ոչ միայն մերժեց այդ վերջնագիրը, այլև հրամայեց. որ բանակը անցնի Դանուբը։ Այս պայմաններում Անգլիան և Ֆրանսիան պատերազմ հայտարարեցին Ռուսաստանին (1854 թ. 12 մարտի)։ Պատերազմն ընդգրկեց նաև Ղրիմը և Բալթիկ ծովի շրջանները... 1855 թ. գարնանը դաշնակիցները մեծ ուժերով վերսկսեցին պատերազմական գործողությունները։ Կատաղի մարտերից և ռմբակոծությունից հետո նրանք գրավեցին ավերակի վերածված Սևաստոպոլը։

Դաշնակիցների հաջողությունները, Նիկոլայ ցարի մահը և Ալեքսանդր II-ի գահակալումը ոչնչացրին ռուսների պատերազմը շահելու հույսերը։ Նոր ցարը հայտնեց, որ պատրաստ է կնքելու «պատվավոր» հաշտություն...

Ավստրիան Ռուսաստանին տված վերջնագրով հաշտության համար առաջարկում էր հետևյալ պայմանները.

Ռուսները պիտի հրաժարվեն Էֆլաքի և Բողդանի նկատմամբ իրենց պահանջից. Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակներին տրված իրավունքները պիտի վերանայվեն. Դանուբում նավարկությունը պիտի լինի ազատ. Սև ծովը պիտի լինի չեզոք...

Ցարը ստիպված էր ընդունել այդ պայմանները։ Հաշտության պայմանները մշակելու համար որոշվեց Փարիզում հրավիրել կոնգրես։

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԴԵՊՔԵՐԸ

Չյուրուք-սուի [Ճորոխի] կտրիճները գրավելով Բաթումի մոտակայքում Սև ծովի եզերքին գտնվող Շեօաթել բերդը, միջոցներ ձեռք առան բերդի պաշտպանության համար։

Անատոլիայի բանակի հրամանատար Չերփանելի Աբդուլքերիմ Նադիր փաշան հարձակումներ գործելով Ախալցխայի և Արփաչայի վրա, բանակի հրամանատար Նաջերլի Ահմեդ փաշայի օգնությամբ գրոհով գրավեց Գյումրիի բերդը. քանի որ այդ շրջանում եղած ռուսական զինվորները փակված մնացել էին Ախալցխայում, փաշան սկսեց ճնշում գործել այդ քաղաքի վրա։ Ահմեդ փաշան. զգալով հրամանատար Աբդի փաշայի թուլությունը, ստիպեց նրան հրաժարական տալ...։ Պետության ղեկավարները Դանուբի ափերին ձեռք բերած շարունակական հաղթանակների հետ միասին, ուշադրություն էին դարձնում նաև Արևելյան սահմանին. սակայն նոր հրամանատարը, լինելով գործին ոչ հմուտ և նախանձոտ անձնավորություն, Ախալցխայի և Գյումրիի շրջաններում պատճառ դարձավ մի շարք ցավալի դեպքերի։ Այդ պատճառով պաշտոնանկ արվեց, վեզիրության աստիճանից զրկվեց, Կիպրոս աքսորվեց և իր հանցանքների համար պատժվեց։ Հրամանատարության պաշտոնը տրվեց Էրզրումի վալի Զարիֆ Մուստաֆա փաշային։

Ռուսաստանի դեմ վաղուց ի վեր թշնամության և պատերազմի մեջ էր Դաղստանի էմիրներից շեյխ Շամիլը։

Օսմանյան կառավարությունը պատերազմ հայտարարելուց հետո շեյխ Շամիլն ավելի ուժեղացրեց թշնամական գործողությունները և բավական շփոթություն և նեղություն պատճառեց Ռուսաստանին։ Գործողություններ սկսեցին նաև չերքեզ և աբազա ցեղերը։ Դաշնակից պետությունները, նավեր ուղարկելով Սուխու-

մի և Անապայի կողմերը, ժողովրդին զենք և ռազմամթերք էին բաժանում։

Զարիֆ Մուստաֆա փաշան ևս անկարող էր պաշտպանել և ամրացնել սահմանները։ 1270 (1853) թվականին ռուսները երևացին Կարսի կողմերում, որից հետո տեղի ունեցան փոքրիկ ընդհարումներ, իսկ հաջորդ տարվա վերջերին լրիվ պաշարեցին Կարսի բերդը։ Զարիֆ Մուստաֆա փաշայի փոխարեն հրամանատար նշանակված Վասըֆ փաշան Կարսի պաշտպանության համար արտակարգ ջանքեր գործադրեց. նա 1271 (1854) թվականի մուհարրեմ, սեֆեր և ռեբի-ուլ էվվել ամիսներին թշնամու վրա բազմաթիվ ուժեղ հարձակումներ գործելով, մեծագույն կորուստներ պատճառեց նրան և զսպեց։ Իբրև վարձատրություն իր հերոսական դիմադրության համար նա արժանացավ փադիշահական հատուկ շնորհների ու նվերների։ Կարսի վրա թշնամու ճնշումը թեթևացնելու հույսով մեծ սերդար Օմեր փաշան բավականաչափ զինվորներով Ղրիմից անցավ Սուխումի կողմերը։ Չնայած Կարսը պաշտպանողների ուժեղ և համառ դիմադրությանը, սննդամթերքը վերջացած լինելով, նրանք ի վերջո՝ 1271 (1855) թվականի ռեբի-ուլ էվվելի 17-ին ստիպված եղան հանձնել բերդը[4]։

Բայց, քանի որ մինչ այդ դաշնակիցները գրավել էին Սևաստոպոլը և որոշվել էր հաշտության հարցը, պատերազմական գործողությունները մնացին այդ վիճակում։ Կարսի անկումը այնուամենայնիվ ունեցավ իր ազդեցությունը հաշտության գործի վրա...

(Հատ. II, էջ 348—350)

ՄԵՀՄԵԴ ՔՅԱՄԻԼ ՓԱՇԱ

Բարձրաստիճան պետական գործիչ և դիվանագետ Մեհմեդ Քյամիլ փաշան միաժամանակ եղել է պատմագիր։ Նա գրել է Օսմանյան կայսրության պատմությունը (երեք հատորով) սկզբից մինչև սուլթան Աբդուլ Մեջիդի իշխանության վերջը՝ 1861 թվականը, «Օսմանյան պետության քաղաքական պատմությունը» վերնագրով։ Գիրքը տպագրվել է Ստամբուլում 1909—1910 թվականներին։

Քյամիլ փաշայի կենսագրական նյութերից հայտնի է, որ նա ծնվել է 1832 թ. Լեֆկոսիայում (Կիպրոս)։ Կրթությունը (սկզբում զինվորական) ստացել է Եգիպտոսում, հասնելով հազարապետի աստիճանին։ Եգիպտոսում ապրելով Մեհմեդ Ալի փաշայի պալատում (Աբբասիյե սարայի), նա հնարավորություն է ունենում սովորել արաբերեն, պարսկերեն, հունարեն, անգլերեն և ֆրանսերեն։ Քյամիլ փաշան իր կենսագրականում հիշում է, որ իր ֆրանսերեն դասերին հսկում էր Մեհմեդ Ալի փաշայի պալատում կարևոր պաշտոններ ունեցող Նուբար բեյը (հետագայում Նուբար փաշա)։ «Հետագայում պարզվեց, որ նորին վսեմություն Մեհմեդ Ալի փաշայի նպատակն էր ինձ նշանակել իր տղայի անգլերենի ուսուցիչ»։

Ինչպես հայտնի է, Եգիպտոսի վալի Մեհմեդ Ալի փաշան իր իշխանության ամբողջ շրջանում եղել է ֆրանսիական քաղաքականության կողմնակից, իսկ նրա որդին՝ Աբբաս փաշան անգլիացիների հետ իր ունեցած բարեկամությունը ուժեղացնելով, դարձել է Եգիպտոսում անգլիական քաղաքականության կողմնակից։ Քյամիլ փաշան, հավանաբար, Աբբաս փաշայի ազդեցությամբ, դառնում է անգլիասեր և այդ անգլիասիրությունը պահում է մինչև իր կյանքի վերջը։

Գալով Ստամբուլ, Քյամիլ փաշան սկզբում վարում է մյութասարրիֆի ու վալիի պաշտոններ, այնուհետև նշանակվում է էվքաֆի և լուսավորության մինիստր։ Պրեմիեր-մինիստր է նշանակվել չորս անգամ։ Առաջին անգամ սուլթան Աբդուլ Համիդ II-ի իշխանության օրով՝ 1885—1891 թթ., երկրորդ անգամ 1895 թ., երրորդ անգամ 1908—1909 թթ. և վերջին անգամ սուլթան Մեհմեդ V-ի ժամանակ՝ 1912—1913 թթ.։

Անգլիասերի հռչակ վայելող Քյամիլ փաշայի մասին խոսելիս չի կարելի չհիշել նրա հայատյացությունը։ Դեռևս 80-ական թվականներից սկսած Քյամիլ փաշայի հայացքներում որոշակիորեն հանդես են գալիս ծայրահեղ շովինիստական և նացիոնալիստական գաղափարներ, որոնք զարգանալով հետագայում հանգեցին ցեղասպանության (գենոցիդի) դոկտրինային։ Նա, օրինակ, ցինիկաբար հայտարարում էր. «Մենք (այսինքն՝ թուրքերս — Ա. Ս.) և Անգլիան ոչ միայն չենք ճանաչում Հայաստան բառը, այլև կջախջախենք այդ անունը արտասանողի կզակը...»։ Նա կոչ էր անում ֆիզիկապես ոչնչացնել բոլոր հայերին։

Հայաստանի և հայերի վերաբերյալ հատվածները ստորև թարգմանաբար բերում ենք Քյամիլ փաշայի «Օսմանյան պետության քաղաքական պատմությունը» աշխատությունից։

ՄՈԼԼԱ ԻԴՐԻՍԻ ՄԱՍԻՆ[1]

Այդ ժամանակ [920 (1514—15) թվականին] Երզնկայի վալի Բըյըքլի Մեհմեդ փաշան վերջացրել էր Քուրդիստանի նվաճումը և Մոլլա Իդրիսի օժանդակությամբ կարգի էր բերել փադիշահական նոր վիլայեթների գործերը։ Մոլլա Իդրիսը գրել է օսմանյան պետության ընդհանուր պատմությունը և Իրանի արշավանքում եղել է փադիշահի տրամադրության ներքո աշխատող նշանավոր անձերից։

Մոլլա Իդրիսը ծնվել էր Բիթլիսում և լավ ծանոթ էր այդ շրջանի վիճակին։ Երբ սուլթան Սելիմը (Յավուզը) Ամասիայում էր, նա Քուրդիստանի աշիրեթների ղեկավարներին շահ Իսմայիլի լարած թակարդներից ազատելու նպատակով, Մոլլա Իդրիսին ուղարկեց այդ կողմերը։ Նրա ջանքերով բովանդակ Քուրդիստանի քաղաքները, ինչպես նաև Դիարբեքիրը, Բիթլիսը, Հիսնի-Քեֆը և այլ քաղաքներ միանգամից ապստամբական վիճակ ստացան. դրանցից բացի Սղերտը, Քերքուքը և այլ քաղաքներ ու գյուղաքաղաքներ, վերջապես այդ շրջանի 9 ցեղերի (կաբիլե) գլխավորները ընդունեցին օսմանյան պետության հպատակությունը։ Օսմանյան գերիշխանությունն ընդունեցին Քուրդիստանի այլ 16 բեյեր ևս։ Դրանից հետո Մոլլա Իդրիսը հրաման ստացավ դրավել Քուրդիստանի մինչև արևելյան սահմանը՝ Ուրմիայի լիճը, և արևմտյան սահմանը՝ Մալաթիան...

Փադիշահի՝ Թավրիզից վերադառնալուց հետո շահ Իսմայիլը փորձում է ետ գրավել Դիարբեքիրը, սակայն ապարդյուն։ Բըյըքլի Մեհմեդ փաշան և ապա Խուսրև փաշան, Մոլլա Իդրիսի օժանդակությամբ և ջանքերով գրավում են Մուշ և Մարդին քաղաքները և դեռևս չգրավված Էրղանին, Սենջարը, Ուրֆան, Ջերմիկը, Բերեջիկը և Դիարբեքիրի հարավային շրջանները...

Քուրդ բեյերից յուրաքանչյուրը նշանակվում է իբրև դերեբեյի[2], նրանց շնորհվում է պատվո խալաթ, իսկ Մոլլա Իդրիսին շնորհվում է երկու սանջաք և վարձատրություն։

(Հատ. I, էջ 152)

ԻՐԱՆԻ ԴԵՊՔԵՐԸ

Իրանական պետությունը, օգտվելով այն բանից, որ օսմանյան պետությունը զբաղված էր հունական ապստամբությամբ,

սկսել էր իր կողմը գրավել մերթ մեկ, մերթ մյուս կողմին հպատակություն հայտնող քրդական ցեղերին, որը անախորժությունների պատճառ էր դառնում երկու պետությունների միջև։ Քուրդերով խառն իրանական բանակը, հարձակվելով Կարսի էյալեթին ենթակա Կաղզվանի սանջաքի վրա, թալանել էր ժողովրդի գույքն ու անասունները, Բայազիդի էյալեթում սպանել որոշ թվով մարդկանց և գրավել նրանց ունեցվածքը։ Այս մասին կայսերական սահմանի պաշտոնյաները տեղեկացրել էին պետության մայրաքաղաքին։

Օսմանյան Բարձր կառավարությունը անհրաժեշտ միջոցներ ձեռք առավ և Էրզրումի վալի Խուրսև փաշային նշանակեց Արևելքի զինվորական ուժերի գլխավոր հրամանատար։

Դեսպանության պաշտոնով Իրան գնացած և վերադարձած Սուլեյման Հադի էֆենդիի հաղորդագրությունից պարզվում է, որ Իրանի շահը բոլորովին կողմնակից չէր կայսերական երկրի սահմանի վրա կատարված հարձակումներին և իր հիմնական ցանկությունն է եղել շարունակել հաշտությունն ու խաղաղությունը երկու պետությունների միջև։ Շահն այդ մասին հրահանգներ էր տվել սահմանի պաշտոնյաներին։ Սակայն, չնայած դրան, անպակաս են եղել անկարգությունները, կողոպուտն ու թալանը, այս անգամ արդեն Կարսի կողմերում։ Այդ շրջանները ենթակա լինելով Աբբաս Միրզայի[3] իշխանությանը, հափշտակված ապրանքները վերադարձնելու մասին սադրազամությունը հատուկ կարգադրություն ուղարկեց Աբբաս Միրզային, սակայն ապարդյուն։

Հունական ապստամբությունը ուժեղանալու կապակցությամբ ավելացել էր նաև իրանցիների համարձակությունը։ Աբբաս Միրզան Էրզրումում Իրանի պաշտոնյաներին ուղարկած իր նամակում հայտնում էր, որ Իրանի հաջիները Օսմանյան երկրում բռնություններն են ենթարկվում, նրանց հաջջ[4] գնալը պետության կողմից արգելված է և իրեն էլ հրամայված է շուտով Իրան վերադառնալ.

Այս ձևով իրանցիները հարաբերությունները խզելով, սկսել էին հարձակումներ գործել կայսերական սահմանների վրա։ Հունական դեպքերով զբաղված օսմանյան պետության հոգսերին ավելացավ նաև իրանական պատերազմը։

Իրանցիները իրենց հարձակողական գործողությունների մեջ թեև պարտություն էին կրել Բաղդադի ճակատում, սակայն Էրզրումի կողմերում պարտության մատնելով օսմանյան բանակին, գրավել էին Թոփրաք-կալեն։ Աբբաս Միրզան անսպասելի գրավելով

Բայազիդը, շարժվեց դեպի էրզրում։ Այս վիճակը սարսափ առաջացրեց այդ շրջանում։ Մուշի սանջաքում ապրող Հայդարանլի քրդական ցեղը քաշվեց դեպի Դիարբեքիր։ Այդ շրջանում իրանական բանակը, ավերելով բազմաթիվ վայրեր, հափշտակեց ժողովրդի անասունները և գերի տարավ ժողովրդի մի մասին։ Իրանցիները գրավեցին նաև Բիթլիսը։ Աբբաս Միրզայի զինվորները գրավեցին Արճեշի բերդը։ Սակայն ձմեռը վրա հասնելու պատճառով, իրանցիներր վերադարձան Թավրիզ։ Հետո սերասքերի առաջապահ նշանակված Մեհմեդ Ջելալեդդին փաշան պաշարեց Թոփրաք-կալեն և նա մղեց իր վրա եկած Աբբաս Միրզայի զինվորների հարձակումը։ Սակայն Աբբաս Միրզան Իրանի սերասքերի հետ միասին հավաքելով Իրանի կողմն անցած օսմանյան պետության հպատակ քրդական ցեղերի մեծ մասին, հարձակվեց Ջելալեդդին փաշայի բանակի վրա և պարտության մատնեց նրան։

Սակայն, դրանից հետո, աստծո տնօրինությամբ, Իրանում առաջին անգամ բռնկած սաստիկ խոլերայի համաճարակը այնպիսի մահացությունների պատճառ դարձավ, որ իրանցիները ժամանակ չէին գտնում դիակները թաղելու, և սարսափահար իրանական բանակր ցիրուցան եղավ։ Աբբաս Միրզան ստիպված եղավ նահանջել։

Քիչ անց Աբբաս Միրզան սկսեց հաշտության բանակցություններ։ Քանի որ օսմանյան կառավարությունը զբաղված էր հունական ապստամբությամբ, իրանական գործը ժամ առաջ վերջացնելու նպատակով, կողմերի ներկայացուցիչները 1237 (1821) թվականին բանակցություններ սկսեցին։

(Հատ. III, էջ 75—76)։

ԱՆՑԱԳՐԻ ՍԻՍՏԵՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Իսլամական անունով և տարազով հույն լրտեսներ բռնվեցին, որի հետևանքով հաստատվեց անցագրի սիստեմ։ Ստամբուլից գավառներ գնացողները պարտավոր էին իրենց բնակավայրից ներկայացնել հատուկ տեղեկանք, որտեղ նշված լիներ անունը և հայրանունը[5], արտաքին նշանները, ինչպես նաև հաստատված երաշխավորություն և հատուկ գրություն Ստամբուլի դատարանից։ Իսկ գավառներում մի վայրից մեկ այլ վայր գնացողները պարտավոր էին գրություն ստանալ իրենց բնակավայրի նայիբներից։

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԿՆՔՈՒՄԸ

Իրանի հետ սկսված հաշտության բանակցությունները վերջանում են հաջողությամբ և 1238 (1823) թվականին օսմանյան պետության կողմից Արևելքի սերասքեր Ռեուֆ փաշան և Իրանի ներկայացուցիչ Մեհմեդ Ալի Միրզան ստորագրում են հաշտության պայմանագիրը։

(Հատ. III, էջ 86)

ՕՍՄԱՆ ՆՈՒՐԻ

Օսման Նուրին նոր շրջանի թուրք պատմաբաններից է։ Նրա «Աբդուլ Համիդ Երկրորդը և նրա իշխանության շրջանը» եռահատոր պատմությունը արժեքավոր աշխատություն է, որը ընդգրկում է Թուրքիայի պատմության 1876—1909 թթ. ժամանակաշրջանը։

Օսման Նուրին «Պատմության» ներածականում ասված է. «Օսմանյան պետության 33 տարվա քաղաքական դեպքերի մասին մեզ մոտ ոչ մի պաշտոնական թուղթ չի հրատարակվել, ամենակարևոր դեպքերը մշտապես գաղտնի են պահվել օսմանյան ժողովրդից։ Ոչ մեկին չեն ներկայացվել պատերազմի նման օրինական միջոցառումների մութ ծալքերը, պատերազմներ, որոնց մի քանի անգամ ստիպված է եղել դիմելու մեր պետությունը։ Բռնապետության ամենամեծ հենարանը, գործունեության ամենազորեղ միջոցը եղել է տգիտությունը։ Մտքերի լուսավորումը, երկրի անցյալը ուսումնասիրող և նրա ապագան գուշակելու համար ուղեցույց հանդիսացող երկերի ոչ թե հրատարակումը, այլ անգամ ընթերցումը համարվում էր ոճիր»։

Գրքի վերջում հրատարակչության կողմից տրված կենսագրական նյութերից պարզվում է, որ Օսման Նուրին ստացել է զինվորական կրթություն, եղել է դասախոս, լրագրող և թարգմանիչ։ Ստամբուլի զինվորական դպրոցում եղել է գերմաներենի դասախոս, աշխատակցել է «Թերջումանը հաքիքաթ», «Սաբահ»[1] և «Սերվեթ-ի ֆյունուն»[2] թերթերին։ Գրքի ներածականում հեղինակը ասում է, որ գիրքը գրել է, օգտվելով գլխավորապես եվրոպական բազմաթիվ աղբյուրներից, քանի որ թուրքական աղբյուրները առհասարակ եղել են «անմատչելի»։

Օսման Նուրիի գիրքը բաղկացած է երեք հատորից։ «Պատմության» եռահատոր այս գրքի առաջին և երկրորդ հատորները գրվել են անձամբ Օսման Նուրիի կողմից, որը, ինչպես երևում է կենսագրական նյութերից, երրորդ հատորի լույս ընծայման ժամանակ արդեն վախճանված է եղել։ Երրորդ հատորի անվանաթերթում նշված է՝ «Հեղինակ՝ Ա. Ռ.», իսկ վերջաբանում ասված է, որ «մեզ հաջողվեց ամբողջացնել» աշխատությունը։ Հետևաբար, կարելի է ենթադրել, որ երրորդ հատորը Օսման Նուրիի թողած նյութերի հիման վրա շարադրել է այն շրջանում հայտնի պատմաբան Ահմեդ Ռեֆիկը, որը սովորություն ուներ օգտագործել իր անվան սկզբնատառերը։

Գրքում բերված են բազմաթիվ քաղաքական, ռազմական և դիվանագիտական փաստաթղթեր, հուշագրեր, արձանագրություններ, պայմանագրեր և այլն։ Գիրքը տպագրվել է Ստամբուլում 1327 (1909) թվականին։ Այնտեղ համառոտակի տրրված են սուլթան Աբդուլ Համիդի գահակալությանը նախորդած ժամանակաշրջանի վերաբերյալ տեղեկություններ ու նյութեր, սուլթան Աբդուլ Ազիզի գահընկեցությունը, սուլթան Մուրադ V-ի կարճատև իշխանությունը, բուլղարական հեղափոխությունը, Սերբիայի և Չեռնոգորիայի դեպքերը, ի վերջո Աբդուլ Համիդ II-ի գահակալությունը (1876 թվականի օգոստոսի 31)։

ի տարբերություն XVII—XVIII դարերի թուրք պատմագիրների, որոնք իրենց «Թարիխ»-ները մեծ մասամբ գրել են տարեգրության ձևով, հաճախ կանգ առնելով արքունիքի, սուլթանների, վեզիր ազամների գործերի, պատերազմական գործողությունների հետ կապված դեպքերի վրա, պատմաբան Օսման Նուրին մոտ չորս տասնամյակ ընդգրկող իր պատմությունը գրել է եվրոպական բուրժուական պատմաբանների օրինակով, քաղաքական կարևոր դեպքերի ու շարժումների տեսությունով և վերլուծումներով։ Գրքի երկրորդ հատորում առանձին գլուխ է հատկացված Աբդուլ Համիդի անձնական կյանքին, նրա արքունիքին, հարեմին, իսկ երրորդ հատորը պարունակում է Կրետեի հարցը, օսմանյան պետությունը և մեծ տերությունները, Նոր օսմանները Եվրոպայում, Հայկական հարցը գլուխները։ Միշտ չէ, որ հայկական հարցի մասին արտահայտված մտքերն ու դատողությունները համապատասխանում են պատմական փաստերին, թեև ջանք է թափում բավականաչափ առարկայորեն մոտենալ և ըստ այդմ մեկնաբանել Աբդուլ Համիդի վարած դաժան քաղաքականությունը և մեծ տերությունների հետապնդած նվաճողական նպատակները։ Նկատի ունենալով թուրք պատմաբանի արտահայտած տեսակետների հետաքրքրությունը հայկական հարցի վերաբերյալ, այս գլուխը տալիս ենք ամբողջությամբ, առանց հապավումների։

«ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ ԵՐԿՐՈՐԴԸ ԵՎ ՆՐԱ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ»

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԴԵՊՔԵՐ ԱՆԱՏՈԼԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԻ ՎՐԱ

255 ‖ Պատերազմի սկզբին Անատոլիայի սահմանում 80000 մարդուց բաղկացած օսմանյան բանակի դիմաց կանգնած էր ռուսական 120 հազարանոց բանակը։ Ցարի փոքր եղբայր մեծ դուքս Միխայիլ Նիկոլաևիչը Թիֆլիսի նահանգապետն էր, միաժամանակ նաև զինվորական գործերի ղեկավարը, իսկ ռուսական բանակի հրամանատարությունը հանձնված էր նախորդ պատերազմներում մեծ հռչակ վաստակած գեներալ Լորիս Մելիքովին։ Անատոլիայի պատերազմական բեմը լինելով լեռնոտ, եղանակն էլ զանազան տեղերում փոփոխական, մեծ դժվարություններ էր ստեղծում պատերազմող կողմերի համար։ Դարերից ի վեր թե՛ լեռնային շրջաններում, թե՛ հարթավայրերում ճանապարհներ չեն շինվել, գոյություն ունեցածներն էլ սայլերի և թնդանոթների համար բոլորովին անհարմար քարավանային հին ճանապարհներ էին։ Պատերազմի հայտարարման օրը՝ 1877 թվականի ապրիլի 24-ին, ռուսական բանակը չորս թևերով անցավ օսմանյան սահմանը։ Սրանցից Ռիոն կոչվող թևը Օկլոբժիոյի հրամանատարության տակ Սև ծովի եզերքով առաջ շարժվելով զբաղեցնում էր Բաթումում գտնվող Հասան փաշայի հրամանատարությանը են-

թակա օսմանյան բանակը, միաժամանակ չոկատներ էր ուղարկել Արդահանի բերդի կողմերը։ Այս թևի խնդիրը սկզբնապես պաշտպանողական էր. իսկ հարձակողական խումբը կազմող Ախալցխայի (գեներալ Դևել), Ալեքսանդրապոլի (գեներալ Լորիս Մելիքով) և Երևանի (գեներալ Տեր-Ղուկասով) թևերի նպատակակետը առայժմ Կարսի բերդն էր։ Բաթումից մինչև Բայազիդ այս բանակի ճակատն ուներ 360 կիլոմետր երկարություն, իսկ երկարատև պատերազմ մղելու համար ուժերը անբավարար էին։ Ծովի մակերեսից 5863 ոտք բարձրության վրա գտնվող Կարսի բերդը այն ժամանակ գտնվում էր բավարար ուժի պաշտպանության տակ, շրջապատված էր վերջին ժամանակներում կառուցված տասներկու ամրություններով, և թեպետ ուներ Արդահանից օգնական ուժ ստանալու հնարավորություն, սակայն Լորիս Մելիքովի պլանով անհրաժեշտ էր հնարավորին չափ շուտ գրավել այդ բերդը։

Անատոլիայում առաջին ռազմական գործողությունը տեղի ունեցավ ապրիլի 24-ին, պատերազմի հայտարարումից անմիջապես հետո։ Օսմանյան նավատորմը այդ օրը ռմբակոծեց Փոթի քաղաքը, որտեղ մթերված էր ռուսների դեպի Բաթում առաջացող թևի պարենը, ինչպես նաև սուրբ
256 Նիկոլայ ամրոցն ու այլ կետեր։ Անկանոն և || բավականին թույլ այդ ռմբակոծությունները մնացին առանց հետևանքի, իսկ մեր ռազմանավերը հանկարծ աչքից անհայտացան։ Թեև ռուսները վախենում էին, որ հիշյալ նավերը բավականին վնաս ու ավերածություն կարող էին պատճառել Բաթումի վրա քայլող թևին, բայց նրանք Սուխումի բերդը ռմբակոծելու համար երևացին միայն մայիսի 10-ին։ Կովկասի իսլամ ժողովրդին Ռուսաստանի դեմ գրգռելու համար թափված ջանքերն էլ Ռուսաստանի ձեռք առած միջոցների շնորհիվ ապարդյուն մնացին։ Սակայն Ռուսաստանը աշնանը միայն կարողացավ ընկճել Կովկասում ծագած ապստամբությունը։

Ռուսների ձախ կողմը կազմող երևանյան թևը նախ շարժվեց Բայազիդի վրա։ Այդ բերդում քիչ քանակությամբ զորք էր թողնվել, քանի որ մերոնք կարծում էին, թե մեծ և փոքր Արարատ լեռների միջև եղած ճանապարհը աննպաստ է նվաճող բանակի առաջխաղացման համար։ Հայտնի չէր,

որ Արարատի լեռնանցքի արևմուտքում կար նաև մի այլ ճանապարհ, որը ռուսները վաղուց նորոգել էին նույնիսկ թնդանոթներ փոխադրելու համար։ Գեներալ Տեր-Ղուկասովի սպայակույտի պետ գնդապետ Ֆիլիպովը ապրիլի 30-ի առավոտյան երկու վաշտ կազակ զինվորներով Բայազիդի շրջակայքը գալով տեսավ, որ բերդից դուրս ոչ մի ամրություն գոյություն չունի, իսկ Ալի Քյամիլ փաշայի հրամանատարության տակ եղած երկու հազարանոց պաշտպանական զորքն էլ առանց պատերազմելու ետ քաշվեց։ Դրանից հետո Տեր-Ղուկասովը իր բանակի հետ միասին մոտեցավ բերդին։ Ժողովուրդը առանց որևէ պայմանի, անվերապահորեն հանձնվեց ռուսներին։ Գեներալը իսկույն նորոգել տվեց ամրությունները և մի փոխգնդապետ էլ հրամանատար նշանակեց այդտեղի համար։

Ախալցխայի զորաբանակի համար շատ կարևոր էր գործողությունների նպատակակետ հանդիսացող Արդահանի բերդի գրավումը։ Հիմնական ուժերով Ալեքսանդրապոլից դեպի Զայիմ առաջ խաղացած Լորիս Մելիքովը, նկատելով, որ գեներալ Դևիլի հրամանատարության տակ եղած ուժը բավական չէ Արդահանը գրավելու համար, գեներալ Հայմանի հրամանատարության տակ եղած մի ջոկատով ուժեղացրեց այդ թևը։ Այս երկու թևերը առանձին-առանձին շարժվեցին դեպի բերդը։ Այստեղ էր գտնվում Հյուսեին Սաբրի փաշան իր տասներկու վաշտով, որոնց թնդանոթների թիվը համեմատաբար ավելի շատ էր։ Երբ ռուսները գրավեցին բերդի առաջամասի ամրացած զորակայանը, Լորիս Մելիքովը որոշեց մայիսի 17-ին սկսել ընդհանուր ռմբակոծություն։ Դրա հետևանքով բերդի պաշտպանները ստիպված եղան քաշվել բերդի ներսը։ Սակայն մարտերը շարունակվեցին քաղաքի փողոցներում և վերջացան այն
257 ժամանակ, երբ հարձակվող թևը միացավ գեներալ || Հայմանի զորամասերին։ Երեկոյան դեմ գլխավոր հրամանատարը Թիֆլիս ուղարկեց հետևյալ հեռագիրը. «Արդահանի բերդի արտաքին ամրությունները, ռազմամթերքը, վաթսուն թնդանոթները, մեծ քանակությամբ սննդամթերքը, ամրացված զորակայանը և միջնաբերդը ամբողջությամբ մեր զորքի ձեռքում է»։ Այս պատերազմում օսմանյան զորքից նահատակվեց մոտ 1750 հոգի, բրիգադի հրամանատար Ալի փաշայի հետ միասին մոտ 1000 զինվոր էլ գերի ընկավ։

Ռուսների ավար առած թնդանոթների և այլ զենքերի քանակն էլ նրանց նախնական ենթադրությունից ավելի եղած է։

Նախքան ռուսների կողմից Արդահանի գրավումը, օսմանյան զորքը ցուցաբերել էր մի կարևոր հաջողություն։ Արդեն վերևում նշել էինք, որ օսմանյան նավատորմը ռմբակոծել էր սուրբ Նիկոլայ ամրոցը և Փոթի քաղաքը։ Այս նավատորմը, որը բաղկացած էր «Օսմանիյե», «Ասարը թևֆիք» զրահավոր ծանր հածանավերից (ֆերքեթե)[3] և «Մուքադդեմեի խայր» և «Ֆեթհի բյուլենդ» թեթև հածանավերից (կորվեթ)[4] և մի հրետակիրից (կանբեթ)[5], գտնվում էր Հասան փաշայի հրամանատարության ներքո։ Այս ռմբակոծությունից երկու շաբաթ հետո լուր ստացվեց, որ Սուխումի բերդը գրավվել է օսմանցիների կողմից։ Այս հաջողությու-
258 նը || ձեռք էր բերվել այգ կողմերում ապրող աբազաների՝ ցամաքից ցույց տված օգնությամբ։

Երեք շաբաթ առաջ չերքեզ ղեկավարներից հինգ անձինք Ստամբուլից եկել էին Բաթում և այնտեղ բարձրացել Հասան փաշայի նավատորմը, որը հինգ զրահավորով շարժվում էր դեպի Սուխումի բերդը։

Մայիսի 3-ին այս հինգ անձինք գիշերով իրենց հետ վերցնելով 600 հրացան, դուրս են գալիս ցամաք, զենքերը բաժանում այնտեղ գտնված 300 մարդկանց։ Հասան փաշան որոշ թվով չերքեզներ, քրդեր, լազեր և թուրքեր ևս ցամաք հանելուց հետո ուժեղ կրակ էր բացել բերդի վրա։ Այդ ժամանակ չերքեզ բեգերը իրենց մարդկանցով ցամաքից հարձակում գործեցին։ Ռուսները թեև ուզեցին համառ դիմադրություն ցույց տալ, բայց չհաջողվեց։ Չերքեզ պետերի դրդումով Աբազայի[6] ապստամբությունը ավելի ծավալվեց ու տարածվեց ներքին շրջանները։ Բոլոր կողմերից ռուսներին դուրս քշեցին։ Դեպի Թիֆլիս տանող երկաթուղագիծը քանդելու համար օսմանյան զորքն ուղարկվեց Քութայիսի կողմերը։ Օսմանցիները գրավեցին Սուխումի բերդը։

Ռուս զինվորները քաշվեցին, գնացին։

ՋԻՎԻՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

264 || Ինչպես վերևում նշվեց, գլխավոր հրամանատար Լորիս Մելիքովը ապրիլ ամսի վերջին եկել էր Զայիմ։ Նա այս

վայրը վերածեց ընդհանուր բանակատեղի, հեռագրով կա-
պեց Թիֆլիսի հետ ու ամրացրեց։ Հեծելազորից ու թնդա-
նոթաձիգներից կազմեց շրջուն մի պահակագունդ և նրա մի-
ջոցով կտրել տվեց Կարսի և Էրզրումի միջև եղած ճանա-
պարհներն ու հեռագրագծերը։ Սկսեց Կարսը պաշարելու
պատրաստություն տեսնել։ Մուխթար փաշան Կարսում պա-
շարված մնալուց խուսափելու համար, ժամանակին քաշվել
էր Էրզրում և, իր զորքի մի մասը թողնելով Կարսի և Էրզր-
րումի միջև Զիվին կոչված վայրում, այնտեղ սարքել էր
265 ամուր ‖ բանակատեղ։ Քանի որ այս դիրքը կարող էր հյու-
սիսից և հարավից Կարսը պաշարող ռուսական բանակը թի-
կունքից հարձակման վտանգի ենթակա դարձնել, Լորիս Մե-
լիքովը հրաժարվեց Կարսը երկու կողմից պաշարելու մրտ-
քից և ստիպված եղավ գեներալ Հայմանի հրամանատարու-
թյան տակ եղած զորքը ուղարկել Զիվինի վրա։ Հյուսիսային
կողմից Կարսի վրա միաժամանակ հարձակվեց Դևելի զորա-
գունդը։ Այս մարտերը տևեցին հունիսի 17-ից մինչև հուլի-
սի 8-ը։
Զիվինում Իսմայիլ փաշայի հրամանատարության են-
թակա ուժը բաղկացած էր 15000 մարդուց, սակայն քանի
կիլոմետր հեռավորության վրա Դելի Բաբայում կար Մուխ-
266 թար փաշայի հրամանատարության ենթակա ‖ և՛ս նույն չա-
փի ուժ։ Այս երկու ուժերի նպատակն էր՝ մի կողմից օգնել
Կարսին, իսկ մյուս կողմից արգելք դառնալ, որ Էրզրումին
սպառնացող ռուսական բանակը չմիանա Տեր-Ղուկասովի
հետ։ Հունիսի 23-ին Լորիս Մելիքովը Տեր-Ղուկասովից լուր
ստացավ, որ սպառվել է իր ռազմամթերքը և վախենում է
Մուխթար փաշայի բանակի ուժգին հարձակումից։ Այս
պատճառով ռուսական գլխավոր հրամանատարը այդ հար-
ձակմանը արգելք դառնալու համար հրամայեց գեներալ Հայ-
մանին հարձակվել Զիվինի վրա, բայց Զիվինում օսմանցի-
ների դիրքերը այնքան կատարյալ էին, որ այստեղ միայն
ճակատից հարձակվելը անկարելի էր։ Հայմանը ստիպված
եղավ միաժամանակ աջ և ձախ թևերից էլ կատարել շրջա-
պատման գործողություն։ Սակայն ռուս գեներալները շատ
ուշ հասկացան, որ դրա համար իրենց ուժերը բավարար
չեն և մեծ կորուստների գնով մեծ իշխան Միխայիլի համա-
ձայնությամբ, որոշեցին ընդհանուր նահանջ կատարել և
մարտերը հետաձգել մինչև նոր ուժերի ժամանումը։ Հայ-

մանը Կարսի մատույցներում ռուսների կուտակած ռազմամթերքը ետ ուղարկելու գործը ապահովելու համար մինչև հունիսի 28-ը մնաց Զիվինի արևելքում գտնվող Միլլիդիսում։ Հուլիսի 10-ին Լորիս Մելիքովի հիմնական ուժերը դարձյալ գտնվում էին Ալեքսանդրապոլում։

Գեներալ Տեր-Ղուկասովը Բայազիդի գրավումից հետո Երևանի ջոկատով առաջ էր խաղացել Էրզրումի ուղղությամբ և մինչև մայիսի 14-ը վաթսուներկու կիլոմետր տարածություն կտրելով հասել էր սուրբ Օհաննես անունով հայկական մի հին վանքի մոտ և այնտեղ հիմնել մի զինապահեստ և մի հիվանդանոց։

Հունիսի 11-ին հրաման ստացավ շարժվել Դելի Բաբայում գտնվող Մուխթար փաշայի վրա։ Տեր-Ղուկասովը, չնայած իր ուժի սակավությանը, հարձակվեց Մուխթար փաշայի աջ թևի վրա։ Մուխթար փաշան նկատելով իր աջ թևի վտանգավոր դրությունը, որոշեց ուժ վաշտով շարժվել այդ կողմը և հարձակվել ռուսների վրա։ Հունիսի 21-ին Դելի Բաբայում տեղի ունեցավ բավականին մեծ ճակատամարտ, որտեղ ռուսները մեծ կորուստներ կրեցին։

Զիվինում ռուսական հիմնական բանակի կրած պարտության պատճառով ստիպված եղավ նահանջել նաև Տեր-Ղուկասովը։ Նահանջը շատ դժվար էր, որովհետև նա իր հետ ուներ 600 հիվանդ և վիրավոր։ Ութ օր քայլելուց և Ղարաքիլիսեի մոտ տեղի ունեցած մի մարտում ևս բավականին կորուստներ տալուց հետո հուլիսի 5-ին հազիվ կարողացավ հասնել սահմանի վրա գտնվող Իգդիրի դիրքը։ Բայազիդի միջնաբերդում պաշարված ռուս զինվորներին ազա-
267 տելու համար, այստեղ մի քանի օրվա ընթացքում || ուժերը վերադասավորելուց հետո, հուլիսի 8-ին ութ վաշտով, 19 հեծյալ դումարտակով և 24 թնդանոթով կրկին անցավ օսմանյան սահմանը։ Տեր-Ղուկասովը մայիս ամսին դեպի Էրզրումի կողմը շարժվելուց հետո, Բայազիդի բերդը Վանա լճի կողմից ենթակա էր դարձել օսմանյան զորքերի և քրդերի ճնշման։ Վանի նահանգապետ Ֆայիք փաշան Բայազիդի գրավման ժամանակ հայդարանլի ցեղից կամավորներ հավաքելով նրանց զինել էր «վինչեսթեր» հրացաններով։

Հունիսի 18-ին դեպի Վան ուղարկված ռուսական մի ջոկատ, Բայազիդից 17 կիլոմետր հեռավորության վրա

պարտություն էր կրել և քաղաքում մինչև այդ ժամանակ պաշարված լինելով, ստիպված էր եղել քաշվել միջնաբերդը։ Ռուսները 23 օր այս բերդում պաշարված մնալով, ստիպված էին զինվորների օրեկան պարենը կրճատել մինչև մեկ ութերորդ ֆունտ պաքսիմատի։ Վերջապես հուլիսի 10-ին դրսից օգնություն ստանալով պաշարումը վերացվել, քաղաքը ամբողջապես ավերվել էր։

Ռուսների Ռիոնի թևը մինչև նոյեմբերի 30-ը չկարողանալով առաջանալ, մնացել է պաշտպանողական դիրքերում։

Ջիվինի պատերազմից հետո Անատոլիայում սահմանն անցած ռուսական բանակի ընդհանուր նահանջում իր հաջողությունը հետևանք էր այն բանի, որ մենք մեր հարձակման ժամանակ չցուցաբերեցինք ուժգնություն։ Մուխթար փաշայի ռազմավարական միջոցառումները գերազանցում էին ռուսական շտաբի ցաք ու ցրիվ գործողություններից։ Եթե Մուխթար փաշան Ջիվինի պատերազմից հետո ուժգին առաջխաղացում կատարեր, շատ հավանական էր, որ Լորիս Մելիքովի հրամանին ենթակա ռուսական հիմնական ուժերը ամբողջությամբ ոչնչացված ու ցրված կլինեին։ Սակայն, պետք է նկատի ունենալ նաև այն, որ դրա համար նրա ուժերը բավական չէին։

ԿԱՐՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՆԱՏՈԼԻԱՅՈՒՄ

306 Ինչպես նախապես էլ նշել էինք, ռուսները Ջիվինի պատերազմից հետո Անատոլիայի ռազմադաշտից նահանջելով քաշվեցին սահմանի մյուս կողմը, որտեղ սպասում էին Ռուսաստանից օգնական ուժերի ժամանման, իսկ օգոստոսի 8-ին կրկին սկսեցին իրենց հարձակողական գործողությունները։ Նրանց նպատակն էր մի կողմից օգնել Տեր-Ղուկասովին հարձակվելու Իսմայիլ փաշայի վրա, իսկ մյուս կողմից արգելք հանդիսանալ, որ Մուխթար փաշան չկարողանա օգնության հասնել այդ կողմին։ Մեծ իշխան Միխայիլը օգոստոսի 25-ից անձամբ իր ձեռքն էր վերցրել բանակի գլխավոր հրամանատարությունը։ Սեպտեմբերի վերջերին ժամանեց օգնական ուժերի առաջին

գրննադերա.ան ռիվիզիան, որից հետո հարձակում սկսվեց մեծ և փոքր կողերի ամրացված բլուրների վրա։ Մուխթար փաշան դիրք էր գրավել այս բլուրների վրա։ Ռուսներին թեև հաջողվեց գրավել բլուրներից երկուսը, բայց հոկտեմբերի 4-ին Մուխթար փաշայի կատարած հարձակման պատճառով ստիպված եղան նորից թողնել դրանք և ետ քաշվել։ Զնայած դրան Մուխթար փաշան երկար չմնաց այստեղ և հոկտեմբերի 9-ին քաշվեց Կարսից երեսուն կիլոմետր հարավ-արևելքում գտնվող Ալաջայի դիրքերը, որոնք սքողում, պաշտպանում էին այդ
307 բերդը։ Մեծ իշխան Միխայիլը || որոշեց այդ վայրում հարձակվել հիշյալի վրա 41 վաշտ հետևակով, 43 գումարտակ հեծելազորով և 176 թնդանոթներով։ Որպեսզի հաջողությունը բոլորովին ապահով լինի, գեներալ Լազարևի հրամանատարությամբ 23 վաշտ հետևակից, 28 գումարտակ հեծյալ դինվորներից և 78 թնդանոթից բաղկացած երկրորդ մի զորագնդով շրջապատեց օսմանցիների դիրքերը։ 50000 մարդուց բաղկացած այդ բանակի դեմ օսմանցիներն ունեին 30000 մարդ։ Գեներալ Հայմանը առաջադրանք ստացավ գրավել օսմանյան դիրքերի կենտրոնը հանդիսացող Ավլյար լեռը։ Գեներալ Ռոոպն էլ Ալաջան ընդունեց իբրև նշանակետ։ Հոկտեմբերի 15-ի առավոտյան սկսվեց Ալաջայի ճակատամարտը և վերջացավ այն բանով, որ ռուսները ճեղքեցին պաշտպանական գծի կենտրոնական մասը և թափանցեցին դիրքերը։ Երբ Լազարևը հարձակվում էր կենտրոնի վրա, գեներալ Ռոոպն էլ մարտեր էր մղում Ալաջայի դիմաց։ Կեսօրին մոտ, երբ օսմանցիները անսպասելի կերպով սկսեցին իրենց թնդանոթները ետ քաշել, Ռուպը վճռեց, որ արդեն հասել է հարձակման պահը։ Զնայած գնդակների կատաղի տարափով դիմավորելուն, նրան հաջողվեց մտնել հրաձիգների առաջավոր խրամատները։ Օսմանյան զորքը չկարողացավ դիմադրել 28 թնդանոթների կենտրոնացված կրակին և Վլադիկավկազի ու Եկատերինոսլավի գնդերի շրջանցիկ շարժումներին։ Օսմանյան հետևակի մի մասը ստիպված եղավ հանձնել զենքերը, իսկ մյուս մասը՝ նահանջել։ Գեներալ Լորիս Մելիքովի եղբայրը հետապնդեց օսմանցիներին Կարսի ուղղությամբ։ Հոկտեմբերի 15-ի երեկոյան Մուխթար փաշան Կարս քաշվելուց

հետո որոշեց հանձնվել։ Մեծ իշխանը գեներալ Ռոոպին և
իր համհարզներից մեկին հանձնարարեց վարել հանձնման
բանակցությունները։ Պայմանները համեմատաբար նպաս-
տավոր էին։ Պայմանագրում ասված էր. «Այսօրվա մար-
տում օսմանյան զորքի ցուցաբերած քաջության և արիու-
թյան համար թույլատրվում է բոլոր սպաներին, ինչ աստի-
ճան էլ որ ունենան, կրել իրենց զենքերը և իրենց հետ վեր-
ցնել անձնական իրերն ու ձիերը. սպաների ծառայողները
և այլ զորամասերի չպատկանող անձինք զենքերը հանձնե-
լուց հետո բոլորն էլ կարող են վերադառնալ իրենց տեղերը,
իսկ ռազմագերիները պարտավոր են հանձնել ռազմամը-
թերքը, դրոշակները, զինանյութը, թնդանոթները և այլն»։
Ռազմագերիների մեջ կային 7000 զինվոր, յոթ փաշա և եր-
կու հարյուր հիսունից ավելի սպաներ։ Պայմանագիրը ստո-
րագրեց գեներալ Լորիս Մելիքովը, որպես Կովկասյան բա-
նակի գլխավոր հրամանատար։ Այս պատերազմից հետո
Մուխթար փաշան Ստամբուլ ուղարկած տեղեկագրում կո-
րուստը ներկայացնում էր միայն ութ-ինը հարյուրի չափ։
308 Երկրորդ տեղեկագրում էլ || հաղորդում էր այն սպաների
անունները, որոնք լքել էին պատերազմը կամ զինվորներին
մղել դասալքության։ Ստամբուլի ռազմական բարձրագույն
ատյանը դատապարտեց այդ սպաներին՝ երկու աստիճան
իջեցնելով նրանց կոչումը, բայց այս վճիռը չընդունվեց
հրամանատարության կողմից, և ի վերջո որոշվեց մահ-
վան դատապարտել նրանց։

Ռուսական բանակը այլևս անարգել ձեռնարկեց Կարսի
պաշարումը։ Պաշարման ղեկավար նշանակվեց գեներալ
Լազարևը։ Իսկ Հայմանի առջև խնդիր դրվեց՝ Կովկասյան
նռնաձիգ զինվորների հետ միասին հետապնդել օսմանյան
բանակի մնացորդներին և կտրել նրանց կապը Էրզրումի
հետ։ Լազարևի ուժերը բաղկացած էին 41 վաշտից [հետե-
վակ], 54 գումարտակից [հեծյալ] և 138 թնդանոթից։ 30
հազարանոց պաշարող բանակի դեմ Կարսում կար 25000
զինվոր։ Գեներալ Լազարևը աչքի առաջ ունենալով հան-
դերձ Պլևնայի դեմ ձեռնարկված ուղղակի հարձակման ող-
բերգական հետևանքները, բայց վախենալով վերահաս
ձմեռից և հաշվի առնելով, որ կանոնավոր պաշարման հա-
մար անհրաժեշտ կլինի շատ երկար ժամանակ, որոշեց

բերդը գրավել գրոհով։ Նոյեմբերի 5-ին, ետ մղելով բերդից
դուրս խուժելու համար պաշարվածների ձեռնարկած գրոհը,
նա նուեմբերի 11-ին սկսեց բերդի անընդմեջ, անգամ գի-
շերային, տասնօրյա ռմբակոծումը։ Պաշարվածները, նոր
ամրություններ կառուցելով, պատրաստվում էին համառ
պաշտպանության, և քանի որ բերդը բարձրադիր էր և լրիվ
իշխում էր ամբողջ շրջակայքի վրա, ռուսական սպայակույ-
տը վախենալով, որ ցերեկային հարձակումը կարող է մեծ
կորուստներ պատճառել, որոշեց հարձակումը կատարել
լուսնկա մի գիշեր։ Լիալուսինը հանդիպում էր նոյեմբերի
18-ի գիշերը։ Բովանդակ բանակը, առանց հեծելազորի,
բաժանվեց յոթ թևի։ Սրանց խնդիրը հետևյալն էր. գենե-
րալ Կոմարովի հրամանատարության տակ եղած զորագնդի
մի մասը շրջանցելով Տորաքի բլուրները, իր մեծ մասով
պիտի հարձակվեր Չիմ ամրոցի վրա. փոխգնդապետ Մելի-
քովի զորագունդը Սյուվարի ամրոցի վրա հարձակվելով
պիտի գրավեր Կարս գետի առաջին կամուրջը, այնուհետև
ինքը ևս պիտի մտներ Չիմ ամրությունը։ Գեներալ Գրաբեի
և գնդապետ Վոժդակինի զորագնդերը պիտի հարձակվեին
Քանլը ամրության կողերի, իսկ գեներալ Ալխազովի զորա-
գունդը՝ Հաֆըզ ամրության վրա։ Այս չորս թևերը գտնվում
էին Լազարևի հրամանատարության ներքո։ Իսկ հինգերորդ
և վեցերորդ զորագնդերը, որոնց խնդիրն էր հարձակումից
ավելի ցույց կատարել և անհրաժեշտության դեպքում հար-
ձակվել Լազթեփե և Մուխլիս ամրությունների վրա, գըտ-
նըվում էին գեներալ Ռոոպի հրամանատարության ներքո։
Յոթերորդ զորագունդը ցույցեր պիտի կատարեր Արար և
309 Կարադաղ ամրությունների դեմ։ Մի ընդհանուր պահեստի ‖
զորամաս էլ գտնվելու էր Կարսից ինը կիլոմետր դեպի հա-
րավ-արևմուտք՝ Կամազովի դիրքերում։ Բոլոր թևերը ունե-
ին դինամիտային փամփուշտներ և հարձակման սանդուխ-
ներ ունեցող ամրոցային ջոկատներ, որոնց կցված էին
նաև թնդանոթաձիգներ։ Հեծելազորը կանգ էր առել Երզը-
րումի ճանապարհին և խնդիր ուներ արգելք հանդիսանալ
պաշտպանվողների նահանջին։

Նոյեմբերի 18-ի գիշերը անամպ էր, հանդարտ և
ցուրտ։ Լիալուսնի լույսի տակ հեռվից նշմարվում էին ձյու-

նածածկ բլուրները։ Ռուսները թեև առաջ էին շարժվում շատ զգույշ, բայց առաջապահ պահակները նկատեցին գիշերային հարձակումը և պաշտպանվողները բոլորը միասին անմիջապես սկսեցին համազարկ հրաձգությունը։ Փոխգնդապետ Մելիքովի զորագունդը, իր առջև ունենալով կամավորներ, արտակարգ արագությամբ գրավել էր Սյուվարի ամրոցը, առաջացել մինչև Կարս գետի կամուրջը և այնտեղից պատրաստվում էր թիկունքից հարձակվել Չիմ ամրոցի վրա։ Կես գիշերից երկու ժամ պակաս գեներալ Գրաբեն հասավ Քանլը ամրոցի փեշերին։ Սևաստոպոլի գնդի կամավորները երկու գումարտակ զինվորներով, չնայած պաշտպանվողների սաստիկ կրակին, հարձակվեցին արտաքին ամրությունների վրա։ Գեներալ Գրաբեն, երբ Պերմի և Սևաստոպոլի գնդերի հետ առաջանում էր դեպի բուն ամրոցը, վիրավորվելով սպանվեց։ Նրա փոխարեն հրամանատարությունը ստանձնեց Պերմի գնդի գնդապետը։ Այս գնդերը կատաղի մարտից մի ժամ հետո մտան ամրոցը։ Այստեղ տեղի ունեցած սվինամարտում ռուսները շատ զոհեր տվին։ Այնուհետև պաշտպանվողները, քաշվելով բերդի պատսպարանները (բլինդաժ, կազեմատ), այնպիսի ուժեղ դիմադրություն ցույց տվին, որ ռուսները ստիպված եղան մինչև օգնական ուժերի ժամանումը, թողնել ամրոցը և նահանջել։ Գնդապետ Բելինսկին թեև այս անգամ էլ սկսեց թիկունքից հարձակվել կազեմատների վրա, բայց իր նախորդի նման վիրավորվեց և մահացավ։ Դրանից հետո գեներալ Լազարևը օգնական ուժ ուղարկեց դժվարին դրության մեջ ընկած այս թևին, իսկ սպանված երկու հրամանատարների փոխարեն նշանակվեց գնդապետ Բլումերինգը։ Միաժամանակ Լորիս Մելիքովը Քանլը ամրությունից մինչև Կարս գետը ընկած ամբողջ գծի հրամանատարությունը հանձնեց գեներալ Ճավճավաձեին։ Այս գեներալը իր կազակներով եկավ մինչև ամրոցի առաջ, հեծյալներին ձիերից իջեցրեց և հրամայեց մագլցելով բարձրանալ պատնեշների վրա։ Սրանց գալուց հետո պաշտպանները ստիպված եղան թողնել ամրոցը և ետ քաշվել։

310 ‖ Համեմատաբար ավելի հեշտ է եղել բոլոր դիրքերի բանալի համարվող Հաֆրզ-փաշա և Կարադաղ ամրոցների գրավումը։ Չնայած այն բանին, որ նախորդ երեկոյից

սկսած Հաֆըզ-փաշայի ամրության և Ալեքսանդրապոլի ճանապարհի մյուս կողմում գտնվող Կարադաղ ամրությունից անընդհատ կրակով են դիմավորվել, այնուամենայնիվ գնդապետ Ցադեևը նախ գրավեց հիշյալ երկու մարտկոցների միջև կառուցված ամրությունները, հետո երկու զորագնդերի փոխադարձ օգնությամբ գրավվեց Կարադաղ մարտկոցը։

Այս հաջողություններից հետո Ալխազովի և Բյումերինգի զորագնդերը շարժվեցին դեպի քաղաք։ Քաղաքի առաջամասում գտնվող բանակատեղի գրավումով՝ փողոցներում կոկորդ-կոկորդի արյունալի մարտեր մղեցին։ Սակայն այս հաջողություններով էլ չավարտվեց Կարսի գրավումը։ Կարս գետի ձախ ափին ռուսների ձեռնարկած հարձակումը տեղային հանգամանքների և բլուրների վրա կառուցված երկու շարք ամրությունների պատճառով է՛լ ավելի մեծ դժվարությունների էր հանդիպում։ Այս պատճառով ռուսական սպայակույտը 1855 թվականի Մուրավյովի սխալը չկրկնելու համար, որոշեց բուն հարձակումը կատարել ամրությունների հարավ-արևելյան կողմից։ Հնարավոր չեղավ գրավել Ձիմի, Լաղթեփեի ամրությունները թե դրանց ամրակուռ լինելու և թե պաշտպանների ցույց տված ուժեղ դիմադրության պատճառով։ Ռուսների հարձակումը ապարդյուն անցավ։ Նույնիսկ գետի այս կողմում գտնվող Սյուվարի ամրությունը փոխգնդապետ Մելիքովի կողմից գրավվելուց հետո նորից վտանգի է ենթարկվել, և Մելիքովը, որը աշխատում էր իր համար ճանապարհ բաց անել դեպի Ձիմ ամրությունը, այս նոր հարձակման ժամանակ ստացած վերքից նույն օրը ևեթ մահացել է։ Այս պատերազմի մասին ճիշտ գաղափար կազմելու համար չպետք է մոռանալ, որ այս բոլորը տեղի են ունեցել գիշերվա նույն ժամին։ Ափսոս, որ Արաբ ամրոցն էլ չկարողացավ դիմանալ ռուսների հարձակմանը և ընկավ։ Այժմ մնացել էր միայն միջնաբերդը իր շատ նպաստավոր դիրքով։ Ռուսներին թվում էր, թե այստեղ արդեն կհանդիպեն բուռն դիմադրության։ Սակայն բերդի հրամանատար Հուսեյին փաշան առանց կռվի քաշվեց Վլադիկավկազի գնդի առջևից և, իր զինվորներին Կարս գետի ձախ ափը հավաքելով, մտադրվեց քաշվել դեպի Էրզրում։ Մինչդեռ, ինչպես վերևում նշվել է, էր-

զըրումի ճանապարհին էլ սպասում էր ռուսական հեծելազորը։ Հետևաբար 14000 զինվորները ստիպված եղան հանձնել իրենց զենքերը։ Կարողացան ազատվել միայն օսմանյան հեծելազորը, Հուսեյին փաշան և նրա հետևորդները։

311 ‖ Նոյեմբերի 18-ին մեծ իշխան Միխայիլը մտավ ռուսների կողմից երրորդ անգամ գրավված Կարսի բերդը. Ռուսները իբրև ավար վերցրել էին 300-ից ավելի թնդանոթ. մեծ քանակությամբ ռազմամթերք. գերիների թիվը հասնում էր առնվազն 17000-ի. Նրանց մեջ կային 8 փաշա, 800 սպա. 4500 վիրավոր և հիվանդ զինվոր։ Ռուսների կորուստը եղել է մի գեներալ, 170 սպա և 470 զինվոր սպանված. մի գեներալ, 650 սպա և 1726 զինվոր վիրավոր։ Տասներկու ժամ տևող գիշերային այս մարտում օսմանյան զինվորներից նահատակվեց մոտավորապես 2500 մարդ։

Այս վերջին օրերին էրզրումի շրջակայքում էլ գործերը վատացել էին։ Տեր-Ղուկասովը Ալաջայի ճակատամարտից հետո հարձակում սկսելով, էրզրումի ուղղությամբ հետապնդել էր Իսմայիլ փաշային։ Քյոփրյու-քյոյի կարևոր դիրքում նա միացավ դարձյալ էրզրումի ուղղությամբ առաջ շարժվող Հայմանի թևի հետ։ Մուխթար փաշան քաշվել էր Հասանկալե, սակայն իր տրամադրության տակ մնացած սակավաթիվ զորքով այդտեղի պաշտպանության մասին չէր էլ կարող մտածել, հետևաբար քաշվեց բնականից շատ ամրակուռ Դևե-Բոյնույի դիրքերը։ Ֆեյզի փաշան այստեղ կառուցել էր հողային ամրություններ։ Մուխթար փաշայի դեպի այստեղ նահանջը շատ նպատակահարմար եղավ, որովհետև Հայմանի թևի հեծելազորը հոկտեմբերի 29-ի գիշերը Հասանկալեում հասավ Մուխթար փաշայի վերջապահներին և առավոտյան գերի վերցրեց նրա երկու վաշտերը։ Մուխթար փաշան օգնական ուժ էր սպասում Տրապիզոնից։ Հայմանը, որպեսզի մինչ օժանդակ այդ ուժի ժամանումը կարողանա իր գործը կատարել, որոշեց նոյեմբերի 4-ին հարձակվել Դևե-Բոյնույի վրա։ Նա հասկացել էր, որ այդտեղի զինվորների համարձակությունը կոտրած է, և պաշտպանական գծի կենտրոնն էլ շատ տկար։ Նա իր բանակը երկու մասի բաժանելով, էրզրումի ճանապարհի աջ կողմի հրամանատարությունը հանձնեց գեներալ Տեր-Ղու-

կասովին, իսկ ձախ կողմինը՝ գեներալ Դևիլին։ Այս գեներալները իրենց զորագնդերը նորից բաժանեցին երկուական հարձակվող թևերի։ Օսմանյան զորքը սկզբում անվեհեր դիմադրություն ցույց տվեց, որի պատճառով ձախ կողմում ռուսների հարձակումները ապարդյուն մնացին, իսկ աջ կողմում հաղթությունը շատ հապաղեց։ Մուխթար փաշան Դևե-Բոյնույի կիրճի ելքում անձամբ ինքն էր ղեկավարում հրամանատարությունը։ Երբ նա տեսավ, թե ինչպես ռուսական հեծելազորը խելագար թափով առաջ էր ընթանում այդ կիրճով, բոլորովին չտարակուսեց, որ հաջողությունը իր կողմը կլինի։ Սակայն պաշտպանվողները բոլորովին չփոթվեցին, երբ մի գիշեր առաջ մոտակա կիրճերում թաք-
312 նված ‖ ռուս հետևակ զինվորները, անսպասելի կերպով դուրս գալով, թնդանոթաձիգների հետ միասին շատ ուժեղ կրակ բաց արին։ Խռովքը հասել էր այն աստիճանին, որ երբ ռուսները մագլցում էին դեպի բլուրները, պաշտպանվողները չաշխատեցին կասեցնել նրանց մարտկոցների կրակով։ Թնդանոթաձիգները տեղում թողնելով 60 թնդանոթ, իրենց լծկան ձիերին նստած խույս տվին։ Միայն Ֆեյզի և Մեհմեդ փաշաները իրենց բրիգադներով դիմադրություն ցույց տալով, որոշ չափով կասեցրին թիկունքից հետապնդող ռուսներին։ Վերջին օրերի ընթացքում զրկանքներից բացի արյունաքամությունից և հոգնածությունից անզոր ու թույլ վիճակում մինչև Էրզրումի դռները հասած զինվորներին էրզրումցիները ներս չեն թողել, նույնիսկ գնդակներով են դիմավորել. սակայն ի վերջո նրանք կարողացել են բռնի ուժով ներս մտնել, և իսկույն ցրվելով տները, հետամուտ են եղել ուտելիք, խմելիք ճարելու։ Այնպես են ասում, որ եթե այդ օրը ռուսները ևս հոգնած և հանգստի կարոտ չլինեին և կարողանային հետապնդումը շարունակել, այդ գիշերը հեշտությամբ կարող էին Էրզրում մտնել։ Ի վերջո Մուխթար փաշան իր բանակի մնացորդով հասավ Ազիզիե։ Ֆեյզի և Մեհմեդ փաշաներն էլ անվընաս ազատվեցին։ 56 թնդանոթներից կարողացան բերդ բերել միայն 13-ը։ Ամբողջ բանակից մնացել էր միայն հինգ-վեց հազար մարդ։

Չնայած իր բանակի կրած պարտություններին, Մուխթար փաշան չկորցրեց իր արիությունը և որոշեց մինչև

վերջ պաշտպանել Էրզրումը։ Իր բանակը համալրեց Տրա-
պիզոնից և Անատոլիայի ներքին շրջաններից ժամանած
զինվորներով։ Էրզրումում եղած ամրություններից բացի,
հունիս ամսից սկսած կառուցվել էին նաև արտաքին ամ-
րություններ։ Արտաքին գիծը պետք է կազմված լիներ մի-
ջանցիկ պատնեշներով իրար կապակցված 11 ամրություն-
ներից, սակայն կառուցված էր սրանց միայն մի մասը։
Ամրությունները լրիվ սպառազինելու և ըստ արժանվույն
պաշտպանելու համար անհրաժեշտ էր 150 թնդանոթ և
20000 զինվոր։ Նյութական այս դժվարություններին ավե-
լացան ուրիշները։ Այլազան տարրերից բաղկացած քաղաքի
ժողովուրդը մի պատգամավորություն ուղարկեց Մուխթար
փաշայի մոտ և խնդրեց Էրզրումը հանձնել ռուսներին։
Մուխթար փաշան մերժել էր այդ խնդրանքը։ Դրանից հետո
ռուս մի բանագնաց գալով, առաջարկեց անձնատուր լինել։
Մուխթար փաշան սկզբում խուսափողական, իսկ մի քանի
օրից հետո մերժողական կտրուկ պատասխան տվեց։ Հայ-
մանը մտածելու համար երեք օր ժամանակ ևս տվեց. այդ
ժամկետը վերջանալուց հետո, իբրև սպառնալիք քաղաքի
ռմբակոծումը վերսկսելու կապակցությամբ գումարվեց
պատերազմական ընդհանուր խորհուրդ, որին հրավիրվել
314 էր նաև քաղաքի ավագանին։ ‖ Միաձայն որոշվեց դիմա-
դրություն ցույց տալ։ Բայց, այս լեռնոտ շրջանում ձմեռ
եղանակը խիստ լինելու պատճառով ռուսները բավականա-
ցան քաղաքը բոլոր կողմերից միայն շրջապատելով և հրա-
ժարվեցին առաջ շարժվելուց։ Մուխթար փաշան Էրզրումում
լրիվ պաշարված չմնալու և նոր օգնական բանակ կազմա-
կերպելու համար քաշվեց Տրապիզոնի ճանապարհի վրա
գտնվող Բայբուրդ (Բաբերդ) քաղաքը։ Բայց քանի որ այդ
ժամանակ Ստամբուլի մոտակայքի ռազմավայրում տեղի
էին ունենում ավելի կարևոր իրադարձություններ, իրեն
հրավիրեցին այդ կողմերը, որից հետո ոչ ոք այլևս չէր
կասկածում, թե պատերազմը շարունակվելու դեպքում
Էրզրումին ինչպիսի վախճան է սպասում։ Հետագայում
1878 թվականի փետրվարի 21-ին կնքված զինադադարի
համաձայն Էրզրումը դատարկվեց և հանձնվեց ռուսներին։

325 ‖ Սուլեյման և Մեհմեդ Ալի փաշաների ու պալատի միջև երկար հաղորդակցությունները և այդ միջոցին երկու կողմերի առաջարկած զանազան ծրագրերը չկարողացան կանխել Պլևնայի անկումը։ Այն օրը, երբ հանձնվում էր Պլևնան, պալատի գլխավոր քարտուղար Սայիդ փաշան Սուլեյման փաշային ուղարկած հեռագրում հետևյալ կերպ էր խոստովանում կացության վտանգավորությունը. «Ակնհրև է, որ թշնամին այս օրվանից հետո իր ամբողջ ուժով պիտի բռնատիրի Բալկանների խորքերը և թերևս պետությունների միջամտությունից առաջ, մեզ հնարավորություն չտալով վերակազմավորվել, շարժվելու է դեպի Էդիրնե և ավելի առաջ։ Աստված մի արասցե, եթե այս նպատակին էլ հասնի, այդ ժամանակ հիմնահատակ կխորտակվի մեր պետության կառուցվածքը և իսլամական ազգը։ Հետևաբար, առանց մի րոպե անգամ կորցնելու, մեր առաջին գործն է լինելու այժմ իսկ ստեղծել Էդիրնեի պաշտպանական գիծը և նոր ուժերով համալրել Սոֆիայում գտնվող մեր զորաբանակը, որը բաղկացած է լինելու մեծ մասամբ դասալքության և փախչելու պատրաստ աշխարհապահ դասից։ Ներկա հրամանատարի հայտարարության համաձայն, նա միանգամայն անկարող է լուրջ, կայուն դիմադրություն ցույց տալ թշնամու սպառազեն և վարժված զորքին»։

Հոկտեմբերի 28-ին Ստամբուլում խուճապը հասել էր այն աստիճանին, որ ցրեցին մինչև այժմ բազմաթիվ անգամներ հիշատակված զինվորական բարձրագույն խորհուրդը և նրա փոխարեն պալատում ստեղծվեց մի ուրիշ հանձնաժողով։ Զորաբանակի գեներալ Մահմուդ փաշայի գլխավորած այս հանձնաժողովի մեջ մտնում էին գեներալներ Նեջիբը, Ալի Նիզամին, բրիգադի հրամանատար Էդհեմ և սպայակույտի գնդապետ Էսատ բեյերը։ Այս սպաներից ոչ մեկը կյանքում դեռ պատերազմ չէր տեսել։ Զինվորական խորհրդի ցրումը նշանակում էր նաև, որ այդ խորհրդի նախագահ դամատ (կայսեր փեսա) Մահմուդ փաշան նույնպես շնորհազուրկ էր արված կայսեր կողմից։ Մահմուդ փաշան
326 լինելով Սուլեյման փաշայի պաշտպանը, ‖ վերջինիս գրած մի նամակում հետևյալ խոսքերով է բացատրում այն ամե-

նր, ինչ ինքը կրել է իր նախագահության տակ եղած խորհրդից. «Ի՞նչ եք սպասում դուք այս մարդկանցից, որոնք իրենց կյանքում ռուսներ չեն տեսել և հետևաբար բավականաչափ չեն հասկացել մեր վիճակը նրանց համեմատությամբ»։ Պլևնայի անկումից երկու օր առաջ պաշտոնանկ էր արվել նաև գլխավոր հրամանատար Ցոսֆոր Մուստաֆա փաշան, քանի որ Ստամբուլը արդեն հասկացել էր, որ Պլևնայի անկումն ու հանձնումը արդեն մոտ ապագայի գործ է և գլխավոր հրամանատարը որպես թե ինքն առաջինն էր այն մարդկանցից, որոնք պնդում էին, որ բանակը պետք է մինչև վերջ դիմադրություն ցույց տա։ Մուստաֆա փաշայի փոխարեն նշանակվեց Ռեուֆ փաշան։ Քանի որ Սուլեյման փաշան Ռեուֆ փաշային համարում էր իր մեծագույն թշնամին, նրա գլխավոր հրամանատար նշանակվելուց հետո ցանկացավ հրաժարական տալ, բայց փադիշահի և սադրազամի խնդրանքից և պնդումներից հետո առժամանակ հրաժարվեց այդ մտքից։ Դեկտեմբերի 12-ին Մեչկայում ռուսական գահաժառանգի դեմ համարձակ, բայց ապարդյուն պատերազմ մղելուց հետո Սուլեյման փաշան դեկտեմբերի 14-ին Ստամբուլ ուղարկած հեռագրով տեղեկացրեց, որ իր մտքերը փադիշահին և կենտրոնական իշխանության ղեկավարներին բանավոր զեկուցելու համար ցանկություն ունի Վառնայի ճանապարհով գալ մայրաքաղաք։ Նրան արտոնեցին մեկնել։ Ավստրիական փոստատար շոգենավ նստելու համար նա եկել էր մինչև Վառնա։ Սակայն, այստեղ սադրազամից և Ռեուֆ փաշայից ստացավ ուրիշ հրաման՝ Բալկանների վրայով գնալ Սոֆիա։ Սուլեյման փաշան այլևս ուշադրություն չդարձնելով այդ հրամանի վրա, նստել էր Վառնայի նավամատույցում գտնվող «Սուլթանիե» շոգենավը։ Իր հետ վերցնելով հետևակի չորս գումարտակ և թնդանոթի մի մարտկոց, նա եկավ Ստամբուլ։

Աբդուլ Համիդը թեև մեծարանքով ընդունեց նրան, բայց Սուլեյման փաշայի Ստամբուլ ժամանումը չորս գումարտակ զորքի հետ դիտվեց որպես հեղափոխություն առաջացնելու մտադրություն և, այդ մասին ներկայացված գաղտնի տեղեկագրի հիման վրա, հրամայվեց նույն օրն իսկ թողնել Ստամբուլը։ Սուլեյման փաշան մեծ դժվարու-

թյամբ Թույլտվություն ստացավ գոնե մի գիշեր մնալ իր տանը, ընտանիքի հետ։ Հետագայում նա անձամբ գրի է առել այդ օրը Աբդուլ Համիդի հետ տեղի ունեցած խոսակցությունը։ Ահա այդ կարևոր տեսակցության ժամանակ տեղի ունեցած խոսակցությունից մի հատված։

Սուլեյման փաշա.— Պլևնան մեր ձեռքից գնալուց և
մեր կանոնավոր զորքի մի մասը կորցնելուց հետո պատե-
րազմը շարունակելը մեզ մեծ վտանգի ենթարկելուց բացի,
327 ոչ մի արդյունքի չի կարող հասցնել։ Ցարը դեռ Ռումելի-
ում է։ Ձեր խոնարհ ծառային՝ ինձ, կամ Մահմուդ Ջելալեդ-
դին փաշային, կամ ձեր վստահելի մեկ ուրիշ անձնավորու-
թյան ուղարկեցեք նրա մոտ և ինչպիսի պայմաններ էլ որ
լինեն, հաշտություն կնքեցեք նրա հետ. այս ձևով թերևս
կասեցվի ռուսների առաջխաղացումը, և բազմաթիվ քա-
ղաքներ խուսափեն քարուքանդ լինելու և ավերակների վե-
րածվելու վտանգից։

Աբդուլ Համիդ.— Ինչ որ անհրաժեշտ է կատարեցեք, որպեսզի մինչև մի ամիս արգելեք ռուսներին անցնելու Բալկանները։ Անգլիայի դեսպան սըր Լայարդը լորդ Բիկոնսֆիլդի անունից ինձ հայտնեց, որ այս ամսի վերջին Անգլիան պատերազմ է հայտարարելու Ռուսաստանին։ Պատերազմական պատրաստությունները խիստ գաղտնի են պահվում, լորդ Դերբին անգամ գրանից լուր չունի։

Սուլեյման փաշա.— Անգլիան եթե այսօր էլ պատերազմ հայտարարի, մի ամսից ավելի ժամանակ կպահանջվի, որպեսզի կարողանա մեզ օգնելու համար զինվոր ուղարկել, իսկ մինչ այդ ռուսները կհասնեն Ստամբուլի դռներին։ Ձեր ծառայի կարծիքով, մեզ համար ուրիշ միջոց չկա, քան ուղղակի հաշտություն կնքել նրանց հետ, նախքան եվրոպական պետությունների միջամտությունը։ Գործը եվրոպացիների ձեռքը ընկնելու դեպքում Անգլիան, Ավստրիան, Իտալիան կաշխատեն օգուտ քաղել այս խառնակ դրությունից։ Այնուհետև, եթե ռուսները մի քիչ էլ առաջանան, հույները ոտքի կկանգնեն և պատերազմ հայտարարելով կանցնեն սահմանը։ Այսպիսով, փոխանակ ստիպված լինելու ամեն մեկին մեկական բաժին տալու, նախընտրելի է այժմ իսկ, թեկուզ ամենածանր պայմաններով բանակցություններ սկսել ռուսների հետ։

Պատերազմը դեռ չէր հայտարարվել։ Մի երեկո նորին արքայական մեծությանը հայտնել էի հետևյալը. ասում են, որ մենք ունենք 600000 զինվոր, սակայն սրանք զինվորական կրթություն ստացած և վարժված զինվորներ չեն. աստծու կամեցողությամբ յոթ-ութ տարի հետո միայն ձեր արքայական մեծության շնորհիվ մեր զորքը պիտի դառնա զինավարժ. այժմ այս անվանը արժանի զինվորների քանակը հազիվ հասնի հարյուր հազարի։ Այդ զորքով մենք չենք կարող պարտության մատնել հզոր, կանոնավոր և լավ կազմակերպված ռուսական բանակին։ Մենք չունենք ո՛չ փոխադրական գունդ, ո՛չ երկաթուղային և հեռագրային գումարտակներ, այս բոլորից բացի, չունենք մանավանդ 600000 զինվորի ղեկավարող սպաներ։

Աբդուլ Համիդը ասաց, որ հիշում է այս խոսքերը և խոստովանելով, որ ինքն էլ կողմնակից չէ պատերազմին, ավելացրեց. «պատերազմը հայտարարվել է Միդհատ փա-
328 շայի կարգադրությամբ։ ‖ Այն ժամանակ Միդհատ փաշայի առաջ քաշած փաստարկները հերքող ապացույցներ գտնելու համար շատ ստիպեցի Ռեդիֆ փաշային, սակայն վերջինս պատասխանեց, որ ո՛չ պատերազմի, ո՛չ էլ հաշտության համար իր վրա պատասխանատվություն չպիտի կարողանա վերցնել»։

Վերևում մենք նշել էինք, որ Սուլեյման փաշան սկզբում նշանակվել էր Ռումելիի և Դանուբի բանակների ընդհանուր հրամանատար։ Սակայն հետագայում, պատերազմի սկզբնական շրջանում նրա թույլ տված սխալների պատճառով նրան ավելի ծանր պատասխանատվության տակ դնելու համար Աբդուլ Համիդը նրան հանձնեց ամբողջ ծովափնյա շրջանների՝ Բոսնիայի, Հերցեգովինայի, Շկոդրայի, Ալբանիայի և մինչև Հունաստանի սահմանները գտնվող զինվորական ուժերի հրամանատարությունը։ Այսպիսով, պալատում նոր կազմված զինվորական հանձնաժողովը բոլորովին զերծ մնաց պատասխանատվությունից։

Սուլեյման փաշան շատ լավ հասկացել էր, որ արտաքուստ թեև սիրալիր են իր նկատմամբ, բայց նախկին վստահությունը չի մնացել։ Արդեն համարձակությունը կորցրած, նա դեկտեմբերի 21-ին թողեց Ստամբուլը և գնաց Էդիրնե։ Տեղ հասնելով տեսավ, որ ամրությունները դեռ

պաշտպանական վիճակի չէին բերվել։ Էդիրնե հրավիրեց
Աբիդ փաշային, որին շինել էր տվել Ռուսչուքի ամրու-
թյունները, և հանձնարարեց ավարտել այդտեղի ամրու-
թյունների թերի կառուցումները։

Դժբախտաբար շատ շուտ վրա հասավ Սուլեյման փա-
շայի նախատեսած աղետը։ Պլևնայի գրավումից հետո տա-
րաձայնություն առաջացավ ռուս հրամանատարների շրջա-
նում։ Ոմանք այն կարծիքին էին, որ ձմեռվա խստության
հետևանքով պատերազմը հարկավոր է հետաձգել մինչև
329 գարուն, մի մասն էլ, || ընդհակառակը, գտնում էր, որ
պետք է ամենամեծ դժվարությունների գնով, առանց ընդ-
միջման շարունակել պատերազմը։ Ինչպես Գեռմանիայի
զինվորական ղեկավարները այդ ժամանակ ձմեռվա ըն-
թացքում Բալկաններից անցումը համարում էին վտանգա-
վոր, այնպես էլ գեներալ Տոթլեբենը Ալեքսանդր կայսեր Պե-
տերբուրգ մեկնելուց առաջ գլխավոր շտաբում գումարված
ռազմական խորհրդում հայտնել է այն միտքը, որ Բալկան-
ներից անցնելու գործողությունը պետք է հետաձգել մինչև
մայիս, իսկ մեծ իշխան Նիկոլայը, ընդհակառակը, այն
կարծիքին էր, որ ձմռանը, Դանուբի մյուս ափի հետ հա-
ղորդակցությունը ընդհատվելու հետևանքով, ռուսական
բանակի համար չափազանց վտանգավոր կլիներ անցկաց-
նել Բուլղարիայում և որ ամենագլխավորն էր, Թուրքիային
ժամանակ չպետք է տրվեր վերակազմելու նոր ուժեր։

Վերջապես որոշվեց երկու ուղղությամբ, այսինքն՝
Շիպկայի կիրճից և Էթրոպոլ լեռնաշղթայից շարունակել
առաջխաղացումը ուղիղ Էդիրնեի վրա։ Այն թևը, որը անց-
նելու էր Շիպկայի կիրճը, հնարավորություն ուներ բանալու
Էդիրնեի ճանապարհը, իսկ մյուս՝ Էթրոպոլի լեռնաշղթայով
անցնող թևը միանալու էր սերբերի հետ և գրավելով Սոֆիան
ու Պլովդիվը, օսմանյան բանակի վրա հարձակվելու էր թի-
կունքից։ Այդ նպատակով երրորդ գվարդիական դիվիզիան
և իններորդ կորպուսը ուղարկվեցին Օրխանիե՝ ուժեղացնե-
լու համար գեներալ Գուրկոյի բանակը։ Այն բաղկացած էր
75000 զինվորից և առաջադրանք ուներ անցնել Էթրոպոլի
լեռնաշղթան։ Շիպկային հատկացված Ռադեցկու բանակը
ուժեղացնելու համար չորրորդ կորպուսի մի մասր ուղարկ-
վեց Սելվի, մյուս մասր Գաբրովո։ Գաբրովո ուղարկված

330 գրենադերական կորպուսը || կազմում էր ընդհանուր պահեստային մասը։

Գուրկոյի բանակը, որը արդեն կրում էր Արևմտյան բանակ անունը, կրկին բաժանվեց երեք թևի՝ գեներալներ Կատալայի, Վելյամինովի և Դանդևիլի հրամանատարության տակ։ Իշխան Օլենբուրգը և գեներալ Շուվալովը 26 վաշտով և 25 թնդանոթով Արաբ Քոնաք անունով լեռնանցքի առաջ դիրք էին գրավել։ Զորամասերը առաջ շարժվելու համար ստիպված էին ճանապարհ բաց անել խիստ ցրտի. բուք ու բորանի պայմաններում։ Այդ գործողությունը էլ ավելի էր դժվարանում նրանով, որ պետք է կատարվեր հնարավորին չափ անաղմուկ, աշխատելով չգրավել թշնամու ուշադրությունը։ Առաջընթաց թևը վեց օրվա ընթացքում հազիվ կարողացել էր կտրել 16 վերստ ճանապարհ։ Մյուս թևերն էլ մեծ դժվարություններ և կորուստներ կրեցին։ Գուրկոն հունվարի 1-ին Արաբ Քոնաք լեռնանցքը գրավելուց և մի քանի թեթև մարտերից հետո մտավ Սոֆիա։ Այստեղ նա գտավ մեծաքանակ ռազմավար։ Հունվարի 1-ին Պլովդիվի ուղղությամբ գրավեց Ահթմանը, 13-ին՝ Թաթար Փազարջըքը։

Գուրկոյի Սոֆիա մտնելու լուրը ստանալուն պես Ռադեցկին հրամայեց հարձակվել Շիպկայի կիրճում գտնվող օսմանցիների վրա։ Գեներալ Սկոբելևի ջոկատով ուժեղացած Ռադեցկու բանակը հասել էր 60000 մարդու։ Որպեսզի թուրքերին թույլ չտրվի կռահել հարձակման բուն նպատակը և օսմանյան բանակն էլ զբաղեցվի տարբեր կողմերում, գեներալ Կարցովը առաջադրանք ստացավ անցնել Տրոյանի կիրճը, իսկ գեներալ Դելինհաուզենը պետք է ցույցեր կատարեր Ահմեդլի, Ջվարտիցա և Խային քյոյի կողմերում։ Թեև Տրոյանի կիրճն անցնելը համարվում էր գրեթե անհընարին, չնայած սաստիկ ցրտին, գեներալ Կարցովին հաջողվեց անցնել այդ տեղից և հունվարի 9-ին գրավեց Զոփութը և Կարլովան։ Գեներալ Ռադեցկին, որ ընդհանրապես կողմնակից չէր մեծ իշխան Նիկոլայի հանդուգն ծրագրերին, կռահեց, որ օսմանցիները բաց են թողել Շիպկայի մոտ եղած երկու ճանապարհները, որոշեց յուրաքանչյուր ուղղությամբ մեկական պահակագունդ ուղարկել Շիպկան շրջապատելու համար։ Այս երկու պահակագնդերը սարսա-

փելի ցրտին անցան լեռնաշղթան և հունվարի 7-ին հասան
Շիպկայի հարավային շրջանը։ Սեն Նիկոլա լեռան վրա ռու-
սական բանակի կենտրոնի հրամանատար Ռադեցկին տես-
նելով, որ իշխան Միրսկու թևը Յանինայում մնացել է բո-
331 լորովին միայնակ, որոշեց հունվարի 9-ին Շիպկայի մեծ
ճանապարհի վրա ճակատային հարձակում գործել։ Այս
հարձակումը կատարվել է 14-րդ դիվիզիայի երկրորդ բրի-
գադի կողմից և թեև 1700 զինվորի ու սպայի կորստյան
պատճառ է դարձել, բայց հասել է Բալկաններն անցնելու
հանդուգն գործողության հիանալի արդյունքի, օժանդակել
է, որ կողերում գտնվող թևերը օսմանյան բանակն առնեն
ավելի սեղմ օղակի մեջ։

Վեյսել փաշայի հրամանատարության տակ եղած զո-րամասերը, տեսնելով Շիպկայի ձախակողմի ճանապարհից անցնող Սկոբելևի մերձեցումը, նահանջել էին, թեև Ռադեցկու 14-րդ դիվիզիայի դիմաց իր ձեռքի տակ մնացել էր դեռևս 22 վաշտ զինվոր։ Փոխանակ աշխատելու այդ ուժերով ճեղքել շրջապատման գիծը և դուրս գալու այնտեղից, նա ոչ մի գործողություն չնախաձեռնեց։ Երբ ռուսները ավարտեցին պաշարումը, նա բարձրացրեց սպիտակ դրոշակը։ Այսպիսով, Շիպկայի կիրճի կարևոր դիրքերի հետ միասին, օսմանյան բանակը կորցրեց իր զորքի մի կարևոր մասը և․ գերի ընկան 32000 մարդ, չորս փաշա, ութսուն բարձրաստիճան հրամանատար և երկու հարյուր ութսուն սպա։ Ռուսները գրավեցին 103 թնդանոթ, մեծ քանակությամբ հրացաններ և այլ զինամթերք։ Անվեհեր կերպով պաշտպանվող օսմանյան զորքից կար 6000 վիրավոր և սպանված։ Մեծ էր նաև ռուսների կորուստը։ Եթե Սուլեյման փաշան 50000-ի հասնող իր ուժը միացներ Շիպկայի կիրճում գտնվող Վեյսել փաշայի հրամանատարության տակ եղած զորքին, անկասկած, հետևանքը այդպիսին չէր լինի։ Սակայն Ստամբուլը որոշել էր, որ Սուլեյման փաշան մխանա Շաքիր փաշային, որը պիտի դիմադրեր գեներալ Գուրկոյին։

Մեծ իշխան Նիկոլայը իր սպայակույտի հետ միասին մոտեցավ ռազմաճակատին և հունվարի 7-ին հասավ Լովչե։ Որոշ ժամանակ նա մեծ անհանգստությամբ և մտահոգությամբ սպասեց իր նախապատրաստած հանդուգն ծրագրի արդյունքին։ Հունվարի 9-ի առավոտյան լուր ստացավ

այն մասին, որ իշխան Միրսկին տասներկու ժամ տևած ճակատամարտը դադարեցրել է, իսկ Սկոբելևի թևից ոչ մի տեղեկություն չէր ստացվում։ Վերջապես նույն օրը երեկոյան, ընդհանուր բանակատեղի հեռագրական հաղորդակցությանը հսկող Ջինգիզ խանը անձամբ մեծ իշխանին հանձնեց Ռադեցկու շնորհավորական հեռագիրը, որով հաղորդում էր Վեյսել փաշայի բանակի գերեվարության մասին։ Այդ լուրը իսկույն փոխեց ռուսական սպայակույտի նախկին ծրագիրը։

332 ‖Կըզանլըքում հաստատվելու և մյուս կողմից գեներալ Գուրկոյին օգնության հասնելու նախկին որոշման փոխարեն, որոշվեց ուղղակի գրավել Էդիրնեում վերջացող երկաթուղին և օսմանյան բանակը բաժանել երկու մասի։ Բանակի՝ Պլովդիվի մերձակայքում գտնվող մասը պիտի ետ մղվեր դեպի Ռոդոպի լեռները։

Շիպկայի կիրճի գրավման լուրը ռուսական ընդհանուր շտաբից առաջ ստացել էր Ստամբուլը։ Ուստի Աբդուլ Համիդը զինադադարի առաջարկի համար դեռ հունվարի 9-ին լիազոր նշանակեց ընդհանուր հրամանատար Ռեուֆ փաշային։ Թեև Ռուսաստանում նախօրոք որոշված էր չհամաձայնվել զինադադարի առաջարկին, բայց և այնպես մեծ իշխան Նիկոլայը նորից հեռագրեց ցարին և մանրամասն հրահանգ պահանջեց։ Արդարև, թեպետ կայսրը բանավոր կերպով լիազորություն տվել էր մեծ իշխանին անհրաժեշտության դեպքում հաշտության բանակցություններ վարելու մասին, բայց, հավանաբար, իշխան Գորչակովի ընդդիմության պատճառով է, որ մինչև հիմա որևէ գրավոր լիազորագիր չէր ստացվել։ Հունվարի 11-ին լուր ստացվեց, որ մասնավոր պաշտոնատարի միջոցով Պետերբուրգից ուղարկվել են պաշտոնական գրություններ, որոնցով հայտնվում է, թե ինչպիսի պայմաններով է թույլատրված վարել հաշտության բանակցությունները։ Միաժամանակ հայտնված էր, որ բանակցությունների ընթացքում չպետք է դադարեցնել ռազմական գործողությունները։

Հաշտության առաջարկը ռուսական կառավարությանը դեռևս անժամանակ էր թվում, քանի որ իր շահերից ելնելով ավելի հարմար էր, որ հաշտության պայմաններն

առաջադրելու ժամանակ օսմանյան երկրներից Հնարավորին չափ շատ տարածություն գրաված և Ստամբուլին ավելի մոտեցած լիներ։

Աբդուլ Համիդի՝ ցարին ուղարկած հեռագիրն անգամ չկարողացավ ստիպել ռուսներին՝ ետ կանգնել իրենց մտադրություններից, այսինքն՝ հրաժարվել առաջխաղացումից։ Որպեսզի հաշտության պայմանները ժամանակից շուտ Անգլիային հայտնի չդառնան, որոշվեց հրաժարվել մեծ իշխան Նիկոլային հրամաններ և հրահանգներ տալու մտքից, քանի որ դրանք կարող էին հաղորդվել օսմանյան ներկայացուցիչներին։

Երբ Ռեուֆ փաշան պահանջում էր հեռագրով իրեն
հայտնել հաշտության պայմանները, պատասխան ստա-
ցավ, որ այդ մասին կարող են հաղորդել միայն այն ներ-
կայացուցիչներին, որոնք համապատասխան լիազորագրե-
րով կուղարկվեն Բարձրագույն Դռան կողմից։ Այդ միջոցին
ռուսական ընդհանուր բանակատեղը փոխադրվել էր Կըզան-
333 լըք։ Պետության կողմից || ներկայացուցիչ նշանակված
Սերվեր և Նամըք փաշաները հունվարի 19-ին ժամանեցին
այստեղ։ Օսմանյան ներկայացուցիչների ժամանման հետ
միասին բանակատեղի հասավ նաև իշխան Գորչակովի հե-
ռագիրը։ Զգձգողական քաղաքականության կատարյալ
օրինակ հանդիսացող այս հեռագրում մեծ իշխանին հրա-
մայվում էր ժամանակ շահելու համար ներկայացուցիչնե-
րին չհայտնել, թե ինչ է պահանջում Ռուսաստանը, այլ
նրանցից հարցնել, թե ի՞նչ են տալու Ռուսաստանին։

Քանի որ մեծ իշխան Նիկոլայը դիվանագետ լինելուց ավելի զինվորական բնավորության տեր մարդ էր, զինվորականի իր գիրքին արժանի չհամարեց նման ձևով տանջել պարտված թշնամուն, բայց նրան համոզեցին, որ թուրքերը դեռ անգլիական օգնության վրա հույս ունենալով, իրենք են աշխատում ձգձգել բանակցությունները։ Սերվեր փաշան ռուսների կողմից հաշտության բանակցություններին լիազոր նշանակված այրն. Նելիդովի հետ բանակցություններ վարելիս ամբողջ հանցանքը բարդում էր կոմս Իգնատևի վրա։ Բանակցությունների ընթացքում Նամըք փաշան ավելի համբերատար և չափավոր էր։ Նա Նելիդովին դիմել էր այսպես. «Մեծ իշխանին ասեք, որ ես եղել եմ նրա հոր և մոր լավա-

գույն բարեկամը, այժմ ծերացել եմ և ծերությունից ավելի իմ մեջքս ոլորող ցավը և իմ տարաբախտ հայրենիքի այսպիսի անողորմ աղետների հանդիպելն է, և այն վիշտն ու տառապանքը, որ ես դատապարտված եմ կատարելու այսպիսի տխուր պարտականություն։ Խնդրում եմ, որ մեծ իշխանը անգթություն չցուցաբերի»։

Մեծ իշխանը և օսմանյան ներկայացուցիչները առաջին անգամ հանդիպեցին հունվարի 20-ին։ Մեծ իշխանը կարևորություն չտալով Գորչակովի հրահանգներին, որոշել էր հաշտության պայմանները հաղորդել ներկայացուցիչներին, որովհետև վախենում էր, որ բանակցությունները ձգձգելու դեպքում ռուսական հեծելազորը, արագ շարժվելով, կարող էր հասնել մինչև Ստամբուլ։ Ռուսական սպայակույտը նպատակահարմար չէր գտնում նախքան Գալիպոլիի գրավումը հասնել Ստամբուլ. մինչդեռ Ալեքսանդր կայսրը, նկատի ունենալով Անգլիայի միջամտությունը, դեմ էր Գալիպոլիի գրավմանը։

Գուրկոն, Սոֆիայում բավականաչափ պահնորդ զորք
թողնելուց հետո, չորս թևով շարժվել էր դեպի Պլովդիվ։
Աջակողմյան թևը գեներալ Վելյամինովի հրամանատարու-
թյամբ Սամակովի ճանապարհով, կենտրոնի աջակողմյան
334 թևը Շուվալովի հրամանատարությամբ || Ահթման և Տրո-
յան կիրճի ճանապարհով, կենտրոնի ձախակողմյան թևը
գեներալ Շիլդերշուլդների հրամանատարությամբ Դոպո-
լինցայի հովիտից, ձախակողմյան թևն էլ գեներալ
Գրոդների հրամանատարությամբ Մեչկայի և Օթլուք-քյոյի
ճանապարհով առաջ էին շարժվում։ Սուլեյման փաշային
ենթակա զորքը, Շիպկայի կիրճի գրավումից հետո երկու
ջոկատի բաժանվելով, ետ էր քաշվել դեպի Պլովդիվ։ Այս
ջոկատներից Սուլեյման փաշայի անմիջական հրամանա-
տարության տակ գտնվող ուժեղագույնը թեև ուղիղ ճանա-
պարհով շարժվելու պատճառով ազատվել էր ռուսներից,
բայց Սամակովի ճանապարհը գրաված մյուս ջոկատը,
Պլովդիվի շրջակայքում ստիպված եղավ երեք օր կռվել
ռուսների դեմ։ Այս պատերազմում հաղթեցին ռուսները։
Սուլեյման փաշայի բանակը բաժանվեց երկու մասի։

Գուրկոն այս պատերազմների մասին մեծ իշխանին տված զեկուցագրում ասում է. «Հունվարի 6-ից մինչև փե-

տըրվարի 1-ը իմ կորպուսի ձեռք բերած արդյունքը հետևյալն է.

Առաջինը Սուլեյման փաշայի հարյուր վաշտից բաղկացած բանակի պարտությունն է։ Այդ վաշտերի գրեթե կեսը ջախջախվել ու ցրվել է Թաթար Փազարջըքի և Պլովդիվի ճանապարհի հարավային լեռներում, իսկ մյուս կեսը, նետվելով Էդիրնեի ճանապարհի վրա, ստիպված եղավ Ռոդոպի լեռնաշղթայի մյուս կողմից փախչել դեպի ծովը։ Սուլեյման փաշայի բանակը, որը տվել էր մի քանի հազար մարդու կորուստ և երկու հազարից ավելի գերի, բոլոր թնդանոթաձիգներին և բազմաթիվ զինամթերային պահեստներ թողել է մեր ձեռքը։ Շիպկայի պատերազմից հետո Բալկանների հարավային մասում Թուրքիայի միակ ուժը հանդիսացող օսմանյան այս բանակի պարտությունը և Էդիրնեի ամրակուռ ամրությունները անպաշտպան թողնելով այդ դիրքի մյուս կողմը քաշվելը մինչև Էդիրնե գնալու համար թույլ են տալիս առանց արգելքի կատարելու ձերդ բարձրապատվության տված հրամանը։ Երբ ես ժամանեցի Էդիրնե, այն արդեն գրավված էր հեծելազորի մի ջոկատի կողմից*։

335 ‖ Այս հաղթանակները ձեռք են բերվել համեմատաբար նվազ կորուստներով։ Հիշյալ ժամանակամիջոցում իմ հրամանատարության տակ եղած կորպուսից սպանվել է յոթ սպա և երկու հարյուր քսան զինվոր, վիրավորվել քսանվեց սպա և ինն հարյուր ութսուն զինվոր...

Կոմս Շուվալովի հրամանատարության տակ գտնվող կենտրոնական զորագունդը հունվարի 20-ին հասավ Սուլեյման փաշայի բանակին։

Հակառակ վեց աստիճան ցրտին, սառույցով ծածկված Մարիցա գետը անցնելու մասին կոմս Շուվալովի ընդունած

* Էդիրնեի ամրությունններն այդ ժամանակ շատ կարևոր էին և ամրակուռ։ Ինչպես հետագայում խոստովանել է մեծ իշխան Նիկոլայը, եթե օսմանցիները այստեղ պաշտպանողական դիմադրություն ցույց տային, ապա, անկասկած նրանց կհաջողվեր թշնամուն կասեցնել առնվազն այնքան, որքան Պլևնայի առաջ։ Մեծ իշխանն ասում է, որ այդ դիրքերի վրա հրամանատար էր նշանակվել Մեհմեդ Ալի փաշան, պաշտպանների հիմքն էլ կազմելու էին Օսման փաշայի հրամանատարության ներքո եղած քսաներեք վաշտերը։ Սակայն Էդիրնեի կուսակալ Էյուբ փաշան, պայթեցնելով վառոդի պահեստը, փախուստի ազդանշան է տվել, Մեհմեդ Ալի փաշան էլ հետևել է նրա օրինակին։

որոշումը, այդ առաջադրանքի փայլուն կատարումը հրաձիգների և անձնապահ դնդի կողմից, նույն օրը մեր հեծելազորի ժամանումը Պլովդիվի պարիսպների տակ. ահա այս բոլորը հանդիսացան հունվարի 15-ի, 16-ի և 17-ի ռազմական գործողությունները, որոնք վերջացան Սուլեյման փաշայի կատարյալ պարտությամբ։ Իմ զորամասերը Պլովդիվի և Էդիրնեի միջև եղած 180 վերստ տարածությունը կտրեցին վեց օրում։ Հունվարի վեցից մինչև քսանլոթը նրանք Սոֆիայից սկսած անցան երեք հարյուր հիսուն վերստ ճանապարհ։ Զինվորները իրենց վրա կրում էին ութ օրվա պաշար և հարյուրական փամփուշտներ, ես ստիպված չեղա սպասել կառքերին։ Լեռներում բոլոր թնդանոթները զինվորները փոխադրել էին իրենց ձեռքերով, ուստի ես թնդանոթներով իջա դաշտ և կարողացա հասնել թշնամունն»։

Ինչպես երևում է, Գուրկոն Բալկանները անցնելուց հետո իր ամբողջ ուժով հետապնդել է Սուլեյման փաշայի բանակին և հասել մինչև Էդիրնե, հետևելով այն կանոնին, որ հաղթանակը սրունքներում է։ Իսկ տարաբախտ Սուլեյման փաշան այս պարտության պատճառով կանգնել է զինվորական դատարանի առաջ և երկար դատավարությունից հետո աստիճանազրկվել է ու աքսորվել Բաղդադ։

Հունվարի 20-ին մեծ իշխանի և օսմանյան ներկայացուցիչների միջև տեղի ունեցած առաջին հանդիպման ժամանակ մեծ իշխանը, Պետերբուրգից ստացած հրահանգի համաձայն, հարցրել էր ներկայացուցիչներին, թե ին՞չ առաջարկներ են ներկայացնելու հաշտության համար։ Ի պատասխան Նամըք փաշան ասաց, որ իրենք լիազորված են հայտնելու, որ Աբդուլ Համիդը ապավինում է ռուսական կայսեր վեհանձնությանը։ Այդ միջոցին հասավ Էդիրնեի անկման կսկծալի լուրը։ Մի քանի օր հետո մեծ իշխանը իր շտաբը փոխադրեց այնտեղ։ Մեր ներկայացուցիչները Ստամբուլից նոր հրահանգ ստանալու համար մեծ իշխանից խնդրեցին մի քանի օր ժամանակ։ Իսկ մեծ իշխանը օսմանյան ներկայացուցիչների հաշտության պայմանները անմիջապես ընդունած չլինելու պատճառով սկսեց խորհրդակցել Պետերբուրգի հետ Գալիպոլիի գրավման և Ստամբուլում օսմանցիների իշխանությանը վերջ տալու մասին...

347 ‖ Մեծ իշխանին մենք թողել էինք այն ժամանակ, երբ Էդիրնեում զբաղված էր Ստամբուլը գրավելու պատրաստություններով: Թույլտվություն ստանալու համար Պետերբուրգ ուղարկված հեռագրի պատասխանը ստացվեց միայն հունվարի 29-ին։ Սակայն, հունվարի 27-ին Ստամբուլից մեր ներկայացուցիչներին հրաման էր տրվել ընդունել հաշտության համար ռուսների առաջարկած բոլոր պայմանները, ինչպիսին էլ լինեն դրանք։ Իսկ Պետերբուրգից եկած պատասխանում հրամայված էր, որ եթե թուրքերը երեք օրվա ընթացքում չդադարեցնեն դիմադրությունը, շարժվել դեպի Ստամբուլ, սակայն քաղաք մտնել միայն այն պարագայում, երբ ստեղծվի մեծ խառնաշփոթություն: Ցարը վճռականորեն դեմ էր Գալիպոլիի գրավմանը։ Չնայած դրան, հետագայում այս հրահանգր փոխվեց, ընդհանուր հրամանատարին տրվեց լայն իրավասություն և այլևս մեծ կարևորություն չտրվեց այն բանին, թե ի՞նչ կասի Անգլիան։ Այս մասին մեծ իշխանին տրված վերջին հրահանգը եղել է հետևյալը. «Եթե անգլիացիները խաղաղասիրությամբ գործեն, նրանց դիտեցեք որպես կարգի պահպանմանը օժանդակելու եկած դաշնակիցներ, իսկ եթե թշնամական վերաբերմունք ցուցաբերեն, դուք ևս վարվեցեք նրանց հետ նույն կերպ»։

Օսմանյան պետության և Ռուսաստանի միջև կնքված համաձայնագիրը հունվարի 31-ին մեծ իշխանի և Սերվեր ու Նամըք փաշաների կողմից ստորագրված արձանագրությունն է։ Այն պարունակում է հաշտության պայմանների ամենակարևոր սկզբունքները։ Այս արձանագրության համաձայն Բուլղարիան դառնալու էր վարչական ինքնավար և հարկատու իշխանապետություն, որի սահմանները լինելու էին ըստ նրա ժողովրդի ազգային մեծամասնության և, բո-
348 լոր պարագաներում, ‖ Ստամբուլի կոնֆերանսում առաջարկված տերիտորիայից ոչ պակաս։ Կառավարական պաշտոնյաները և ազգային զորքը լինելու էին քրիստոնյաներից։ Այսուհետև օսմանյան զորքը չպիտի գտնվեր Բուլղարիայում, ճանաչվում էր Չեռնոգորիայի անկախությունը և պատերազմում նրա գրաված հողերը միացվում էին

նրան։ Ճանաչվում էր նաև Ռումինիայի և Սերբիայի անկախությունը։

Ռումինիային տրվում էր անհրաժեշտ չափի հողային փոխհատուցում, Սերբիային խոստանում էին սահմանային ուղղումներ։ Բոսնիա և Հերցեգովինային վարչական ինքնավարություն շնորհելու նման, եվրոպական Թուրքիայի՝ քրիստոնյա բնակչություն ունեցող մյուս նահանգներում ևս կատարվելու էին բարենորոգումներ։ Բարձրագույն Դուռը պարտավորություն էր ստանձնում վճարել Ռուսաստանի պատերազմական ծախքերը և կրած վնասները։ Հետագայում էր որոշվելու այն հարցը, թե ինչպես պետք է վճարվի հատուցումը՝ դրամով, հողերի զիջումով, թե այլ ձևով։ Փադիշահը ցարի հետ կնքելու էր մի պայմանագիր Սև ծովում և Դարդանելի նեղուցում Ռուսաստանի իրավունքների ու շահերի պահպանման մասին։ Մեծ իշխանի շտաբում կողմերի լիազոր ներկայացուցիչների միջև իսկույն սկսվելու էին բանակցություններ՝ որոշելու համար հաշտության պայմանագրի նախաբանը։ Զինադադարի պայմանագիրը ստորագրվելուց անմիջապես հետո, հաշտության բանակցությունների ընթացքում, դադարեցվելու էին ռազմական գործողությունները պատերազմող կողմերի, այդ թվում նաև Ռումինիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի բանակների միջև։ Զինադադարը ստորագրելուց հետո օսմանյան կառավարությունը պետք է անմիջապես հրաման արձակեր զորքին՝ դատարկելու Վիդինի, Ռուսչուքի և Սիլիստրեի բերդերը Եվրոպայում և Էրզրումի բերդը Ասիայում։ Բացի դրանից, բանակցությունների ընթացքում ռուսական զորքին իրավունք էր վերապահվելու գրավել զինադադարի պայմանագրում նշված կետերից մի քանիսը։

Նույն օրը ռուսական սպայակույտի պետ Նեպոկոյչիցկին և նրա տեղակալ Լևսկին, իսկ մեր կողմից Նեջիբ և Օսման փաշաները ստորագրեցին զինադադարի պայմանագիր երեք օր ժամկետով, բաղկացած տասը հոդվածից։ Ցեզոր գոտու սահմանները ցույց տվող այս պայմանագրի ուշադրության արժանի կողմը այն է, որ Ռուսաստանը այն ստորագրել է առանց Ռումինիայի և Սերբիայի համաձայնությունը ստանալու, ինչ վերաբերում է Չեռնոգորիային, ապա նրան էլ հայտնել էր, որ նա մասնակցի զինադադարի

պայմաններին, ռազմական գործողությունները դադարեցնելուց հետո։
349 || Անկասկած սրա նպատակն այն էր, որ հասկացնել տար, թե Չեռնոգորիան վաղուց ի վեր ճանաչված է որպես անկախ պետություն։ Հիմնական արձանագրության մեջ հիշատակված բերդերից բացի, օսմանցիները դատարկելու էին նաև Բելկրատչըքը, Ռազգրադը և Հաջի-օղլի Փազարջըքը։ Կոմս Իգնատևը հաշտության բանակցությունները սկսելու համար Էդիրնե գալու ժամանակ բերել էր հետագայում Սան-Ստեֆանոյում ստորագրված պայմաններից ավելի ծանր մի շարք պայմաններ։ Այդ պայմանների համաձայն մեր ձեռքում մնում էր Սալոնիկի կողմում հողի շատ նեղ մի գոտի։

Պրուսիայի և Ֆրանսիայի միջև տեղի ունեցած 1870 թվականի պատերազմից հետո Եվրոպայի իրադրության մեջ առաջացած փոփոխություններից ամենից շատ տուժել էր Անգլիան։ Ժամանակին, Ղրիմի պատերազմի իր դաշնակիցը՝ ֆրանսիական պետությունը, այն վիճակի մեջ չէր, որ կարողանար դեմ դուրս գալ Ռուսաստանի արևելյան քաղաքականությանը։ Ընդհակառակը, Ռուսաստանին նա դիտում էր որպես իր ապագա դաշնակիցը։ Քանի որ երեք կայսրերի դաշինքը այժմ նպաստում էր Ռուսաստանի դիրքին, մյուս կողմում անգլիական քաղաքականությունը մնում էր բոլորովին առանձնացած։ Բացի դրանից, տորիների կուսակցությանը պատկանող անգլիական դահլիճը եթե բարեկամ էլ չէ Ռուսաստանին, ապա օսմանյան վատ վարչությունը պահպանելու համար ցանկություն չունենալով Անգլիային և Ռուսաստանին բախեցնել այնպիսի մի պատերազմով, որի հետևանքը շատ կասկածելի է, ըստինքյան աջակցություն էր ցույց տալիս նրան։ Լորդ Բիկոնսֆիլդը այսպիսի դժվարին հանգամանքներում, հաղթահարելով բոլոր տեսակի երկրորդական նկատառումներն ու դժվարությունները, կարողացել էր պաշտպանել Մեծ Բրիտանիայի դիրքն ու ազդեցությունը քաղաքական աշխարհում և այն, որ բոլոր անգլիացիներին համոզել էր ընդունելու ռուսներին Ստամբուլի դռներից հեռացնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև այդ հաջողությունը կրկնապատկել էր նրա փառքը։

Ստամբուլի դեսպան Լայարդի կարծիքով ռուսները, դատելով վերոհիշյալ համաձայնություններից, երբ օրվա

ընթացքում հասնելու էին Ստամբուլի դարպասներին։ Հունվարի 17-ին գումարվեց անգլիական պառլամենտը։ Բացման ճառում նշվեց, որ հաշտության բանակցությունները սկսվելու ժամանակ Աբդուլ Համիդը խնդրել էր Անգլիայի միջամտությունը, որից հետո հույս հայտնվեց, որ պառլամենտը կկատարի անհրաժեշտ հատկացումներ մի շարք նախազգուշական միջոցառումների համար, որոնք բխում են արևելքի պատերազմական իրադարձություններից։ Փետրվարի 8-ին համայնքների պալատը մի քանի օր խորհրդակցելուց
350 հետո || 328 ձայնով ընդդեմ 124-ի ընդունեց վեց միլիոն ստեռլինգի հատկացում կատարելու որոշում, իսկ լորդերի պալատը փետրվարի 22-ին հաստատեց այն.

Ռուսաստանի կառավարությունը հունվարի 25-ին հաշտության պայմանները կիսապաշտոնական ձևով հաղորդել էր անգլիական կառավարությանը։ Դա պատճառ դարձավ, որ վերջինս արագացնի իր որոշումը։ Ֆինանսների մինիստր սըր Ստաֆֆորդ Նորդկոտը համայնքների պալատում հաղորդեց, որ նավատորմին հրաման է տրվել մտնել Դարդանելի նեղուցը, բայց այս հրամանը ետ էր վերցվել այն լուրի հիման վրա, որ նեղուցների հարցը որոշվել է լուծել եվրոպական պետությունների կողմից գումարվելիք կոնֆերանսում։

Այդ ժամանակ պարզ դարձավ դահլիճում տիրող անհամաձայնությունը։ Գաղութների մինիստրը և արտաքին գործերի մինիստր լորդ Դերբին հրաժարական տվեցին։ Թեև նավատորմի կանգ առնելու մասին հրաման տրվելուց հետո լորդ Դերբին ետ էր վերցրել իր հրաժարականը, բայց հասկանալով, որ այլևս չի կարող մնալ այդ կառավարության մեջ, մարտի վերջերին բոլորովին հեռացավ։ Նրա փոխարեն նշանակվեց մարքիզ դը Սոլսբերին։ Այնուամենայնիվ նավատորմի կանգ առնելը երկար չտևեց։ Լորդ Բիկոնսֆիլդը հունվարի 31-ին ստորագրված արձանագրության բովանդակության մասին լուր ստանալուց անմիջապես հետո ծովակալ Հորնբիին հրաման տվեց մտնել Մարմարա ծովը։ Ծովակալը փետրվարի 13-ին զրահանավերով մոտեցավ Մեծ կղզուն և խարիսխ նետեց։

Իշխան Գորչակովը Անգլիայի այս սպառնալիքը բարեկամաբար մեկնաբանելով, նավատորմը Ստամբուլ

ուղարկվելու լուրը ստանալուն պես, հուշագիր էր ուղարկել պետություններին և հայտնել, որ քանի որ Ռուսաստանը դեռևս 1876 թվականին էր առաջարկել համատեղ ծովային ցույց կատարել Ստամբուլի առջև, ուստի անգլիական նավատորմի Մարմարա մտնելու դեմ չի առարկի, այլ միայն հայտարարել է, որ այսուհետև Ռուսաստանը ևս անհրաժեշտ չի նկատում հարգել Ստամբուլը չգրավելու մասին տված իր խոստումը։

Այս կապակցությամբ Աբդուլ Համիդը խիստ տագնապած դիմեց Անգլիայի թագուհուն և խնդրեց, որ հրաժարվեն Ստամբուլ նավատորմ ուղարկելուց, միաժամանակ Անգլիայի թագուհուն ուղարկած այդ դիմումի մասին տեղյակ պահելով նաև Ռուսաստանի ցարին, խնդրել էր հրամայել, որ մինչև թագուհուց պատասխան ստանալը ռուսները մուտք չգործեն Ստամբուլ։

Ցարը, պատասխանելով Աբդուլ Համիդի կրկնակի դի-
մումներին, հայտնեց, որ ռուսական բանակը Ստամբուլ չի
մտնի, քաղաքը չի գրավի քանի դեռ անգլիական նավատոր-
351 մը գտնվում է Մեծ կղզու մոտ։ || Աբդուլ Համիդը, կրկին
դիմելով Անգլիայի թագուհուն, մի անգամ ևս պահանջեց,
որ անգլիական նավատորմը չուղարկվի Ստամբուլ։ Այս դի-
մումների հիման վրա ռուսները առայժմ հրաժարվեցին
Ստամբուլ մտնելուց և Գալիպոլին գրավելուց, իսկ անգլիա-
ցիները իրենց զրահանավերը Մեծ կղզու մոտից ետ քաշե-
ցին դեպի Մուդանիայի նավահանգիստ, բայց Դարդանե-
լից դուրս չեկան և չհեռացան, այլ ռուսների նման պատ-
րաստ մնացին այնտեղից ամեն րոպե Ստամբուլ մտնելու։

Այնուամենայնիվ անգլիացիները ռուսների Ստամբուլ մտնելը դիտում էին որպես զինադադարի խախտում, իսկ եթե նրանք փորձեին առաջ շարժվել դեպի Գալիպոլի, ապա նրանք հայտնում էին, որ, դատելով Անգլիայում տիրող հասարակական կարծիքի հուզումից, հնարավոր չի լինի այժմյանից կանխորոշել դրա հետևանքները։

Անգլիան հայտարարեց, որ եթե ռուսները զորք ուղարկեն Գալիպոլի և դրանով իսկ կտրեն անգլիական նավատորմի հաղորդակցության կապը, Անգլիան չպիտի կարողանա իր վրա վերցնել դրա հետևանքների պատասխանատվությունը։ Այսպիսով, փաստորեն, ռուսներին հրաման տրվեց կանգ

տանել, իսկ Ստամբուլի աչքի առաջ կանգնած անգլիական զրահանավերն արգելք հանդիսացան նրանց Ստամբուլ մտնելուն։

Աբդուլ Համիդը ռուսներից վախենալով, ժխտել էր այն փաստը, որ անգլիացիները, Ստամբուլի իրենց հպատակների շահերը պաշտպանելուց բացի, եկել են պաշտպանելու նաև օսմանյան շահերը։ Սա գիտեր, որ իրեն կկարողանան փրկել միայն ռուսները և որ դրսից ամեն մի զինված միջամտություն կարող էր շուտ գալ իր դեմ։

Ահա այս պատճառով Աբդուլ Համիդը ժողով գումարեց պալատում և հայտարարեց. «պատերազմ ցանկացա ոչ թե ես, այլ իմ ազգը։ Մենք պարտություն կրեցինք։ Ահա տեսնում եք, թե ինչ վիճակի ենք հասել։ Եթե ես թույլ չտամ, որ անգլիացիները անցնեն Դարդանելից, նրանք հայտարարել են, որ այդ բանը կանեն բռնությամբ։ Մյուս կողմից էլ ռուսներն են սպառնում, որ եթե անգլիական նավատորմը մտնի Ստամբուլ, քաղաքը կենթարկվի ռազմական գրավման։ Ձեզ այստեղ եմ հրավիրել, որպեսզի միասնաբար որոշում կայացնենք այս կացության մասին»։ Այնուհետև նա հարցրեց թե, «հնարավո՞ր է արդյոք կասեցնել ռուսների առաջխաղացումը և արգելք հանդիսանալ մայրաքաղաքի գրավմանը»։ «Ոչ», պատասխանեցին մասնակիցները։ Ապա Ռեուֆ փաշայի առաջարկությամբ որոշվեց հեռագիր ուղարկել մեծ իշխանին այն մասին, որ բավականանա միայն Ստամբուլի արվարձանների գրավումով։ Հեռագիրը
352 անմիջապես ուղարկվեց։ Աբդուլ Համիդը || առանց ուրիշ որևէ որոշում կայացնելու հանկարծակի ցրեց ժողովը։

Դրանից հետո ամբողջ պալատում լուր տարածվեց, թե Աբդուլ Համիդը մտադիր է թողնել Ստամբուլը և գնալ Բրուսա։ Լուրը հասավ մինչև կանանոց։ Կանայք սկսեցին ողբուկոծը, տիրեց ահավոր աղմուկ ու ժխոր։ Մինիստրներն անմիջապես շտապեցին պալատ և հայտնեցին, որ եթե նա Բրուսա գնալու մտադրություն ունի, իրենք էլ կգնան նրա հետ։ Հետո խնդիրը մանրամասն քննարկելով, համոզեցին Աբդուլ Համիդին մնալ Ստամբուլում։

Աբդուլ Համիդը արտաքին գործերի մինիստրությունից հեռացրեց Սերվեր փաշային, տեղը նշանակելով Սաֆվեթ փաշային։ Սաֆվեթ փաշան որպես նոր լիազոր ներկայա-

ցուցիչ ուղարկվեց էդիրնե։ Մեծ իշխան Նիկոլայը, Անգլիա-
յի սպառնալիքների դեմ, Բարձրագույն Դռան համաձայնու-
թյամբ Ստամբուլը գրավելու և դրանից հետո անգլիական
նավատորմի մուտքը Մարմարա ծովը արգելելու համար
Սաֆվեթ փաշային առաջարկել էր նեղուցում եղած թնդա-
նոթների կողքին տեղադրել նաև ռուսական թնդանոթներ և
միասնարար պաշտպանել այն։ Քանի որ Բարձրագույն Դու-
ռը հավանություն չտվեց այդ միջոցառմանը, որի ելքը
անորոշ էր և վտանգավոր, իսկ հաշտության բանակցու-
թյունները գնալով ձգձգվում էին, մեծ իշխանը փետրվարի
21-ին հայտնեց Սաֆվեթ փաշային, որ որոշել է իր ընդհա-
նուր բանակատեղը փոխադրել Սան-Ստեֆանո։ Եթե Բարձ-
րագույն Դուռը 24 ժամվա ընթացքում թույլ չտա տասն-
տասներկու հազար ռուս զինվորների մտնել Սան-Ստեֆա-
նո, ապա անմիջապես շարժվելու է դեպի Չաթալջա և ամ-
բողջ բանակի հետ միասին մտնելու է Սան-Ստեֆանո։

Փետրվարի 23-ի առավոտյան, երբ մեծ իշխանը մտա-
դիր էր իր սպայակույտի հետ միասին երկաթուղով շարժ-
վել դեպի Ստամբուլ, օսմանցի ներկայացուցիչները հայտ-
նեցին, որ փադիշահը իրեն Ստամբուլ է հրավիրում, սա-
կայն պայմանով, որ 12000 զինվորի փոխարեն հետը ունե-
նա միայն 1000 հոգի։ Այս պատճառով մեծ իշխանը սար-
սափելի զայրացած ու կատաղած, անասելի բարկությամբ
բացականչել է. «Եթե դուք չեք հասկացել, թե հետս 10000
հոգի ունենալու վերաբերյալ իմ առաջարկը որքան վեհանձ-
նություն է պարունակում, ավելի վատ ձեզ համար։ Ես չեմ
կարող ընդունել, որ պարտվողը իր պայմանները թելադրի
հաղթողին, ահա ցանկացածս քանակությամբ զորքով
շարժվում եմ»։ և գնացքը շարժվեց։ Չաթալջա հասնելու ժա-
353 մանակ Սկոբելևի || հրամանատարության տակ եղած չոր-
րորդ կորպուսը ևս կազմ ու պատրաստ կանգնած էր։ Չա-
թալջայում Մեհմեդ Ալի փաշայի կողմից ուղարկված մի
գնդապետ ներկայանալով մեծ իշխանին հաղորդեց, որ
Ստամբուլի պաշտպանական գծի օսմանյան զինվորները
ետ չեն քաշվելու և մեծ իշխանին հետևող զինվորներին ու
ձիերին փոխադրելու համար նախապես եկած գնացքը ևս
ճանապարհին կանգնեցված է։ Իշխանը պատասխանեց.
«այժմ ետ վերադարձեք և ասեք, որ ես իմ զորքի գլուխն

անցած գալիս եմ, գալիս եմ Սաֆվեթ փաշայի հետ միասին (մեծ իշխանը փաշային որոշ չափով որպես պատանդ իր մոտ էր պահել). մենք զենք չենք գործադրելու, սակայն արձակված առաջին իսկ գնդակը սպանելու է ինձ և նրան միասին»։ Գնացքը շարունակեց իր ուղին դեպի Սան-Ստեֆա-
354 նո, և տեղ հասավ հունվարի 24-ի || առավոտյան, օսմանյան զորքի կողմից հիշյալ վայրը դատարկվելուց դեռ մի քանի ժամ առաջ. Նրան դիմավորեցին սպարապետ Ռեուֆ փաշան ու Ստամբուլի մոտ շարված զորամասերի հրամանատարները։ Այստեղ շարունակվեց հաշտության բանակցությունը։ Մեր ներկայացուցիչներ Սաֆվեթ փաշայի և Բեռլինի դեսպան Սադուլլահ բեյի առարկությունների, ինչպես նաև կոմս Իգնատևի անպատշաճ վերաբերմունքի պատճառով բանակցությունները դարձյալ ձգձգվեցին։ Թեև ռուսները պահանջեցին, որ նավատորմը իրենց հանձնվի և զորքը մտնի Ստամբուլ, բայց օսմանյան կառավարությունը մերժեց այդ պահանջը։

Վերջապես, նոր տոմարով մարտի մեկին (փետրվարի 18-ին) մինիստրների խորհուրդը Աբդուլ Համիդի նախագահությամբ և Բեռլինի դեսպան Սադուլլահ բեյի ներկայությամբ նիստ գումարեց, ուր մի անգամ ևս քննարկվեց հաշտության համաձայնագիրը և վերջնականապես որոշվեց ընդունել այն։ Սադուլլահ բեյը մինիստրների խորհրդի որոշումները վերցնելով վերադարձավ Սան-Ստեֆանո։ Ի վերջո մարտի 3-ին 29 հոդվածից բաղկացած հաշտության դաշնագիրը Սան-Ստեֆանոյում ստորագրվեց Ռուսաստանի անունից կոմս Իգնատևի և պ. Նելիդովի, իսկ մեր անունից արտաքին գործերի մինիստր Սաֆվեթ փաշայի և Բեռլինի դեսպան Սադուլլահ բեյի կողմից։

Այս դաշնագրի առաջին հոդվածը վերաբերում էր օսմանյան պետության և Չեռնոգորիայի սահմանները ճշտելու հարցին։ Նիքշիչը, Կաչքան, Սեփուշը, Պոդգորիցան, Ջաբլիաքը և Բարը թողնվում էր իշխանապետությանը, իսկ վերջնական սահմանի որոշումը և Բոյանա գետի վրա նավարկության հատուկ կանոնագիր կազմելը թողնվում էր եվրոպական մի հանձնաժողովի լուծմանը։

Տարօրինակ է, որ Չեռնոգորիայի անկախության մասին խոսվում է միայն երկրորդ հոդվածում, որտեղ ասված

է. «Բարձրագույն Դուռը վերջնականապես հաստատում է Չեռնոգորիայի իշխանապետության անկախությունը»։ Դրանով մի անգամ ևս զգացնել է տրվում, որ Ռուսաստանի համար վաղուց ի վեր գոյություն ուներ այդ անկախությունը։

Երրորդ հոդվածը հաստատում է Սերբիայի անկախությունը և որոշում է օսմանյան պետության ու Սերբիայի սահմանը՝ Սերբիային թողնելով Նիշի բերդը, Դրինայի հովիտը և Փոքր Իզվորնիկը։

Ռումինիայի մասին խոսվում է հինգերորդ հոդվածում. Այս հոդվածում ասված է, որ Բարձրագույն Դուռը ճանաչում է Ռումինիայի անկախությունը և շատ անորոշ արտահայտություններով խոսվում է Ռումինիայի վնասների հատուցում պահանջելու իրավունքի մասին։

355 || Վեցերորդ հոդվածը վերաբերում է Բուլղարիայի նոր պետության կազմավորմանը։ Այնտեղ ասված է. «Բուլղարիան լինելու է ինքնավար վարչությամբ հարկատու մի իշխանապետություն, որի պետական պաշտոնյաները և ազգային զորքը պիտի լինեն քրիստոնյաներ»։ Դաշնագրին կից և ոչ ստույգ քարտեզում ցույց էին տրված նոր պետության սահմանները։ Ըստ այդ քարտեզի նոր կազմվելիք բուլղարական պետության տարածությունը կազմում է 30000 քառակուսի մղոն, իսկ բնակչությունը՝ հինգ միլիոն։ Այս հաշվով Բուլղարական իշխանապետությունը ընդգրկելու էր Դանուբ գետից մինչև Արշիպելագ ընկած հողերը, ներառյալ նաև Մանաստիրի և Սալոնիկի նահանգները։

Յոթերորդ հոդվածի համաձայն Բուլղարիայի իշխանը պետք է ընտրվեր ժողովրդի կողմից՝ պետությունների հավանությամբ և Բարձրագույն Դռան հաստատումով։ Այս հոդվածում որոշակիորեն նշվում էր նաև, որ բուլղարական իշխանապետության համար իշխան չեն կարող ընտրվել եվրոպական մեծ պետությունների ներկայիս գահակալների գերդաստաններից և ոչ մեկը։ Իշխանի ընտրությունից առաջ բուլղար ավագանուց բաղկացած մի ժողով Պլովդիվում կամ Տրնովոյում ռուսական մի կոմիսարի հսկողության տակ, օսմանցի կոմիսարի ներկայությամբ սահմանելու է ապագա վարչակարգի օրենքները։ Բուլղարիայում նոր վարչակարգի հաստատումը և նրա գործադրման անհրաժեշտ հսկողությունը երկու տարի ժամկետով հանձնվելու էր ռուս կոմիսարին։

Ութերորդ հոդվածում ասված էր, որ այսուհետև Բուլղարիայում օսմանյան զորք չպետք է գտնվի և տեղական կառավարության միջոցով պետք է քանդվեն հին բերդերը։ Միայն մինչև կարգի, խաղաղության և ապահովության պահպանման համար անհրաժեշտ քանակությամբ տեղական ազգային զորքի կազմակերպումը ռուսական զորքը մնալու էր Բուլղարիայում և հարկ եղած դեպքում գործնական օգնություն ցույց տար ռուսական կոմիսարին։ Հիշյալ ազգային զորքի քանակը հետագայում որոշվելու էր օսմանյան և ռուսական պետությունների համաձայնությամբ։ Բուլղարիայում մնացող ռուսական զորքի համար սահմանված էր երկու տարի ժամկետ։ Հիշյալ զորքը պետք է բաղկացած լիներ վեց հետևակային և երկու հեծելազորային դիվիզիայից, այն հաշվով, որ զորքի ընդհանուր թիվը չանցներ 50 000-ից։ Այդ զորքի ծախսը կատարելու էր Բուլղարիան, իսկ կապը Ռուսաստանի հետ իրականացվելու էր ոչ միայն Ռումինիայի, այլ նաև Սև ծովի նավահանգիստների միջոցով։

356 || Իններորդ հոդվածի համաձայն Բուլղարիայի վճարելիք տարեկան հարկը որոշվելու էր նոր վարչակարգի գործունեության առաջին տարվա վերջին Ռուսաստանի, օսմանյան պետության և այլ կառավարությունների միջև կայանալիք համաձայնությամբ։

Քանի որ Բուլղարիան տարածվել էր մինչև Արշիպելագ, օսմանյան պետության եվրոպական մասում գտնվող նահանգները, այդ թվում և Բուլղարիան, բաժանվել էին երկու մասի։ Տասներորդ հոդվածը վերաբերում էր իշխանապետության մյուս կողմում գտնվող նահանգներում պետության կողմից զինվոր, ռազմամթերք և պարեն փոխադրելու եղանակին։

Տասներկուերորդ հոդվածում ասված էր, որ Դանուբի վրա գտնվող բերդերը ամբողջությամբ քանդվելու են և սրանից հետո Դանուբի ափերին ռումինական, սերբական և բուլղարական ջրերում ոչ բերդեր և ոչ էլ ռազմանավեր չպետք է գտնվեն։ Այստեղ Դանուբի խառն հանձնաժողովին պատկանող իրավունքները, պարտականությունը և առանձնաշնորհումները ամբողջությամբ մնալու են անփոփոխ։

Տասներեքերորդ հոդվածի համաձայն Բարձրագույն

Դուռը հանձն էր առնում Սինե նեղուցը նորից պիտանի դարձնել նավարկության համար, պատերազմի պատճառով Դանուբ գետում նավարկությունը դադարելու հետևանքով վնասի ենթարկված պետություններին իբրև հատուցում վճարել հինգ հարյուր հազար ֆրանկ։

Տասնչորսերորդ հոդվածը պարտավորեցնում էր Բարձրագույն Դռանը՝ Ռուսաստանի և Ավստրիայի պետության համաձայնությամբ որոշվելիք բարեփոխումով անմիջապես կենսագործել Ստամբուլի կոնֆերանսի առաջին նիստում օսմանյան ներկայացուցիչներին հաղորդված բարենորոգումը Բոսնիայում և Հերցեգովինայում։ Տասնհինգերորդ հոդվածը պարտավորեցնում էր Կրետե կղզում գործադրել 1867 թվականի հիմնական կանոնագիրը։ Յանինայում ու Թեսալիայում, ինչպես նաև Ռումելիի ուրիշ վայրերում ևս պետք է կատարվեին նման բարենորոգումներ։

Տասնվեցերորդ հոդվածով Բարձրագույն Դուռը պարտավորվում էր հայերով բնակեցված նահանգներում անմիջապես բարենորոգումներ կատարել և քրիստոնյաներին պաշտպանել քրդերից ու չերքեզներից։

Սան-Ստեֆանոյի դաշնագրի մինչև այժմ թվարկված հոդվածների մեջ ամենակարևորը Բուլղարական իշխանապետության կազմավորման մասին եղած՝ վեցերորդ հոդվածն էր, մյուս կարևոր հոդվածը տասնիններորդն էր, որի մասին խոսվելու է այժմ և որը վերաբերում է ռազմատուգանքներին։ Այս հոդվածի համաձայն Ռուսաստանը մեզանից պահանջում էր նախ՝ բուն պատերազմական ծախսերի համար ինն հարյուր միլիոն ռուբլի, երկրորդ՝ Ռուսաստանի հարավային ծովափին առևտրական արտահանությանը և պատերազմի պատճառով երկաթուղիներին հասցրած վնասի համար՝ չորս հարյուր միլիոն ռուբլի. երրորդ՝ Կովկասի վրա կատարված հարձակման ժամանակ հասցված վնասի փոխարեն՝ հարյուր միլիոն ռուբլի. չորրորդ՝ օսմանյան եր-
357 կրներում ‖ ռուսահպատակների և հաստատությունների կրած վնասների համար՝ տասը միլիոն ռուբլի, ընդամենը մեկ միլիարդ չորս հարյուր տասը միլիոն ռուբլի, այսինքն՝ երկու հարյուր քառասունհինգ միլիոն երկու հարյուր յոթ հազար երեք հարյուր մեկ օսմանյան ոսկի լիրա և մեկ ու կես մեջիտիեի հատուցում։ Հիշյալ հոդվածից նույնությամբ տալիս ենք հետևյալ հատ-

Ութերորդ հոդվածում ասված էր, որ այսուհետև Բուլղարիայում օսմանյան զորք չպետք է գտնվի և տեղական կառավարության միջոցով պետք է քանդվեն հին բերդերը։ Միայն մինչև կարգի, խաղաղության և ապահովության պահպանման համար անհրաժեշտ քանակությամբ տեղական ազգային զորքի կազմակերպումը ռուսական զորքը մնալու էր Բուլղարիայում և հարկ եղած դեպքում գործնական օգնություն ցույց տար ռուսական կոմիսարին։ Հիշյալ ազգային զորքի քանակը հետագայում որոշվելու էր օսմանյան և ռուսական պետությունների համաձայնությամբ։ Բուլղարիայում մնացող ռուսական զորքի համար սահմանված էր երկու տարի ժամկետ։ Հիշյալ զորքը պետք է բաղկացած լիներ վեց հետևակային և երկու հեծելազորային դիվիզիայից, այն հաշվով, որ զորքի ընդհանուր թիվը չանցներ 50 000-ից։ Այդ զորքի ծախսը կատարելու էր Բուլղարիան, իսկ կապը Ռուսաստանի հետ իրականացվելու էր ոչ միայն Ռումինիայի, այլ նաև Սև ծովի նավահանգիստների միջոցով։

356 ‖ Իններորդ հոդվածի համաձայն Բուլղարիայի վճարելիք տարեկան հարկը որոշվելու էր նոր վարչակարգի գործունեության առաջին տարվա վերջին Ռուսաստանի, օսմանյան պետության և այլ կառավարությունների միջև կայանալիք համաձայնությամբ։

Քանի որ Բուլղարիան տարածվել էր մինչև Արշիպելագ, օսմանյան պետության եվրոպական մասում գտնվող նահանգները, այդ թվում և Բուլղարիան, բաժանվել էին երկու մասի։ Տասներորդ հոդվածը վերաբերում էր իշխանապետության մյուս կողմում գտնվող նահանգներում պետության կողմից զինվոր, ռազմամթերք և պարեն փոխադրելու եղանակին։

Տասներկուերորդ հոդվածում ասված էր, որ Դանուբի վրա գտնվող բերդերը ամբողջությամբ քանդվելու են և սրանից հետո Դանուբի ափերին ռումինական, սերբական և բուլղարական ջրերում ոչ բերդեր և ոչ էլ ռազմանավեր չպետք է գտնվեն։ Այստեղ Դանուբի խառն հանձնաժողովին պատկանող իրավունքները, պարտականությունը և առանձնաշնորհումները ամբողջությամբ մնալու են անփոփոխ։

Տասներեքերորդ հոդվածի համաձայն Բարձրագույն

Դուռը հանձն էր առնում Սինե նեղուցը նորից պիտանի
դարձել նավարկության համար, պատերազմի պատճառով
Դանուբ գետում նավարկությունը դադարելու հետևանքով
վնասի ենթարկված պետություններին իբրև հատուցում
վճարել հինգ հարյուր հազար ֆրանկ։
Տասնչորսերորդ հոդվածը պարտավորեցնում էր Բարձ-
րագույն Դռանը Ռուսաստանի և Ավստրիայի պետության
համաձայնությամբ որոշվելիք բարեփոխումով անմիջապես
կենսագործել Ստամբուլի կոնֆերանսի առաջին նիստում
օսմանյան ներկայացուցիչներին հաղորդված բարենորո-
գումը Բոսնիայում և Հերցեգովինայում։ Տասնհինգերորդ
հոդվածը պարտավորեցնում էր Կրետե կղզում գործադրել
1867 թվականի հիմնական կանոնագիրը։ Յանինայում ու
Թեսալիայում, ինչպես նաև Ռումելիի ուրիշ վայրերում ևս
պետք է կատարվեին նման բարենորոգումներ։
Տասնվեցերորդ հոդվածով Բարձրագույն Դուռը պար-
տավորվում էր հայերով բնակեցված նահանգներում անմի-
ջապես բարենորոգումներ կատարել և քրիստոնյաներին
պաշտպանել քրդերից ու չերքեզներից։
Սան-Ստեֆանոյի դաշնագրի մինչև այժմ թվարկված
հոդվածների մեջ ամենակարևորը Բուլղարական իշխանա-
պետության կազմավորման մասին եղած՝ վեցերորդ հոդ-
վածն էր, մյուս կարևոր հոդվածը տասնիններորդն էր, որի
մասին խոսվելու է այժմ և որը վերաբերում է ռազմատու-
գանքներին։ Այս հոդվածի համաձայն Ռուսաստանը մեղա-
նից պահանջում էր նախ՝ բուն պատերազմական ծախսերի
համար ինն հարյուր միլիոն ռուբլի, երկրորդ՝ Ռուսաստանի
հարավային ծովափին առևտրական արտահանությանը և
պատերազմի պատճառով երկաթուղիներին հասցրած վնա-
սի համար՝ չորս հարյուր միլիոն ռուբլի. երրորդ՝ Կովկասի
վրա կատարված հարձակման ժամանակ հասցված վնասի
փոխարեն՝ հարյուր միլիոն ռուբլի. չորրորդ՝ օսմանյան եր-
357 կրներում || ռուսահպատակների և հաստատությունների
կրած վնասների համար՝ տասը միլիոն ռուբլի, ընդամենը
մեկ միլիարդ չորս հարյուր տասը միլիոն ռուբլի,
այսինքն՝ երկու հարյուր քառասունհինգ միլիոն եր-
կու հարյուր յոթ հազար երեք հարյուր մեկ օս-
մանյան ոսկի լիրա և մեկ ու կես մեջիտիեի հատուցում։
Հիշյալ հոդվածից նույնությամբ տալիս ենք հետևյալ հատ-

վածները. «Ռուսաստանի կայսրը, նկատի ունենալով Օսմանյան պետության ֆինանսական նեղ վիճակն ու նրա ցանկությունը, համաձայն է, որ ռազմատուգանքի մեծագույն մասը հատուցվի ներքոհիշյալ հողերը զիջելու միջոցով։ Նախ, Թուլչայի սանջաքը, այսինքն՝ Քիլիա, Սինե, Մահմուդիե, Իսաքչի, Թուլչա, Մաչին, Բաբադաղ, Խարսուհ, Քյուսթենջե, Մեջիդիե գավառակները։ Դանուբ դետում գտնվող կղզիները թեև թողնված են եղել Ռուսաստանին, բայց ռուսական պետությունը մտադիր չլինելով հիշյալ վայրերը միացնել իր երկրին, իր համար իրավունք է վերապահում այդ հողերը փոխանակել 1856 թվականի պայմանագրի հիման վրա Ռուսաստանից խլված Բեսարաբիայի հետ...»։

Երկրորդ, Արդահանը, Կարսը, Բաթումը և Բայազիդը իրենց հողերով մինչև Սողանլուի լեռները հանձնվելու են Ռուսաստանին։

Երրորդ, ինչպես ասված է առաջին և երկրորդ հատվածներում, Ռուսաստանին թողնված հողերը հաշվարկվել են մի միլիարդ հարյուր միլիոն ռուբլի։ Ռազմատուգանքի մնացած երեք հարյուր միլիոն ռուբլու վճարումն ու ապահովումը, բացառությամբ օսմանյան հողերում ռուսահպատակների և հաստատությունների համար հատկացված տասը միլիոն ռուբլուց, որոշվելու են Ռուսաստանի և օսմանյան իշխանության միջև հատուկ համաձայնությամբ։

Քսանմեկերորդ հոդվածի համաձայն Ռուսաստանին թողնված վայրերի բնակիչներին վերապահված է ազատություն դաղթելու, իրենց հողերն ու կալվածքը ծախելու և մեկնելու խնդրում։ Այն բնակիչները, որոնք պայմանագրի փոխանակման թվականից հետո երեք տարվա ընթացքում չեն կարողացել վաճառել իրենց գույքը և մեկնել երկրից, դառնալու էին ռուսահպատակ։

Քսաներկուերորդ հոդվածը որոշակիորեն հայտարարում էր, որ ռուսաստանցի հոգևորականներն ու ուխտավորները պաշտոնապես վայելում են ռուսական դեսպանատան և հյուպատոսների հովանավորությունը։ Աթոսում գտնվող ռուս հոգևորականները ևս պահպանելու էին իրենց նախկին իրավունքներն ու կրոնական հաստատությունները։

Քսանհինգերորդ հոդվածի համաձայն ռուսական զորքը

358 Եվրոպայում գտնվող ‖ օսմանյան երկրներր ամբողջապես դատարկելու էին հաշտության վերջնական կնքումից հետո երեք ամսվա, իսկ Անատոլիայի օսմանյան երկրները՝ վեց ամսվա ընթացքում։

Քսանյոթերորդ հոդվածի համաձայն Բարձրագույն Դուռը համաձայնվում է պատիժ չսահմանել պատերազմի ժամանակ ռուսական զորքի հետ հարաբերություն ունեցած օսմանյան հպատակներին։ Այս պայմանագիրը, ինչպես ցույց է տալիս նաև «նախնական պայմանագիր» անվանումը, հետագայում պետությունների համաձայնությամբ վերջնական պայմանագրի կնքման արգելք չլինելով հանդերձ, քսանիններորդ հոդվածում հայտնվում է, որ պայմանավորվող երկու պետությունները սույն պայմանագրի փոխանակման թվականից սկսած իրենց պաշտոնապես պարտավորված են համարում։

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲԵՌԼԻՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Որքան էլ եվրոպական պետությունները հաշտությունը կնքելու ժամանակ չէին իսկ մտաբերել Ռուսաստանի չափավոր գործելակերպը, բայց Էդիրնեում և Սան-Ստեֆանոյում կնքված համաձայնությունները տեսնելով, դարձյալ խիստ զարմացան։ Հանգամանքների բերումով այս պայմանագրերի դեմ ամենից ավելի առարկողները եղան Ավստրիան և Անգլիան։ Փետրվարի 24-ին Վիեննայում կայսեր նախագահությամբ գումարվեց մինիստրների խորհրդակցություն, որտեղ կոմս Անդրաշիին լիազորություն տրվեց պատգամավորների պալատից պահանջել վաթսուն միլիոն ֆլորին։ Ինքնին աննշան այս գումարը ուղղակի ռազմական գործողություններից ավելի շատ, որպես օժանդակ ուժ զուտ դիվանագիտական տեսակետից, ծառայելու էր ավստրիական քաղաքականության շահերին։

Կոմս Անդրաշիի տված հնարավորին չափ հանգստացուցիչ բացատրությունների հիման վրա մարտի 19-ին և 21-ին պատգամավորների ժողովը ընդունեց պահանջված հատկացումը։

Կոմս Անդրաշիի կարծիքով Արևելքին վերաբերող վիճելի հարցերի խաղաղ եղանակով լուծումը հնարավոր էր

միայն այն դեպքում, եթե բանակցություններին մասնակ-
ցեն եվրոպական բոլոր պետությունները։ Ինչ վերաբերում
է Բոսնիայի և Հերցեգովինայի հարցին, Անդրաշին ղանա-
ղան պատճառների բերումով այնքան էլ բացահայտ չէր
կարող խոստովանել Ավստրո-Հունգարիայի քաղաքականու-
359 թյունը այս հարցում։ Սակայն, ինչպես հետո կտեսնենք||,
նա սկզբից ի վեր որոշել էր առարկել Բուլղարիայի նկատ-
մամբ Ռուսաստանի ունեցած ծրագրին, որով հավանու-
թյուն տված կլիներ անգլիական քաղաքականությանը։
Արդ, Ռուսաստանի կառավարությունը մարտ ամսի
վերջին օրերին կոմս Իգնատևին Վիեննա ուղարկելով, աշ-
խատեց կոտրել այդ կողմից սպասվող դիմադրությունը և
կանխել Ավստրիայի ու Անգլիայի համաձայնության գալու
վտանգը այդ հարցում։ Զնայած բանակցությունները կա-
տարվել են խիստ գաղտնի, բայց և այնպես լայնորեն
հայտնի է դարձել, որ կոմս Իգնատևը բացատրություններ
է պահանջել Ավստրիայից՝ իր համար նախատեսված շահե-
րի շրջանակների մասին։ Այս կապակցությամբ ավստրիա-
կան գլխավոր շտաբի որոշմամբ Ավստրիայի համար Բալ-
կանյան թերակղզու արևմուտքում Բոսնիայի, Հերցեգովի-
նայի և Ալբանիայի ուղղությամբ մինչև Սալոնիկի հողերն
ընկած շրջանում պահանջվեց նույնպիսի քաղաքական ազ-
դեցություն և դիրք, որպիսին Ռուսաստանը աշխատում էր
ձեռք բերել այդ թերակղզու արևելյան մասում։ Սակայն
այդ միջոցին անգլիական պետության ցուցաբերած ուժն ու
հզորությունը վերջ տվեց Թուրքիայի բաժանման մասին
եղած ծրագրերին և ամբողջ Եվրոպայի քաղաքականությու-
նը մղեց տարբեր հուների մեջ։
Անգլիայի կառավարությունը ինչպես պառլամենտում
տեղի ունեցող խիստ վիճաբանությունների ժամանակ, այն-
պես էլ Ռուսաստանի հետ փոխանակած թղթակցության մեջ
պահանջում էր այս նոր որոշումներով չեղյալ չհայտարարել
Փարիզի պայմանագիրը, այլ Սան-Ստեֆանոյի պայմա-
նագրի քննարկումը հանձնել եվրոպական մի վեհաժողովի։
Կառավարությունը, Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքու-
մից առաջ, փետրվարի 18-ին ռազմական պատրաստու-
թյունների համար պահանջած վաթսուն միլիոն ստեռլինգի
հատկացումը պառլամենտին ընդունել տված լինելու կա-

սակցությամբ՝ հակառակ լիբերալների առաջ քաշած բազմաթիվ առարկությունների, վստահ էր, որ իր բռնած ուղղությունը ամենաճիշտ քաղաքականությունն էր անգլիական ազգի համար. ուստի պատրաստությունները շարունակվում էին տենդագին։ Որոշվեց հայտարարել բանակի և անկանոն զորքի պահեստայինների, նույնիսկ Հնդկաստանի զորքերի զորակոչ։ Ինչպես արդեն ասվեց, արտաքին գործերի մինիստր լորդ Դերբիի հրաժարումով՝ տեղը նշանակվել էր լորդ Սոլսբերին, ռազմական մինիստր՝ Ստենլին, Հնդկաստանի մինիստր՝ Հարդին. այսպիսով, կազմվել էր միատարր կառավարություն։ Լորդ Սոլսբերիի 1878 թվականի ապրիլի 1-ի ընդհանրական շրջաբերականը այդ ժամանակամիջոցում գրված գրություններից ամենից ավելի ուշագրավն է։ Այս շրջաբերականը, որը կարելի էր դիտել որպես Անգլիայի պաշտոնական հայտարարությունը այդ հարցի մասին, դիվանագիտական կարգին
360 ‖ հակառակ, դեսպաններին ուղարկվելուց անմիջապես հետո հրատարակվեց լրագրերում։ Արտաքին գործերի մինիստրը իր այս շրջաբերականում, ամփոփելով հունվարի 14-ից մինչև մարտի 26-ը տեղի ունեցած բանակցությունները, ասում էր.

«1871 թվականի Լոնդոնի կոնֆերանսի առաջին արձանագրությանը կցված հայտարարության մեջ բոլոր մեծ տերությունների, այդ թվում նաև Ռուսաստանի, ներկայացուցիչները հաստատել են, որ միջազգային իրավունքի հիմնական կանոններից մեկն այն է, որ առանց պայմանագիրը ստորագրած պետությունների համաձայնության ոչ մի պետություն չի կարող ինքնակամ կերպով իրեն ազատ համարել պայմանագրի որևէ հոդվածից և կամ այլափոխել այդ հոդվածը։

Այս պայմանագրի ամենակարևոր հետևանքներից մեկն այն է, որ նա խոր ազդեցություն է գործում Եվրոպայի հարավ-արևելյան մասում ապրող բոլոր ժողովուրդների վրա։

Բուլղարական նոր պետության ստեղծման մասին Սան-Ստեֆանոյի պայմանագրի հոդվածների համաձայն Ռուսաստանի հովանավորության և վերահսկողության տակ կազմվում է սլավոնական մի հզոր պետություն։ Այն հան-

գամանքը, որ այս պետությունը Սև ծովի և Արշիպելագի
ափերին կունենա կարևոր նավահանգիստներ, Ռուսաստա-
նը այս ծովերում քաղաքական և առևտրական հարաբերու-
թյունների նկատմամբ ձեռք կբերի բացառիկ ազդեցություն
և ներգործություն։ Կարգավորման եղանակի համաձայն,
սլավոնական գերիշխող մեծամասնության մեջ գտնվելու է
հունական ցեղին պատկանող մեծաքանակ բնակչություն։
Պայմանագրի հոդվածներն այն մասին, որ նոր պետությու-
նը ենթարկվելու է Ռուսաստանի կողմից ընտրված ադմի-
նիստրացիային, վարչական կազմակերպությունը իրագործ-
վելու է ռուս կոմիսարի կողմից և այդ կազմակերպությանը
վերաբերող կանոնները գործադրվելու են ռուսական բանակի
վերահսկողությամբ, բավարար չափով ցույց են տալիս, թե
այս պետությունը առաջիկայում ինչ քաղաքականություն
պետք է վարի։ Օսմանյան կայսրությանը թողնված հույն,
361 ալբանացի ‖ և սլավոն բնակչություն ունեցող նահանգներից
Ստամբուլի անջատումը, անկասկած, տևական դժվարու-
թյուններ կստեղծի հիշյալ նահանգների կառավարման գոր-
ծում և պատճառ կդառնա, որ բնակչությունը ենթարկվի
առանց կառավարման ու առանց իշխանության մնալու
վտանգին։ Բեսարաբիայի կորուստը Ռումինիայի համար,
Բուլղարիայի ծավալումը մինչև առավելապես սլավոններով
և հույներով բնակեցված Սև ծովի ափերը, Բաթումի նման
կարևոր նավահանգստի միացումը հասցնելու են այն հե-
տևանքին, որ Ռուսաստանը Սև ծովի ավազանում կդառնա
ամենաազդեցիկ պետությունը։
362 ‖ Ինչպես որ Հայաստանի բերդերի նվաճումը պատճառ
է դառնալու, որ այդ նահանգի ժողովուրդը ենթարկվի հիշյալ
բերդերի տերը դարձած պետության իշխանությանը, այն-
պես էլ Տրապիզոնի և Իրանի միջև ընկած եվրոպական
առևտրական ճանապարհը կարող է կտրվել Քուրդիստանում
Ռուսաստանին թողնված հողերի և Ռուսաստանի առևտրա-
կան հայտնի քաղաքականության պատճառով»։

Այսպիսով, լորդ Սոլսբերիի ընդհանրական շրջաբերա-
կանը մերժում է Ռուսաստանի հաշտության նաև մյուս,
մանավանդ ռազմատուգանքի մասին պայմանները։ Այն
միջոցառումները, որոնց ուղում էր ձեռնարկել Ռուսաստա-
նը, մեկ առ մեկ մերժվելու արժանի նկատվելուց բացի, ամ-

բողջությամբ վերցրած, նրանց ազդեցությունը ևս այլ հան-
ռամանքներում վնասի շարժառիթ կարող է հանդիսանալ,
ուստի հանձնարարվում է պետություններին, որ լրջորեն
ուշադրության առնեն այն. վերջում ասված է, որ «անգլի-
ական կառավարությունը մեծ գոհունակությամբ կմաս-
նակցի այնպիսի մի վեհաժողովի, որը ի վիճակի է քննար-
կելու այստեղ խնդրո առարկա եղած հոդվածները ամբող-
ջությամբ վերցրած, և գոյություն ունեցող պայմանագրերի,
Անգլիայի և այլ պետությունների ստացական իրավունքնե-
րի և Եվրոպայի կողմից շարունակաբար հետապնդված
բարյացակամ նպատակների հետ եղած առնչության և հա-
րաբերության նկատառումով»։
Բանակի և անկանոն զորքի պահեստայիններին զորա-
կոչող հրամանները հրատարակվել էին այս ընդհանրական
շրջաբերականից հետո իբրև իր թիկունքի որոշ ուժեղացում։
Որոշվեց Անգլիայի հնկայական նավատորմից բացի 99000-
անոց մշտական բանակին ավելացնել 85000 անկանոն և
38000 պահեստային զորք և ստեղծել 222000-անոց մի ուժ·
Իշխան Գորչակովը 1878 թվականի ապրիլի 9-ին Անգլիայի
ընդհանուր շրջաբերականին պատասխանեց շատ կարճ գրու-
թյամբ։ Այս գրության հետ կար նաև 12 հոդվածից բաղկա-
ցած մի երկար հուշագիր։ Ռուսական կառավարությունը,
այս հուշագրում մեջ բերելով ու կրկնելով ծանոթ փաստերն
ու ապացույցները, ընդհանուր առմամբ զուսպ էր և չա-
փավոր։
Ապրիլի վերջին և մայիսի սկզբներին հնդկական մի
զորաբաժին հետևակ, հեծյալ, թնդանոթաձիգ և սակրավոր
7000 զինվորներով Բոմբեյից ճանապարհվեց Մալաթիայի
ուղղությամբ։ Մայիսի 13-ին Վիկտորյա թագուհին Ալդեր-
շյուտ բանակատեղում առաջին կորպուսին տողանցք կա-
տարել տվեց։ Պատրաստ էր նաև 2-րդ կորպուսը։ Այդ մի-
ջոցին 70000-անոց անգլիական բանակը պատերազմի
պատրաստ կանգնած էր Եվրոպայում։ Ռուսաստանն էլ իր
պատրաստությունները չէր դադարեցնում, բայց մինչև հի-
365 մա իր վատնած ուժից և բանակի || այդ ժամանակվա վի-
ճակից դատելով, նա ի վիճակի չէր պատերազմելու Անգ-
լիայի դեմ։ Բացի դրանից պարզ էր, որ պատերազմի դեպ-
քում Անգլիան մենակ չէր մնա։

Մեծ իշխան Նիկոլայը ապրիլի վերջին, երբ առողջական վիճակի պատճառով վերադարձել էր Ռուսաստան և մեծ իշխան Միխայիլի հետ միասին ստացել էր ֆելդմարշալության աստիճան։ Նրա փոխարեն գլխավոր հրամանատար նշանակվեց գեներալ Տոթլեբենը, սպայակույտի պետ ընտրվեց իշխան Իմերեթինսկին։ Գլխավոր հրամանատարը բանակի վիճակը սպասածից շատ ավելի վատ գտավ։ Մասամբ առողջության համար վնասակար սննդամթերքի փոխարինիչների պատճառով զորքի մեջ լայնորեն տարածվել էին հիվանդությունը, հարբեցողության մոլությունը և անհնազանդությունը։ Ամրությունների շինարարությունը հարկեղած կարևորությունը տրված չլինելու պատճառով անհրաժեշտ էր համարվել նորից ձեռք առնել խիստ միջոցներ։ Այնուամենայնիվ Ռուսաստանից հասավ մեծաքանակ օժանդակ ուժ։ Ռումինիայում թողնված թնդանոթաձիգները փոխադրվեցին Բուլղարիա և Ռումելի։ Մոսկվայում և ռուսական այլ քաղաքներում ընկերություններ կազմակերպվեցին ծովահենային տորմիղ ստեղծելու համար։ Այս տորմիղը պետք է կազմվեր գերազանցապես Ամերիկայից գնվելիք նավերից։ Բացի դրանից, ծրագրվեց մի արշավ ևս կատարել դեպի Հնդկաստան, որի համար արդեն նախօրոք որոշ պատրաստություններ տեսնվել էին։

Բալկանյան թերակղզու և նրա շրջակայքի վիճակը օրեցօր վատթարանում էր։ Մի կողմ թողնելով Թեսալիայի, Յանինայի, Մակեդոնիայի, Կրետեի, Ռոդոպի, Բալկանի* և Բոսնիայի ապստամբությունները, Ռուսաստանի պատերազմ վարելու եղանակը ամբողջ Եվրոպայի գլխին աստվածային փորձանք դառնալու աստիճանին էր հասել։ Դեռ Պլևնայից գերիներ փոխադրելու ժամանակ Ռումինիայում և Ռուսաստանում ծագել էր տիֆ հիվանդությունը։ Պետերբուրգում անգամ մարտ ամսին եղել է հիվանդացման 3747 դեպք...

---

* Ստրանջայի կողմերում մուսուլման ժողովրդի նկատմամբ գործադրված խժդժությունները ահավոր էին։ Հուլիսին Ստամբուլի դեսպաններին տրված մի հուշագրում ասված էր, որ այս շրջանում անգութ և անողորմ կերպով հրկիզվել են պառավ կանայք, մի գյուղում 250 ընտանիքից մնացել է միայն 13-ը, մայրերի ձեռքից հափշտակված քառասուն աղջիկների միջից տասնյոթ տարեկան մեկին ձեռքերը կապված վիճակում հանձնել են կաղակներին և այս թշվառը անշունչ դիակի վերածվելուց հետո միայն բաց է թողնվել։

364 ||....Ռուսական նվաճումներից փախչելով՝ Ստամբուլ եկած իսլամ գաղթականները կիսամերկ և թշվառ վիճակում տեղավորվեցին մզկիթներում և հանրային շենքերում։ Սրանց ցավալի վիճակը մեղմացնելու համար Ստամբուլի ժողովրդի ցույց տված հնարավոր օգնությունից բացի աջակցում էին նաև օտարները։ Հունվարի վերջերին գերմանական հյուպատոսի նախագահությամբ ստեղծվեց մի նպաստամատույց հանձնաժողով, որին Վիլհելմ կայսրը մասնակցեց մեծ գումարով։

Ինչպես վերևում նշվեց, երբ Ռուսաստանում ժողովուրդը թշվառության մեջ էր, և Ռուսաստանն էլ ֆինանսական ծայրահեղ դժվարին վիճակում էր, ակներևորեն անհրաժեշտ էր, որ Պետերբուրգի կառավարությունը Եվրոպայի
365 առարկությունների դեմ կատարեր լայն զիջումներ, || բայց նոր պատերազմի վտանգը վերացնելու համար դարձյալ անհրաժեշտ եղավ, որ Գերմանիան գործադրի իր ուժեղ ջանքերը։

Գերմանիայի և Ռուսաստանի կառավարությունների, անգամ այդ երկու երկրների կայսրերի միջև դեռ պատերազմից առաջ ծագել էին որոշ թյուրիմացություններ։ Մինչև իսկ Ռուսաստանը արդեն սկսել էր սպառնալ Գերմանիային։ Իշխան Բիսմարկը ռայխստագում արտասանած ճառում հայտարարել էր.

«Իշխան Գորչակովը 1875 թվականին է սկսել Գերմանիայից ավելի Ֆրանսիայում ջանքեր թափել հասարակական կարծիքը Ռուսաստանի կողմը գրավելու համար։ Իր մի հեռագրով ի լուր աշխարհի հայտարարել էր, որ Գերմանիան մտադիր է 1875 թվականին հարձակվել Ֆրանսիայի վրա և որ ինքը Ֆրանսիային փրկեց այս վտանգից։ Վերջապես 1876 թվականին ռուս-թուրքական պատերազմից առաջ, երբ մենք ստիպված էինք Ռուսաստանից և Ավստրիայից նախընտրել մեկն ու մեկին, չնայած դրսից մեզ վրա կատարված ճնշումներին, մենք այդ բանը մերժեցինք»։

Այսուհանդերձ, երբ պատերազմը վերջացավ և սկսվեց հաշտության շրջանը, Գերմանիան չհրաժարվեց իր վաղեմի դաշնակցի շահերը պաշտպանելուց։

1878 թվականի գարնանը, երբ Ռուսաստանը պաշտոնապես առաջարկում էր Բեռլինում հրավիրել մեծ տերությունների մի վեհաժողով, իշխան Բիսմարկը Ֆրիդրիխ-

սրունեում պառկած էր ծանր հիվանդ վիճակում։ Չնայած Բիսմարկը շատ էլ կողմնակից չէր նման վեհաժողովի գումարման, ի վերջո նորից համաձայնվեց։ Նա հայտարարեց, որ եթե կարելի լինի ստանալ նաև Անգլիայի և Ավստրիայի համաձայնությունը, ապա ինքը պատրաստ է մասնակցելու այդ վեհաժողովին։ Ռուսաստանը պարտավորվեց ստանալ Ավստրիայի համաձայնությունը, Բիսմարկն էլ խոստացավ Անգլիայի առջև այս հարցում հանդես գալ միջնորդությամբ։

Լոնդոնում Ռուսաստանի դեսպան կոմս Շուվալովը խաղաղասիրական տրամադրությամբ մայիսի 7-ին մեկնեց Պետերբուրգ։ Մեկնելու և վերադարձի ժամանակ տեսակցելով Գերմանիայի վարչապետի հետ, մայիսի 21-ին վերադարձավ Լոնդոն։ Այս ուղևորության հետևանքով Ռուսաստանի և Անգլիայի միջև ձևոք բերվեց համաձայնություն։ Այս համաձայնությունը պարունակում էր այն հոդվածները, որ կողմերի ներկայացուցիչները փոխադարձ կերպով հարգելու էին վեհաժողովում։ Այդ հոդվածները հետևյալներն են.

366 «Նախ, Անգլիան մերժում է Բուլղարիայի || սահմանների երկարացումը և ընդարձակումը, ինչպես գրված է Սան-Ստեֆանոյի պայմանագրում, իսկ ռուսական ներկայացուցիչը իրեն իրավունք է վերապահում վեհաժողովում նշել դրա օգուտներն ու առավելությունները, միևնույն ժամանակ խոստանալով չպնդել Անգլիայի վճռական մտքի դեմ։

Երկրորդ. որպես բուլղարական բնակչություն ունեցող օսմանյան նահանգների հարավային սահման. նոր կազմվելիք բուլղարական իշխանապետության հարավային սահմանն էլ ծովից այնքան հեռու է լինելու, որքան առաջարկվել է Ստամբուլի կոնֆերանսում։ Վեհաժողովում սահմանային հարցը քննարկվելու ժամանակ Բուլղարիայի սահմանը երբեք չպետք է տարածվի մինչև Արշիպելագի ափերը։ Այս նշումը վերաբերում է Լագոսի ծովախորշի արևմտյան կողմին, իսկ վեհաժողովը ազատ է բանակցելու և որոշելու, թե այս կետից մինչև Սև ծովը ընկած սահմանը որ տեղերից պետք է անցնի։

Երրորդ. Բուլղարիայի արևմտյան սահմանը ճշտվելու է, հաշվի առնելով այդ շրջանում բնակվող ժողովրդի ցե-

ղային ընույթը, այսինքն՝ ոչ-բուլղար ժողովրդով բնակված վայրերը չպետք է մտնեն իշխանապետության սահմանի մեջ։ Բուլղարիայի արևմտյան սահմանը մոտավորապես Նովի Փազարից մինչև Մեծ Բալկանյան լեռները ձգվող գծից դուրս չպետք է անցնի։

Չորրորդ. այդ ձևով սահմանագծված Բուլղարիան բաժանվելու է երկու նահանգի. դրանցից մեկը՝ Բալկանյան լեռնաշղթայից դեպի հյուսիս ընկած մասը, լինելու է քաղաքականապես անկախ և գտնվելու է մի իշխանի տիրապետության տակ, իսկ լեռնաշղթայից հարավ ընկած մյուս նահանգը՝ Եվրոպայի համաձայնությամբ, հինգ կամ տասը տարի ժամկետով ընտրված քրիստոնյա մի կուսակալի վարչության տակ։ Անգլիական գաղութներում տարածված ձևով նրան տրվելու է վարչական լայն անկախություն։

Հինգերորդ. քանի որ Ռուսաստանի կայսրը հարավային Բուլղարիայից օսմանյան զորքի հեռացմանը մեծ կարևորություն է տալիս և հայտնում է, որ օսմանյան զորքը այստեղ թողնելու պարագայում բուլղար ժողովրդի ապագայի համար ոչ մի ապահովություն ձեռք բերված չի համարվում, լորդ Սոլսբերին առաջարկում է, որ օսմանյան զորքը հեռանա հարավային Բուլղարիայից։ Սակայն հարավային Բուլղարիայի նահանգում ապստամբություն կամ դրսից հարձակում տեղի ունենալու դեպքում, դրանք կանխելու նպատակով վեհաժողովը մի որոշում կայացնի այն մասին, թե օսմանյան զորքը ինչ ձևով պետք է մտնի այդ նահանգը. Ռուսաստանը այդ որոշմանը չպետք է ընդդիմանա։

Եվ վերջապես, Անգլիան իրավասու է վեհաժողովում պաշտպանելու օսմանյան զորքը հարավային Բուլղարիայի սահմանը ուղարկելու փադիշահի իրավունքը։ Մյուս կող-
367 մից, || Ռուսաստանի ներկայացուցիչն էլ լորդ Սոլսբերիի
այս առաջարկը վեհաժողովում քննադատելու համար պահպանում է կատարելապես ազատ լինելու իր իրավունքը։

Վեցերորդ. Անգլիական կառավարությունը պահանջում է, որ հարավային Բուլղարիայի անկանոն զորքի հրամանատարները Եվրոպայի համաձայնությամբ նշանակվեն օսմանյան պետության կողմից։

Յոթերորդ. Հայաստանի մասին Սան-Ստեֆանոյի պայ-

մանագրում նշված խոստումները տրվելու են ոչ միայն Ռուսաստանին, այլ նաև Անգլիային։

Ութերորդ. քանի որ Ռուսաստանի նման անգլիական կառավարությունը ևս շատ լրջորեն շահագրգռված է Բալկանյան թերակղզում հույներով բնակված նահանգների ապագա կազմակերպմամբ, Սան-Ստեֆանոյի պայմանագրի տասնհինգերորդ հոդվածի բարեփոխմամբ Ցանինայի և Թեսալիայի նահանգների հետ միասին օսմանյան գերիշխանության տակ մնացող քրիստոնյաներով բնակված ուրիշ նահանգների առաջիկա կարգավորման ժամանակ պայմանագրում հարկավոր է նշել ուրիշ պետությունների, այդ թվում և Անգլիայի կարծիքը հարցնելու անհրաժեշտությունը։

Իններորդ. ինչ վերաբերում է ռազմատուգանքին, նորին մեծություն Ռուսաստանի կայսրը բոլորովին մտադրություն չունենալով հիշյալ հատուցումը փոխարինել հողերի տիրացմամբ, չի խուսափում նաև այս մասին դրավական տալուց։ Այնուհետև, անգլիական կառավարությունը, լինելով օսմանյան պետության պարտատեր, վարկատու պետություն, չի ցանկանում, որ վնասի ենթարկվեն իր իրավունքները և ուզում է, որ նույնությամբ մնան պատերազմից առաջ գոյություն ունեցած իրադրությունն ու վիճակը։ Անգլիական կառավարությունը, առանց ընդդիմանալու ռազմատուգանքի քանակի մասին Ռուսաստանի ընդունելիք վերջնական որոշմանը, պահում է իր կարծիքով անհրաժեշտ նոր առաջարկություններ անելու իր իրավունքը։

Տասներորդ. հաշվի առնելով, որ Ալաշկերտի հովիտը հանդիսանում է խիստ կարևոր նշանակություն ունեցող ճանապարհ Իրանի և օսմանյան պետության համար, նորին մեծություն Ռուսաստանի կայսրը համաձայն է այդ հովիտն ու Բայազիդ քաղաքը վերադարձնել օսմանյան պետությանը։ Սակայն, մյուս կողմից, Ռուսաստանը պահանջել է, որ Կոթուրի փոքր հողամասը թողնվի Իրանին, և այս պահանջը ընդունվել է։ Միջնորդ երկու պետությունների հանձնաժողովները նույնպես հարմար են գտել, որ այս վայրը վերադարձվի Իրանի շահին։

Տասնմեկերորդ. եթե ռուսական կառավարությունը համառորեն պնդելու է, որ Բեսարաբիան կրկին իրեն թող-

նըվի, անգլիական կառավարությունը ստիպված պիտի լինի հայտնելու իր մեծագույն վիշտը։ Սակայն, եթե պարզվի, որ Փարիզի հաշտության պայմանագիրը ստորագրած մյուս
368 պետությունները պատրաստ չեն զենքի ուժով պահանջելու՝ հիշյալ պայմանագրով որոշված Ռումինիայի սահմանները, անգլիական կառավարությունը կարծում է, որ ինքը այն աստիճան շահագրգռված չէ, որպեսզի ինքնագլուխ կերպով ստանձնի այս խնդրում մտադրված փոխանակմանը դիմադրելուց ծագող պատասխանատվությունը։ Հետևաբար հանձն է առնում չընդդիմանալ այս ուղղությամբ ընդունվելիք որոշմանը։ Անգլիական կառավարությունը, Ռուսաստանի կայսեր կողմից Բաթումի և Հայաստանում գրաված այլ վայրերի տիրապետման խնդրում նրա ցանկություններին դիմադրություն ցույց չտալու պատրաստ լինելով հանդերձ, չի թաքցնում նաև, որ Ռուսաստանը այս կերպ իր սահմաններն ընդարձակելու հետևանքով առաջիկայում կարող է ծանրակշիռ և ասիական Թուրքիայի ժողովրդի հանգիստը խանգարող վտանգներ առաջացնել։ Սակայն անգլիական կառավարությունը այն կարծիքին է, որ օսմանյան պետությունը այս վտանգից պաշտպանելու պարտավորությունը առաջիկայում լինելու է հատկապես Անգլիայի ուղղվելիք պարտականությունը, և այդ բանը կարելի կլինի կարգավորել առանց Եվրոպան նոր պատերազմի վտանգին ենթարկելու անհրաժեշտության։ Միևնույն ժամանակ անգլիական կառավարությունը արձանագրում է նորին վեհափառության ցարի մի արտահայտությունը ևս։

Այդ արտահայտության համաձայն առաջիկայում Ռուսաստանի սահմանները այլևս չեն ընդարձակվելու դեպի Ասիական Թուրքիա։ Քանի որ Անգլիական կառավարությունը Սան-Ստեֆանոյի պայմանագրի այս հուշագրով ընդունված բարեփոխումները համարում է բավարար, հիշյալ պայմանագրի ներկա ձևի համաձայն մեջ բերած առարկությունները թեթևացնելու համար հանձն է առնում չընդդիմանալ այն պահանջի դեմ, երբ Ռուսաստանի կառավարությունը վեհաժողովից համառորեն պահանջի Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի վերոհիշյալ տասը հոդվածներով բարեփոխման չենթարկված կողմերի պահպանումը։

Հնարավոր է, որ երկու կողմերի կառավարությունները փոխադարձ համաձայնությամբ վեհաժողովի բանակցությունների ընթացքում առաջադրեն նոր բարեփոխումներ, որոնք կարող են անհրաժեշտ նկատվել, և որոնք այժմ նախատեսել անկարելի է։ Սակայն, այս նոր բարեփոխումների մասին ռուս և անգլիացի ներկայացուցիչների միջև եթե համաձայնություն ձեռք չբերվի. այդ դեպքում Ռուսաստանի և Անգլիայի ներկայացուցիչները վեհաժողովի ընթացքում պարտավոր են հետևելու այս հուշագրի պայմաններին։ Այս փաստաթուղթը ստորագրվել է Լոնդոնում Ռուսաստանի դեսպանի և Անգլիայի վարչապետի կողմից։

30 մայիսի 1878 Լոնդոն — ստորագրություն Շուվալով, Սոլսբերի»

370 Այս հուշագրից բացի կնքվեց մի երկրորդ հուշագիր ևս։ Սրանով անգլիական կառավարությունը վեհաժողովում պահպանում է հյուսիսային և հարավային (Արևելյան Ռումելի) Բուլղարիայի նահանգների վարչական կազմավորմանը Եվրոպային ևս մասնակից դարձնելու, ռուսների կողմից Բուլղարիայի գրավման ժամկետն ու եղանակը քննարկելու և Բուլղարիայի հարավային նահանգին տրվելիք անվան, Դանուբի նավարկության և նեղուցներին վերաբերող խնդիրների քննարկմանը մասնակցելու իր իրավունքը։

Լոնդոնում Ռուսաստանի դեսպանն էլ հայտնում էր, որ, եթե լորդ Դերբիի 1877 թվականի մայիսի 6-ի հայտարարությամբ Անգլիան նեղուցների հարցի մասին գոյություն ունեցող պայմանները համարում է հարմար և օգտակար, ապա ինքն էլ պնդում է, որ պահպանվի գոյություն ունեցող վիճակը։

Դիվանագիտական այս փաստաթղթերից պարզորոշ երևում էր, որ թեև մնում էին վեհաժողովի գումարումից առաջ Ռուսաստանի և Անգլիայի միջև գոյություն ունեցող տարաձայնությունները, այնուամենայնիվ, նրանք հասել էին ձևական համաձայնության։

Անգլիան Ռուսաստանի հետ մայիսի 30-ի համաձայնագիրը կնքելու, ավելի ճիշտ, դեռևս այդ մասին տեղի ունեցող հաղորդագրությունների ընթացքում բանակցություն էր սկսել նաև Բարձրագույն Դռան հետ։ Քանի որ

Ռուսաստանը որոշել էր հաստատվել Անատոլիայի իր գրաված վայրերում, ապա Անգլիան հայտնել է, որ Բարձրագույն Դռան համաձայնությամբ ինքը կարող է արգելք հանդիսանալ Ռուսաստանի հետագա ներթափանցմանը դեպի Անատոլիայի խորքերը, և որ այդ կապակցությամբ հարմար կլիներ Կիպրոս կղզու գրավումը իր կողմից։

Այդ մասին լորդ Սոլսբերին մայիսի 30-ի հեռագրով պաշտոնապես մանրամասն հրահանգներ տվեց Ստամբուլի դեսպան Լայարդին։ Հունիսի 4-ին Ստամբուլում Սաֆվեթ փաշայի և Լայարդի կողմից Կիպրոսի դաշնագիր անվան տակ ստորագրվեց պաշտպանական մի համաձայնագիր, որի բովանդակած հոդվածները հետևյալներն են. եթե Ռուսաստանը Բաթումից, Կարսից, Արդահանից կամ գրաված այլ վայրերից բացի, հետագայում փորձեր կկատարի գրավելու օսմանյան պետության՝ Ասիայում գտնվող և հաշտության վերջնական պայմանագրում չնշված մարզերից որևէ մեկը, անգլիական պետությունը պարտավորվում է համաձայնություն կնքել օսմանյան պետության հետ՝ այդ երկիրը զենքի ուժով պաշտպանելու համար։

Դրա փոխարեն Նորին մեծություն փադիշահը խոստանում է անգլիական պետությանը, որ առաջիկայում կիրա-
371 կանացվի երկու պետությունների միջև որոշվելիք || բարվոք
վարչության և օսմանյան պետության հիշյալ երկրամասում
գտնվող քրիստոնյա հպատակների և այլոց պաշտպանության համար անհրաժեշտ բարենորոգումները։ Այդ պարտավորությունները իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներ ապահովելու նպատակով Նորին մեծություն փադիշահը տալիս է իր համաձայնությունը, որ Անգլիան զորք մտցնի Կիպրոս կղզին և կառավարի այն։

Հուլիսի 1-ի այս պայմանագրին կցվում է նաև կղզու միայն վարչական գործերին վերաբերող հետևյալ հավելվածը։

Պայմանավորվող կողմերից պայմանագրյալ կողմը համաձայնություն է տվել անգլիական պետությանը՝ զորք մտցնելու Կիպրոս կղզին և այն կառավարելու հետևյալ պայմաններով.

Հոդված առաջին. առաջվա նման կղզում պետք է գոյություն ունենա իսլամական շարիաթական դատարան և

պիտի զբաղվի իսլամ հասարակության, հատկապես կրոնական դատերի լուծումով։

Հոդված երկրորդ. Կայսերական Էվքաֆի մինիստրության կողմից կղզու համար նշանակվելու է հատուկ պաշտոնյա։ Այս պաշտոնյան անգլիական կառավարության կողմից նշանակվելիք պաշտոնյայի հետ փոխադարձ համաձայնությամբ տնօրինելու է հիշյալ կղզում գտնվող մզկիթների, գերեզմանատների, իսլամական մեդրեսեների և այլ կրոնական հաստատությունների գույքն ու կալվածքը։

Հոդված երրորդ. Անգլիական պետությունը կղզու հասույթներից վարչական ծախսը գանձելուց հետո նրա ավելցուկը ամեն տարի վճարելու է Բարձրագույն Դռանը։ Այս ավելցուկը որոշվելու է անցյալ հինգ տարվա ընթացքում հասույթի միջին քանակի չափով։ Այդ ժամկետի ընթացքում պետական կալվածքի և կայսերական կալվածքի վաճառքից և կամ սրանց օտարացումից գոյացած գումարները նկատվելու են որպես բացառություն։

Հոդված չորրորդ. Բարձրագույն Դուռը կարողանալու է Կիպրոս կղզում գտնվող պետական հողերը և կայսերական կալվածքները ազատորեն վաճառել կամ վարձով տալ։ Սրանց գները կամ վարձը չի մտնելու երրորդ հոդվածում նշված հասույթի մեջ։

Հոդված հինգերորդ. Անգլիական պետությունը իր պաշտոնյաների միջոցով կարող է գնել հողեր և կալվածքներ։ Հանրային բարեկարգության և կամ այլ հանրային նպատակների համար ազատ, անմշակ հողերն ու թափուր տարածությունները գնելու է մատչելի գներով։

372 ‖ Հոդված վեցերորդ. Ռուսական պետությունը Կարսը կամ վերջին պատերազմի ընթացքում Հայաստանում գրաված վայրերը օսմանյան պետությանը վերադարձնելու դեպքում Կիպրոս կղզին ևս դատարկվելու է Անգլիայի կողմից և 1878 թվականի հունիսի 4-ին կնքված պայմանագիրը կորցնելու է իր ուժը։

* * *

Պետությունների միջև վեհաժողով գումարելու մասին համաձայնություն ձեռք բերելուց հետո այլևս ոչ մի արգելք չէր մնացել, որ իշխան Բիսմարկը հրավերներ ուղարկեր։ Վեհաժողովը բացվելու էր հունիսի 14-ին։ Հրավիրագրերը

կազմված էին խիստ հնարամիտ ձևով, այնպես, որ միրավորյանք չհասցվի հարցերի մեջ այս կամ այն կերպ շահագրգռված պետություններին։

Վեհաժողովին լիազոր ներկայացուցիչ նշանակված անձնավորությունները հետևյալներն էին.

Օսմանյան պետություն. հանրօգուտ շինությանց մինիստր Ալեքսանդր Կարա Թեոդորի փաշա, մարշալ Մեհմեդ Ալի փաշա, Բեռլինի դեսպան Սադուլլահ բեյ։

Գերմանիա. իշխան Բիսմարկ, արտաքին գործերի մինիստրի տեղակալ ֆոն Բյուլով, Փարիզի դեսպան Հոհենլոհե։

Ավստրիա. արտաքին գործերի մինիստր կոմս Անդրաշի. Բեռլինի դեսպան Կարոլի, Հռոմի դեսպան բարոն Հայմերլեհ:

Ֆրանսիա. արտարին գործերի մինիստր պարոն Վադինգտոն, Բեռլինի դեսպան կոմս Սենվալիե, արտաքին գործերի քաղաքական բաժնի տնօրեն պարոն Դեպրե։

Անգլիա. վարչական կոմս Բիկոնսֆիլդ. արտաքին գործերի մինիստր մարկիզ դյու Սոլսբերի, Բեռլինի դեսպան լորդ Օտտո Ռուսել։

Իտալիա. արտաքին գործերի մինիստր կոմս Կորտի. Բեռլինի դեսպան կոմս Դոլոնե։

Ռուսաստան. արտաքին գործերի մինիստր իշխան Գորչակով, Լոնդոնի դեսպան կոմս Շուվալով, Բեռլինի դեսպան պարոն Դոբրիլ։

Վեհաժողովին որպես քարտուղար նշանակվել էին դեսպան Ռադովիչը և Ֆրանսիայի դեսպանության քարտուղար Դյումուլեն, արտաքին գործերի խորհրդականներից Բյուխերը, Բոշը, Հոլշտայնը և Հերբերդ Բիսմարկը։ Ռադովիչի խնդիրն էր նաև կազմել վեհաժողովի արձանագրությունները: Կոմս Անդրաշիի առաջարկով վեհաժողովը միաձայն նախագահ ընտրեց Բիսմարկին։ Գործողությունը հնարավորության չափ արագացնելու նպատակով որոշվեց արձա-
373 նագրությունները || ընթերցելու փոխարեն դրանց տպագրված տեքստերը բաժանել ներկայացուցիչներին։ Առաջին նիստերը գրեթե առանց բացառության նվիրված էին Բուլղարիայի խնդրին։ Բազմաթիվ դժվարություններից և վեհաժողովից դուրս համաձայնություններից հետո հաջողվեց լուծել այդ խնդիրը։

Չորրորդ նիստում մարկիզ դյու Սոլսբերին առաջարկեց, որ Ռուսաստանի հետ կնքված մարտի 30-ի պայմանագրի համաձայն Բալկանները դիտվեն որպես Բուլղարիայի սահման, իսկ Բալկանների հարավային նահանգը անվանվի Արևելյան Ռումելի։ Այս առաջարկի համաձայն զինվորական հանձնաժողովի կողմից սահմանը որոշելու ժամանակ Վառնա նավահանգիստը օսմանյան պետությանը թողնելու, Մեստա քարասուի և Ստրումա քարասուի ավազանները Արևելյան Ռումելիի սահմաններից դուրս հանելու փոխարեն, Սոֆիայի սանջաքը մնալու էր Բուլղարիային։ Արևելյան Ռումելին ուղղակի մնալու էր Նորին մեծություն սուլթանի քաղաքական և ռազմական տիրապետության տակ։ Բազմաթիվ մանրամասնություններ պարունակող Անգլիայի այս առաջարկը ընդունվել է որպես հիմք Բուլղարիայի և Արևելյան Ռումելիի մասին Բեռլինի պայմանագրի առաջին հոդվածից մինչև քսաներեքերորդ հոդվածների համար։ Այս հոդվածների հիմնական բովանդակությունը հետևյալն է.

Բուլղարիան կազմակերպվելու է որպես Օսմանյան կայսրության գերիշխանության ներքո, ինքնավար վարչությամբ հարկատու մի իշխանապետություն։ Բուլղարական պետությունը, որպես քրիստոնյա պետություն, ունենալու է նաև իր ազգային բանակը։

Երկրորդ հոդվածում նշված սահմանները ճշտվելու են տեղերում՝ եվրոպական հանձնաժողովի միջոցով։ Բուլղարիայի իշխանը ազատ կերպով ընտրվելու է ժողովրդի կողմից՝ տերությունների համաձայնությամբ և հաստատվելու է Բարձրագույն Դռան կողմից։ Եվրոպայի մեծ տերություններում իշխանության գլուխ կանգնած գերդաստանների անդամներից ոչ մեկը չպետք է լինի Բուլղարիայի իշխան։ Տռնովոյում Բուլղարիայի երևելիներից կազմված ժողովը, նախքան իշխանի ընտրությունը, կազմելու է իշխանապետության հիմնական օրենքը։ Այն վայրերում, որտեղ բուլղարների հետ միասին ապրում են թուրք, ռումին, հույն և այլ տարրեր, թե ընտրություններում, թե հիմնական օրենքը կազմելու ժամանակ պետք է հաշվի առնվեն նաև այդ համայնքների իրավունքներն ու շահերը։ Ամեն ոք, առանց կրոնի, ծեսի ու սովորությունների խտրության, քաղաքացի-

ական և քաղաքական տեսակետից հավասար է համարվում. կրոնի ու սովորության տարբերությունը արգելք չի կարող լինել յուրաքանչյուրի հանրային ծառայության, պաշտոնի, դիրքի և արհեստի գործադրման համար։

374 ‖ Բուլղարիայի ժամանակավոր վարչությունը մինչև հիմնական օրենքի կազմումը կառավարվելու է ռուսական պետության մի կոմիսարի կողմից։ Օսմանցի մի կոմիսար և սույն պայմանագիրը ստորագրող պետությունների կողմից հատուկ կերպով նշանակված հյուպատոսները պարտավոր են ժամանակավոր կառավարության գործը քննելու և կենսագործելու համար օգնել ռուս կոմիսարին։

Ժամանակավոր վարչությունը պայմանագրի վավերական պատճենների փոխանակման թվականից սկսած ինը ամսից ավելի չպետք է տևի։

Բարձրագույն Դռան հետ կնքված առևտրական, նավարկության և այլ պայմանագրերը առաջվա նման ուժի մեջ են լինելու նաև բուլղարական իշխանապետությունում։ Բուլղարական իշխանապետությունից ուրիշ վայրեր փոխադրվող ապրանքներից ոչ մի տարանցիկ հարկ չպիտի գանձվի։

Հարկը հիմնվելու է իշխանապետության հողերի միջին հասույթի վրա, օսմանյան պետության հանրային պարտքից Բուլղարիային ընկած բաժինն էլ որոշվելու է արդար համամասնությամբ։

Ռուսչուքի և Վառնայի երկաթուղային ընկերության հանդեպ օսմանյան պետության պարտականություններն ու իրավունքները պատկանելու են բուլղարական իշխանապետությանը։ Օսմանյան զորքը այլևս Բուլղարիայում չպետք է մնա։ Հին բերդերը իշխանապետության ծախքով մի տարում կամ հնարավորին չափ ավելի կարճ ժամկետում ամբողջապես քանդվելու են և նրանց տեղ նորերը չպետք է կառուցվեն։ Օսմանյան պետությունը բերդերում մնացած իր սեփական ռազմամթերքը և այլ նյութերը կարող է փոխադրել կամ վաճառել։

Իսլամ և այլ կալվածատերերը իրենց անձնական բնակարանները իշխանապետության սահմանից դուրս կառուցելու դեպքում, Բուլղարիայում ունեցած իրենց կալվածքը կարող են պահել, վարձով տալ կամ տնօրինել փոխանորդի

միջոցով։ Թուրք-բուլղարական մի հանձնաժողովին հանձ-
նարարված է երկու տարվա ընթացքում կարգավորելու պե-
տական և վաքֆային կալվածքների վաճառքի, տնօրինման
եղանակի և օգտագործման մասին եղած գործերը և դրան-
ցում շահագրգռված անձանց շահերին վերաբերող խնդիր-
ները։

Բալկանների հարավային կողմում կազմվելու է «Արև-
մելյան Ռումելի» անունով մի նահանգ, որը վարչականո-
րեն ինքնավար լինելու պայմանով ուղղակի գտնվելու է
Օսմանյան կայսրության քաղաքական և զինվորական իշ-
375 խանության տակ։ ‖ Այս նահանգի սահմանը հյուսիսային
և հյուսիս-արևմտյան կողմից սահմանակից է Բուլղարիա-
յին. նրա ընդգրկած տերիտորիան հիշատակված է տասնը-
չորսերորդ հոդվածում։

Օսմանյան կայսրությունը իրավունք է ունենալու ծո-
վից ու ցամաքից պաշտպանելու այս նահանգի սահմաննե-
րը, այդ սահմանների վրա ամրություններ կառուցելու և
զորք պահելու։ Արևելյան Ռումելիի ներքին ապահովությու-
նը պահպանվելու է ազգային զորքի օժանդակությամբ և
տեղական ոստիկանական զորքերի միջոցով։ Այս զորքի
սպաներն ընտրվում և նշանակվում են օսմանյան պետու-
թյան կողմից։ Օսմանյան պետությունը պարտավորվում է
սահմաններում որպես պահապան զորք չպահել խուժանա-
յին և չերքեզների նման անկանոն զորք։

Նահանգի ներքին կամ արտաքին խաղաղությունն ու
անվտանգությունը սպառնալիքի ենթարկվելու դեպքում
կուսակալի կողմից հրավիրվելու է օսմանյան զորք։ Այդ
դեպքում Բարձրագույն Դուռը այս որոշման և նրա պատ-
ճառաբանության մասին տեղեկություն պետք է տա մեծ
տերությունների Ստամբուլի դեսպաններին։ Արևելյան
Ռումելիի կուսակալը հինգ տարի ժամանակով և մեծ տե-
րությունների համաձայնությամբ ընտրվելու և նշանակվե-
լու է Բարձրագույն Դռան կողմից։ Արևելյան Ռումելիի
հիմնական կանոնագրեր ստեղծելու համար Բարձրագույն
Դռան համաձայնությամբ կազմվելու է եվրոպական մի
հանձնաժողով։ Այս հանձնաժողովը երեք ամսվա ընթաց-
քում ճշտելու է կուսակալի իրավասություններն ու պար-
տականությունները, ինչպես նաև նահանգի վարչական
կարգը, կարգավորելու է դատարանն ու ֆինանսները։

Մինչև նոր կանոնադրության կազմումը եվրոպական հանձնաժողովը լիազորված է Բարձրագույն Դռան հետ միասնաբար վարելու նահանգի ֆինանսական գործերը։

Բարձրագույն Դռան և օտար պետությունների միջև կնքված կամ սրանից հետո կնքվելիք բոլոր տեսակի համաձայնագրերն ու պայմանագրերը, ինչպես նաև պետությունների միջև եղած այլ հանձնարարությունները օսմանյան երկրների այլ վայրերի նման տարածվելու են նաև Արևելյան Ռումելիի վրա։ Օտարահպատակների իրավունքներն ու առանձնաշնորհումներն անպայման պետք է հարգվեն նաև այս նահանգում։ Բարձրագույն Դուռը պարտավորվում է հիշյալ նահանգում ևս հարգել կրոնի ազատության վերաբերյալ պետության ընդհանուր կանոններով բոլոր կրոնների ու սովորությունների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը։

Արևելյան Ռումելիից անցնող երկաթուղիների նկատմամբ ամբողջապես անսասան են մնալու Բարձրագույն Դռան ունեցած բոլոր իրավունքներն ու պարտականությունները։

Բուլղարիայում և Արևելյան Ռումելիում մնացող ռուսական զորքը բաղկացած է լինելու վեց հետևակային և երկու հեծելազորային դիվիզիայից և չի գերազանցելու հի-
378 սուն հազար զինվորից։ ‖ Պարենավորվելու է տեղական ծախսով։ Հիշյալ զորքը պահպանելու է իր հաղորդակցության ճանապարհը ինչպես Ռումինիայի վրայով, այնպես էլ Սև ծովի նավահանգիստների, Վառնայի ու Բուրգազի միջոցով։ Ռուսական զորքը Սև ծովի այս նավահանգիստներում հիմնելու է իրենց բնակության համար անհրաժեշտ զորակայաններ։

Բուլղարիայում և Արևելյան Ռումելիում մնացող ռուսական զորքի մնալու տևողությունը սահմանվել է ինն ամիս, ներկա պայմանագրի փոխանակման թվականից սկսած։

Ռուսական պետությունը հիշյալ ժամկետից հետո երեք ամսվա ընթացքում իր զորքը Ռումինիայի վրայով ամբողջապես դուրս է բերելու իշխանապետությունից։

Բուլղարիային և Արևելյան Ռումելիին վերաբերող հարցերը վեհաժողովին զբաղեցրել էին մինչև հունիսի 25-ի յո-

*թերորդ նիստը։ Հիշյալ նիստում իշխան Բիսմարկը, որպես
կարևոր հարցերից մեկը, առաջ քաշեց Բոսնիայի, Չեռնո-
գորիայի, Սերբիայի ու Ռումինիայի հարցերը, իսկ ավելի
ուշ՝ հույներով բնակեցված նահանգների, Դանուբի, նեղուց-
ների, Անատոլիայի և ռազմատուգանքի հարցերը. ուստի
ութերորդ նիստում խնդրո առարկա դարձավ Բոսնիա-Հեր-
ցեգովինայի խնդիրը։ Կոմս Անդրաշին իր կարդացած հու-
շագրում նշելով, որ Ավստրիան որպես սահմանակից պե-
տություն այդ խնդրի լուծման մեջ մյուս բոլոր պետություն-
ներից ավելի շատ է շահագրգռված, հայտարարեց, որ
«ռուս-թուրքական պատերազմի դրդապատճառը Բոսնիան
և Հերցեգովինան են։ Սահմանում կուտակված մեծաքանակ
զորքը չկարողացավ արգելք դառնալ ապստամբությանն ու
խառնակություններին։ Օսմանյան պետությունը չկարողա-
ցավ զսպել ապստամբությունն ու գաղթը՝ 200.000 հոգի,
թողնելով իրենց տունն ու տեղը, հեռացան։ Երեք տարի շա-
րունակ Ավստրիան սպարենավորման համար ծախսել է
տասը միլիոն կռոն»։*

*Նախնական հաշտության պայմանագրի տասնչորսե-
րորդ հոդվածով Բոսնիա-Հերցեգովինայի համար առա-
ջարկված ինքնավարությունը ավստրիական պետությունը
անհնարին է համարում։*

*Ավստրո-Հունգարական պետությունը նկատի ունենա-
379 լով, որ Սերբիայի և Չեռնոգորիայի սահմաններում || կա-
տարված փոփոխությունների պատճառով կփոխվի նաև
Բոսնիայի և Հերցեգովինայի աշխարհագրական դիրքը, հայ-
տարարում է, որ այս երկու երկրների սահմանները իրար
մոտեցնելը խանգարելու է Ավստրո-Հունգարիայի հաղոր-
դակցությանը արևելյան այլ երկրների հետ, վնասելու է
առևտրական շահերին։ Լորդ Սոլսբերին առաջարկեց, որ
Բոսնիան և Հերցեգովինան գրավվի և կառավարվի Ավստ-
րիայի կողմից։ Այս գաղափարը վաղուց գոյություն ուներ,
և Ռուսաստանի ու Ավստրիայի միջև արդեն որոշվել էր վա-
ղեմի և գաղտնի մի դաշնագրով։ Իշխան Բիսմարկը իսկույն
համաձայնվեց այս առաջարկին, սակայն Կարա-Թեոդորի
փաշան մանրամասն հիշատակագրով մերժեց, օսմանյան
ներկայացուցիչները նույնպես հրաժարվեցին հավանու-
թյուն տալ։ Այդ պատճառով Բիսմարկը միջամտելով և
խոսքը ուղղելով մեր ներկայացուցիչներին, մեծամասնու-*

թյան անունից բուռն ու խիստ լեզվով ասաց, որ վեհաժողովը գումարվել է ոչ թե օսմանյան պետության ցանկացած աշխարհագրական դիրքը պաշտպանելու, այլ Եվրոպայի ներկա և ապագա խաղաղության և անդորրության համար։ Եթե չլիներ վեհաժողովը, օսմանյան պատվիրակները սաիպված պիտի լինեին նույնությամբ ընդունել Սան-Ստեֆանոյի պայմանագրի բոլոր պայմանները, մինչդեռ վեհաժողովը իրենց է վերադարձնում Բոսնիայից էլ մեծ և բարեբեր մի նահանգ։ Օսմանյան ներկայացուցիչները այս կապակցությամբ Ստամբուլ կատարած հարցման պատասխանի հիման վրա, վեհաժողովի հունիսի 4-ի նիստում հայտնեցին իրենց հավանությունը Սոլսբերիի առաջարկին և վեհաժողովն ընդունեց քսանհինգերորդ հոդվածում գրված հետևյալ որոշումը.

«Բոսնիայի և Հերցեգովինայի նահանգները պետք է կառավարվեն Ավստրո-Հունգարական պետության կողմից և այդ երկու նահանգները ուղարկվելու է հիշյալ պետության զորքը։ Քանի որ Ավստրո-Հունգարական պետությունը չի ստանձնում Նովի Փազար սանջաքի կառավարումը, այդ սանջաքը մնալու է օսմանյան վարչության տակ. միայն ներկա քաղաքական հանգամանքների բերումով և ճանապարհների անվտանգությունը պահպանելու նպատակով Ավստրիական պետությանը իրավունք է վերապահվում այս սանջաքում պահել պահնորդական կետ և ստեղծել զինվորական և առևտրական հաղորդակցություն»։

Վեհաժողովի ութերորդ նիստում քննարկման դրվեց Սան-Ստեֆանոյի պայմանագրում Սերբիային վերաբերող երրորդ հոդվածը, որին իբրև եզրակացություն Բեռլինի պայմանագրի երեսունչորսերորդից մինչև քառասուներկուերորդ հոդվածներով արձանագրական հանձնաժողովի կողմից առաջարկվեց հաստատել Սերբիայի անկախությունը, առանց հաշվի առնելու կրոնական և սովորությունների տարբերությունները, օսմանյան հանրային պարտքի մի
330 մասը ստանձնելու || և իրեն որոշ չափով հողեր թողնելու պայմանով։ Այն հողերը, որ առաջարկվում էին Սերբիային, կազմում էին 11079 քառակուսի կիլոմետր, իսկ բնակչությունը 1879 թվականի վիճակագրության համաձայն՝ 506,934 մարդ։ Այս հողերը, որոնք ընդգրկում էին Նիշի,

Պիրոտի, Իվրանիյեի և Դոպլիչայի գավառները, Սերբիային միացնելով ամբողջ բնակչությունը հասնում էր 1.860.824 մարդու։

Իններորդ նիստում խորհրդակցության դահլիճում ընդունվեցին Հունաստանի արտաքին գործերի մինիստր Դելի Յանին և Բեռլինի դեսպան Ռանկաբեն, որոնք վեհաժողով էին ուղարկվել որոշ խնդրանքներ ներկայացնելու առաջադրանքով։ Դելի Յանին կարդաց մի հիշատակագիր, որը արտահայտում էր հույներով բնակված, բայց Հունաստանից անջատ մնացած օսմանյան նահանգների շահերը, Հունաստանի ներկա դժվարությունները, պահանջելով առայժմ իրենց միացնել միայն Կրետե կղզին և սահմանակից օսմանյան հողերը։

Հույն ներկայացուցիչների հեռանալուց հետո Սոլսբերին խնդրեց, որ վեհաժողովը ընդունի և լսի Ռումինիայից եկած պատգամավորներին։ Նա հայտարարեց. «Քանի որ այս բարձր ժողովը լսեց բացատրությունները մի ազգի, որն ուզում է գրավել մեկ ուրիշ երկրի նահանգները, խղճի և արդարության դեմ է չլսել բացատրությունները նաև այն երկրի, որի ցանկությունն է միայն պահպանել իր ձեռքում եկած հողերը»։

Իշխան Բիսմարկը, ի հաճույս Ռուսաստանի, այն կարծիքին էր, որ ռումինացի պատգամավորներին այս ժողովում ընդունելը դժվարությունները ավելացնելուց բացի ուրիշ արդյունքի չի հանգեցնի։ Գորչակովը ևս չնայած դեմ չէր ընդունելուն, բայց համաձայնվեց Բիսմարկի մտքին։ Ի վերջո Բիսմարկը մեծամասնությանը ենթարկվեց։ Որոշվեց ընդունել ռումիններին։ Հուլիսի 10-ին տեղի ունեցած նիստում Ռումինիայի վարչապետ Բրատիանուն և արտաքին գործերի մինիստր Քոկալնիչանուն ներկայացան Եվրոպայի ներկայացուցիչներին։

Սրանք արդեն նախապես մի հիշատակագիր ուղարկել էին վեհաժողովին և դրանում կատարել էին այս ոգով մի հայտարարություն.

«Ռուսաստանի կողմից առաջարկված 1877 թվականի ապրիլի 16-ի պայմանագրի կնքման ժամանակ Ռումինիան
381 առաջարկել էր իր երկրի ներկա հողային տիրապետության անվերապահ պաշտպանությունն ու պահպանումը. այդ բանը խոստացել էր նաև Ռուսաստանը։

Ռումինիայի օգնությամբ այս վերջին պատերազմը հաջողությամբ ավարտելուց հետո կոմս Իգնատևը Բուխարեստ եկավ, իր հետ ունենալով իշխան Գորչակովի մի գրությունը։ Այս գրության մեջ առաջին անգամ պաշտոնապես խոսվում էր Ռուսաստանի և Ռումինիայի միջև հողերի փոխանակման մասին, սակայն Բեսարաբիայի անունը դեռևս չէր հիշատակվում։ Բայց Իգնատևը չթաքցրեց ու հայտնեց, որ փոխանակման համար ցանկալի վայրը Բեսարաբիան է։ Ռումինական կառավարությունը ստիպված էր մերժել այդ առաջարկը։ Նախկինում Դանուբի իշխանապետություններ կոչված այս երկիրը չէր կարող կորցնել այս գետի մի կարևոր մասը, որի շնորհիվ ստացել էր իր անունը, զարգացած առևտուրը և աշխարհագրական դիրքի օգուտները։ Ռումինիան 1812 թվականին առաջին անգամ կորցնելով ամբողջ Բեսարաբիան, 1856 թվականին այս երկիրը մասնակի կերպով ետ ստանալուց հետո ավելի լավ է գնահատում նրա օգուտները։ Այսպիսով, իր երկրի մի մասը կազմող և իրեն ծովին կապող նահանգը ձեռքից բաց չթողնելու գործին էլ ավելի մեծ կարևորություն է տալիս։

Պատերազմում ցուցաբերած իր օժանդակությունից օգտվելուց հետո Սան-Ստեֆանոյի պայմանագիրը Ռումինիային դնում է մի պայմանագրի դիմաց, որի կնքումից ինքը տեղեկություն չի ունեցել։ Այս պայմանագիրը շոշափում է իր կենսական շահերը։ Այդ պատճառով ռումինական կառավարությունը պահանջում է, որ հողերից մի փոքրիկ մասն անգամ չվերցվի, որ ռումինական հողերը ճանապարհ չդառնան ռուսական բանակների համար, իրեն մնան Դանուբում գտնվող կղզիները, ընդհուպ մինչև Օձի կղզիները, Դանուբի գետաբերանը, տրվի համապատասխան հատուցում, վերջնականորեն հաստատվեն նաև իր անկախությունն ու չեզոքությունը*։

Վեհաժողովում Ռումինիայի արտաքին գործերի մինիստր Քոգալնիչանուն ևս նույն իմաստով ճառ արտասա-

* Գորչակովը այս խնդրում այնքան էր առաջ գնացել, որ նույնիսկ ասել էր, թե Դոբրուջայի և Բեսարաբիայի փոխանակությունը չընդունվելու դեպքում Ռումինիայի բանակի զենքը կվերցվի։ Այդ խոսքը հասցրին մինչև Կարլոս իշխանին, որն ասել է. «նրանից առաջ զենքը վերցնելու են իմ ձեռքից»։

նեց։ Ռումինիայի վերաբերյալ վեհաժողովի կայացրած որոշումների մասին կխոսենք հետագայում, սակայն պարզ լի
382 նելու համար այստեհետև || պայմանագրի հոդվածների մասին խոսելու ենք հնարավորին չափ հաջորդականությամբ.

Քսաներեքերորդ հոդվածով Բարձրագույն Դուռը հանձն էր առնում լրիվ կենսագործել 1868 թվականին Կրետե կղզու համար կազմված հիմնական կանոնադրության արդարացի նկատված բարեփոխումների պայմանների գործադրումը, և օսմանյան մյուս նահանգներում ևս ստեղծելու նման հաստատություններ։ Բարձրագույն Դուռը այս հիմնական կանոնադրությունները կազմելու առաջադրանք ունեցող հանձնաժողովի նախագծերը կենսագործելուց առաջ ստանալու էր Ռումելիի եվրոպական հանձնաժողովի կարծիքը.

Ֆրանսիական և գերմանական պետությունները տասներեքերորդ նիստում Բարձրագույն Դռանն ու Հունաստանին առաջարկել էին համաձայնության գալ Թեսալիայում և Յանինայում սահմանի ուղղում կատարելու համար։

Սակայն վեհաժողովը, քսանչորսերորդ հոդվածով որոշեց, որ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում պետությունները պահպանեն իրենց միջնորդության իրավունքը։ Այս հոդվածի հիման վրա է, որ հետագայում 1881 թվականին Հունաստանը տևականորեն պատերազմական սպառնալիքով իր երկրին ավելացրեց Յանինայի հարավային մասը և համարյա ամբողջ Թեսալիան, այսինքն՝ մոտավորապես 300,000 բնակչություն ունեցող 20,000 քառակուսի կիլոմետր հողերը։

Քսանվեցերորդ հոդվածը վերաբերում էր Չեռնոգորիայի անկախությանը, որը լինելով Սերբիայի համար ընդունելի պայմաններում, հաստատվելու էր թե՛ Բարձրագույն Դռան և թե՛ այդ իշխանությունը դեռևս անկախ չճանաչած պետությունների կողմից։ 28-ից մինչև 34-րդ հոդվածներում խոսվում էր Չեռնոգորիայի նոր սահմանների մասին։ Այս կերպ Չեռնոգորիայի տերիտորիան ըստ էության կազմելով 4366 քառակուսի կիլոմետր, 5019 քառակուսի կմ և ընդարձակվեց և բնակչությունն էլ ավելացավ 50000-ով։ Չեռնոգորիային միացված վայրերն էին Նիկշիցը, Պոդգորիցան և Բար նավահանգիստն ու նրա շրջակայքը։ Օլկոն

նավահանգիստը և շրջակայքը միացվեցին օսմանյան պետության, իսկ Սպիզան Դալմացիային։ Չեռնոգորիային տրվեց Բոյանա գետում նավարկելու իրավունք, սակայն առանց ռազմանավեր և ռազմական դրոշ ունենալու։ Բար նավահանգիստը և Չեռնոգորիայի բոլոր ջրերը փակ պիտի մնային բոլոր պետությունների ռազմանավերի համար։ Ցույց տալու համար, թե Ռուսաստանի դեմ ուղղված այս պայմանի վրա որքան է եղել Ավստրիայի ազդեցությունը, որոշվեց, որ Բար նավահանգստի և Չեռնոգորիայի ծովափի երկայնքով ծովային և սանիտարական կարգապահությունը իրականացվի Ավստրիայի կողմից և Չեռնոգորիան ընդունի Դալմացիայի ծովային օրենքները, դրա փոխարեն Ավստ-
383 րիան ‖ հանձն առավ իր հյուպատոսների միջոցով պաշտպանել Չեռնոգորիայի առևտրական դրոշը։

Վեհաժողովը հետո ինքն էլ պետք է հասկացած լինի այս որոշումների ամբողջ արտակարգությունը, որ երեսունմեկերորդ հոդվածով որոշել է Չեռնոգորիայի քաղաքական պաշտոնյաների և ուրիշ խնդիրների մասին խորհրդակցել ուղղակի Բարձրագույն Դռան հետ։ Բեռլինի պայմանագրի վավերական պատճենների փոխանակումից ամենաշատը քսան օր հետո Չեռնոգորիայի զորքը պետք է հեռանար նոր սահմանից դուրս գտնվող դիրքերից։ Չեռնոգորիան էլ իրեն թողնված հողերի փոխարեն պետք է իր վրա վերցներ օսմանյան պարտքի մի մասը։

Քառասուներեքերորդ հոդվածը հաստատում է Ռումինիայի անկախությունը՝ հաջորդ հոդվածում նշված պայմանների սահմանում։ Քառասունհինգերորդ հոդվածում ասվում էր. «Ռումինիայի իշխանապետությունը Ռուսաստանի վեհափառ կայսրին է վերադարձնում Բեսարաբիայի այն մասը, որը 1856 թվականի Փարիզի պայմանագրով անջատված էր Ռուսաստանի երկրներից»։ Դրա փոխարեն քառասունվեցերորդ հոդվածով Դանուբի գետաբերանում գտնվող կղզիները և Օձի կղզիները, Քիլիա, Սինե, Մահմուդիյե, Իսաքչի, Թուլչի, Մաչին, Բաբադաղ, Խարսուհ, Քյուսթենջե և Մեջիդիյե գավառակները պարունակող Թուլչիի սանջաքը միացվում էր Ռումինիային։ Այս գավառակների վերջնական սահմանները պետք է ճշտվեին և որոշվեին Բուլղարիայի սահմանը որոշելու համար կազմվելիք եվրոպական հանձնաժողովի կողմից։

Դանուբ գետի նավարկության վերաբերյալ կետերը հիշատակվել են պայմանագրի 52-ից մինչև 57-րդ հոդվածներում։ Որոշվել է քանդել Թիմուրքափուններից մինչև Դանուբի գետաբերանը գտնվող բոլոր բերդերն ու ամրությունները և նորեր չշինել։ Դանուբի հանձնաժողովում լինելու է նաև Ռումինիայի կողմից մի անդամ, և այս հանձնաժողովի իրավասությունն ու ֆունկցիաները տարածվելու են մինչև Գալաց։ Թիմուրքափուններից մինչև Գալաց երթևեկության և գետի կարգապահության մասին կանոնադրությունը ստեղծվելու է այդ հանձնաժողովի միջոցով, իսկ այդ հանձնաժողովի կազմում լինելու են նաև գետեզրային պետությունների ներկայացուցիչները։ Թիմուրքափուններում և սահանքներում նավարկության արգելքները վերացնելու համար անհրաժեշտ միջոցառումների պարտականությունը հանձնվել է Ավստրո-Հունգարական պետությանը։ Գետի այդ մասում գտնվող եզրային պետությունները այս միջոցառումների համար տրամադրելու են անհրաժեշտ դյուրություններ։

Մինչև հունիսի 6-ին տեղի ունեցած տասնչորսերորդ
384 նիստը || Անատոլիայի սահմաններին վերաբերող խնդիրների պատճառած դժվարությունների նկատմամբ վեհաժողովի գործադրած բոլոր ջանքերը կատարելապես ապարդյուն մնալու վտանգին էին ենթարկվել։ Անգլիական և ռուսական պետությունները իրենց զորքերը դեռ չէին զորացրել, իրար հանդեպ գտնվում էին իբրև երկու անհաշտ թշնամիներ, որովհետև Անգլիան վեհաժողովի դեռևս սկզբնական նիստերին վճռական դիմադրություն էր ցույց տալիս Ռուսաստանի՝ որպես ռազմատուգանք պահանջած դրամական մեծ գումարը հողային զիջումներով վճարելուն։ Իշխան Բիսմարկը, հասկանալով, որ վեհաժողովում չպետք է կարողանա հաշտեցնել այս երկու կողմերը, վեհաժողովից դուրս գործադրած հնարամիտ միջոցներով կարողացավ երկու կողմերին էլ ստիպել մեծ մասամբ հրաժարվել իրենց մտադրություններից։ Չնայած վեհաժողովի հունիսի 6-ի հայտնի նիստը չափազանց լուրջ էր, բայց այնտեղ տեղի ունեցան նաև ծիծաղաշարժ երևույթներ։

Գորչակովը նիստի սկզբում արեց հետևյալ հայտարարությունը։ «Ամենից ավելի Ռուսաստանի ցուցաբերած հաշտվողական մտքի և փոխադարձ ներողամտության

շնորհիվ է, որ ժողովը առաջընթաց քայլ է կատարում դեպի ամբողջ Եվրոպայի շահերին համապատասխանող Բեռլինում գումարված բարձր անձնավորություններին արժանի ու վայել հաշտության ու խաղաղության ապահովումը, որը բանակցությունների նպատակակետն է։ Այսօրվա նիստը հատկացվել է մի այնպիսի խնդրի, որը գծուծ շահախնդրությունից ազատ, խղճով և արդարամտությամբ լուծելու դեպքում բարվոք կերպով կամբողջացներ մեր հետապնդած բարի գործը։ Մենք թողնում ենք Էրզրումը, Բայազիդն ու Ալաշկերտը։ Այս վերջին երկու կետերը կազմում են քարավանների և Իրանի առևտրական արքունի ճանապարհը։ Բացի դրանից, ես արտոնված եմ հայտնելու, որ իմ օգոստափառ վեհապետը, գործադրելով իր արքայական իրավունքը, Բաթումը հայտարարել է ազատ նավահանգիստ։ Այս որոշումը համապատասխանում է բոլոր առևտրական ազգերի և, մասնավորապես, ամենից ավելի շատ առևտրական նավերի տեր Անգլիայի նյութական շահերին։ Այս օրվա նիստում ես իմ խոսքը վերջացնում եմ, կրկնելով իմ այն հույսը, որ մենք մի քայլ պետք է կատարենք դեպի բարձրագույն նպատակակետը, որը մեր ժողովի պահանջն է»։

Իշխան Բիսմարկը այս հայտարարության հայտնի ազդեցությունը դիմավորեց ծափահարություններով, որից հետո լորդ Բիկոնսֆիլդը արտասանեց բավական երկար և մանվածապատ մի ճառ, որով ընդհանուր առմամբ ինքն էլ համաձայնվեց Ռուսաստանի մտքին։ Այս կապակցությամբ գնահատական կարծիքներ հայտնեցին նաև Կոմս Անդրա-
385 շին, Վադինգտոնը և Կորտին։ || Այնուհետև իշխան Բիսմար-
կը Սան-Ստեֆանոյի պայմանագրի այս խնդրին վերաբերող իններորդ հոդվածը ընթերցեց հետևյալ կերպ.

«Ռուսաստանի կայսրը, նկատի առնելով օսմանյան պետության ֆինանսական անձկությունը և օսմանյան պետության ցանկությունը, ընդունում է, որ ռազմատուգանքի մեծագույն մասը հատուցվի ներքոհիշյալ հողերի զիջումով»։

Ինչպես վերևում տեսանք, այս նիստում Ռուսաստանի կատարած հայտարարությանը Անգլիայի անունից լորդ Բիկոնսֆիլդի տված պատասխանից հետո լորդ Սոլսբերին հանկարծ, քնից արթնացածի նման, վեր կացավ և հետևյալ դիտողությունն արեց.

«Բաթումին տիրելուց հետո Սև ծովի ազատության համար վտանգ ստեղծելու երկյուղից դրդված ես առարկություններ էի կատարել Սան-Ստեֆանոյի պայմանագրի տասնիններորդ հոդվածի որոշ կետերի մասին։ Այսօր Ռուսաստանի առաջարկած փափկանկատ զիջումները, որքան ես ճիշտ հասկացա, ինձ թվում է, պետք է ցրեն այդ մասին իմ ունեցած մտահոգությունները։ Ինձ վախեցրել էր նաև Բայազիդի գրավումով Իրանի առևտրական ճանապարհը խափանելու խնդիրը։ Ալաշկերտի հովտի նկատմամբ Ռուսաստանի հայտնած անշահագրգռվածությունը ցույց տվեց, որ այլևս անտեղի են նաև այս երկյուղները, միայն հարկավոր է հաշվի առնել ռուսական տիրապետության տակ մտնել չցանկացող 50.000, իսկ անգլիացիների ենթադրությամբ 200,000-ի չափ, անվեհեր լազերի շահերը»։

386 ‖ Լորդ Սոլսբերիի ուշադրության արժանի այս արտահայտությունները պայմանագրի 58-ից մինչև 61-րդ հոդվածներում փոխակերպվեցին հետևյալ կերպ. «Բարձրագույն Դուռը Ասիայում՝ Արդահանի, Կարսի և Բաթումի հողերը Բաթումի նավահանգստի հետ միասին Ռուսաստանի հին սահմանների և նոր սահմանների միջև ընկած հողերը թողնում է ռուսական պետությանը։ Ռուսաստանի կայսրը հայտարարում է, որ Բաթումը հիմնականում առևտրական նավահանգիստ լինելու համար մտադիր է դարձնել ազատ նավահանգիստ։ Սան-Ստեֆանոյի պայմանագրի տասնևբորդ հոդվածի համաձայն Ռուսաստանին թողնված Ալաշկերտի հովիտը և Բայազիդ քաղաքը վերադարձվելու են օսմանյան պետությանը։ Բարձրագույն Դուռը օսմանյան պետության և Իրանի սահմանը կարգավորող անգլո-ռուսական հանձնաժողովի որոշմամբ Կոթուր քաղաքը իր հողերի հետ միասին թողնում է Իրանին»։

Այդ միջոցին Սերբիայի արտաքին գործերի մինիստր Ռիստիչը և Իրանի ներկայացուցիչ Մելքում խանը, հետևելով Հունաստանի և Ռումինիայի օրինակին, վեհաժողովին իրենց ցանկությունները հաղորդելու համար ժամանել էին Բեռլին։

Վեհաժողովը հուլիսի 13-ին գումարեց իր քսաներորդ և վերջին նիստը։ Այդ նիստում կոմս Անդրաշին բոլոր պատվիրակների անունից իշխան Բիսմարկին խորին շնոր-

հակալությունն հայտնեց բանակցությունները ղեկավարելու գործում ցուցաբերած արտակարգ ջանքերի, իսկ գերմանական կայսերական գերդաստանին՝ վեհաժողովի հանդեպ ցույց տված լավ ընդունելության համար։ Այնուհետև ստորագրվեց պայմանագիրը յոթ օրինակից։ Իշխան Բիսմարկը հայտնեց բանակցությունները ավարտվելու մասին և կոմս Անդրաշին փոխադարձաբար արտասանած ճառում հայտնեց այն հույսը, որ ամբողջ Եվրոպան գոհունակությամբ պիտի ընդունի վեհաժողովի աշխատանքը և իր ուղերձը վերջացրեց հետևյալ խոսքերով. «Որքան էլ հնարավոր չեղավ կատարել Եվրոպայի հասարակայնության ցանկությունները, բայց պատմությունը վեհաժողովի գաղափարների և դիտավորությունների մասին պիտի տա արդար վճիռ։ Աստծու կամեցողությամբ Եվրոպայի համաձայնությունը պիտի մնա հաստատուն և իմ հույսը կատարյալ է, որ բանակցությունների ընթացքում տեղի ունեցած անձնական և անկեղծ հարաբերությունները պետությունների միջև պիտի զորացնեն ու ամրացնեն լավագույն հարաբերությունները»։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բեռլինի պայմանագրով կատարված տերիտորիալ փոփոխությունները ամբողջապես փոխեցին Եվրոպայի քարտեզը, և այդ աշխարհամասում վերանայվեցին երեք մեծ տերությունների և հինգ փոքր պետությունների սահմանները։

387 Բացառությամբ Բեսարաբիայի, այդ բոլոր փոփոխությունները կատարվեցին ի վնաս օսմանյան պետության, և մեր պետությունը կորցրեց Եվրոպայում ունեցած հողերի և ժողովրդի երկու հինգերորդից ավելին։

Բեռլինի պայմանագրով պետության կորցրած հողերը և բնակչությունը ներկայացնում են հետևյալ պատկերը (տե՛ս 153 էջի աղյուսակները)։

Այսպիսով, երբ օսմանյան պետությունը պատերազմից առաջ Եվրոպայի աշխարհամասում ուներ 365.300 քառակուսի կիլոմետր հող, Բեռլինի վեհաժողովից հետո մնաց երկու հարյուր հազար քառակուսի կիլոմետրից պակաս հող, իսկ ընդհանուր բնակչությունն էլ տասնմեկ միլիոնից

կրճատվեց մինչև չորս միլիոն վեց հարյուր հազարի։ Բացի դրանից նա կորցրեց նաև Ռումինիայի և Սերբիայի նկատմամբ ունեցած գերիշխանական իրավունքը։

	Քառ. կմ.	Բնակչություններ
Բուլղարիայի իշխանապետություն . . .	69.000	2.700.000
Դոբրուջայի Ռումինիային կցված մասը . . .	14.400	170.000
Դանուբի, Բիթոլի և Կոսովո նահանգներից Սերբիային կցված վայրերը	7.200	280.000
Ավստրիայի կողմից գրավված Բոսնիայի նահանգը .	58.700	1.100.000
Բոսնիայից և Ալբանիայից Չեռնոգորիային կցված վայրերը	4.700	50.000
Յանինայի նահանգից մեծամասամբ հարմար նկատած Հունաստանին թողնվելիք վայրերը . . .	12.000	300.000
Ընդամենը . .	166.000	4.600.000

Բեռլինի պայմանագրով Անատոլիայում և հունիսի 4-ի Կիպրոսի պայմանագրով կորցրած վայրերը հետևյալներն են.

	Քառ. կմ.	Բնակչությունը
Էրզրումի և Տրապիզոնի նահանգներից Ռուսաստանին կցված հողերը	36.000	700.000
Իրանին թողնված Կոթուրի հողերը	150	5.000
Անգլիայի կողմից գրավված Կիպրոս կղզին . .	10.300	150.000
Ընդամենը՝ . . .	46.450	855.000

388 || Այս հաշվի համաձայն օսմանյան պետությունը 1293 (1878) թվականի պատերազմի վերջին կորցրեց հինգ և կես միլիոն բնակչություն ունեցող 210.000 քառակուսի կիլոմետր տարածությամբ երկրամաս։ Եթե Սան-Ստեֆանոյի պայմանագիրը կենսագործվեր, մեր կորցնելիք վայրերը սրանից էլ ավելի շատ լինելու չէին։ Այնուամենայնիվ, Բեռլինի պայմանագիրը մեզ համար Սան-Ստեֆանոյի պայմանագրի համեմատությամբ շատ ավելի օգտակար է։ Սան-Ստեֆանոյի պայմանագրի համաձայն երկիրը բաժանվում

եր իրարից անջատ չորս մասի, իսկ Բեռլինի պայմանագրից հետո Եվրոպայում մեր երկրամասը մնաց որպես բնական սահմաններով շրջափակված միացյալ և երկարավուն մի հողամաս։

Բեռլինի վեհաժողովի արդյունքները Եվրոպայում ծնեցին չափազանց այլազան կարծիքներ։ Անգլիական պատվիրակներին իրենց երկիրը վերադառնալու ժամանակ դիմավորեցին խիստ աղմկալի ծափահարություններով։ Արդարև. վեհաժողովից առաջ եղավ մի ժամանակ, երբ անգլիացիները հասել էին Եվրոպայում իրենց վարկն ու ազդեցությունը կորցնելու աստիճանին։ Անգլիական պատվիրակները վեհաժողովում իրենց վարկն ու պատիվը վերականգնելու բարոյական հաջողությունից բացի, ապահովել էին նաև բավականաչափ նյութական շահ։ Անգլիան ժամանակ չկորցրեց Կիպրոսի պայմանագիրը կիրառելու համար։ Հունիսի 9-ին երկու դրահանավ 1700 անգլիական զինվոր ափ հանեց Լարնաքայում։ Սամիհ փաշան հայտարարեց, որ Կիպրոս կղզին թողնվել է Անգլիային։

Տասնութ փոխադրանավեր հուլիսի 18-ին Կիպրոս փոխադրելու համար Մալթայից վերցրին վեց գունդ հետևակ, մի մարտկոց թնդանոթ և բավական քանակությամբ հեծելազոր։ Հուլիսի 23-ին այս զորամասերը հասան Կիպրոս։ Նրանց հետ կային նաև մեծ քանակությամբ մեքենաներ և գործիքներ ճանապարհներ ու ամրություններ կառուցելու համար։ Հազիվ Կիպրոս հասած, նրանք սկսեցին աշխատել ճանապարհներ կառուցելու, ջրուղիներ և ջրամբարներ շինելու ու մաքրելու և երկիրը առողջապահական տեսակետից բնակության հարմար վիճակի բերելու համար։

Ինչպես Անգլիայում եղավ, վեհաժողովը Ռուսաստանում այնքան էլ գոհունակություն չառաջացրեց։ Սակայն թերթերը կարողացան ժողովրդին հասկացնել, որ վեհաժողովում ռուս ներկայացուցիչների կատարած ստիպողական զիջումները վնաս չեն պատճառում Սան-Ստեֆանոյում շահված մեծ արդյունքներից և ոչ մեկին։ Պաշտոնական թերթը, հրատարակելով մի ծավալուն հոդված, հայտնեց, որ Բեռլինի վեհաժողովը նշանակում է մի մեծ քայլ դեպի Թուրքիայում ապրող բոլոր քրիստոնյաների ազատագրության

389 համար հետապնդված նպատակը։ Դրանից հետո || Ռուսաս-

տանը զբաղվեց Ռումելիում գտնվող իր զորքը ետ քաշելու գործով. այդ զորքը ծովային ճանապարհով փոխադրվեց Սև ծովի նավահանգիստները։

Կիպրոսի պայմանագրի կնքումը, որը տեղի էր ունեցել առանց ֆրանսիական դիվանագետների դիտության, թեև դժգոհություն էր առաջացրել Ֆրանսիայում, բայց այդ վրդովմունքը երկար չտևեց։

Իտալիայում դժգոհությունը ավելի մեծ և տևական եղավ։ Քանի որ Բեռլինի պայմանագիրը Իտալիային ոչ մի օգուտ չէր ապահովում, ոմանք միտինգներ կազմակերպեցին Տրենտինոյի և Տրիեստի միացման համար, ոմանք առաջարկեցին երկրին կցել Թունիսը, բայց քանի որ կառավարությունը կարևորություն չտվեց այդ ցույցերին, դրանք հետզհետե դադարեցին։

Ավստրիայում հունգարները ի վերջո հրաժարվեցին Բոսնիայի և Հերցեգովինայի գրավմանը դիմադրելուց։

Վեհաժողովի որոշումները թեև հուսահատության մատնեցին Ռումինիային, բայց իշխան Կարլոսը հասկացավ, որ դիմադրությունը այլևս իմաստ չունի և մի հայտարարությամբ ժողովրդին համակերպության և հանդարտության հրավիրեց։

Սերբիան շատ գոհ էր Բեռլինի պայմանագրից, որովհետև Սան-Ստեֆանոյի պայմանագրով իրեն կցված վայրերից բացի վեհաժողովում շահել էր ևս 3.200 քառակուսի կիլոմետր տարածություն և 54000 բնակչություն։ Իսկ Չեռնոգորիան Բեռլինում կորցրեց Սան-Ստեֆանոյի պայմանագրով շահած վայրերի կեսը, սակայն իշխան Նիկիտան չցանկացավ զայրացնել Ավստրիային։ Բոսնիայի և Հերցեգովինայի գրավման դեմ այդ նահանգներում ծագելիք հնարավոր ապստամբությանը օգնելու գործում ամբաստանության տակ չընկնելու համար արգելեց իր հպատակներին մտնել այդ երկու նահանգները։ Հունաստանը Բեռլինի պայմանագրով իրեն տրված խոստումների կենսագործման համար անմիջապես բանակցություն սկսեց Բարձրագույն Դռան հետ։

Ինչ վերաբերում է այն հարցին, թե Բեռլինի պայմանագիրը օսմանցիների կողմից ինչպիսի ընդունելության արժանացավ, ապա այդ ժամանակ մեզանում հասարա-

կական կարծիքը որոշ չափով հակասական էր. Ոմանք
հայտնում չին իրենց ուրախությունն ու գոհունակությունը։
Պաշտոնյաների դասը բախտավոր էր ու երջանիկ, որ հա-
կառակ պետության կորցրած այդքան վայրերին, իրենց
պաշտոնը վարելու համար դեռ մնացել էր մի երկիր, կո-
ղոպտելու համար մի ժողովուրդ և դատարկելու համար մի
գանձարան։ Գործերի այսպես հեշտությամբ իրենց հունը
մեջ մտնելու նման ընթացքից, մանավանդ, շատ գոհ էր
Աբդուլ Համիդը, որովհետև, Ստամբուլը իր պալատներով
թողնելով. Անատոլիայի խորքերը դաղթելու աստիճանին
հասած Աբդուլ Համիդը կարող էր այլևս մայրաքաղաքում
390 մնալ ||։ Արդարև, իր նախնիների նվաճող բռան մեջ առնր-
ված վայրերից շատերը իր չարաբաստիկ իշխանության
առաջին իսկ տարիներին ձեռքից բաց էր թողել, կորցրել,
սակայն նրա ինչի՞ն էր պետք. նա նորից կմնար իր պալա-
տում, անձնատուր կլիներ իր զվարճություններին և հա-
ճույքներին, միահեծան բռնակալի իր տենչանքը կատարել
կտար, իսկ մնացյալը կթողներ Աստծու շնորհին։

Սակայն կենտրոնական կառավարության վրա վստահություն ունենալով պատերազմում ֆիզիկական և նյութական այսքան դժհողություն հանձն առած ազգին Բեռլինի պայմանագրով հասցված վիշտն ու ցավը այն աստիճանի ածել էր, որ կառավարությունը վերջ ի վերջո ընդունեց հիշյալ պայմանագրի իրեն համար նպաստավոր պայմանները, իսկ աննպաստ, վնասակար պայմանների կենսագործումը ստիպված եղավ պատճառաբանությամբ մերժել։

Պայմանագրի կնքումից հետո, երբ Հունաստանը պահանջեց Յանինա և Թեսալիա նահանգներից վեհաժողովի կողմից իրեն խոստացված վայրերը, կառավարությունն այդ պահանջին պատասխանեց Թեսալիայի բանակի ուժեղացումով և Վոլոսի նավահանգիստը նավատորմից ուղարկելով։ Արտաքին գործերի մինիստր Սաֆվեթ փաշան օգոստոսի 8 թվակիր ընդհանրական թղթով բողոքարկեց վեհաժողովի որոշումները, սահմանների վրա և Կրետեում ծագած ապստամբությունների համար Հունաստանին պատասխանատու և գրգռիչ համարելով, հայտարարեց.

«Բարձրագույն Դուռը վեհաժողովում հայտնել էր իր կարծիքն այն մասին, որ չի կարելի թույլատրել Հունաս-

տանին՝ ընդարձակելու իր սահմանները։ Ներկայացված դեպքերը և դրանց առաջացրած հիմնական մտահոգությունը ստիպում են օսմանյան կառավարությանը, որ այս միտքը կրկին հայտնի և պարզի Եվրոպայի առաջ։ Օսմանյան կառավարությունը համոզված է, որ երբ մեծ տերությունները ավելի լավ հասկանան Հունաստանի կառավարության ներկայացրած պահանջների էությունը, պատճառներն ու հետևանքները, կփոխեն իրենց նախկին կարծիքը և կստիպեն Աթենքի կառավարությանը հրաժարվելու այն կարգադրությունից, որը անօրինական է և քաղաքականապես էլ անհարմար, և կոչ կանեն ուղղամտության, զգոնության և հեռատեսության։

Բոլոր պարագաներում ակներև է, որ Եվրոպան այս վտանգավոր ուղու վրա հետևելով Հունաստանին, պատճառ չի դառնա իր սկսած խաղաղասիրական գործի խափանմանը»։

Բարձրագույն Դուռը թեև չկարողացավ Ավստրո-Հունգարիայի հանդեպ բացահայտ փորձ կատարել անզոր դարձնելու Բեռլինի պայմանագրի Բոսնիայի և Հերցեգովինայի մասին եղած հոդվածը, բայց չխուսափեց դիվանագիտական խարդավանքի դիմելուց։ Վեհաժողովի տասներկուերորդ նիստում որոշվել էր, որ Բոսնիայի և Հերցեգովի-
391 նայի || գրավման եղանակի հարցը հետագայում լուծվի օսմանյան պետության և Ավստրիայի միջև բանակցությունների միջոցով։ Այդ բանակցությունները սկսվելու ժամանակ Բարձրագույն Դուռը առաջարկեց սահմանել գրավման ժամկետ և օսմանյան պաշտոնյաների վերահաստատումը իրենց պաշտոններում։

Վիեննայի կառավարությունը, չցանկանալով երկար ձգձգել գործը, հրամայեց, որ գրավման համար պատրաստված զորքը մտնի Բոսնիա և Հերցեգովինա։ Այդ ժամանակ Աբդուլ Համիդը Ավստրիայի զորքի մուտքը այդ նահանգները արգելելու համար թեև դիմել էր Անգլիայի թագուհուն, բայց պատասխան էր ստացել, որ Բոսնիայի և Հերցեգովինայի խռովություններին վերջ տալու ամենաազդու միջոցը երկիրը ամբողջությամբ գրավելն է։

Բոսնիայի և Հերցեգովինայի բնակչությունը ձեռքերը հնազանդությամբ կրծքին ծալած չդիմավորեց Ավստրիա-

յին։ Նրանց ըմբոստությանը մասնակցեց նաև Բոսնիայում
և Հերցեգովինայում գտնվող օսմանյան զորքը։ Ավստրիա-
կան զորքի Բոսնիա մտնելու մասին լուրը ապստամբու-
թյուն առաջացրեց Սերայ Բոսնիա քաղաքում՝ դյուցազնա-
կան ուժով և հայրենասիրական եռանդով հայտնի Հաջի Լո-
յայի գլխավորությամբ։ Ապստամբները դուրս վռնդեցին
օսմանյան պաշտոնյաներին և, կազմակերպելով ժամանա-
կավոր կառավարություն, հրապարակեցին հետևյալ հայ-
տարարությունը.
«Առաջնակարգ հայրենասեր Հաջի Լոյան ամբողջ ժո-
ղովրդի ցանկությամբ ընտրված է պետության նախագահ.
Նա պետության բոլոր անդամների կամքին համաձայն 17
տարեկանից մինչև 60 տարեկան հայրենիքի բոլոր զավակ-
ներին հրավիրում է զենքի տակ։ Զենք կրելու ընդունակ,
առողջ քաղաքացիները, որոնք ութ օրում չեն պատասխանի
հրավերին, կգնդակահարվեն որպես դավաճաններ։ Ամբողջ
ժողովրդի յուրաքանչյուր անհատ պարտավոր է վճարել
պատերազմական հարկ։ Հարյուր լիրա ունեցողը երկրի
պաշտպանության համար վճարելու է իր հարստության քսան
տոկոսը։ Յուրաքանչյուր անհատ պետությանը պետք է
հանձնի իր բոլոր զենքերը՝ զինելու համար բոշնակներին։
Այս հրամանին դիմադրողները կենթարկվեն մահապատժի»։
Երբ այս հրամանը հաղորդվեց, բոլոր կողմերից մուսուլ-
մանները ներկայացան՝ իրենց զենքերով։ Մի քանի օրվա
ընթացքում հավաքվեց 80—90 հազար մարդ։ Բոսնիան և
Հերցեգովինան գրավելու համար ավստրիացիները պարզա-
պես ստիպված եղան պատերազմել։ Բոսնիա ուղարկեցին մի
կորպուս, իսկ Հերցեգովինա մի դիվիզիա։ Բոսնիացիների
դիմադրությունը տևեց մեկ և կես ամիս։ Այս անսպասելի
դիմադրությունը մեծ հուզմունք առաջացրեց Ավստրիայում.
Ավստրիան հասկանալով, որ իր ուղարկած զորքը բավա-
կան չէ, օգոստոսի 15-ին զորահավաքի ենթարկեց ևս վեց
դիվիզիա և օկուպացիոն բանակի ուժը հասցրեց 165009
392 մարդու։ Եվ վերջապես, ‖ հարկ չկա մանրամասնություններ
տալ արդյունքի մասին, դրանք հայտնի են։ Նույն ժամա-
նակամիջոցում Պոդգորիցան Չեռնոգորիային, Նիշը՝
Սերբիային թողնելու, Նովի Փազարի գավառն էլ Ավստրի-
այի ռազմական օկուպացիային ենթարկվելուն դիմադրու-

թյուն ցույց տալու և այդ վայրերը պաշտպանելու համար Հյուսիսային Ալբանիայում ևս ժողովուրդը ոտքի ելավ և կազմեց ժամանակավոր կառավարություն։

Նշենք միայն այն, որ Բեռլինի վեհաժողովը Արևելքում ստեղծել էր բազմաթիվ հակասություններ. օսմանյան պետության և Հունաստանի հակասությունը, Ավստրիայի և բոշնակների, ալբանացիների, հետագայում նաև օսմանյան պետության միջև եղած տարաձայնությունները, Չեռնոգորիայի ու Սերբիայի և սրանց ու օսմանյան պետության միջև եղած տարաձայնությունը. Ռուսաստանի և Լազիստանի ժողովրդի միջև եղած թշնամությունը, Ռուսաստանի հանդեպ Ռումինիայի դժգոհությունը, Անգլիայի և Ռուսաստանի մրցակցությունը։

ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴԸ ԵՎ ՄԱՄՈՒԼԸ*

563 ‖ Մեր դարում աշխարհը կառավարողը այլևս գաղափարները չեն, այլ մամուլն է, որովհետև գաղափարներին ծնունդ տվողն ու նրան ղեկավարողը մամուլն է։ Մամուլը ազգերի գաղափարների և նկարագիրների արդյունքն է։ Կամաց-կամաց նա սկսում է թափանցել նրանց ձևի ու էության մեջ և այս նմանության աստիճանի համեմատ էլ նրանց համակրանքն է շահել և այժմ էլ պահպանում է։ Մի ազգի և իր մամուլի միջև այնպիսի տարօրինակ մերձեցման մղում կա, որ եթե լավ քննության առնվի, անմիջապես մեզ պարզ կդառնան փոխադարձ գործունեության մեջ գտնվող այս երկու ազդեցիկ գործոնների էությունն ու բնությունը։

564 ‖ Ամեն ոք, անկախ այն բանից, թե նա մամուլը համարում է գոյություն ունեցող ձեռնարկներից ամենալավը կամ ամենավատը, սակայն մի երկրի մամուլի մասին կատարյալ ծանոթություն ստանալուց հետո անկարելի է, որ այդ երկրի մասին ամբողջական և ճշգրիտ գաղափար կազմած չլինի։

Քաղաքական և հասարակական տեսակետից մամուլի և երկրի միջև կա ահա այսպիսի մի հարաբերություն։ Արդ.

---

* Մենք այս հարցին վերաբերող տեղեկությունները քաղեցինք պրն. Պոլ Ֆիշերի «Ստամբուլը Աբդուլ Համիդի օրերին» անունով գործից, որը հավաքել և ուսումնասիրել է շատ բանիմաց մոտեցումով։

թուրքերի մեջ գոյություն չունի մամուլ: Խելագար և երկչոտ մի բռնավորի ճնշման տակ տառապող այս ողորմելի ազգը չի կարող իր մտքերն արտահայտել բարձրաձայն և ոչ էլ գրավոր կերպով, ձայն իսկ չի կարող հանել իր գանգատը լսելի դարձնելու համար: (Այս խոսքերը վերցված են Պոլ Ֆիշերի «Ստամբուլը Աբդուլ Համիդի վերջին օրերին» գրքից):

Այնուամենայնիվ, վերջին կես դարում, շատ բնական մի կենսուրախ ժամանակաշրջանից հետո, կատարվեցին մի շարք ձեռնարկումներ, որոնք, ինչպես թվում էր, պետք է հասցնեին խիստ գոհացուցիչ արդյունքների. սակայն Աբդուլ Համիդի իշխանության գլուխ կանգնելուց հետո այդ համառ ջանքերը դատապարտվեցին ձախողման:

Թուրքերեն լրագիր հրատարակելու գաղափարը առաջին անգամ ծագել է սուլթան Մահմուդ 2-րդի մտքում: Վերջինս ինչպես իր բարենորոգումների համար, այնպես էլ իր բարենորոգչական մտադրությունները ժողովրդին հաղորդելու, նրան սովորեցնելու համար ֆրանսիական կառավարության նման ցանկացավ հիմնել պաշտոնական մի թերթ:

Հունական հեղափոխության վերջին շրջանում (1825—1828) «Կուրիե դը Զմիրն» թերթի տնօրեն Ալեքսանդր Բլաք անունով մի ֆրանսիացու ցուցաբերած կայուն բնավորություն և մտքի անկախություն գրավել էր նրա ուշադրությունը: Վճռելով, որ իր մտահղացումը իրագործելու միակ ձեռնահաս մարդը այս անձնավորությունն է, նրան Իզմիրից կանչեց Ստամբուլ և ֆրանսերեն հրատարակվող «Մոնիթոռ Օթթոման» լրագրի տնօրինությունը հանձնեց նրան: Այս բանը կատարվեց 1831 թվականին:

Հաջորդ տարի երևան եկավ «Մոնիթոռ Օթթոման» թերթի այսպես ասած թուրքերեն օրինակը հանդիսացող «Թաքվիմ-ի վեքայի» թերթը: Այս երկու թերթերի միջև եթե կար մի տարբերություն, այդ էլ այն էր, որ «Թաքվիմ-ի վեքային» բավարարվում էր պետությանը վերաբերող նյութերի հրատարակումով, իսկ մյուսը, պաշտոնական մասից բացի, բովանդակում էր նաև պետական շահերը առաջադրելու և պաշտպանելու համար հատկացված ոչ պաշտոնական մի մաս: «Թաքվիմ-ի վեքայի»-ն հրատարակվում էր մեծ ուշա-

դրությամբ ու խնամքով և ուղղակի կապված էր պետության տարեգրային վարչության հետ։

565 *|| Այնուամենայնիվ, բոլորովին անսպասելի կողմերից սկսեցին դժվարություններ երևան գալ․ Որոշ դեսպանատըներ դժգոհություն հայտնեցին «Մոնիթոռ»-ի արտակարգ ծավալումից, մյուսները սկսեցին անհանգստանալ, որ այդ հաջողությունը կհասցնի թուրքական զարթոնքին, երրորդներն էլ նախանձեցին, որ այդ հաջողությունը ձեռք է բերվում մի ֆրանսիացու կողմից, իսկ սուլթան Մահմուդը բոլորովին հաշվի չառավ այդ գանգատները։*

Այս պատճառով դեսպանները վրե՞ժ լուծեցին։ Այդ բանը հայտնի չէ։ Հայտնի է միայն այն, որ սուլթան Մահմուդի կողմից հատուկ հանձնարարությամբ Ֆրանսիա ուղարկված պրն. Բլաքը 1836 թվականին Սայթայում հանկարծակի մահացավ։ Ասում էին, որ թունավորվել է։ «Կուրյիե Անգլե» թերթը այդ բանը վերագրեց Ռուսաստանի սադրանքներին։ Մյուս կողմից ռուսներն էլ ամբաստանեցին անգլիացիներին։ Այս միջոցին «Մոնիթոռի» վարիչների հետ ձախորդություն պատահեց...

Ի վերջո նրան փոխարինեց «Ջերիդեի հավադիս» թերթը։ Այդ թվականից (1843) սկսած որպես պաշտոնական թերթ մնաց միայն «Թաքվիմ-ի վեքայի»-ն.

....1851 թվականին Ստամբուլում զանազան լեզուներով հրատարակվում էր 13 լրագիր և հանդես. դրանցից երկուսը թուրքերեն, չորսը ֆրանսերեն, չորսը իտալերեն, մեկը հունարեն, մեկը հայերեն, մեկն էլ բուլղարերեն։
566 *||...1866 թվականին միայն Ստամբուլում հրատարակվում էր 36 թերթ. այս թվի մեջ չեն մտնում 4 ֆրանսերեն, 1 գերմաներեն, 1 անգլերեն և 1 իտալերեն թերթերը։ Գավառներն էլ զուրկ չմնացին մամուլից... Էրզրումում կար թուրքերեն և հայերեն թերթ։*

567 *||...1876 թվականին Ստամբուլում հրատարակվող թերթերի թիվը հասել էր 47-ի, 13-ը՝ թուրքերեն, 1-ը արաբերեն, 9-ը հունարեն, 9-ը հայերեն («Մասիս», «Ավետաբեր», «Ժամանակ», «Մանզումեի էֆքյար», «Մեջմուա-ի հավադիս», «Հայրենիք», «Նորագիր», «Մամուլ» և «Փունջ»), 3-ը բուլղարերեն, 2-ը եբրայերեն, 2-ը ֆրանսերեն, 2-ը անգլերեն, 2-ը գերմաներեն։*

572 ‖... Ինչպես Ջիա փաշայի «Իսթիքբալ» թերթի, այնպես էլ ժամանակի հեղինակավոր լրագրողներից «Վաքիթ» թերթի անօրեն Սայիդ բեյի մասին Աբդուլ Համիդը գլխավոր քարտուղարի միջոցով գրում է սադրազամ Միդհատ փաշային և հրահանգում.

573 ‖... Թերթերը, չարաշահելով հիմնական օրենքի իրենց շնորհած ազատության պայմանները, շարունակ նման վտանգավոր հոդվածներ են հրատարակում։ Նորին վսեմություն փադիշահը թերթերի կողմից սահմանադրության թույլատրած չափը ոտնակոխելու փաստերին վերջ տալու համար հրամայում է երեք-չորս օրում ամբողջացնել և լրացնել հիմնական օրենքում հիշատակված մամուլի օրենքը և խիստ հրամաններ տալ համապատասխան բաժնին։

581 ‖ Երկար չէ պալատից մամուլի վարչությանն ուղարկված այս հրահանգը, որը կիրառվելու է թերթերի նկատմամբ. այն բաղկացած է ընդամենը ինը հոդվածից, սակայն այս ինը հոդվածներն էլ կարոտ են շատ լուրջ քննարկման։ Ճիշտ է, որ գրաքննիչներն էլ իրենց քննությունների մեջ թերի չեն մնում, և ամեն օր իմաստի նոր երանգներ են հայտնաբերում։ Հրահանգը շուռ տալով, ձևափոխելով, սեղմելով, սահմանափակելով, այս կերպ բովանդակությունից ամեն օր նորանոր հայտնություններ էին անում, որոնք կարող էին դառնալ ճնշման նոր միջոց։

Ստորև բերում ենք հրահանգը.

Յըլդըզի կայսերական պալատ
Գլխավոր քարտուղարության դրասենյակ

1. Ամենից առաջ լուրեր հաղորդել նորին մեծության փադիշահի աշխարհարժեք առողջության, գյուղատնտեսական բերքի վիճակի, կայսրությունում առևտրի և արհեստների առաջադիմության մասին։

2. Թերթում չհրատարակել ոչ մի տարակարծիք հոդված, որի բարոյական անվնասակարությունը վավերացված չէ ընդհանուր լուսավորության վսեմաշուք մինիստր փաշայի կողմից․

3. Չթույլատրել գրական և գիտական այնպիսի երկարաշունչ հոդվածների հրատարակումը, որոնք հնարավոր չէ սեղմել և տալ մեկ համարում, ինչպես նաև «շարունակելի», «շարունակությունը վաղը» բառերի օգտագործումը։

4. Հոդվածներում չթողնել սպիտակ տողեր և կախման կետերով թողնված բաց տեղեր, բացարձակապես առիթ չտալ նման երևույթների, որոնք կարող են պատճառ դառնալ զանազան անտեղի ենթադրությունների և մտքերի շփոթության։

5. Բացարձակապես չչոշափել անձնականությունը, եթե ասեն, որ որևէ կուսակալ կամ կառավարիչ թույլ է տվել գողություն, զեղծում, սպանություն և պարսավանքի արժա-
582 նի այլ գործ, || հայտնել, որ դրա ստույգությունը հնարավոր չի եղել հաստատել, թաքցնել այն, երբեք թույլ չտալ հրատարակել։

6. Խստիվ արգելվում է հրատարակել կառավարական օրգանների զեղծումների դեմ բողոք հայտնող այն դիմումներն ու խնդիրները, որոնք ներկայացվում են վիլայեթի ազգաբնակչության որևէ անհատի կամ համայնքի կողմից և նպատակ ունեն այդ մասին հայտնել նորին բարձրություն փադիշահին։

7. Արգելված է «Հայաստան» և պատմության ու աշխարհագրության վերաբերյալ նման այլ անունների հիշատակումը։

8. Քանի որ մեր հավատարիմ և հանդարտաբարո ժողովրդի համար պատշաճ չէ տեղեկություն ունենալ օտար վեհապետների դեմ կատարվող մահափորձերի և օտար երկրներում տեղի ունեցող խռովարարական ցույցերի մասին, բոլոր միջոցներով արգելք լինել դրանց մասին նյութեր հրատարակելուն։

9. Որոշ չարամիտ մարդկանց անտեղի քննադատությանն ու դիտողություններին առիթ չտալու համար խստորեն զգուշանալ թերթերում այս հրահանգի մասին խոսելուց։

Կայսերական գլխավոր քարտուղար

Թահսին

Այս հրահանգը ցույց է տալիս Աբդուլ Համիդի և հիշյալ հրահանգի կիրառման գործում որոշակի սահմանը խիստ ոտնահարող մեղսակիցների մտածողությունը։ Վերևում հայտնել էինք, որ հարկավոր է մի առ մի քննել դրա բովանդակությունը. օրինակ, կարդալով «լուրեր հրատարակել նորին մեծություն փադիշահի աշխարհարժեք առողջու-

թյան մասին» նախադասությունը, առաջին հայացքից
մարդ սկսում է մտածել, որ անհրաժեշտ է տեղեկություններ
հաղորդել նրա թե՛ առողջության և թե՛ հիվանդության մա-
սին։ Այս կարծիքը սխալ է։ Աբդուլ Համիդը երբեք չի ցան-
կանում իր հիվանդության մասին տեղյակ պահել աշխար-
հին։ Եթե որևէ ձևով նրա ծանր հիվանդության մասին լուր
տարածվի, թերթերը երբեք չպետք է խոսեն այդ մասին։
Եվրոպայի հռչակավոր բժիշկներից մեկը եթե Յըլդըզ հրա-
վիրվեր, թերթերը գրում էին, որ եկել է շնչելու Վոսփորի
օդը, այցելելու Համիդիե մանկանց հիվանդանոցը և Հայ-
դար փաշայի բժշկական ինստիտուտը։ Իր պահանջով Գեր-
մանիայի կայսեր ուղարկած դոկտոր Բերգմանի մասին
թերթերը հայտնեցին միայն գալուստը, իսկ նպատակը
չգրեցին։
7-րդ հոդվածը հնարավոր է այն աստիճան ընդարձա-
կել և մեկնաբանել, որ այդ հոդվածի հիման վրա գրաքըն-
նիչների կողմից արգելված և խոսակցական լեզվից ջնջված
583 բառերով ու տերմիններով || կարելի էր կազմել մի մեծ բա-
ռարան։ Պատմության և աշխարհագրության վերաբերյալ
բառերի թվում կային նաև, օրինակ, այնպիսի բառեր, ինչ-
պես՝ հիմնական օրենք, հեղափոխություն, ազատություն,
անիշխանություն, բռնություն, ազգային իրավունք, հավա-
սարություն, եղբայրություն, հայրենիք, երիտասարդու-
թյուն, դինամո, դինամիտ, ազգ, միջազգային, գահաժա-
ռանգ, հանրապետություն, պառլամենտ, ծերակույտ,
ռումբ, Միդհատ փաշա, Քեմալ բեյ (Նամըք), սուլթան Մու-
րադ կամ պարզապես Մուրադ, Կրետե, Մակեդոնիա, բա-
րենորոգում և այլն։
586 || Ամենադժբախտ գրքերը մեր երկրում թուրքերեն և
այլ լեզուներով տպագրված գրքերն էին։ Բառիս բուն
իմաստով մազից էին անցկացվում գլխավորապես դասա-
կան գործերը։ Արգելված էր ընդհանուր պատմությունը,
քիմիայում արգելված էին մի շարք բանաձևեր, որոնց մի-
ջոցով ստացվում էին պայթուցիկ նյութեր։ Աբդուլ Համիդի
անվան սկզբնատառերով կազմված մի շարք քիմիական
բանաձևերը և մաթեմատիկական ֆորմուլները. օրինակ,
չէր կարելի գրել OH=O, որովհետև կարելի էր բացատրել

Աբդուլ Համիդ հավասար է զրո: Քննականական գրքերում
587 || հանդիպող «դժգոհ ենք», «դժբախտ ենք», «ազատ չենք» և
նման այլ բառեր վտանգավոր էին և ջնջվում էին, որպես թե
դրանք կարող էին արտահայտել օսմանյան ազգի տրտունջը:
«Եղբայր» բառը արգելված էր, քանի որ կարող էր հիշեցնել
տարաբախտ սուլթան Մուրադին, «հիվանդ» բառն էլ արգելված էր, որովհետ հիշեցնում էր «հիվանդ մարդ» խոսքը:

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

817 Հայկական հարցի էությունը: Ալի և Ֆուադ փաշաները: Թուրք-ռուսական պատերազմը: Սան-Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերը: Աբդուլ Համիդը և հայերը: Կոմիտեների կազմակերպումը: Իզմիրլյան պատրիարքը: Վարդապետներ, հնչակյաններ: Քյամիլ փաշայի սադրազամությունը: 1894 թ. խռովությունը: Սասունի ջարդը: Հանոթոյի հոդվածը: 1896 թ. անկարգությունները: Ռումբի պատրաստությունները հայերի կողմից: Բարձրագույն Դուռը պայթեցնելու փորձ: Հարձակում Խալիլ Ռիֆաթ փաշայի դեմ: Ջարդ: Հայկական հարցը և մեծ տերությունները: Աբդուլ Համիդի քաղաքականությունը:

Ալի և Ֆուադ փաշաների[7] ժամանակաշրջանում կարևոր
և մեծ դեր էին խաղացել երիտասարդ հայերը: Աբդուլ Ազիզի ժամանակի անվանի ղեկավարները հայերի համար ներքին կանոնադրություն [Ազգային սահմանադրություն] պատրաստելու գործին ձեռնարկելիս, դիմել էին ֆրանսիական դպրոցներում կրթություն ստացած հայ նշանավոր
818 մարդկանց: Սակայն դրանից հետո || փոխվեց վերաբեր-
մունքը դեպի հայերը: Մուրադ V-ի գահընկեցությունից հետո սկսել էին անարդարություններ գործադրել հայերի նկատմամբ: Այդ իսկ պատճառով որքան էլ հայոց պատրիարքը բազմիցս բողոքներ էր ներկայացրել Բարձրագույն Դռանը և հայերի համար շարունակ բարենորոգումներ կատարելու խոստումներ ստացել, բայց այդ խոստումներից և ոչ մեկը չէր կիրառվել: Այդ միջոցին օսմանյան պետության և Ռուսաստանի միջև պատերազմի ծագումը, Աբդուլ Համիդի վատ կառավարման հետևանքով օսմանյան բանակ-

ների կրած պարտությունը իբրև առիթ նկատելով, Սան-Ստեֆանո մտած ռուսներին դիմավորելու համար հայերի կողմից մի պատվիրակություն ուղարկվեց։ Պատվիրակության ղեկավար Ներսեսը [պատրիարք] երկար տեսակցություն էր ունեցել մեծ իշխան Նիկոլայի հետ ։ Ներսես պատրիարքի խնդրանքի հիման վրա Սան-Ստեֆանոյի դաշնագրում ավելացվել էր հետևյալ հոդվածը.

Հոդված 16. Քանի որ ռուսական բանակի կողմից Հայաստանի պարպումը և նրա վերադարձումը օսմանյան պետությանը կարող է վեճերի և տարաձայնության պատճառ դառնալ երկու պետությունների հարաբերություններում, ուստի Բարձրագույն Դուռը հանձն է առնում հայերով բնակված նահանգներում անմիջապես գործադրել տեղական պահանջների համապատասխան բարենորոգումներ և քրիստոնյաներին պաշտպանել քրդերից և չերքեզներից»։

Մինչև այդ ռուսական կառավարությունը բոլորովին չէր զբաղվում հայերով։ Օսմանյան երկրներում Ռուսաստանին ամենից ավելի զբաղեցնող քրիստոնյա ժողովուրդը հանդիսացել էին միայն նրանց բուլղար եղբայրները։ Ռուսական կառավարությունը Բալկաններում իր մտադրությունն իրագործելուց հետո, ուշադրությունը դարձրել էր դեպի Անատոլիա։ Բարձրագույն Դռան հանդեպ հայերի պաշտպանությունն ստանձնելով, ռուսական կառավարությունն աշխատում էր Անատոլիայում ստեղծել հայկական հարց։ Ռուսաստանի նպատակն էր հուսադրել հայերին և այս կերպով գրգռել նրանց օսմանյան պետության դեմ։

Սակայն Բարձրագույն Դուռը երբեք չէր ցանկանում
ռուսների ձեռքը տալ նման մի զենք, այդ իսկ պատճառով
հոժարել էր ռուսների ցանկացածից ավելի նպաստավոր
819 պայմաններ ստեղծել։ || Այս մասին ցուցաբերել էր նաև իր
բարյացակամության հաստատուն մի երաշխիք**։ 1878

---

* Վիկտոր Բերար, *Սուլթանի քաղաքականությունը։ Հայերը մինչև Ստամբուլի պարիսպներ առաջացած մեծ իշխան Նիկոլային մի պատվիրակություն էին ուղարկել (էջ 144)։*

Ժորժ Կույիս, *Արևելյան հարցերը, 1877 թ. ռուսական զորքը Ստամբուլի վրա առաջացման ժամանակ հայերը ցույցեր են կատարել և պատվիրակության ղեկավար Ներսես պատրիարքը գաղտնի տեսակցություն է ունեցել մեծ իշխան Նիկոլայի հետ (էջ 32)։*

** Վիկտոր Բերար, *Սուլթանի քաղաքականությունը, էջ 14։*

թվականի հունիսին Բարձրագույն Դուռը Անգլիայի հետ կնքեց Կիպրոսի դաշինք անունով պաշտպանական մի համաձայնություն, որով Անգլիայի կառավարությունը երաշխավորում էր օսմանյան պետության Անատոլիայի հողերի ամբողջականությունը։ Սրա փոխարեն նորին վսեմություն սուլթանը երկու պետությունների միջև առաջիկայում կայանալիք որոշման համաձայն, Անգլիային խոստանում էր հիշյալ երկրի բարվոք կառավարումը և այդտեղ գտնվող քրիստոնյա և այլ հպատակների պաշտպանության համար անհրաժեշտ բարենորոգումների գործադրումը։

Արդարև ռուսական և անգլիական կառավարությունների հովանավորությունը հայերի նկատմամբ պատճառ էր դարձել օսմանյան պետության երկմտության և կասկածանքին։ Որպեսզի չթողնի, որ հայերը գործիք դառնան Ռուսաստանի և Անգլիայի ձեռքին, Բարձրագույն Դուռը հայերին խոստանում էր ստեղծել անհրաժեշտ նպաստավոր պայմաններ։ Նույնիսկ թույլատրվել էր, որ հայերը պատվիրակություն ուղարկեն Բեռլինի կոնգրեսին։ Բարձրագույն Դռան այս թույլտվության հիման վրա էլ Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը հիմք ծառայեց Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածին, որը ձևակերպվել էր հետևյալ կերպ.

«Բարձրագույն Դուռը խոստանում է հայաբնակ նահանգներում անհապաղ գործադրել տեղական կարիքներին համապատասխան բարենորոգումներ և բարեկարգություններ և պահպանել հայերի ապահովությունը քրդերից ու չերքեզներից։

Այս մասին Բարձրագույն Դուռը իր ձեռնարկելիք կարգադրությունները որոշակի ժամանակներում հայտնելու է պետություններին, իսկ պետություններն էլ հսկելու են այդ կարգադրությունների գործադրմանը»։

Հայերով բնակեցված նահանգներն են Վանա լճի հյուսիսային և հարավային կողմերը և Սասունի շրջակայքը, Էրզրումի, Մուշի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Ալեքսանդրետի, Զեյթունի, Մարաշի և Ադանայի շրջանները։

Թեև Բեռլինի դաշնագրով Բարձրագույն Դուռը հանձն էր առել նման խոստումներ, բայց այդ բարենորոգումները

1880 թվականից մինչև 1890 թ. Բարձրագույն Դռան կողմից մնացել էին անհետևանք, իսկ հայերը այդ ուղղությամբ պահանջ չէին ներկայացրել։ Այդ ժամանակաշրջանում Ստամբուլում ռուսական քաղաքականությունը կորցրել էր իր ազդեցությունը. ամենից ավելի տիրապետող քաղաքականությունը Անգլիայի և Եռյակ զինակցության քաղաքա-
820 կանությունն էր։ Իսկ Անգլիան այդ միջոցին ‖ հայաբնակ նահանգների համար ոչ մի պահանջ չէր ներկայացնում։

Նման գործելակերպով Բարձրագույն Դուռը հետապնդում էր մի նպատակ, այն է՝ ռուսների ցանկության համաձայն ինքնավարություն ստացած Հայաստան ստեղծելու փոխարեն, օսմանյան պետության տերիտորիալ ամբողջականությունը պահպանելու համար Անատոլիայում զբաղվել բարենորոգությամբ։ Սակայն այդ միջոցին միանգամայն այլ էր Անգլիայի կարծիքը։ Ստամբուլի անգլիական դեսպանը խոսում էր այն մասին, որ Թուրքիայի համար ամենաճիշտ քաղաքականությունը պիտի լինի այն, որ բազմաթիվ քրիստոնյա տարրերի ապրած նահանգներում ծառայեն այնպիսի մարդիկ, որոնք լինեն տիպար պաշտոնատարներ։ Իսկ լորդ Սոլսբերին, պաշտպանելով իր դեսպանի մտքերը, այս ձևով էր արտահայտում իր դիտողությունները. «Անգլիան, նկատի ունենալով մեծ տերությունների կողմից հնարավոր համատեղ միջամտության հետևանքով առաջանալիք գժվարությունների հավանականությունը, այս վերջին տարիների ընթացքում հրաժարվել է Բեռլինի 61-րդ հոդվածի գործադրման ու ընդհանուր բարենորոգումներ կատարելու համար Բարձրագույն Դռանը բռնագատելուց և, հյուպատոսություններից ստացած տեղեկությունների հիման վրա կարծիք կազմելով, խոսում է միայն վատ կառավարման մասին»*։

Ահա այս բոլորից պարզվում է, որ Անգլիայի կառավարությունը երբեք չի խոսում ո՛չ բարենորոգումների և ո՛չ էլ Հայաստանի ստեղծման մասին, այլ գանգատվում էր միայն երկրի բոլոր կողմերում տարածված կառավարման վատ ձևից, իսկ հայերը փորձով հասկացել էին, որ ոչ մի օգուտ չի ստացվում Եվրոպայի առաջ հայտարարված և ոչ

* «Կապույտ գիրք», 1896, էջ 7։

մի անգամ չգործադրվող բարենորոգումներից։ Հայերը ևս
այդ հոռի վարչությունը վերացնելու համար հարմար էին
նկատում պատվավոր պաշտոնյաների նշանակումը։ Այդ
ժամանակաշրջանում Օսմանյան երկրում հայերը վայելում
էին կատարյալ ազատություն։ Եկեղեցիներում ազատորեն
կատարում էին բոլոր տեսակի ծեսերն ու արարողություն-
ները, պալատում, կայսերական գանձարանում, Բարձրա-
գույն Դռնում ծառայում էին բազմաթիվ հայ բարձրաստի-
ճան պաշտոնյաներ։ Օրինակ, Հակոբ փաշան ֆինանսների
մինիստր էր. կառավարչություններում, դատարաններում և
նման վստահություն պահանջող պաշտոններում ծառայում
էին մեծ թվով հայեր։ Գրեթե բոլոր նահանգներում կուսա-
կալներին առընթեր համարյա բոլոր քաղաքական գործերը
գտնվում էին հայերի ձեռքին։ Ավելի ճիշտ 1880-ից մինչև
1888 թվականը օսմանյան կառավարության ամենակարևոր
պաշտոններում ծառայում էին հայերը։ Աբդուլ Համիդը իր
կայսերական գանձարանում հայերին էր ծառայության
821 վերցնում, արտոնում էր, որ հայ ուսանողները || Եվրոպա
գնան սովորելու։ Հայերի ուշիմությունն ու ուղղամտությու-
նը հայտնի լինելով, նրանց մանր-մունր սխալներին երբեք
կարևորություն չէր տրվում։

Հայերի և մուսուլմանների միջև կային անհամաձայնու-
թյուն առաջացնող մի քանի կետեր՝ քրդերի հարձակում-
ները, տեղական պաշտոնյաների պարտազանցություննե-
րը... Թեև հայերը գանգատվում էին օսմանյան վարչության
հոռի վերաբերմունքից, սակայն չէին դադարում իրենց հա-
մար մեծ վտանգ համարել նաև ռուսներին։ Հայերը 1870
թվականից ի վեր չափազանց առաջադիմել էին Կովկասում,
իրենց սահմանները տարածել էին մինչև Վրաստան, մեծ
թիվ կազմելով Թիֆլիս և Ալեքսանդրապոլ քաղաքներում։
Որոշ ժամանակ հետո հայերը, իրենց իրավունքները պաշտ-
պանելու համար Փարիզում հիմնել էին «Հնչակ» անունով մի
կազմակերպություն։ Այս կազմակերպության նպատակն էր
հայերին կառավարել սոցիալիստական սկզբունքներով։

Հնչակյան կուսակցությունը Եվրոպայում բազմաթիվ
հրատարակություններ ունենալուց հետո, ի վերջո հաս-
տատվել էր Լոնդոնում։

Կուսակցության նպատակը լիակատար անկախությու-

նը չէր, նույնիսկ Օսմանյան երկրում եղած նրա անդամները պահանջում էին միայն, որ կառավարությունը քրդերի հանդեպ մի քիչ ավելի խիստ պատիժ սահմանի. դանգատվում էին նաև պարտազանց կուսակալներից և անպետք ոստիկաններից։ Հնչակ կուսակցության հիմնական նպատակն էր հայերով բնակված նահանգներում իրագործել բարենորոգումներ։

Ռուսական կառավարությունը իր սահմանները թուրքահայերի առաջ փակելու համար Հայաստանում կազմակերպել էր ոստիկանական կազմ։ Ռուսական կառավարությունը հայերից ոմանց ցարի հովանավորությունը խոստանալով, աշխատել էր նրանց դարձնել օրթոդոքս։ Յուրաքանչյուր կուսակալի, կառավարչի մոտ պահում էր իր լրտեսներր, օրինակ, Էրզրումում այդ պարտականությունը կատարում էր Հասան-կալայի դատավորը։

Ռուսաստանի այս վերաբերմունքը մեծ գրգռվածություն էր առաջացրել Անատոլիայում։ Բոլորը մտատանջվում էին Ռուսաստանի այս գործողություններից։ Դրա համար խիստ ռալրանում էին նաև կոմիտեները։ Մի կողմից Ռուսաստանը օսմանյան պետության համար վտանգավոր գործողություններ էր կատարում, մյուս կողմից էլ Աբդուլ Համիդը Ռուսաստանին հակառակ էր գործում։ Աբդուլ Համիդը առավելապես Եվրոպայում գտնվող իր երկրների պահպանման համար ապավինել էր Եռյակ դաշնակցությանը, իսկ Անատոլիայի նահանգների պահպանման համար՝ Անգլիայի հովանավորությանը։
22 Ստամբուլ եկած և իրեն ‖ այցելած գերմանական կայսրը Աբդուլ Համիդի ամենից մտերիմ բարեկամն էր։

Անգլիական քաղաքականությունը թեև որոշ ժամանակ սկսել էր կորցնել իր կարևորությունը, բայց Քյամիլ փաշայի սադրազամության կապակցությամբ դարձյալ ստացավ իր նախկին ազդեցությունը։

Աբդուլ Համիդը մեծ ուշադրությամբ հետևում էր Եվրոպայի քաղաքականությանը։ Մինչև այդ ժամանակ առանձին մնացած Ռուսաստանը արդեն գտել էր մի բարեկամ։ Աբդուլ Համիդը, տեսնելով Ռուսաստանի հզորացումը, սկսել էր աստիճանաբար բարեկամություն ցույց տալ Ռուսաստա-

նին։ Այդ օրվանից սկսած փոխվեց նաև հայերի հանդեպ նրա վերաբերմունքը։ Սակայն գոյություն ունեին այս փոփոխության պատճառ հանդիսացած այլ կարևոր ազդակներ ևս։ 1887 թվականին Աբդուլ Համիդի համակրությունից հեռու մնացած Սայիդ փաշան ցանկանում էր գործի գլուխ անցնել։ Առանց որևէ պատճառի Սայիդ փաշան պահանջեց գործադրել Բեռլինի դաշնագրի հոդվածները հայերի մասին։ Աբդուլ Համիդը կարծեց, թե Սայիդ փաշան կաշառվել է հայերի կողմից։ Արդեն մի կողմից էլ մտատանջվում էր Հնչակ կուսակցության կազմվելուց։ Հատկապես հայերի գաղտնի սադրանքների մասին պաշտոնյաների գանգատները վախեցնում էին Աբդուլ Համիդին։

Աբդուլ Համիդը իր այս վախը փարատելու համար ըստիպված եղավ նախ մոտենալ քրդերին։ Խիստ հսկողության տակ առնվեցին հայ պաշտոնյաները և հայկական հրատարակությունները։ Այդ պահից սկսեցին իրար հաջորդել աքսորումները։ Կուսակալների կողմից քննության առնվեցին եկեղեցիների և դպրոցների մասին տրված հրովարտակները։ Վերջին տարիների ընթացքում փակվեցին այն հայկական դպրոցները, որոնք բացվել էին ոչ թե հրովարտակով, այլ միայն կառավարական թույլտվությամբ։ Հայերի գանձման նկատմամբ ցուցաբերվեց խստություն և բռնություն։ Միևնույն ժամանակ քրդերն էլ իշխանությունների օժանդակության վրա վստահ, սկսեցին գործել իրենց ցանկությունների համաձայն։ 1889 թվականին հայերի վիճակը ծայր աստիճան դժվարացավ։

1890 թվականին հայոց Ազգային ժողովը Աշըքյան պատրիարքի միջոցով դիմում ներկայացրեց Բարձրագույն Դռանը։ Այս դիմումին Բարձրագույն Դուռը պատասխանեց շատ քաղաքավարի կերպով։ Սակայն երեք ամիս հետո, ով իմանա, որտեղից եկած հրամանի հիման վրա, խուզարկվեցին հայ եկեղեցիները։ Նրանք ցանկանում էին գտնել հայ հեղափոխականների պահած զենքերն ու ռումբերը։ Էրզրումի դեպքի պատճառով Աբդուլ Համիդի և հայերի միջև գոյություն ունեցած համաձայնությունը իսպառ անհետացավ։ Դրանից հետո Աբդուլ Համիդը կարծեց, թե այլևս հայերի բոլոր գործողություններն ուղղված են իր դեմ
823 և բոլոր հայերն էլ ղեկավարվում են || կոմիտեների կողմից։

Մյուս կողմից էլ հայերը համոզվեցին, որ Աբդուլ Համիդից քաղցրությամբ ոչ մի բան չի կարելի ձեռք բերել և հետևաբար անհրաժեշտ է նրան սարսափեցնել։ Դրանից հետո հայերը այլևս հետամուտ եղան ստեղծելու այնպիսի մի կացություն, որը վախեցներ Աբդուլ Համիդին և Եվրոպայի ուշադրությունը գրավեր Անատոլիայի վրա, նույնիսկ մեծ տերությունների միջամտության պատճառ հանդիսանար։

Այս հարցում սակայն կոմիտեները շատ էին սխալվում և հայերին մղում էին դեպի վտանգավոր ուղի։ Այս պատճառով էլ կոմիտեների միջև սկսել էր անհամաձայնություն առաջանալ։ Հնչակյան կուսակցությանը պատկանողներից շատերը ծառայել էին ռուսական բանակում և մտել ռուսական գաղտնի կազմակերպությունների մեջ։ Սրանք չէին ցանկանում խորհրդակցություններով ժամանակ վատնել և կողմնակից էին ամեն ինչ անել միանգամից։ Դրանից հետո հայերի մեջ կազմակերպվում է իսկական հեղափոխական կուսակցություն։ Այս կուսակցությունը մինչև 1893 թվականը Հնչակյան կուսակցության հետ գործում էր միասնաբար, ավելի ուշ կազմակերպվեց «Դրոշակ» անունով առանձին կուսակցություն։

«Դրոշակ» կուսակցության նպատակն էր հայերին մղել հեղափոխության և այս հեղափոխության համար ապահովել Ռուսաստանի օժանդակությունը։ Հնչակյանները Թուրքիայից ավելի վախենում էին Ռուսաստանից և բացեիբաց արտահայտում էին այդ անվստահությունը։ Իսկ դրոշակյանները կարծում էին, թե Ռուսաստանը կազատագրի հայերին։ Արդյոք նրանք նպատակ չունեի՞ն բուլղարների նման միանալ Ռուսաստանի հովանու տակ, իսկ հետո այս միությունն ուղղել Ռուսաստանի դեմ։

Սակայն այս մտայնությունը երկար չտևեց և նրանք էլ ստիպված եղան Ռուսաստանի դեմ դուրս գալ։ Այդ ժամանակ հնչակյանները եռանդագին շարունակում էին իրենց գործը։ 1891 թվականից սկսած ուժեղ թափով գործում էին պաշտոնատարների դեմ։ Նրանց նպատակն էր, ինչ ձևով ուզում է լինի, հրավիրել Եվրոպայի միջամտությունը։ Նրանք, իմանալով Բարձրագույն Դռան և Ռուսաստանի միջև գոյություն ունեցող համաձայնությունը, գտնում էին, որ պետք չէ կորցնել ոչ մի րոպե։ Այս խնդիրը իրականացնելու

համար դիմում էին ամեն տեսակ զոհողությունների և մի-
325 ջոցների։ || Մինչև իսկ հայ հայրենասիրական ընկերության
կողմից հրատարակված մի հայտարարության մեջ ասված
էր. «Եվ վերջապես հաջողություն ձեռք բերելու համար ան-
հրաժեշտ է շատ բան. նախ պետք է շատ ժամանակ և փող.
անհրաժեշտ է նաև շատ արյուն թափել։ Մեր պարտակա-
նությունը կատարելու համար մեզնից շատերը զենքով և
գրչով սպառազինված իրենց կյանքը վտանգի ենթարկելով
պետք է զոհաբերվեն»։

Նրանք մտածում էին բոլոր հայերին համախմբել մի նշանաբանի տակ և Եվրոպային ներկայացնել մի Հայաստան՝ օսմանյան պետությունից դժգոհ Հայաստան։ Սակայն հայ ազգը ամբողջությամբ դժգոհ չէր օսմանյան վարչությունից։ Արդարև, գյուղացիները տանջվում էին, ողբում էին, սակայն խաղաղության, հանգստավետության և առևտրի վարժված մարդիկ, հատկապես պետական պաշտոնատների բազմաթիվ ծառայողներն ու պաշտոնատարները երբեք չէին գանգատվում։ Հարստության տեր դարձած հայերը և պետական ծառայողները երբեք էլ համակրանք չէին տածում դեպի կուսակցությունները, նույնիսկ նրանց հանձնում էին կառավարությանը, իսկ կոմիտեները հարուստներին սարսափեցնելու համար նրանց մի մասին ահաբեկում էին, մի մասին էլ սպանում։

Կոմիտեների այս վերաբերմունքը սարսափ առաջացրեց հարուստ մարդկանց և պետական պաշտոնյաների միջև։ Վերջապես սրանք էլ սկսեցին հավանություն հայտնել կոմիտեների գործունեությանը։ Հայաբնակ քաղաքները կամաց-կամաց ենթարկվեցին կոմիտեներին։ Այս կոմիտեների ղեկավարները ապրում էին հասարակության աչքից ծածկված և կեղծ անունով. օրինակ, սրանցից մեկը պարոն Մինե անունով ամբողջ մի տարի ապրել է Մարզվանում։ Այդ ժամանակներում հրապարակ է գալիս մի հրաման, բոլոր խանութները փակվում են, հետո փողոցում պատի վրա փակցվում է մի ազդարարություն, այդ ազդարարությունում ծանուցվում է մի պաշտոնյայի անուն, հետո էլ այդ պաշտոնյան դիմավորվում է գնդակներով։ Իսլամների և քրիստոնյաների միջև տեղի ունեցած ամեն վեճ ստանում էր ապստամբական, պատերազմական բնույթ։ Օրինակ,

Թոքատում մի գորգի, Սեբաստիայում մի ձեռնակառքի համար զինված ընդհարում էր առաջացել։ Բազմաթիվ հայ խռովարարներ զինված, երբեմն էլ ձի հեծած շրջում էին քաղաքներում, սրանք հայ գյուղացիներին գրգռում էին մուսուլմանների դեմ, դրա համար պատրվակ բռնելով մի աղջկա իսլամանալը, ոչխարի գողությունը, մի արտի վեճի առարկա դառնալը։ Հետո ընդհարումները հաջորդում էին իրար, սպանում էին հարկահավաք ոստիկանին. տեղի էին ունենում հարձակումներ քարավանների և պետական գանձարանի վրա*։

Վերջապես որոշվեց առաջացնել մեծ խռովություններ. Որոշվեց առաջին մեծ խռովությունը բարձրացնել Սասունում։ Սասունի ապստամբությունը տեղի ունեցավ 1894 թ. հոկտեմբերին։ Հենց որ շարժումը սկսվեց, իսկույն միջամտեցին դեսպանները։ Եվրոպական պետությունների կողմից դեպքի վայր ուղարկվեց քննիչ հանձնաժողով։ Օսմանյան, ֆրանսիական, ռուսական և անգլիական պատվիրակներից բաղկացած հանձնաժողովը վեց ամիս մնաց Մուշում։ Այստեղ, հունվարից մինչև հուլիս, հանձնաժողովը հարյուր յոթ նիստ գումարեց, այդ ժամանակամիջոցում լսեց հարյուր իննսուն վկաների։ Անգլիական կառավարությունը այս քննությունների ֆրանսերեն փաստաթղթերը հրատարակեց «Կապույտ գրքում»։ Այս ապստամբության մասին ֆրանսերեն լեզվով կազմված տեղեկագիրը ստորագրվեց ռուս, անգլիացի և ֆրանսիացի պատվիրակների կողմից։ Այդ շրջանում ռուսական և ֆրանսիական պետությունները պաշտպանում էին Աբդուլ Համիդին, իսկ Անգլիան՝ Ռուսաստանին։ Ըստ երևույթին պատվիրակներից երկուսը քննության վայր էին եկել գաղտնի հրահանգներով։

827 || Սասունի շրջանը գտնվում է Վանա լճից դեպի արևմուտք, Մուշի և Դիարբեքիրի դաշտերի միջև։ Սասունը թեև լեռնոտ շրջան է, սակայն բնակչությունը բավական խիտ է. Բնակչությունն է՝ 15000 քուրդ և 12000 հայ։ Քրդերի և հայերի բնակավայրերի միջև որպես սահման ընկած է մի լեռ։ Քրդերի և հայերի կենցաղի մեջ գոյություն չուներ տարբերություն. միակ տարբերությունը կրոնն էր։

---

* Վիկտոր Բերար, Սուլթանի քաղաքականությունը, էջ 178։

Սակայն եթե մեկ ուրիշ տարբերություն կար, ապա դա այն էր, որ քրդերը այս շրջանը համարում էին իրենց սեփականությունը և այդտեղ բնակվող հայերից հարկ էին վերցնում։ Այս շրջանը անգամ արքունիքի համար ծառայում էր որպես եկամտի աղբյուր. այսպես, օրինակ, երբեմն պալատից ստացվում էր հեռագիր հետևյալ բովանդակությամբ. «Ուղարկեցեք հինգ հարյուր լիրա». կուսակալը պատասխանում էր. «Հարկերը հավաքվել են»։ Հեռագրերը այլևս իրար են հաջորդում։ Այնուհետև կուսակալը գիտեր, որ եթե մեկ ուրիշ հեռագրով էլ նման պատասխան տար, պաշտոնանկ կլիներ, և գուցե աքսորվեր Ֆիզան, ուստի սկսում էր նեղել երկրի հարուստներին։

1892 թ. Մուշի կուսակալը նորից այսպիսի վիճակի մեջ էր դրվել և Սասունից հարկեր հավաքելու համար դիմել էր հայերով բնակված ավաններին։ Հայերը հայտնել էին, որ չեն կարող երկու անգամ հարկ վճարել։ Այս բանից ազդված կուսակալը մի տարի հետո որոշեց այդ մերժման համար վրեժ լուծել։

Կուսակալը հայերի դեմ շարժում առաջացնելու համար նախապես բորբոքեց քրդերի մոլեռանդությունը։ Դրա հետևանքով հայերը ամբողջովին ենթակա մնացին քրդերի վրիժառության։ Ծագումով ադանացի, բժշկական դպրոցում սովորած Համբարձում Բոյաջյան անունով մեկը հայերին կոչ արեց դիմադրություն ցույց տալ։ Մուշին հարևան նահանգների կուսակալներն էլ հետևեցին այդ կուսակալի օրինակին։ Սակայն սրանք հարկ հավաքելու ժամանակ հանդիպեցին հայերի զինված դիմադրությանը։ Ավելի ուշ կառավարությունը ստիպված եղավ զինվորական ուժ ուղարկել նրանց դեմ։ Բայց, ինչպես պնդում էր Բարձրագույն Դուռը, զորքը դեռ տեղ չհասած, հայերը ապստամբություն բարձրացնելու նպատակով այրել էին իրենց գյուղն ու ավանը և քաշվել սարերը։ Իսկ պատվիրակների ներկայացրած զեկուցագրում բոլորովին հերքվում էր այդ դեպքը։ Հիշյալ զեկուցագրում եղած պնդումի համաձայն քաղաքային և զինվորական իշխանությունների տված հրամանով քրդերը հարձակվել էին գյուղերի վրա, բայց ետ էին մղվել, որից
828 հետո զինվորական ուժեր ուղարկելու ‖անհրաժեշտություն
էր առաջացել։ Այդ ժամանակ զինվորները այրել էին գյուղերը և բազմաթիվ մարդկանց կոտորել։

Եվրոպայի պատվիրակների թե այս հայտարարությունը և թե ուրիշ փաստարկությունները օսմանցի պատվիրակների կողմից ընդունվել են որպես բացարձակ իրողություններ։ Ըստ նրանց կարծիքի, քրդերի հարձակումը հայերի վրա ուներ երկրորդական նշանակություն, որովհետև բոլոր այս հարձակումների մասին հրամանները տվել էին տեղական պաշտոնյաները, որոնց ձեռքում քրդերը դարձել էին գործիք։ Բացի դրանից, պատվիրակների ներկայացրած զեկուցագրի հետևանքով կատարված քննության եզրակացության մեջ հայտարարվում էր, որ պետության հանդեպ հայերի որևէ դատապարտելի արարքի չեն հանդիպել։ Դարձյալ նույն զեկուցագրերի համաձայն, եթե հայերը կառավարության դեմ ապստամբական շարժում կատարած էլ լինեն, քանի որ այս խառնակությունը կանխելու համար միջոցներ չեն ձեռնարկվել և քրդերի ու հայերի միջև առաջացած վեճերին արգելք չեն հանդիսացել, այդ բոլորի համար ամբողջապես պատասխանատու էին տեղական պաշտոնական անձինք։ Ըստ պատվիրակների զեկուցագրերի, հայերի առաջ քաշած մեղադրանքները ճիշտ են և գյուղերն այրողներն էլ եղել են քրդերը և զորքը։ Նրանք վկաներին լսելով և տեղում հետաքննություններ կատարելով կատարելապես պարզել էին անկարգությունների պատճառ հանդիսացող դեպքերը և նրանց հեղինակներին։

*Խառնակությունից առաջ այրված այդ գյուղերում կային 450—500 ընտանիքներ. այս ընտանիքներից յուրաքանչյուրում եթե առնվազն հաշվենք տասական անձ, ապա ամբողջ կորուստր կկազմի 4500—5000 մարդ**։*

* * *

Միևնույն ժամանակ Դիարբեքիրում էլ ջարդ տեղի ունեցավ։ Եվրոպացիների համար այս կոտորածների վկաներ էին կաթոլիկ միսիոներները և ֆրանսիական փոխհյուպատոսը։

Դիարբեքիրը գտնվում է Հայաստանի ճիշտ կենտրոնում։ Տիգրիսի հյուսիսում գտնվող այս քաղաքի բնակչության կեսը քրիստոնյա էր։ Մինչև վերջին ժամանակներս

---

* *Եվրոպացի պատվիրակների զեկուցագիրը, «Կապույտ գիրք», էջ 143—147։*

քրիստոնյաներն ու մուսուլմաններն ապրում էին եղբայրա-
բար։ Սակայն 1880 թվականից սկսած այստեղ ևս կրկնվե-
ցին Սասունի դեպքերը։ Այստեղ տիրող գրգռված վիճակը
իր վրա էր հրավիրել այս քաղաքում գտնվող ֆրանսիական
հյուպատոսի ուշադրությունը։ Տեղական պաշտոնական ան-
829 ձինք || իրոք բարյացակամություն չէին ցուցաբերում հայե-
րի հանդեպ։ Իսկ 1885 թվականից հետո նահանգապետ
Էնիս փաշայի ժամանակ թշնամությունը գնալով ավելի էր
սրվել։
Էնիս փաշան միշտ թշնամական զգացում էր սնուցում
եվրոպացիների հանդեպ, մինչև իսկ հյուպատոսները մի
ժամանակ բողոք էին հայտնել նրա անարդար գործերի դեմ,
իսկ դեսպանները պահանջել էին տեղափոխել նրան։ Նա
Դիարբեքիրի կուսակալ նշանակված ժամանակ այն աստի-
ճանի անբարյացակամություն էր ցուցաբերել, որ ֆրանսի-
ական դեսպանը իսկույն ձեռնարկել էր անհրաժեշտ միջոց-
ներ։ Էնիս փաշան Դիարբեքիրի կուսակալ նշանակված պա-
հին բռնությամբ մի հեռագիր է ստորագրել տվել քրիստոնյա
երևելիներին, որում իր կուսակալ նշանակվելու կապակ-
ցությամբ շնորհակալություն էր հայտնվում Աբդուլ Համի-
դին։ Սակայն այս հեռագիրը տարաձայնության ու վեճի
պատճառ էր դարձել քրիստոնյաների միջև։ Նրանցից շա-
տերը դանգատ էին հայտնել իրենց եպիսկոպոսին և բողոքի
հեռագրեր տեղացել Ստամբուլ։
Բոլոր պարագաներում Էնիս փաշան գործում էր քրիս-
տոնյաների դեմ, պնդում էր, որ հայերը մտադիր են հար-
ձակվելու մզկիթների վրա, որ հայերի պահանջած բարենո-
րոգումը վնասակար է մուսուլմաններին։ «Հոկտեմբերի երե-
սունին ֆրանսիական հյուպատոսը տեղեկացրել էր, որ ժո-
ղովներ են տեղի ունեցել Ջեմիլ փաշա անունով մեկի բնա-
կարանում, և այս ժողովներին մասնակցել է Ջիլանի շեյխը
իր տղայի հետ։ Քրիստոնյաների դեմ ամենավտանգավոր
ծրագրերը պատրաստվել էին այս ժողովներում, մզկիթնե-
րի պատերին ազդարարություններ էին փակցվել։ Հայերի
պահանջած բարենորոգումների էության մասին գաղափար
չունեցողները հեռագրել էին Աբդուլ Համիդին և հայտարա-
րել, որ ստացվելիք պատասխանը եթե գոհունակություն
չպատճառի իրենց, նոյեմբերի մեկի ուրբաթ օրը վրեժ կլու-
ծեն քրիստոնյաներից»։

Հոկտեմբերի 31-ին հոգևոր պետերը, դիմելով ֆրանսիական հյուպատոսին, տեղեկացրել էին, որ հաջորդ օրը կոտորած է տեղի ունենալու։ Այս պատճառով հյուպատոսը պաշտոնապես այցելել էր կուսակալին, իսկ կուսակալը հայտարարել էր, որ այդ լուրերը անհիմն են, կարգ ու կանոնը երբեք չի խանգարվի, և քրիստոնյաները ոչ մի բանից վախենալու պատճառ չունեն։

Նոյեմբերի առաջին օրը եպիսկոպոսները, քաղաքի երե-
վելիները դարձյալ դիմել են ֆրանսիական հյուպատոսին
և տեղեկացրել, որ քրդերը քաղաք են մտել, և կեսօրին
830 սկսվելու է ջարդը· ‖Հյուպատոսը հայտնել է նրանց կուսա-
կալի հայտարարությունը, նրանք էլ հյուպատոսի հանձնա-
րարությամբ գնացել էին կուսակալի հետ հանդիպում ունե-
նալու։ Կուսակալը սրանց էլ պատասխանել էր, որ խաղա-
ղությունը և կարգը չեն խանգարվի, և հանձնարարել էր, որ
քրիստոնյաները բաց անեն իրենց խանութները և զբաղվեն
իրենց գործերով։ Կուսակալի հանձնարարության հիման
վրա եպիսկոպոսներն էլ հանձնարարել են բաց անել խա-
նութները և զբաղվեն իրենց գործերով։

Արդարև մինչև կեսօր ամեն տեղ տիրում էր խաղաղություն ու հանդարտություն։ Սակայն կեսօրից հետո հյուպատոսը իր բնակարանը վերադառնալու ժամանակ տեսնում է, թե ինչպես է մեծ մզկիթից դուրս եկող ժողովուրդը վազում՝ իր առջև ունենալով չորս ոստիկան, և անմիջապես գալիս է հյուպատոսարան։ Դրանից հետո ամբոխը հարձակվել էր քրիստոնյաների թաղերի, շուկաների վրա։ Այս հարձակման հետևանքով հայերը ապաստանել էին ֆրանսիական հյուպատոսարանում և եկեղեցիներում։

Այս կոտորածը շարունակվել էր ամբողջ երեք օր։ Բայց այս դեպքերը ամբոխի գործն էր. քաղաքի երևելիները աշխատում էին կանխել դրանք։ Հյուպատոսը այս դեպքի մասին մի նամակ էր ուղարկել կուսակալին։ Հրոսակները թեև ցանկացել էին հարձակվել հյուպատոսարանի վրա, սակայն հյուպատոսը զինել էր իր դռնապաններին, որոնք և կրակ էին բացել հարձակվողների վրա։

Հյուպատոսի նամակից հետո հյուպատոսարանի պաշտպանության համար ուղարկվել էր մի սպա և մի դասակ զինվոր։

Խռովության երրորդ օրվա երեկոյան հյուպատոսը հեռագրել է դեսպանատուն. պալատից ստացված հեռագրով հրամայվել էր ջարդի տեղիք չտալ։

Սակայն այս պարագան բոլորովին վստահություն չէր ներշնչել հյուպատոսարան ապաստանածներին։ Նրանք տասներկու օր մնացին հյուպատոսարանում և պարենը վերջանալուց հետո միայն ստիպված եղան դուրս գալ այնտեղից։

Այս ջարդի մասին մեծ տերությունների ներկայացված զեկուցման մեջ ցույց էր տրված 1191 սպանված և 285 վիրավոր. հյուպատոսը հրդեհված և ավարի ենթարկված գյուղաքաղաքների թիվը համարում էր 119։

Դեկտեմբերի 31-ին նորից սկսվել էր ջարդը. չնայած
831 պալատից || ուղարկված Աբդուլլահ փաշան քրդերին կոչ էր արել հանդարտություն պահպանել, բայց ուրբաթ օրերին քրիստոնյաների շրջանում առաջանում էր ընդհանուր երկյուղ։

* * *

Անատոլիայում տեղի ունեցած այս խռովությունների պատճառով մեծ տերությունները 1895 թվականի մայիսի 11-ին մի հուշագիր ներկայացրին Բարձրագույն Դռան։ Այս հուշագրով նրանք պահանջեցին, որ թուրքական կառավարությունը իրագործի բարենորոգումներ կատարելու իր խոստումը։ Նրանք առաջարկում էին, որ ընտրվելիք կուսակալները, նշանակումից առաջ, ենթարկվեն մեծ պետությունների ստուգմանը, վերջնականորեն ճշտվեն տուրքերի քանակը և ապա գանձվեն, ոստիկանները ընտրվեն մուսուլման և ոչ-մուսուլման ժողովուրդներից, սահման դրվեն քրդերի արոտավայրերին և ձմեռանոցներին, հսկողություն սահմանվի նրանց հնարավոր գաղթերի նկատմամբ։ Ի պատասխան այս առաջարկության, Բարձրագույն Դուռը հունիսի 3-ին կազմեց մի նախագիծ։ Ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնը ոչ միայն չընդունեց այդ նախագիծը, այլև հայտնեց, որ այն քննարկման անգամ արժանի չէ։ Բարձրագույն Դուռը իր այս նախագծով մերժում էր դեսպանների առաջարկը և հայտնում էր, որ այս միջամտությունը ոտընձգություն է սուլթանի վեհապետական իրավունքների դեմ։

Աբդուլ Համիդը իր քաղաքականությունը իրագործելիս չէր ցանկանում, որ որևէ մեկը անհանգստացնի իրեն։ Այս պատճառով պետությունները սկսեցին փնտրել հարցի լուծման նոր միջոցներ։

Օսմանյան երկիրը արյունով ողողած այս ջարդերի վերաբերյալ Եվրոպայի քաղաքականության մեջ նկատվեցին տարբեր հոսանքներ։ Օրինակ, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Հանոթոն գրում էր այնպիսի հոդվածներ, որոնց մեջ Աբդուլ Համիդը առհասարակ ոճրագործ չէր համարվում։ Այդ հոդվածներից մեկում նա հետևյալ դատողություններն էր անում.

«Ես այստեղ չեմ աշխատելու ճշտել, թե ո՞ւմ վրա է ընկնում ջարդի նախնական պատասխանատվությունը։ Ընդհանուր առմամբ այդ ջարդը քրիստոնյաների և մուսուլմանների միջև տեղի ունեցող հազարավոր վեճերից մեկն էր։ Այս խնդիրը շատ լավ կարելի էր լուծել փոխադարձ բանակցությունների միջոցով։ Հավանական է, որ լուծման այս բնական և խոհեմ եղանակի ձախողման պատճառը եղել է Եվրոպայի միջամտությունը գործին։

Անցյալ ձմեռ սկսված բանակցությունները շատ, նույնիսկ չափազանց շատ երկար տևեցին։ Ստամբուլում նախ դեպքերի, ավելի ուշ բանաձևերի և արձանագրությունների վերաբերյալ ձեռք առնվեցին վարանոտ միջոցներ։ Այս խնդրի լուծման համար շատ ջանք գործադրեցին Ջեվադ, Սայիդ և Քյամիլ փաշաները, բայց միշտ էլ նկատ-
832 վում էր միևնույն մեղմ, միևնույն կոպիտ վերաբերմունքը։ || Բայց Աբդուլ Համիդը, որը իր ձեռքում էր կենտրոնացրել կառավարման բոլոր գործերը, հավանաբար հասկանում էր, թե լուծման ինչ եղանակ է հարկավոր։

Վերջապես այս հարցը ևս լուծվեց։ Ամենքն էլ հանգիստ շունչ քաշեցին, երբ իմացան, որ համաձայնությունը կայացել է։

Մտքերն սկսել էին բորբոքվել Բուլղարիայում, Մակեդոնիայում, Անատոլիայում, իսկ մուսուլմանական տարրը գտնվում էր հուզման մեջ։ Մի կողմին տրվող նպաստավոր պայմանները պատճառ էին դառնում մյուս կողմի պահանջադրումին։

Ձափազանցությունից ու զուրկ լուրերի համաձայն,

չարիքը ընդգրկել էր ամբողջ երկիրը։ Խառնակություն էր տիրում նախ Ստամբուլում, ապա Հայաստանում, ավելի ճիշտ ամբողջ Անատոլիայում՝ Զեյթունում, Տրապիզոնի և Դամասկոսի կողմերում... Նույնիսկ ասում են, որ Եմենում էլ այսօր խառնակ վիճակ է, ավելի ճիշտ ընդհանուր խառնակություն։ Արդարև, այսօր Թուրքիայում գոյություն ունեն խառնակության և վաքթարացման աղբյուրներ։ Հենց այս պատճառով էլ լուրջ վտանգ գոյություն ունի նաև եվրոպական հպատակների համար։

Անգլիայում չեն հավատում Աբդուլ Համիդի խոստումներին, ավելի ճիշտ նրա ուժին և ազդեցությանը։ Մեկ առ մեկ հիշատակում են նրա խոսքերը և վերաբերվում մեծ կասկածամտությամբ»։

Ընդհանուր դրության մասին այս կարգի մտքեր հայտնելուց հետո Հանոթոն խորհուրդ էր տալիս քաղաքական ղեկավարման գործում օժանդակություն ցույց տալ Աբդուլ Համիդին։

Յըլդըզի քաղաքական շրջանները շատ բարձր գնահատեցին Հանոթոյի այս հոդվածը։ Մինչև իսկ Աբդուլ Համիդը դրանից շատ գոհ մնացած լինելով, հոդվածը «Ռեվյու դը Պարի» թերթում հրատարակվելուց հետո Հանոթոյին շնորհեց «Իմթիազ»-ի (գերազանցության) պատվո նշանը։

Հանոթոն արտաքին գործերի մինիստր նշանակվելիս էլ վարում էր մի քաղաքականություն, որը գոհունակություն էր պատճառում Աբդուլ Համիդին և նրա համախոհներին։ Հանոթոն ասում էր, որ «եթե ցանկանում են պահպանել Թուրքիայի տերիտորիալ ամբողջականությունը, ապա պետք է օժանդակեն, որ Աբդուլ Համիդը իր ազդեցությունը գործադրի միայն իր իրավասության սահմաններում»։ Ահա այս էր Հանոթոյի հիմնական քաղաքականությունը։ Պարոն Հանոթոյի նման գործելակերպի համար պատճառներ կային։ Նա երբեք հաշվի չէր առել Ֆրանսիայի հպատակների ներկայացրած բողոքները։

834 Սակայն Հանոթոյի այս խոսքերը լավ ազդեցություն չգործեցին Անգլիայում. նույնիսկ լորդ Սոլսբերին Լոնդոնի քաղաքապետարանում արտասանած իր ճառում պախարակեց Հանոթոյի այդ վերաբերմունքը։ Այնուամենայնիվ պարոն Հանոթոն հայտարարեց, որ ինքն ազատ է իր ցանկացած ձևով շարժվելու։

«Հանոթոյի այս քաղաքականությունը ոչ մի օգուտ չէր կարող ապահովել ո՛չ Ֆրանսիայի, որի քաղաքական ազդեցությունը Արևելքում գնալով նվազում էր, ո՛չ էլ Թուրքիայի համար, որը օրից օր ավելի էր մոտենում իր կործանմանը։ Դա միայն օգուտ էր բերում Օսմանյան երկրի վրա բռնացող անկուշտ, նրա վերջին դրամական աղբյուրներն իսկ կլլող և Թուրքիային սարսափելի տոկոսներով փոխառություններ տվող մարդկանց»*։

Սակայն կոմիտեները գործեցին ավելի մեծ անհամբերությամբ։ Նրանք 1895 թ. սեպտեմբերի 28-ին մի բողոքագիր էին հանձնել Բարձրագույն Դռանը։ Այդ բողոքագրի բովանդակությունը հետևյալն էր։

«Մենք բողոքում ենք հայերին իրենց երկրում ոչնչացնելու համար հիմնականում Բարձրագույն Դռան կողմից գործադրված ճնշումների դեմ։

Բարձյալ բողոքում ենք մի քանի տարուց ի վեր մեր երկրում հայտարարված պատերազմական դրության համար։ Պատերազմական այս դրությունը պատճառ է դառնում նահանգների կամայական կառավարման։

Բողոքում ենք նաև քաղաքական ձերբակալությունների, բանտարկվածների նկատմամբ թույլատրվող վայրագ վերաբերմունքի, հարկահավաքների բռնությունների ու ճնշումների դեմ։

Բողոքում ենք նույնպես քրդերի և կանոնավոր զորքի կողմից դրեթե ամեն օր կատարվող զինված հարձակումների դեմ։ Սասունի դեպքերից հետո, բազմաթիվ խոստումներ տրված լինելով հանդերձ, ոչ մի ապահովություն չի իրագործված մեզ այդ հարձակումներից ազատելու համար։

Ահա մեր այս օրինական խնդրանքների համար պահանջում ենք՝ կյանքի և ինչքի ապահովություն, պատվի և արժանապատվության պահպանում, խղճի, մամուլի, ընդհանուր հավաքույթների ազատություն, հավասարություն օրենքի առաջ, բանտարկյալների դատաքննություն դատարանների կողմից, զենք կրելու թույլտվություն, վեց նահանգներում
835 վարչական միավորների պակասեցում, || հիշյալ նահանգների ժողովուրդների բաժանումը ըստ ազգագրական սկզբունքների, հիշյալ վեց նահանգների համար մեկ

* Պիեր Կիյար և Լուի Մարժերի, Հանոթոյի անձնական քաղաքականությունը, էջ 35։

նահանգապետի նշանակում, տեղական ժողովի օժանդակությամբ կայսեր անունից գործերի տնօրինում այդ նահանգապետի կողմից, այդ ժողովի անդամների նշանակում ընդհանուր քվեարկությամբ առանց նկատի առնելու նրանց ազգությունը, կրոնը և հասարակական դիրքը, հարկերի պակասեցում, աղաների և բեկերի օգտին կիրառվող կոռի վերացում, տասանորդի վերացում, ամբողջ երկրի համար նույն քանակի հարկի նշանակում, քրդերի պահանջած ասլօրինի տուրքերի վերացում, հայերի իրենց անձնական կալվածքների տիրացում և նման տեղական կարիքներին համապատասխան տնտեսական բարենորոգումների կիրառում, քրդերի հաճախակի հարձակումների արգելում, այս արարքների դիտում որպես գոյություն ունեցող օրենքներին հակառակ արարքներ, երկրի մյուս ժողովուրդների վճարած հարկերի քանակի չափով տուրքերի նշանակում, քրդերի ցեղական կարգով ապրելակերպի արգելում, վերջերս կազմակերպված համիդիյե հեծելազոր գնդերի զորացրում, օսմանյան մյուս հպատակների նման քրդերի կողմից ևս զինվորական ծառայության անցկացում, երկրի հասույթի հատկացում տեղական կարիքներին, աքսորված հայ քաղաքական դատապարտյալների, գաղթածների անխտիր ներում»։

Սեպտեմբերի 30-ին տեղի ունեցավ հայերի ցույցը։ Հարյուրավոր հայեր խմբեր կազմած դուրս եկան փողոց։ Հայաբնակ նահանգների համար կառավարությունից պահանջեցին բարենորոգումներ։ Ոստիկանությունը իսկույն լուր ստացավ այդ մասին և ցանկացավ արգելք հանդիսանալ հայերի այս շարժմանը։ Այդ միջոցին հայերը սպանեցին մի ոստիկան։ Դրանից հետո պալատից տրված հրամանով զենքի ուժով արգելք հանդիսացան հայերի այս շարժմանը։ Հոկտեմբերի 2-ից մինչև 9-ը շարունակվեց արյունալի կռիվը։ Բոլոր եկեղեցիները օրերով փակ մնացին իրենց ապաստանյալներով։ Երկու կողմերից էլ բազմաթիվ մարդիկ սպանվեցին։ Հոկտեմբերի 8-ին խիստ արյունահեղություն տեղի ունեցավ հատկապես Տրապիզոնում։ Այս արյունահեղության ժամանակ զոհված հայերի թիվը 300—400 էր*։ 1895 թ. ջարդն էլ այս կերպով վերջացավ։

---

* Դրիո, Արևելյան հարց, էջ 254։

Այս դեպքերը, սակայն, չվրիպեցին մեծ տերությունների, հատկապես Անգլիայի ուշադրությունից։ Անգլիական կառավարությունը ձեռնարկեց Սասունի դեպքի, ինչպես նաև
ուրիշ վայրերում տեղի ունեցած ջարդերի հետաքննություն։
Այս սոսկալի կոտորածների լուրը տարածվելուց անմիջա-
836 պես հետո անգլիացի ազատամիտների շրջանում խոր
հուզում առաջացավ։ Հատկապես Ռուսաստանին հատկաց-
ված մարդում Անգլիայի ձեռնարկած հետաքննությունը Պետերբուրգի կաբինետը դիտեց որպես ոտնձգություն Ռուսաստանի իրավունքների դեմ։

Բեռլինի դաշնագրից և առավել ևս Ռումինիայի, իսկ ավելի ուշ Բուլղարիայի կազմավորվելու ժամանակից ի վեր Ռուսաստանի կառավարությունը հասկացել էր, որ Ռումելիում իր թափած ջանքերից ոչ մի արդյունք չի ստացվի։ 1877 թվականին Ռումինիան, իսկ 1886 թվականին Բուլղարիան տերիտորիալ ամբողջականության տեր դառնալուց հետո, Ռուսաստանը Ռումելիում այլևս ոչ մի անելիք չուներ։ Բալկանների կողմից Ստամբուլը գրավելու Ռուսաստանի հույսերը Ռումելիում բացարձակապես չքացել էին, որովհետև նա շատ լավ գիտեր, որ այս կողմից կատարվող ամեն մի գործողության արգելք կհանդիսանային Ռումինիան և Բուլղարիան, մինչդեռ ավելի դյուրին էր Անատոլիայից առաջանալով գրավել Ստամբուլը, Իզմիրը, Ալեքսանդրետը։ Ռուսաստանը այս կերպ գործելով ձեռք կբերեր քաղաքական երկու նպատակ. այս նպատակներից մեկը Ցեների հույն պատրիարքությունն էր[8], մյուսը Երուսաղեմի գրավումը։

Սակայն Ռուսաստանը ինչպես Աֆղանստանում, ավելի ճիշտ Ասիայի բոլոր կողմերում, այստեղ էլ իր դիմաց տեսնում էր Անգլիային։

Անգլիական կառավարությունը Միջերկրականի նեղուցները պահպանելու համար գրավել էր Կիպրոս կղզին, հետո Արարատի շրջակայքի սահմաններն էր ուղարկել բազմաթիվ զինվորական հյուպատոսներ։ Այս հյուպատոսները մեծ ուշադրությամբ ուսումնասիրում էին Ռուսաստանի այդ շրջանները, նույնիսկ կազմում այդ վայրերի քարտեզները։

Հայերին պաշտպանելու Անգլիայի նպատակը հիմնված չէր միայն առևտրական սկզբունքի վրա։ Անգլիական կառավարությունը պատրիարք Իզմիրլյանին պաշտպանելու, Սասունի դեպքի վերաբերյալ հետաքննություն կատարելու խնդրում ուներ մի նպատակ, այն է՝ տեղի ունեցած կոտորածներում երևան հանել Ռուսաստանի մատը։

Այդ մասնակցությունը ոչ խոստովանվում էր, ոչ էլ ուղղակիորեն հրապարակ էր հանվում, նույնիսկ դեպքերի մանրամասնությունները քննության առնված ժամանակ այդ մասին չէր ստացվել ոչ մի փաստ։ Սակայն հայկական հարցում ռուսական քաղաքականության ամբողջ էությունը շատ պարզորոշ կերպով այդ էր ապացուցում։ Մի քանի
837 տարուց ի վեր ռուսական քաղաքականությունը || վճռական ազդեցություն էր ձեռք բերել Աբդուլ Համիդի շրջապատի վրա։ Ստամբուլի և Պետերբուրգի կառավարությունների միջև շատ կետերում մտքերի համաձայնություն էր առաջացել. օրինակ, մի ժամանակ Ռուսաստանը չէր մասնակցել Թուրքիայի հանրային պարտքի վերաբերյալ մեծ տերությունների ձեռնարկին, այդ հարցը լուծվել էր առանց Ռուսաստանի մասնակցության։ Ռուսաստանը շատ առնելիք ուներ Աբդուլ Համիդից. օրինակ, ռուսական սահմաններին մերձակա նահանգների հաշվին ապահովված պատերազմական տուգանքը... Բայց ռուսական կառավարությունը կամահաճության համար գիտեր նաև հետաձգել այդ մասնավճարները։ Բացի դրանից, Աբդուլ Համիդը միջազգային ֆինանսի հանդեպ իր պարտավորությունը հետաձգելու համար բարոյական հենարանի կարիք էր զգում, ռուսական կառավարությունը այդ էլ գտնում էր շատ արագ։

Եթե Ռուսաստանի և Աբդուլ Համիդի միջև հեշտորեն համաձայնության գալու մի հարց կար, ապա դա հայկական հարցն էր, որովհետև եթե Հայաստանի մի մասը գտնվում էր Օսմանյան երկրում, ապա նրա մեծ մասն էլ Ռուսաստանի տիրապետության տակ էր։

Կովկասում Էջմիածնի կաթողիկոսը հայերի միակ և իրական պատրիարքն էր։ Աբդուլ Համիդը Օսմանյան երկրում հայերին օսմանցի չդարձրեց, սակայն ռուսական կառավարությունը Ռուսաստանի հայերին աշխատում էր ռուսացնել։ Այն ժամանակ, երբ Ստամբուլի պատրիարքը ազատամիտ վեզիրների կողմից մասնավոր առանձնաշնորհում-

ների էր արժանացել, էջմիածնի պատրիարքը ստիպված էր մեծ ջանք թափել իր անձնական գոյությունը ապահովելու համար*։

Ռուսական կառավարությունը շարունակ գործում էր Օսմանյան երկրում գտնվող հայերի դեմ։ Մինչև այդ որքան խռովություններ ու ջարդեր էլ որ տեղի են ունեցել, բոլորի ընթացքում էլ հայերը հանդիպել էին ռուս հյուպատոսների անբարյացակամությանը։ Ի միջի այլոց, բազմաթիվ անդամներ ռուս հյուպատոսները շարունակ օժանդակել էին օսմանյան պաշտոնյաների գործած անիրավություններին և անարդարություններին։ Երբ հայերը ենթարկվում էին քրդերի հարձակումներին, ռուսական կառավարությունը փակում էր իր սահմանները ապաստանողների հանդեպ, Կովկասի հայերի դեմ գործադրում էր դանազան բռնություններ։ Աբդուլ Համիդը արդեն առանց որևէ պետության պաշտպանությունը ապահովելու, ոչ մի գործ չէր ձեռնարկում։ Հայկական հարցում Աբդուլ Համիդի միակ հենարանը Ռուսաստանն էր։

Ռուսաստանը անհանգստանալով այն բանից, որ անգ-
լիացիները շրջագայում են Ռուսահայաստանի մերձակայ-
838 քում, դիմել էր ‖ Ֆրանսիայի կառավարությանը և պահան-
ջել, որ Սասուն ուղարկվելիք անգլիացի պատվիրակների
հետ միասին Ֆրանսիայից ևս ուղարկվի մեկ պատվիրակ։

Անգլիայի կառավարությունը, Սասունի խռովության պատճառները ամենայն մանրամասնությամբ հրապարակ հանելուց հետո, սկսել էր ամբաստանել Աբդուլ Համիդին։ Աբդուլ Համիդի համար էլ գործի ամենավատ կողմն այն էր, որ անգլիական պատվիրակի մտքերին համաձայն էր նաև ֆրանսիական պատվիրակը։ Հայերի ապահովության պահպանման համար անգլիական պատվիրակի առաջադրած պահանջները պաշտպանում էր նաև ֆրանսիական դեսպանը։ Ռուսական կառավարությունը հասկանալով, որ դրա դեմ հնարավոր չէր որևէ առարկություն անել, ստիպված էր ֆրանսիական և անգլիական դեսպանների հետ միասին պատրաստել բարենորոգումների մի նախագիծ։ Սակայն բարենորոգման գործը Թուրքիայում ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Աբդուլ Համիդի համար անախորժ բան

---

* Ժորժ Կուլիս, Արևելյան հարցերը, էջ 38։

էր։ Ռուսաստանը և Աբդուլ Համիդը ձեռք ձեռքի տված աշ-
խատում էին ջնջել Բանգիմաթի որոշումները։ Իսկ Անգլիան
այժմ ցանկանում էր ուղղել տալ նրանց այդ սխալները։

* * *

Անգլիայի այս ձեռնարկը կարող էր համարվել վտան-
գավոր, որովհետև նույնիսկ «բարենորոգում» բառը վրդո-
վեցնում էր Աբդուլ Համիդին և գրգռում նրա ոճրային
բնազդները։ Անգլիայի առաջարկած բարենորոգումները հե-
տաձգելու նպատակով Աբդուլ Համիդը ցանկացավ ձեռնար-
կել մի շարք միջոցներ։ Այժմ Աբդուլ Համիդի միակ նպա-
տակն էր՝ թույլ չտալ Եվրոպայի միջամտությունը, զրոյի
հավասարեցնել անգլիական ազդեցությունը Անատոլիա-
յում, իսկ իրեն էլ ներկայացնել որպես մի գործիչ, որը ան-
հրաժեշտ նախազգուշական միջոցներ է ձեռք առել վերա-
հաս հեղափոխությունը կանխելու համար։

Աբդուլ Համիդը, բոլոր պետությունների հանդեպ կեղ-
ծավորությամբ գործելով, ցանկացավ ապահովել այս նպա-
տակը ևս։ Ի պատասխան Աբդուլ Համիդի այս գործողու-
թյուններին, հայերն էլ ետ չմնացին և սկսեցին պատրաստ-
վել մեծ խռովության։ Հայերի այդ մտադրությունների մա-
սին մանրամասն տեղեկություն ստանալով, Աբդուլ Համիդը
ամենախիստ միջոցներ ձեռք առավ։ Աբդուլ Համիդը Վան
ուղարկեց Սադեդդին փաշային, կազմակերպած համիդիյե
հեծյալ գնդերը զինեց ամենակատարյալ հրացաններով։

Հայերը, տեսնելով Աբդուլ Համիդի այս գործերը, ավե-
839 լի ուժեղացրին իրենց պատրաստությունները։ ‖ 1896 թվա-
կանի օգոստոսի 26-ին զինված հարձակում գործեցին օս-
մանյան բանկի վրա, գերի վերցրին բանկի ծառայողներին։
Նրանց մի մասն էլ գալով Բարձրագույն Դուռը, փորձեց
պայթեցնել այն։ Հայերի այս գործողությունները ամբողջո-
վին կատաղեցրին Աբդուլ Համիդին։ Մասնավորապես հա-
յերի թե՛ այս գործողությունները, թե՛ սադրազամի դեմ
ատրճանակից կրակ բաց անելը, թե սելամլըքի ժամանակ
սուլթանի ուրբաթօրյա աղոթքի արարողության գնացող
զինվորների վրա ռումբ նետելով[9] նրանցից շատերին սպա-
նելը և նման խռովարարական գործողությունները բորբո-
քեցին թուրք ժողովրդի մոլեռանդությունը։ Այդ օրվանից էլ

Սասունում սկսվեց ահավոր մի ջարդ։ Կառավարությունը բռնություն և խստություն գործադրելով, ցանկացավ հանդարտեցնել խռովությունը, սակայն անկարելի էր մարել ժողովրդի դայրույթը։ Մի կողմից ռումբեր էին նետվում պանդոկներից, սենյակներից, պատշգամբներից, մյուս կողմից մարտին հրացանի սաստիկ կրակի տակ էին առնվում այն լուսամուտները, որոնցից ռումբեր էին նետվում։ Այդ միջոցին երկու կողմերն էլ մեծ կորուստներ տվին։ Այս ամբողջ արյունահեղությունը կարելի էր ամենամեծ հանցագործությունը համարել մարդկության և քաղաքակրթության դեմ, սակայն դրա միակ պատասխանատուն, այդ արյունոտ տեսարանների պատճառը նրանք էին, ովքեր իրենց սրտերում կրում էին անձնական մոլի ցանկություններ և անհագ տենչանք։

Այսպես վերջացավ նաև 1896 թվականի կոտորածը։ Երկու կողմից էլ իզուր տեղը բազմաթիվ անմեղներ զոհ գնացին։ Դրանից հետո ուժեղացավ մեծ տերությունների միջամտությունը։ Անմիջապես միջամտեցին նաև կոմիտեները։ Հայ կոմիտեներից մասնավորապես Դրոշակ կուսակցությունը այս ջարդից հետո մեծ տերություններին ուղղված բողոքագրում առաջադրում էր հետևյալ պահանջները։

«Բազմաթիվ անգամներ թուրքերի բռնությունների դեմ բողոքեցինք մեծ տերություններին, սակայն մեր այս օրինական բողոքները մերժվեցին կտրականապես։ Սուլթան Համիդը մեզ պատասխանեց արյունալի վրեժով։ Եվրոպան տեսավ այդ ահավոր եղեռնը և դարձյալ լռեց։

Մեր թափած արյան փոխարեն մեր առաջադրած պահանջներին այժմ էլ մեր աչքի առաջ մարմնավորվեց սրբազան վրեժի գաղափարի նման սև ուրվական։ Եվրոպան ոճրային անտարբերությամբ մեզ պատասխանեց. «ուժը հաղթում է իրավունքին»։ Մենք՝ անճարներս, մարդկային իրավունքներից զուրկ թշվառներս էլ Աբդուլ Համիդի բռնապետական շղթաները փշրելու համար, ամեն տեսակի միջոցներ փնտրելով, ստիպված եղանք դիմելու տեխնիկային։

Այլևս վաղուց անցել է դիվանագիտական նենգությունների ժամանակը։

100,000 անմեղ հայերի թափած արյունը մեզ այժմ
840 իրավունք է տալիս ազատություն պահանջելու։ ‖ Հակառակ

մեր թշնամիների թելադրանքներին, մենք պահանջել և պահանջելու ենք միայն ամենից ավելի անհրաժեշտը.

այդ էլ սրանք են՝

1. Մեծ տերությունների կողմից ընտրված եվրոպացի արտակարգ կոմիսարի նշանակում Հայաստանի համար։

2. Կուսակալների, տեղակալների և կառավարիչների ընտրությունը արտակարգ կոմիսարի կողմից և նրանց հաստատումը սուլթանի կողմից։

3. Եվրոպացի սպաների հրամանի տակ տեղական ժողովրդից անկանոն զորքի, ժանդարմերիայի և քաղաքային ոստիկանության կազմակերպում։

4. Արդարադատության ռեֆորմի գործադրում եվրոպական ձևով։

5. Դավանանքի, կրթության և մամուլի կատարյալ ազատություն։

6. Երկրի ընդհանուր հասույթի երեք քառորդի ծախսում տեղական կարիքների համար։

842 || 7. Ժամկետանց տուրքերի ներում։

8. Հարկերից ազատում հինգ տարի ժամանակով և հաջորդող հինգ տարվա հարկերի հատկացում ներկա խառնակություններից առաջացած վնասները ծածկելու համար։

9. Բռնագրավված անշարժ գույքի վերադարձում։

10. Հայ գաղթականների ազատ վերադարձ։

11. Հայ քաղաքական հանցագործների ներում։

12. Մեծ պետությունների պատվիրակներից կազմված ժամանակավոր հանձնաժողովի նշանակում, պայմանով, որ այդ հանձնաժողովը հաստատվի Հայաստանի գլխավոր քաղաքներից մեկում և վերահսկի վերոհիշյալ հոդվածների կենսագործմանը»։

Ահա սրանք էին հայերի ցանկացած պայմանները։ Աբդուլ Համիդի հոռի ռեժիմը տարածվում է ոչ միայն հայերի վրա, այլև ազգի բոլոր անհատների, ամբողջ օսմանյան ազգի վրա։ Հետևաբար օսմանցիների անունից գործելով և օսմանյան հայրենիքի փրկությունը նկատի ունենալով, ցանկալի էր նախ և առաջ գործել ազատասեր գաղափարների տեր օսմանցիների հետ միասին և այս պահանջների մեջ մտցնել նաև մյուս հայրենակիցների իրավունքների պահպանությունը երաշխավորող հոդվածներ։

* * *

Հայկական հարցը բացառապես հայերի կյանքի և ազատության պահպանման համար հրապարակ եկած հարց չէր։ Արդարև, այս հարցի առաջքաշումը հայերի կողմից նպատակ ուներ պահպանել նրանց հասարակական դիրքը և ազատությունը, սակայն կային երկու պետություններ ևս, որոնք ցանկանում էին ամենից ավելի օգուտ քաղել դրանից և իրենց քաղաքական ու տնտեսական շահը կապում էին այդ հարցի լուծման հետ։ Դա էլ Անգլիան էր և Ռուսաստանը։

Ի միջի այլոց, Կիպրոսի պայմանագրում հիշատակված հանձնառություններից բացի, Անգլիայի ուշադրությունը շարունակ կենտրոնացած էր Անատոլիայի վրա. սրա պատճառն այն էր, որ Անգլիան Անատոլիայում ուներ տնտեսական, կրոնական և քաղաքական շատ կարևոր շահեր։ 1890 թվականից ի վեր Աբդուլ Համիդը երբեմն ձեռնարկում էր այնպիսի գործեր. որոնք վնասում էին այդ շահերից մի քանիսին։

Բեռլինի պայմանագրից հետո Անգլիայի առևտրական
843 շահերի մեջ նկատվում էր նպատակի որոշ ‖ փոփոխություն։ Այն ճանապարհը, որը ժամանակին Էրզրումի և Բայազիդի միջոցով Սև ծովը կապում էր Իրանի հետ և դարեր շարունակ հայերի համար ծառայում էր որպես հարստացման միջոց, 1878 թվականին ստացել էր արտակարգ նշանակություն։

Հենց դրա համար էլ անգլիական կառավարությունը համաձայնություն չէր տվել Սան-Ստեֆանոյի դաշնագրի տասնիններորդ և քսաներորդ հոդվածներին, որովհետև այդ հոդվածները վերոհիշյալ ճանապարհը դնում էին Ռուսաստանի մշտական վերահսկողության տակ։ Հետևաբար, Բեռլինի դաշնագրի վեցերորդ հոդվածի համաձայն այս հողերը թողնվել էին Թուրքիային, և այս փաստը համարվել էր որպես Անգլիայի հաղթանակ։

Սակայն այս ճանապարհը հետզհետե կորցրեց իր նախկին նշանակությունը։ Ավելի ուշ հայերի համար բացվեց առևտրական նոր ճանապարհ՝ Սև ծովից դեպի Կասպից ծով տանող ճանապարհը։ Բայց այդ ժամանակամիջոցում հայերը առևտուրը կատարում էին միշտ Անգլիայի

հետ։ 1840 թվականից ի վեր Մանչեստրում հաստատված հայերը բամբակ էին արտահանում դեպի Թուրքիա և Իրան, և այդ բամբակը հասնում էր մինչև Միջին Ասիա։ Հետևաբար Անգլիայի առևտրական շահերը Ռուսահայաստանից ավելի Թուրքահայաստանում էին վտանգի ենթարկվում։ Այստեղից երևում էր, որ Վանի և Էրզրումի շրջաններում հայերի կրած ճնշումներից ամենից ավելի անհանգստանում էր Անգլիան։ Մինչև իսկ Սամսոնի անգլիական հյուպատոսը այս շրջանի անկարգությունների մասին գրել էր հետևյալ զեկուցագիրը։

«Ներքին կացությունը չափազանց ողբալի է։ Խանգարվել, նույնիսկ կանգ է առել առևտուրը, որովհետև այստեղ նա ամբողջությամբ հայերի ձեռքին է։ Քանի որ ոչ ոք իր ապագայի մասին վստահ չէ, գոյություն չունի առևտրական վարկ. իսկ սա ցավալի է։ Չի կարելի ասել թե ո՞ւր կհասնի սրա վերջը»։

Օսմանյան երկրի մյուս մասերում էլ Անգլիայի առևտրական շահերը լավ վիճակում չէին։ Այն ժամանակ, երբ Գերմանիայի և Ֆրանսիայի կառավարությունները, ֆինանսական ղեկավարների և հանձնառուների համար Ռումելիում և Անատոլիայում Ռումելիի և Անատոլիայի երկաթուղիների, նավամատույցներում քարափի կառուցման ընկերության նման առանձնաշնորհումներ էին ձեռք բերում, Անգլիան նման գործերից հեռու էր պահվում։

Առևտրական հարցը այս կացության մեջ եղած ժամանակ, լավ վիճակի մեջ չէին նաև բողոքական միսիոներները։ Անգլիական եկեղեցիները Անատոլիայում չունեին ոչ
844 մի միսիոներ։ || Այստեղ միսիոներների մեծ մասը ամերիկացիներ էին և գտնվում էին ամերիկյան կառավարության պաշտպանության տակ։ Միսիոներների խորհուրդը, որի կենտրոնը գտնվում էր Լոնդոնում, բազմաթիվ անգամներ դիմել էր անգլիական կառավարությանը և խնդրել, որ նա որևէ քայլ ձեռնարկի այդ ուղղությամբ։

Բողոքականությունը ամենից ավելի շատ տարածված էր Հայաստանում։

1892 թվականից սկսած չափազանց ավելացան միսիոներների գանգատները։ Նրանք դիմեցին լորդ Սոլսբերիին այն կապակցությամբ, որ փակվեցին այն եկեղեցիներն ու

դպրոցները, որոնք բացվել էին առանց հրովարտակի, երկար խոսվեց միսիոներների հանդեպ օսմանյան պաշտոնյաների գործադրած բռնությունների մասին։ Վերջապես անգլիական համայնքների պալատում տեղի ունեցած հարցապնդումից հետո, լորդ Սոլսբերին Ստամբուլի դեսպանին ուղարկեց հետևյալ հեռագիրը.

«Քրիստոնյաների նկատմամբ թույլատրված բռնությունները ստիպում են գործածել խիստ լեզու։ Տեղեկացրեք Բարձրագույն Դռան, որ եթե օսմանյան կառավարությունը շուտափույթ անհրաժեշտ միջոցներ չձեռնարկի, անգլիական կառավարությունը անձամբ ձեռնամուխ կլինի ընդունություն կատարելու»։

Ամերիկայի հետ միասին անգլիական կառավարության կողմից ցույց տրված այս խստությունը վախեցրեց Աբդուլ Համիդին։ Դրանից հետո այլևս տեղի չունեցան բողոքականների ձերբակալություններ։ Միսիոներներն անմիջապես ստացան իրենց անհրաժեշտ հրովարտակը։ 1893 թվականին Ակնում փակվեց երկու եկեղեցի։ Խարբերդում միսիոներներից ոմանք վնասակար գրքերի ընթերցանության պատճառով ենթարկվեցին հալածանքի։ Այդ պատճառով անգլիական դեսպանը հուշագիր ներկայացրեց Բարձրագույն Դռանը։ Լոնդոնի բողոքական կենտրոնից էլ հուշագիր հանձնվեց դեսպան Ուայտին փաշային։ Այս հուշագրում հայերի հանդեպ և հատկապես ազգայնության պահպանման նպատակով բողոքական եկեղեցուն հետևելու արգելք հանդիսացող հնչակյանների դեմ մտքեր էին արտահայտվում։ Սակայն Աբդուլ Համիդը, բացարձակապես հակառակ լինելով Անգլիային, բոլորովին կարևորություն չտվեց այս այտարարություններին։

Անգլիական դեսպանը այդ նպատակին հասնելու համար բողոքական երկրների Ստամբուլի դեսպանների հետ միություն կազմեց։ Շվեդական և հոլանդական դեսպանները մտան այդ միության մեջ. գերմանական կառավարությունը հայտնեց, որ այդ մասին հանդես կգա բանավոր հայտարարությամբ. ամերիկյան կառավարությունը այս մասին խոստացավ իր օժանդակությունը։ Երբ Անգլիայի
845 այս հուշագիրը պաշտպանություն գտավ || բոլոր բողոքական կառավարությունների կողմից, Բարձրագույն Դուռը

որոշեց բացարձակապես չմիջամտել բողոքականների դավանական ազատության գործին (1894)։

Անգլիան դավանական հարցը լուծելուց հետո, ձեռնամուխ եղավ նաև քաղաքական հարցերին։ Քանի որ այս խնդիրը մասամբ վերաբերում էր հայերին, ապա դրա լուծումն էլ ավելի դժվար էր։

Համաձայն Կիպրոսի դաշնագրի. Անգլիան ուներ միջամտելու իրավունք, բայց նա վաղուց ի վեր զանց էր առել այս պարտավորությունը, որովհետև իր միջամտությունը պատճառ էր դառնալու նաև ուրիշների միջամտության, իսկ դա Անգլիայի համար երբեք ցանկալի չէր։ Մյուս կողմից Անգլիայում արտակարգ ազդեցություն վայելող Անգլո-ամերիկյան ընկերությունը դրդում էր անգլիական կառավարությանը կատարելու այդ միջամտությունը։ 1890 թվականին հայերի կողմից և հայերի փողով կազմված այս ընկերությունը, անգլիացիներից շատ քիչ անդամներ ունենալով հանդերձ, վերջում շատ ավելի մեծ ծավալ ստանալով, սկսել էր հայերի իրավունքների պաշտպանության համար թերթերում հոդվածներ հրատարակել։

Աբդուլ Համիդը կարծում էր, որ այդ հոդվածները գրըվում էին քաղաքական մի կուսակցության կողմից, իսկ արտաքին գործերի մինիստր Սայիդ փաշան հայտնում էր, որ այս հոդվածները Թուրքիայի դեմ լինելով հանդերձ, գրվում էին արտասահմանում հանրային կարծիքը մոլորեցնելու համար։ Սայիդ փաշան այս հարցի մասին հատուկ գրություն էր ուղարկել Լոնդոնի դեսպանին, իսկ դեսպանը պատասխանել էր, որ ինքը տեղեկություն չունի այդ հոդվածներից, բայց միաժամանակ հայտնել էր, թե ինքը հետևցնում է, որ 1891 թվականից ի վեր Բարձրագույն Դուռը փոխել է իր վերաբերմունքը հայերի հանդեպ։ Այսպա հետևելով վերջին տասը տարվա ընթացքում Անգլիայի կողմից հայտնված տեսակետին. հանձնարարել էր ուշադրություն դարձնել պաշտոնյաների ընտրության հարցին, իսկ Բարձրագույն Դուռը շարունակել էր իր հին վարքագիծը։

Անգլիայի այս ընթացակերպը շատ էր անհանգստացնում Աբդուլ Համիդին։ Անգլո-ամերիկյան ընկերության գործունեության մասին լուր ստանալով, Աբդուլ Համիդը խիստ դայրացավ, նույնիսկ դանդատվեց. որ պառլամենտում արտասանված ճառերով, թերթերում հրատարակված

հոդվածներով գրգռում են հայերին։ Աբդուլ Համիդը հար-
մար չէր նկատում նման հոդվածների հրատարակումը թեր-
թերում և փափագում էր, որ անգլիական մամուլը ևս լինի
այնպիսին, ինչպիսին էր օսմանյան մամուլը։ Մինչև իսկ
Ռուստեմ փաշան մի օր այս հարցի մասին Յըլդըզից ստա-
846 ցած հեռագիրը տարել էր արտաքին գործերի մինիստրու-
թյուն։ Այս հեռագրում ասված էր, որ անգլիական կառա-
վարության ներկա գործելակերպը չի համապատասխանում
օսմանյան պետության և Անգլիայի միջև վաղուց ի վեր գո-
յություն ունեցող անկեղծությանը և նորին մեծություն սուլ-
թանը հարց է տալիս, թե մինչև ե՞րբ պիտի շարունակվի
այս ցավալի վիճակը (1893)։

Արդարև ամբողջ Անգլիան դեմ էր Աբդուլ Համիդին։ «Դեյլի տելեգրաֆ» թերթի հոդվածներից և Գլադստոնի արտասանած ճառերից մարդասերները, հոգևորականները, համալսարանի ուսանողները, քաղաքական ղեկավարները, գրականագետները, ազատականները, պահպանողականները, միութենականները և վերջապես ամբողջ Անգլիան դեմ էին Աբդուլ Համիդին։ Սայիդ փաշան Լոնդոնում առաջացած մտքերի այս փոփոխության համար զանգատվում էր Լոնդոնի դեսպանին, սակայն չէր իմանում, թե անգլիական ժողովուրդը որքան էր հետաքրքրվում օսմանյան պետության վիճակով, և թե հասարակությունը որքան կարող էր ազդվել թերթերի հաղորդած լուրերից։

Աբդուլ Համիդը այս հարձակումների կապակցությամբ անձամբ բողոքեց Անգլո-ամերիկյան ընկերության դեմ։ Ստամբուլի անգլիական դեսպանը վերջին անգամ հայտնեց, որ այդ դրությունը վերացնելու միակ միջոցն է լավ վարչակարգը և արդարության հաստատումը մուսուլմանների ու քրիստոնյաների միջև։ Աբդուլ Համիդը կարծես համոզվեց դեսպանի հայտարարությունից, և որոշ ժամանակ տիրեց հանդարտություն և խաղաղություն։ Աբդուլ Համիդը, գիտենալով, որ չպիտի կարողանա բացահայտ թշնամությամբ գործել Անգլիայի դեմ, կամեցավ գործել խուսափողական միջոցներով։

Անգլիական կառավարությունը այս բոլոր գործերը կատարում էր Անատոլիայում իր տնտեսական շահերը պահպանելու համար։ Օսմանյան երկրի այս մասում հան-

դարտությունն ու խաղաղությունը կատարյալ լինելու դեպքում Անգլիան շատ հեշտությամբ կարող էր զարգացնել իր առևտուրը. իսկ հայերին ամենից ավելի խռովության դրդողը իրականում Ռուսաստանն էր։ Օրինակ, Ռուսաստանի էրզրումի հյուպատոսը տասը տարուց ի վեր երբեք չէր փոխվել։ Այս անձը հայերին բացե ի բաց խռովության էր գրգռում։ Ռուսաստանը պաշտպանում էր հայ խռովարարներին, ուզում էր նրանց ազատել օսմանյան կառավարության ձեռքից։ Ստույգ է, որ հայերի մեծ մասը դիմում էր Անգլիայի կառավարությանը, սակայն կային նաև Ռուսաստանին, մինչև անգամ Ֆրանսիային դիմող հայեր։ Խռովարար կոմիտեները Ռուսաստանում ունեին իրենց կենտրոնները և թղթակիցները. նույնիսկ «Կապույտ գրքում» ամբողջությամբ արձանագրվել էին այս կուսակցությունների ոճրագործություններն ու խռովությունները։

Իսկ Բարձրագույն Դուռը կարծում էր, որ հայկական խռովությունը Անգլիայի վրիժառությունն է, որը գոհ չէր
847 Ռուսաստանի և || Աբդուլ Համիդի միջև ստեղծված մտերմությունից։ Մինչդեռ Անգլիան երկար ժամանակ կարևորություն չէր տալիս հայերի պահանջներին։ Նույնիսկ Անգլիայի էրզրումի հյուպատոսը իր մի զեկուցագրում գրել էր, թե «մի տարի է, ինչ գտնվում եմ այս երկրում, ոչ մի կերպ չեմ հասկանում հայերի պահանջները»։ Անգլիայում մտքերի փոփոխության համար ամենից շատ պատճառ էին հանդիսացել «Դեյլի Նյուս»-ի հոդվածները։ Արդարև անկասկած է, որ այդ հոդվածների պատճառով կոմիտեները կրկնակի ավելացրին իրենց ջանքերը և որոշ չափով էլ հուսադրվեցին։ Մասնավորաբար 1892 թվականին ազատականների իշխանության գլուխ անցումը ավելացրել էր նրանց հանդգնությունը։ Անգլիական հյուպատոսները ավելի էին գրգռել այդ համարձակությունը, իսկ կառավարությունը, ենթարկվելով հանրային կարծիքին, սկսել էր պաշտպանել հայերին։

Անգլիական կառավարությունը այս միջոցներին Աֆրիկայում, Ամերիկայում, Ասիայում զբաղված էր ավելի կարևոր գործերով, բայց չէր կարող լքել նաև հայերին։ Տարված լինելով Աբդուլ Համիդի երկերեսանի քաղաքականությամբ, Անգլիային չէր հաջողվում արագ լուծել այս հարցը։ Սակայն լորդ Սոլսբերիին հաջորդած Չեմբեռլենը զոր-

ծեց ավելի հանդարտ։ Նա համոզվեց, որ բողոքականների
հարցի նման մի հարց կարելի կլինի լուծել միայն մեծ տե-
ությունների հետ համաձայնության գալու միջոցով։
Սաամբուլի անգլիական դեսպանը շատ հարմար դատեց
այդ միտքը։ Արդարև Ռուսաստանի և Ֆրանսիայի կառա-
վարությունները կարող էին մտնել այսպիսի մի համաձայ-
նության մեջ, որովհետև Ֆրանսիան հայ կաթոլիկների, իսկ
Ռուսաստանը Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածի
հիման վրա կատարելապես կհամաձայնեին այս մտքին։
1894 թվականի Սասունի ջարդի ժամանակ անգլիական
դեսպանատունը այդ ջարդի մասին տեղեկացրեց Բարձրագույն
Դռանը, իսկ Բարձրագույն Դուռը հայտարարեց, որ հյուպա-
տոսը սուտ է խոսում, և որ այդ խռովության հրահրողը
ինքը է եղել։ Դրանից հետո անգլիական դեսպանը տեղե-
կացրեց, որ անմիջապես կուղարկի քննիչ հանձնաժողով։
Որոշվեց ուղարկել ռուս, անգլիացի և ֆրանսիացի ներկա-
յացուցիչներից բաղկացած մի հանձնաժողով։ Այդ ժամա-
նակ Անգլիան այս հաջողությունից աղատ շունչ քաշելով
գործը թողեց Ռուսաստանին և Ֆրանսիային։
Ֆրանսիական և ռուսական կառավարությունները այս
հարցը լուծելու համար գործեցին միասնաբար։ Սակայն
այս գործակցությունը նախապես որոշված համաձայնու-
թյան հետևանք չէր, այլ իրենց միջև եղած նույնանման
848 *պայմանից և || շահերից առաջացած գործակցություն էր։*
Այնուամենայնիվ, այս միջոցին Օսմանյան երկրում Ֆրան-
սիայի դիրքը շատ նպաստավոր էր։ Աբդուլ Համիդը ֆրան-
սիացիներին շատ դրամ շահելու միջոցներ էր տալիս,
նրանք էին ստանում բոլոր առանձնաշնորհումները։ Աբդուլ
Համիդը սրանով էլ չէր բավարարվում, առատորեն
պատվո նշաններ էր շնորհում ֆրանսիական թերթերին։
Հետևաբար ֆրանսիական շահերին հակառակ էր Աբդուլ
Համիդի քաղաքականության դեմ որևէ աննպաստ գործելա-
կերպ։ Իսկ Ռուսաստանը բացի հայերին թշնամի լինելուց,
սկսել էր հետևել Նիկոլայ առաջինի քաղաքականությանը։
Օսմանյան երկրներում փոքր պետությունների ստեղծումը, ի
վերջո կարող էր դժվարությունների պատճառ դառնալ Ռու-
սաստանի համար։ Ռուսաստանի համար շատ նպաստավոր
էր, որ օսմանյան պետությունը Եվրոպայում նեղուցները

պահպանելու պարտականություն էր կատարում։ Եթե օսմանյան պետությունը ընդուներ Ռուսաստանի հովանավորությունը, Բարձրագույն Դռան անկախության համար Ռուսաստանը ոչ մի օժանդակություն չէր խնայի։

Ահա այս պատճառով Ֆրանսիայի և Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրները ծառայում էին միևնույն գաղափարին։ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը ծերացած լինելով չափազանց շատ էր ցանկանում խաղաղություն և անդորրություն։ Իշխան Լոբանովը փափագում էր պահպանել ներկա հավասարակշռությունը և զգուշանում էր այս հավասարակշռությունը խախտող տարաձայնություններից։ Նա ժամանակին ծառայել էր Վիեննայի ռուսական դեսպանությունում, պայքարել էր Բալկաններում Ավստրիայի հարձակումների դեմ։

Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը, լինելով ավելի երիտասարդ, հավանաբար նրա չափ կողմնակից չէր խաղաղության և հանդարտության։ Մեծ հույսեր էր ներշնչում Գաբրիել Հանոթոն։ Ժամանակին եղել էր գործերի հավատարմատար Ստամբուլում։ Իր ուշիմության շնորհիվ ձեռք էր բերել փայլուն դիրք։ Հանոթոն մեծ համակրանք էր տածում Աբդուլ Համիդի հանդեպ, դրա համար էլ Հանոթոն իշխան Լոբանովի նման շարունակ հետապնդում էր Թուրքիայի շահերին համապատասխանող քաղաքականություն։

Հայկական հարցի գոյության ամբողջ ժամանակամիջոցում Հանոթոն արտաքին գործերի մինիստրությունում չի եղել։ Ջարդերը սկսվել էին հոկտեմբերի մեկին, այսինքն նրա առաջին մինիստրության շրջանը վերջանալուց առաջ և հավանաբար նրա ազդեցությունը եղել է նաև Կոնտրեկսևիլի տեսակցության վրա։

Հանոթոն շարունակ պաշտպանում էր Աբդուլ Համի-
849 դին։ Երբ տեղի ունեցավ 1896 թվականի ջարդը, || բոլոր դեսպանները մի հուշագիր ուղարկեցին Աբդուլ Համիդին։ Այդ հուշագրի բովանդակությունը հետևյալն էր։

«Մեծ տերությունների դեսպանները մայրաքաղաքում և շրջակայքում շարունակվող խառնակությունների մասին իրենց ստացած տեղեկությունները ներկայացնում են Ձեր կայսերական ուշադրության։ Բազմաթիվ զինված հրոսակներ անիրավաբար հետապնդում և սպանում են հայերին,

բավականանալով փողոցում նրանց հետապնդելով և սպանելով, հայերին բռնելու և սպանելու համար մտնում են նրանց տները, նույնիսկ օտարների բնակած տները։ Նման դեպքեր նկատել են անձամբ դեսպանները և դեսպանատան ծառայողների մեծամասնությունը։ Բուն քաղաքից բացի, նման դեպքեր տեղի են ունեցել նաև Բեբեք, Ռումելի, Հիսար, Քանդիլի և այլ տեղերում։ Մեծ տերությունների դեսպանները ուղղակի դիմում են որպես վեհապետի Ձերդ կայսերական մեծության, խնդրելով անհապաղ ու վճռական հրամանով անմիջապես վերջ դնել այդ անօրինակ դեպքերին, որոնք վտանգավոր հետևանքներ կարող են ունենալ օսմանյան պետության համար»։

Դեսպանների այս հուշագրի կապակցությամբ Հանոթոն Աբդուլ Համիդի մասին չասաց պարսավանքի ոչ մի
խոսք, որովհետև կատարելապես գիտակ էր, որ, ինչ էլ ասե-
850 լու լիներ, հեռագրով || բառ առ բառ պիտի հաղորդվեր Աբ-
դուլ Համիդին։

Սակայն նման քաղաքականություն վարելու համար անհրաժեշտ էր ունենալ Բիսմարկի չափ անկաշկանդ մտածողություն, մինչդեռ ոչ Հանոթոն, ոչ էլ Լոբանովը չունեին այդ հատկությունը։ Այդ պատճառով երկուսն էլ, ընդունելով անգլիական պահանջները, միջամտեցին հայկական հարցին։ 1894 թվականին, երբ տեղի ունեցավ Սասունի դեպքը, նրանք մասնակցեցին հանձնաժողովին։ Հավանաբար նրանք անկարևոր մի բան էին համարում այս դեպքը, որովհետև այս թվականին գրած իր մի հուշագրում Բարձրագույն Դուռը հայտարարում էր, որ այս խառնակությունը տեղի է ունեցել մի հայ խռովարարի կողմից։ Ըստ Բարձրագույն Դռան հուշագրի, հիշյալը չի բավականացել հայերին խոսքով գրգռելով, նաև քաջալերել է նրանց, որ օդապարիկով Անգլիայից զինվոր բերել տալով, հարձակվեն Մուշի վրա։ Կազմակերպել է նույնպես հրացանով, դաշույնով, կացինով և նման զենքերով զինված հրոսախմբեր։

Հիշյալ հրոսակները, հաճույք զգալով իրենց գործած վայրագություններից, նախատական խոսքեր են ասել պետական կրոնի դեմ և «կեցցեներ» են կանչել իրենց երևակայական թագավորի համար։

Բարձրագույն Դուռը բողոքում էր նաև Լոնդոնում

հնչակյանների նկատմամբ ցուցաբերվող հանդուրժողա-
կանության համար։ Լոնդոնի դեսպան Ռյուստեմ փաշայի
տված մի զեկուցագրում հայտարարվում էր, որ հնչակ-
յանները հարաբերություն ունեն Լոնգոնում բնակվող ռուս
նիհիլիստների հետ։ Բարձրագույն Դռան կողմից Ստամբուլի
անգլիական դեսպանին տրված մի հուշագրում հետևյալ
մտքերն էին արտահայտվել։

«Վանի անգլիական հյուպատոսը վերջերս եկել է
Բիթլիս, նրա դրդումով այդ երկու քաղաքներում բնակվող
հայերը ժողով են գումարել և օսմանյան կառավարության
դեմ ստորագրել մի խնդրագիր։ Տեղական պաշտոնեության
կողմից կատարված քննության հետևանքով պարզվել է, որ
հիշյալ հյուպատոսը իր թարգմանչի միջոցով հայերին
դրդել է գումարել նման ժողովներ և մինչև անգամ նրանց
ապստամբության է հրահրել կառավարության դեմ»։

Բարձրագույն Դուռը անգլիական դեսպանին այս կար-
գի հաղորդագրություն ներկայացնելով հանդերձ, արտա-
851 սահմանյան երկրներում ‖ գտնվող դեսպաններին բողոքի
ձևով հայտնում էր, որ Սասունի կողմերում ապստամբած
հայերի դեմ զորք ուղարկելով, ապահովել է անդորրությու-
նըն ու խաղաղությունը, սակայն անբարյացակամ տրամա-
դրություններով տարված եվրոպական մամուլը ճշմարտու-
թյանը հակասող հոդվածներ էր հրատարակում։

Այս կերպ գործելով, Աբդուլ Համիդը ցանկանում էր
Սասունի ջարդի քննության հարցում արգելք լինել Ֆրան-
սիայի և Ռուսաստանի միացմանը Անգլիային։ Բացի դրա-
նից, Աբդուլ Համիդը Սասունի դեպքի քննության համար
նախապես համաձայնվել էր հանձնաժողով ուղարկել,
բայց հետո միտքը փոխել էր և ավելի ուշ նորից համա-
ձայնվել անգլիական դեսպանի սպառնալիքի հետևանքով։

Սակայն հյուպատոսը դեռ չվերադարձած, Ստամբու-
լում լավ համոզում էր ստեղծվել Սասունի դեպքի ճշգրիտ
վիճակի մասին։ Իզմիրլյան պատրիարքը զգալով, որ հա-
յերը ընդհանրապես պաշտպանության են արժանանալու,
առաջ էր քաշել Աբդուլ Համիդի խոստացած բարենորո-
գումների հարցը, և նույնիսկ գրել էր հայ ազգի պահանջ-
ները բովանդակող մի հուշագիր։

1895 թվականի փետրվարի յոթին լորդ Ջեմբեռլենը
Ստամբուլի իր դեսպանին հեռագրելով, թույլատրեց Ռու-

սաստանի և Ֆրանսիայի դեսպանների հետ միասին հե-
տաքրքրվել բարենորոգումների հարցով։ Անգլիական կա-
ռավարությունը, քսան տարուց ի վեր հետապնդած քաղա-
քականությունից հրաժարվելով, կողմնակից եղավ Սան-
Ստեֆանոյի դաշնագրով նախատեսված բարենորոգում-
ների գործադրման։ Սակայն անգլիական ժողովուրդը չբա-
վականացավ միայն սրանով. նա պահանջեց նաև ազատ
արձակել մեկ երկու տարուց ի վեր խռովությունների պատ-
ճառով ձերբակալված և բանտարկված հայերին։ Լորդ
Չեմբեռլենը նույնպես տերություններին առաջարկեց այս մա-
սին ներկայացնել միացյալ պահանջ։ Սակայն Ռուսաս-
տանի և Ֆրանսիայի կառավարությունները հարմար գա-
տեցին նախ և առաջ պահանջել ընդհանուր ներում, ապա
առաջ քաշել բարենորոգումների հարցը։ Աբդուլ Համիդը
Ռուսաստանի և Ֆրանսիայի կառավարությունների այս
ընթացքը Անգլիայի քաղաքականության պարտություն
համարելով, մի քիչ ավելի համարձակ դարձավ։ Որոշ
ժամանակ հետո հայտարարեց, որ հայկական խռովու-
թյունների և անգլիացիների տարածած անստույգ լուրերի
հետևանքով առաջացած ներկա կացությունը չէր հասել
բարենորոգումների գործադրման անհրաժեշտության աս-
տիճանին։ Այնուամենայնիվ, բայրամից հետո մի հանձ-
նաժողով պիտի ուղարկվեր Անատոլիա, և իր կարծի-
852 քով այս քաղաքականությունից հետո ‖ այլևս Բարձրա-
գույն Դռան և Անգլիայի միջև տարաձայնություն չէր առա-
ջանա։ Միևնույն ժամանակ Պետերբուրգի անգլիական
դեսպանն էլ հետևյալն էր հեռագրում.

«Տեսա իշխան Լոբանովին։ Անհամբերությամբ սպա-
սում է դեսպանների առաջարկին։ Նրա կարծիքով հայերը
մեծամասնություն են կազմում միայն Բիթլիսում, Անկարա-
յում և Ալեքսանդրետում։ Իսկ այս երեք քաղաքները իրա-
րից այնքան հեռու են, որ դրանք մեկ նահանգի մեջ միա-
վորելն անհնարին է։ Հայերը ցրված են ամբողջ երկրի և
ավելի ճիշտ ամբողջ երկրագնդի վրա։ Ճիշտն ասած, այսօր
գոյություն չունի ոչ մի կետ, որը կարողանա Հայաստան
կոչվել, հետևաբար այս մասին չի կարելի նկատի ունենալ
Լիբանանի կազմակերպությունը»*։

* «Կապույտ գիրք», 1896, էջ 16։

Ռուսաստանում իշխան Լոբանովը այսպիսի դատողություններ էր անում, իսկ պարոն Հանոթոն գրեթե նույն ձևով իր միտքն արտահայտում էր Ֆրանսիայի պառլամենտում։

Իշխան Լոբանովի այս պատասխանը ստացվելու ժամանակ հասավ նաև Էրզրումի հյուպատոսների ներկայացրած միացյալ զեկուցագիրը։ Այս զեկուցագրից երևում էր, որ հայերի վիճակը դժվարացել է և քաղաքում գտնվող հյուպատոսները իրենց թարգմաններին ուղարկել են նահանգապետի մոտ, իսկ վերջինս նրանց բարյացակամորեն ընդունելուց բացի, հայտնել է, որ նման տեղեկությունները որևէ հիմքից զուրկ են։

Այդ ժամանակաշրջանում Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները Ստամբուլում գործում էին միասնաբար։ Երկու դեսպանները մի հուշագրի հետ միասին կազմել էին բարենորոգումների մի նախագիծ։ Այդ հուշագիրն ու նախագիծը Բարձրագույն Դռանը պետք է հաղորդվեին կիսապաշտոնական ձևով։

Քանի որ Աբդուլ Համիդը հայտնել էր իր համաձայնությունը, Հանոթոն բոլորովին անկախ էր թողնում իր դեսպանին։ Իսկ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը կասկածում էր այս նախագծի բարեհաջող արդյունքի վրա, բայց նա էլ ամբողջ գործը թողնում էր երկու դեսպանների հեռատեսությանը։

Երկու դեսպանները հուշագիրը և բարենորոգումների նախագիծը 1895 թվականի մայիսի 11-ին ներկայացրել էին Բարձրագույն Դռանը։ Այս նախագիծը վերաբերում էր Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքիրի նահանգներին։ Հուշագրի զանազան կետերը հետևյալներն էին.

1. Անհրաժեշտության դեպքում կրճատել նահանգների թիվը։

2. Երաշխիքներ տալ կուսակալների ընտրության հարցում։

853 3. Ներում շնորհել քաղաքական հանցանքների համար դատապարտված կամ բանտարկված հայերին։

4. Վերադարձնել գաղթած և կամ աքսորված հայերին։

5. (?)

6. Հետաքննել բանտերի և բանտարկյալների վիճակը։

7. Նահանգներում բարենորոգումների գործադրմանը հսկելու համար նշանակել արտակարգ կոմիսար։

8. Ստամբուլում ստեղծել մշտական վերահսկիչ հանձնաժողով։

9. Հատուցել Սասունում և ուրիշ վայրերում տեղի ունեցած դեպքերից հայերի կրած վնասները։

10. Կրոնափոխության հարցը դնել օրինական հիմքի վրա։

11. Ամբողջապես գործադրել ու պահպանել հայերին տրվող առանձնաշնորհումները։

12. [Բարելավել] Անատոլիայի մյուս նահանգներում բնակվող հայերի վիճակը։

Այս նախագիծը Անգլիային այնքան էլ չէր գոհացրել։ Անգլիական կառավարությունը չէր կարողացել իր ցանկացած հոդվածներն ավելացնել այս նախագծին, որովհետև Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները հայտնել էին, որ այդ հոդվածները շատ դժվար կլիներ ընդունել տալ ինչպես իրենց կառավարություններին, այնպես էլ Բարձրագույն Դռանը։ Սակայն Անգլիան այս մասին որոշել էր պահանջել գոնե մյուս պետությունների բարոյական օժանդակությունը, որի համար դիմել էր Գերմանիայի, Ավստրիայի և Իտալիայի կառավարություններին։ Գերմանիայի կառավարությունը Անգլիայի առաջարկի կապակցությամբ դիմել էր Աբդուլ Համիդին, որը ոչ միայն չէր համաձայնվել բարենորոգման վերաբերյալ Գերմանիայի ներկայացրած առաջարկին, այլև օրից օր ձգձգել էր հիշատակագրին տալիք պատասխանը։

Այդ միջոցին Դիարբեքիրի ֆրանսիական հյուպատոսից ստացված մի զեկուցագրում հայտնվում էր, որ քրդերը դարձյալ մտադիր են հարձակվել հայերի վրա։ Ֆրանսիական հյուպատոսի այս ձեռնարկին չմասնակցեց ռուս հյուպատոսը։ Նույն միջոցին իշխան Լոբանովն էլ Պետերբուրգի անգլիական դեսպանի հետ ունեցած իր տեսակցության ժամանակ տեղեկացրեց, որ Հայաստանից ստացված լուրերը չափազանց տագնապալի են և որ հայերը, հենվելով Լոնդոնում գտնվող կոմիտեների վրա, պատրաստում են խռովություն։ Իշխան Լոբանովի այս խոսքերը իսկույն հակազդեցություն առաջացրին Ստամ-

բուլում։ Աբդուլ Համիդը հայտնեց, որ առայժմ բարենորո-
գումների նախագծի քննության ժամանակը չէ։ Անգլիա-
կան կառավարությունը պնդեց, որ բարենորոգումների
նախագիծը քննարկվի։ Նույն միջոցին իշխան Լոբանովը
854 Ստամբուլի իր դեսպանին ‖ հեռագրով հայտնեց, որ Ռու-
սաստանը չպիտի կարողանա հետևել Անգլիայի հետա-
պնդած ուղղությանը և վճռականապես դեմ է ապագայում
Անատոլիայում հայկական թագավորության ձևով հայկա-
կան նահանգի ստեղծմանը, որը ունենա ինքնավար վար-
չություն*։

Աբդուլ Համիդը մինիստրների խորհուրդ գումարելով, բարենորոգումների նախագծի վերաբերյալ նախապատրաստեց մի պատասխան, որը սակայն բացասական պատասխան բովանդակելու պատճառով ուշադրության չարժանացավ դեսպանների կողմից։ Իշխան Լոբանովը հայտարարեց, որ Աբդուլ Համիդից այդպիսի պատասխան արդեն սպասելի էր, բայց եթե նա նույնիսկ համաձայնվի էլ հայերի համար կատարվելիք բարենորոգումներին, ապա հավանություն չի տա Անատոլիայի սահմանի վրա նոր Բուլղարիայի ստեղծմանը։

Այդ միջոցին երեք դեսպանները Ստամբուլում բավականին աշխատեցին հայերի համար։ Սակայն Փարիզից ստացված հաղորդագրության մեջ պարոն Կամբոնի ուշադրությունը հրավիրվում էր մակեդոնական հարցի վրա, Ռուսաստանի դեսպան Նելիդովին էլ հանձնարարվում էր առանձնապես ջանք չթափել Բարձրագույն Դռանը ներկայացվելիք բարենորոգումների առաջարկում։

Բավական ժամանակ անցնելուց հետո Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները իրենց ստացած հրահանգների համաձայն հրաժարվեցին բանակցություններից։ Այս բանից Աբդուլ Համիդը շատ գոհ մնաց։ Նա արտակարգ կոմիսար ուղարկեց Անատոլիա, բարենորոգումների հարցում ևս շատ խուսափողական պատասխաններ տվեց դեսպաններին։ Վերջապես անգլիացիների համբերությունը սպառվեց։ Ջեսթերում գումարված վիթխարի մի միտինգում Գլադստոնը իր արտասանած ճառում թուրքերի հան-

* «Կապույտ գիրք», 1896, էջ 73—76։

դեպ խիստ լեզու գործածեց։ Գլադստոնը հանձնարարեց, որ Անգլիան խստությամբ գործի Աբդուլ Համիդի նկատմամբ։ Նույնիսկ Ստամբուլում Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանների համբերությունը սպառվեց։ Սակայն իշխան Լոբանովը սրան էլ առարկեց. նա հայտնեց, որ դեսպանները շատ են առաջ գնում, և որ բարենորոգման նախագիծը ընդունելի չէ։ Այդ ժամանակ անգլիական կառավարությունը առաջարկեց սահմանափակել վարչական գործերի նկատմամբ եվրոպական տերությունների կողմից հսկողություն սահմանելու պահանջները։ Իշխան Լոբանովը այս նախագիծը Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի ոգուն համապատասխան գտավ։ Գերմանական կառավարությունը խիստ տոնով հասկացրեց Բարձրագույն Դռանը, որ պետք է ընդունել Անգլիայի առաջարկը։ Երբ դեսպանները, որոնք մինչև այդ հրաժարվում էին բարենորոգման պահանջներից, այս անգամ արտահայտվեցին
855 միջազգային ‖ վերահսկիչ հանձնաժողով ստեղծելու օգտին։ Այդ կապակցությամբ Ռուսաստանը հայտարարեց, որ եթե Բարձրագույն Դուռը չհամաձայնվի այդ մտքին, ապա ինքը առանձին պիտի մնա Անգլիայի հետ։ Դրանից հետո քննվեց այն հարցը, թե քանի հոգուց պետք է բաղկացած լինի հանձնաժողովը։ Սակայն այդ ժամանակ իշխան Լոբանովը հանկարծ փոխեց իր միտքը և, պահանջելով գործադրել բարենորոգումները և արագ կերպով լուծել այս հարցը, հետևյալ հեռագիրը ուղարկեց Լոնդոն։

«Բարձրագույն Դուռը, լորդ Սոլսբերիի առաջարկած վերահսկողությանը ընթացք չտալու համար, ընդունել է [մի սկզբունք], որ դեսպանների թարգմանները ուղղակի կապված լինեն առաջարկված նախագծում նշված վերահսկիչ հանձնաժողովին, և շատ աննշան փոփոխություններով հավանություն է տալիս մեր բոլոր պահանջներին։ Հայկական հարցը իր վախճանին հասցնելու տեսակետից այս արդյունքը կարելի է գոհունակության արժանի համարել»։

Բարձրագույն Դռան ընդունած կետերը հիմնականում ոչ մի կարևորություն չունեին։ Կառավարությունը առաջարկված բարենորոգումները ընդունել էր ոչ միայն հայերի, այլև ամբողջ Օսմանյան երկրի վրա տարածելու պայ-

մանով, սակայն իշխան Լոբանովը այս պարագան շատ
հարմար գտավ։ Դեսպաններին առաջարկվեց իրենց կա-
ռավարություններից ստանալիք հեռագրերի համաձայն
ընդունել Բարձրագույն Դռան նախագիծը։ 1895 թվականի
հոկտեմբերի 17-ին տրվեց կայսերական մի հրովարտակ։
Ֆրանսիական և ռուսական թերթերը այս հրովարտակը
ընդունեցին որպես հայկական ճգնաժամի վախճան, բայց
իրականում այգ հրովարտակը ոչ մի հարց չէր լուծում։
Վճռականորեն մերժվեց մեծ տերությունների վերահսկո-
ղությունը, իսկ այդ միջոցին տեղի ունեցած խռովություն-
ները փաստորեն հաստատում էին այս բարենորոգման
անբավականությունը, որովհետև Ստամբուլը լողում էր
կրակի ու արյան մեջ (1895)։
Երբ սկսվեց Ստամբուլի ջարդը, դեսպանատան նավե-
րից վեցը Թարաբիայից շարժվելով եկան Թոփխանեի դի-
մաց։ Դեսպանատների թարգմաններից հինգ հոգի գնացին
Բարձրագույն Դուռ և մի հուշագիր հանձնեցին։ Ռուսական
թարգմանը չէր միացել նրանց։ Ավստրիայի, Ֆրանսիայի,
Գերմանիայի, Իտալիայի և Անգլիայի թարգմանները եկան
Բարձրագույն Դուռ և Դռնից ստացան հետևյալ պատաս-
խանը. «Այդ մասին տեղեկություն չունենք»։ Այդ պարա-
գային մեծ տերությունների գեսպանները մի հուշագիր
կազմելով, պահանջեցին քաղաքում պահպանել անդորրու-
թյուն և ապահովություն։ Ի պատասխան դրան Բարձրա-
գույն Դուռը հայտարարեց, որ հանցանքը բացարձակապես
հայերինն է, բայց և այնպես իսկական ոճրագործները
858 երևան հանելու համար կկատարվի || հետաքննություն։
Այդ դեպքում դեսպանները պահանջեցին ազատ արձակել
եկեղեցիներում ապաստանած և թշվառության մատնված
հայերին։ Դեսպաններն սկսել էին այլևս ինքնուրույն գոր-
ծել։ Այս անգամ Ավստրո-Հունգարիան էլ սկսել էր պաշտ-
պանել անգլիական քաղաքականությունը։
Արդարև այդ ժամանակ Թուրքիայի ներքին կացու-
թյունը խառնակ և վատ վիճակում էր։ Տրապիզոնի ջարդը
չորս կողմը ներկում էր արյունով, Մակեդոնիան վառվում
էր խռովության բոցերի մեջ, Ավստրո-հունգարական կա-
ռավարությունը այս դրությունը նկատի ունենալով, առա-
ջարկել էր խիստ ճնշում գործադրել Աբդուլ Համիդի վրա.

Իտալական կառավարությունն էլ համաձայնվել էր այս ցանկությանը։

Անգլիական պետությունը համոզվեց, որ այն ամենը, ինչ չէր կարող ձեռք բերել երկյակ զինակցությունից, կարող է ձեռք բերել շնորհիվ եռյակ զինակցության, և նպատակահարմար համարեց նոր պահանջներ ներկայացնել Բարձրագույն Դռանը։ Հայոց պատրիարքը մի խնդրագրիդիմում ներկայացրեց մեծ տերություններին և խնդրեց վերջ տալ ջարդերին, որովհետև Անատոլիայում ջարդը շարունակվում էր ամիսներ ի վեր։

Իսկ Ավստրիայի կառավարությունը հասկացավ, որ Մակեդոնիայում պայթելու է ավելի սաստիկ խռովություն։ Անգլիայում հուզումը գնալով ավելանում էր։ Նոյեմբերի 2-րդ օրը Լոնդոնում կազմակերպվեց մի վիթխարի ցույց, որտեղ առաջարկվեց, որ քրիստոնյաներին ազատագրելու համար մեծ տերությունները գործեն միասնաբար։

Այդ օրը ռուսական դեսպանը հրաման ստացավ՝ անտեղի կերպով մարդկային կորուստի առիթ չտալու համար, գործել մյուս ընկերների հետ միասին։ Իշխան Լոբանովը համաձայնվեց գործակցել մեծ տերություններին։ Սակայն Անատոլիայից հասած տեղեկությունները չափազանց աղետալի էին։ Ջարդը շարունակվում էր սոսկալի չափերով։ Այս պատճառով մեծ տերությունները այս խառնակություններին վերջ տալու համար առանձին հուշագրեր պատրաստելով, հանձնեցին Բարձրագույն Դռանը։

Արդուլ Համիդը ի պատասխան այս հուշագրերին հայտնեց, որ բոլոր ոճրագործները պիտի պատժվեն և տրված կայսերական հրովարտակի բովանդակած բարենորոգումները կհրատարակվեն թերթերի միջոցով։ Անգլիան, համոզված լինելով, որ իրեն օժանդակողներ կգտնի,
ոչ մի կարևորություն չտվեց այս պատասխաններին։ Նո-
յեմբերի 9-ին Լոնդոնի քաղաքապետարանում կազմա-
859 կերպված || խնջույքում լորդ Սոլսբերին արտասանեց մի
ճառ։ Այս ճառում նա խոսեց այն մասին, թե յուրաքան-
չյուր վատ կառավարություն իր չարագործությունները շա-
րունակելու դեպքում, որպես համաշխարհային կանոնի
պահանջ, ինչպիսի՞ պատիժների պետք է ենթարկվի։

Անգլիան այդ ժամանակ շատ գոհ մնաց, երբ Քյամիլ

փաշան ստանձնեց սադրազամի պաշտոնը։ Սակայն հազիվ մի ամիս անց Աբդուլ Համիդը կարծելով, թե երկրում կարող է հաստատել սահմանադրություն և ազատ վարչություն, իսկույն պաշտոնից հեռացրեց Քյամիլ փաշային։ Նոր սադրազամի ապիկարության և Անատոլիայում ջարդերը շարունակվելու պատճառով դեսպանները առավել ևս ուժեղացրին իրենց խստությունը, ցանկացան իմանալ, թե ինչ միջոցներ ձեռք կառնի Բարձրագույն Դուռը։ Անգլիան վերջնականապես որոշեց միջամտել։

Նոյեմբերի 9-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ ռուսական դեսպան պարոն Նելիդովը հայտնեց, որ նոր ջարդ տեղի ունենալու դեպքում ինքը պատրաստել է մի նախագիծ անհրաժեշտ միջոցառումների մասին։ Չորս օր հետո պարոն Նելիդովը քննարկման առարկա դարձրեց այս նախագիծը։ Դրա էությունը հետևյալն էր. մեծ տերությունների դեսպաններից յուրաքանչյուրը իր կառավարությունից պետք է պահանջի դեսպանական երկրորդ նավ. այս նավերում գտնվելու էր առնվազն հարյուր հիսունից երկու հարյուր մարդ։ Վեց հարյուր մարդով այսպիսի վեց նավեր եթե գալու լինեն, հավանաբար բարոյական ազդեցություն կգործեն։ Սակայն այս առաջարկի վերաբերյալ անհնարին եղավ համաձայնություն հաստատել դեսպանների միջև։

Երբ Աբդուլ Համիդը այս լուրն ստացավ, խելքը գլխից թռցրեց։ Ուզեց իսկույն ապավինել իր գերմանացի բարեկամի օգնությանը։ Արդարև. դրանից առաջ գերմանական կառավարությունը հայտնել էր, որ ծովին վերաբերող մի շարք պատճառներով չպիտի կարողանա մասնակցել այդ կարգի գործերին։ Աբդուլ Համիդը մի նամակ գրեց Գերմանիայի կայսրին։ Իր այս նամակում նա գրում էր, որ մայրաքաղաքում կարգ ու կանոնը պահպանելու համար կանի հնարավոր ամեն բան, որ մինչև հիմա ոչ մի չնչին դեպք անգամ տեղի չի ունեցել, իսկ դեսպանական երկրորդ նավերը կարող են բորբոքել մոլեգին կրքեր, հետևաբար այս մասին անհրաժեշտ օգնություն ստանալու համար դիմում է իր վաղեմի և անկեղծ բարեկամին և խնդրում է օժանդակել իրեն, որ մյուս հինգ պետությունները հրաժարվեն իրենց առաջարկներից։

Սակայն մեծ տերությունները շարունակում էին հա-

860 մառորեն պնդել, որ պահականավեր ուղարկվեն։ || Դեկտեմբերի 9-ին Ռուսաստանի կայսեր կողմից Աբդուլ Համիդին ուղարկված նամակը վերացրեց բոլոր դժվարությունները։ Աբդուլ Համիդը ընդունեց երկրորդ պահականավեր ուղարկելու առաջարկը և հարցը այդպես էլ լուծվեց։

Այդ միջոցին փոխվեց Ֆրանսիայի կաբինետը, այդ պատճառով էլ ֆրանսիական դեսպանը սկսեց համակրանք ցույց տալ անգլիական դեսպանի ձեռնարկներին։ Էրզրումի, Սեբաստիայի և Դիարբեքիրի հյուպատոսներից ստացված տեղեկագրերում խոսվում էր Անատոլիայի ողբալի վիճակի մասին։

Աբդուլ Համիդի համար այսպիսի խառնակությունները համարվում էին հասարակ դեպքեր։ Աբդուլ Համիդը մի կողմից ցանկանում էր առիթ չտալ եվրոպական միջամտության, մյուս կողմից ուզում էր երկրի ներքին գործերը վարել ըստ իր ցանկության։ Աբդուլ Համիդը ցանկացավ սադրազամ նշանակել Սայիդ փաշային։ Նրան պալատ կանչեց և առաջարկեց սադրազամի պաշտոնը։ Սայիդ փաշան պատասխանեց, որ մինչև չստեղծվի անկախ, պատասխանատու և արքայական ցանկությունը կատարելու պատրաստ կաբինետ, ինքը չի կարող ընդունել այդ պաշտոնը։ Այս պատասխանից Աբդուլ Համիդը սաստիկ զայրացավ։ Այդ պատճառով Սայիդ փաշան իր տղայի հետ փախավ անգլիական դեսպանատուն։ Անգլիական դեսպանը մյուս դեսպանների օգնությամբ այս հարցն էլ լուծեց, իսկ Սայիդ փաշայի առաջարկած անկախ և պատասխանատու կաբինետի գաղափարը հարմար նկատելով, պաշտպանեց և առաջ քաշեց։ Իշխան Լոբանովը հայտնեց, որ դրա անհրաժեշտությունը այլևս չկա, որ Աբդուլ Համիդը արդեն գործադրում է իր բոլոր ջանքերը, իսկ Ռուսաստանը ազդում է Բելգրադի, Բուխարեստի և Աթենքի վրա, հետևաբար այս կողմերից ոչ մի դժվարություն չի ծագի։ Լոբանովի կարծիքով, Թուրքիան կարգի բերելու ջանքերը ժամանակի ավելորդ կորուստ էին*։

Այս միջոցին ստացվեց հյուպատոսների զեկուցագրերը Ուրֆայի ջարդի մասին։ Երբ անգլիական դեսպանը խոսեց այս դեպքերի մասին, իշխան Լոբանովը, պատասխա-

* «Կապույտ գիրք», 1896, էջ 22։

նելով նրան, ասաց. «ամեն ինչ հնարավոր է»։ Իսկ եռյակ զինակցությունից այլևս ոչ մի հույս չկար։ Գերմանական կառավարությունը բոլորովին կարևորություն չէր տալիս այս հարցերին, իսկ Իտալիան որոշակի նպատակներ էր հետապնդում Հաբեշստանում։ Ինչ վերաբերում է Ավստրիային, ապա նա, ենթարկվելով Մակեդոնիայի մասին Ռուսաստանի տված հավաստիացումներին, պահանջում էր պահպանել գոյություն ունեցող դրությունը և զգուշանում էր այդ դրությունը խախտող ամեն մի քայլից։

861 ‖ Այդքան ջանքերից հետո էլ Անգլիան դարձյալ չհասավ իր նպատակին։ Եգիպտոսում ունեցած իր շահերից չզրկվելու համար Անգլիան ևս ինքն իրեն ետ պահեց։ Անգլիայի և Ամերիկայի հայկական միությունններից ստացված խնդրագրերի կապակցությամբ Վիկտորյա թագուհին Աբդուլ Համիդի գութը շարժելու համար մի նամակ գրեց։ Աբդուլ Համիդը այս նամակին պատասխանեց իր ձեռքով գրված մի նամակով։ Այդ նամակում նա ցավ հայտնեց, որ վերջին դեպքերի մասին անգլիական ժողովուրդն ու վեհապետը սխալ լուրեր են ստացել։ Նույնիսկ հասկացրեց, որ թագուհու մտքում կան հասարակական կարծիքը մոլորության մեջ գցող հայտարարություններ, մինչդեռ հայերը բոլոր կողմերում շարունակ հարձակողական շարժումներ են կատարել, մզկիթներում աղոթքների ժամանակ հարձակվել են մուսուլմանների վրա. հայերի կողմից իսլամները բազմաթիվ վայրագությունների են ենթարկվել, բոլոր հայերը զինված են եղել մարտին հրացաններով, ումբերով և ռումբերով, իսկ մուսուլմանները ինքնապաշտպանության համար ունեն միայն հնացած զենքեր*։ Աբդուլ Համիդը դեսպանատան թարգմանին պալատ կանչելով, նամակը հանձնեց նրան։

Երբ Աբդուլ Համիդը զբաղված էր այսպիսի գործերով, մեկը մյուսի ետևից ստացվում էին հյուպատոսների զեկուցագրերը ջարդերի մասին։ Այդ զեկուցագրերից պարզվում էր, որ քաղաքական միսիոներները բոլոր կողմերում արհամարհանքի էին ենթարկվում։ Էրզրումում անգլիական հյուպատոսը ստիպված էր եղել պահապան զինվորներ պահել նրանց եկեղեցիներում ու դպրոցներում։ Բիթլիսում

---

* «Կապույտ գիրք», 1896 թ., էջ 22։

տեղի էին ունեցել շատ խառնակություններ։ Խարբերդում
սպասվում էր նոր խռովություն։
Երբ անգլիական կառավարությունը այս զեկուցա-
գրերն ստացավ, Ամերիկայի կառավարության հետ միա-
սին դիմեց Բարձրագույն Դռանը։ Բարձրագույն Դուռը այդ
դիմումին պատասխանեց շատ անփույթ։ Այդ պատճառով
Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի դեսպանները, դի-
մելով Բարձրագույն Դռանը, պահանջեցին գործադրել բա-
րենորոգումների նախագծի մասին եղած կայսերական
հրովարտակը։ Ռուսական կառավարությունը մի շարք հա-
յերի բանի խլամացման առթիվ այն աստիճան զայրա-
ցավ, որ մարտի 19-ին ռուսական դեսպանը ևս միացավ
վերահսկիչ հանձնաժողով կազմելու մասին մեծ տերու-
թյունների արտահայտած ցանկությանը։ Դեսպաննե-
862 րը ‖ վճռականորեն պահանջեցին գործադրել բարենորո-
գումները։ Մասնավորապես Վանի հյուպատոսից եկած զե-
կուցագիրը խիստ զայրույթ պատճառեց ռուսական դեսպա-
նին։ Ապրիլի 16-ին երեք դեսպանատան թարգմանները,
գնալով Բարձրագույն Դուռը, չափազանց խիստ լեզու գոր-
ծածեցին։ Ֆրանսիական դեսպանը նույնիսկ գործնական
քայլ անելով, Սալվադորի սպանության առթիվ քննություն
կատարելու համար քննիչ հանձնախումբ ուղարկեց Ենիշե-
կալե։ Ֆրանսիայի այս վերաբերմունքը պալատի արտակարգ
զայրույթի պատճառ դարձավ։ Այդ միջոցին պալատը Փարի-
զի դեսպան Մյունիր բեյից ստացավ մի հեռագիր, որի
իմաստը այս էր. «Այստեղի օսմանցի երիտասարդները հա-
րուստ չլինելու հետևանքով ենթարկվում են խռովարարների
ազդեցությանը»։ Աբդուլ Համիդը, այս հեռագիրը ստանալով,
ցանկություն հայտնեց, որ բոլոր երիտասարդները վերա-
դառնան Ստամբուլ։ Բայց քանի որ այդ ժամանակ գործի
գլուխ անցավ Հանոթոն, Աբդուլ Համիդը ազատ շունչ քաշեց։
Աբդուլ Համիդը այժմ աշխատում էր ցուցաբերել իր
ամբողջ դիվանագիտական հմտությունը։ Նախ, Ռուսաս-
տանի կողմից նա այլևս ոչ մի վախ չուներ, որովհետև Ռու-
սաստանը դեռ շարունակում էր իր կողմնակալությունը։
Գալով Ֆրանսիային, Աբդուլ Համիդը եգիպտական հարցում
աշխատում էր պատրանքներով զբաղեցնել Ֆրանսիային.
ձգտելով ավելացնել նրա հույսերը Եգիպտոսի նկատմամբ։
Աբդուլ Համիդը խոստանում էր, որ երբ Օսմանյան երկրում

անգործություն հաստատվի, Եգիպտոսում Ֆրանսիայի համար նպաստավոր հող կպատրաստվի և կաշխատի, որ Ֆրանսիան վրեժ լուծի Անգլիայից։

Վեց ամիս շարունակվող ջարդերից հետո Եվրոպան կարծեց, թե հայկական հարցը ամբողջովին լուծվեց։ Հայերի խռովությունների նպատակն էր ցույց տալ Եվրոպային, որ Հայաստանը գոյություն ունի, իսկ օսմանյան պետությունը ոչ մի ուժ չունի։ Ահա դրա համար 1896 թվականից սկսած նոր «Դրոշակ» կոմիտեն սկսեց դարձյալ խռովություններ նախապատրաստել։ Այս կոմիտեի անունն էր «Դաշնակցություն», այսինքն՝ «Միություն» կուսակցություն։ Կուսակցության կենտրոնը գտնվում էր Թիֆլիսում։ Կոմիտեն փետրվար ամսին բարենորոգումների հանձնաժողովի անդամներին և պալատից ուղարկված փաշաներին հեռացնելու համար գրգռեց Վանի ժողովրդին։ Ամերիկյան միսիոներների և անգլիական հյուպատոսի միջնորդությունը ձախողեց այս ձեռնարկը։ Հունիս ամսին նրանք դարձյալ խռովության դրդեցին ժողովրդին. այդ ժամանակ Վանում տեղի ունեցավ սոսկալի ջարդ։*

863 *‖ Անատոլիայում տեղի ունեցած այս ջարդի պատճառով Ստամբուլի հայերը ամբողջովին պաշտպանեցին դաշնակ կուսակցությունը։ Մեծ տերությունների դեսպաններին տրված հանրագրության մեջ իրենց միտքը արտահայտեցին այսպես.*

«Չնայած, որ մեզ բազմիցս փայլուն խոստումներ են տրվել մեր ցավալի վիճակին անհրաժեշտ բարենորոգումներ շնորհելու մասին, սակայն Թուրքիայում ապրող հայերը, չկարողանալով համբերել տեղի ունեցող բռնություններին, որոշեցին դիմել բոլոր միջոցներին՝ ազատվելու համար իրենց կործանող և ոչնչացնող բռնությունից։ Հայերը կտրուկ կերպով հայտարարում են, որ ստիպողաբար իրենց ձեռնարկած միջոցառումների պատճառով առաջանալիք պատասխանատվությունը ամբողջովին ընկնում է կառավարության վրա և հուսահատության պատճառով տեղի ունենալիք դեպքերի ամբողջ պատասխանատվությունը բարդում են չարաբաստիկ հարձակվողների վրա»։

Ստորագրություն՝ Թուրքիայի հայեր

---

* Վիկտոր Բերար, *Սուլթանի քաղաքականությունը*, էջ 348։

Աբդուլ Համիդը, տեղեկացած լինելով այս ուղղությամբ հայերի ձեռնարկած միջոցների մասին, ամբողջությամբ գործադրեց անհրաժեշտ միջոցառումներ։ 1896 թվականի օգոստոսի առաջին օրը Ստամբուլ եկավ համիդիյե գնդերից մի վաշտ հեծելազոր։ Աբդուլ Համիդը այս միջոցը ձեռք առնելուց հետո պահանջեց, որ հայոց պատրիարք Իզմիրլյան էֆենդին հրաժարական տա։ Աբդուլ Համիդը բոլորովին չէր համակրում Իզմիրլյան էֆենդիին։ Հատկապես եվրոպական շրջաններում Իզմիրլյան էֆենդիի ունեցած բարձր վարկը կրկնակի ավելացնում էր Աբդուլ Համիդի կասկածները։

Աբդուլ Համիդը շատ էր աշխատել, որ Իզմիրլյան էֆենդին հրաժարական տա, բայց հայերի խնդրանքով շատ անգամ այդ մտքից հրաժարվել էր. իսկ այս անգամ, երբ ժամանել էին համիդիյե գնդերը, Աբդուլ Համիդը պնդեց իր այս մտքի վրա։ Իզմիրլյան էֆենդին հրաժարական տվեց։ Աբդուլ Համիդը, ջնջելով հայ համայնքի ընտրական օրենքը, Իզմիրլյանի տեղ նշանակեց անարժան մեկին։

Հայերը երբեք չկարողացան տանել այս վիճակը։ Օգոստոսի վերջերին դաշնակցական կուսակցությունը մեծ տերություններին մի հուշագիր ուղարկելով, իր մտքերը հայտնեց այսպես.

«Բռնության ենթակա ազգերի համար էլ համբերության մի սահման կա։ Երբեք չենք կարող հանդուրժել, որ ժամանակին եկեղեցիներից ներս չընդունվող մի հոգևորականը հայ ազգի անունից համբուրի մի ձեռք, որ այսօր մեր հարյուր հազարավոր կրոնակիցների սպանության (հրա-
864 մանն) է ստորագրել։ || Հայ ազգը նորից պիտի պոռթկա և այս ընդվզումը պիտի արտահայտվի գործնականորեն, իսկ դրա պատասխանատվությունը ընկնելու է Աբդուլ Համիդի և մեծ տերությունների դեսպանների վրա»։

Արդարև, օգոստոսի 26-ի ջարդը ամբողջությամբ հաստատեց այդ միտքը։ Մի քանի օր Ստամբուլ քաղաքը ներկվեց ալ-կարմիր արյունով։ Այս եղեռնը հայերի հանդեպ Աբդուլ Համիդի գործած ոճիրներից վերջինն ու ամենազարհուրելին էր։

Մեծ տերությունները, տեսնելով այս վիճակը, մի քիչ վարանեցին։ Սակայն նրանք էլ, չտանելով թափված անչափ

շատ արյունը, պալատից պահանջեցին վերջ տալ ջարդին։ Ռուսաստանը այս անգամ վարանեց, որովհետև այդ միջոցին մեռած էր իշխան Լոբանովը։

Այժմ բոլորի հայացքներն ուղղվեցին դեպի Ֆրանսիա։ Բայց Գաբրիել Հանոթոն իր արտասանած ճառում հայտնեց, որ Արևելքում ոչ մի փոփոխություն տեղի չէր ունեցել, և ֆրանսիական կառավարությունն էլ երբեք չի ընդունի միջամտության գաղափարը։

Սակայն դեսպանները զարհուրել էին Ստամբուլի ջարդից։ Աբդուլ Համիդին իր բոլոր ոճրագործությունները խիստ լեզվով հասկացնելու համար մի հուշագիր պատրաստեցին և ուղարկեցին Բարձրագույն Դուռ։ Հուշագրի բովանդակությունը հետևյալն էր.

«Մեծ տերությունների դեսպանները, հենվելով օգոստոսի 15-ի համատեղ հուշագրի վրա, Բարձրագույն Դռան ուշադրությունն են հրավիրում վերջերս մայրաքաղաքն ու շրջակայքը ալ-կարմիր արյունով շաղախած խառնակությունների, հատկապես շատ վտանգավոր հետևյալ կետի վրա։ Ստույգ կերպով ապացուցված է, որ հայերին սպանող և դրգռիչներին գտնելու պատրվակի տակ տներն ու խանութները կողոպտող վայրագ հրոսակները մոլեռանդ ժողովրդի կողմից պատահաբար կազմակերպված գործ չէ, այլ տեղական իշխանություններին հայտնի, բայց դրանց կողմից չղեկավարվող մի քանի մասնավոր կազմակերպությունների գործն է։

Հետևյալ պարագաները հաստատում են այս պնդումը.

1. Հայ խռովարարների կողմից օսմանյան բանկի գրավման լուրը հազիվ էր տարածվել, դեռ ոստիկանությունը և զինված ուժերը դեպքի վայրը չհասած, այդ հրոսակները միաժամանակ դուրս եկան քաղաքի զանազան կետերից։ Ինչպես Բարձրագույն Դռանն էլ հայտնի է, անհրաժեշտ էր ոստիկանությանը ավելի շուտ տեղյակ պահել դրրդրիչների ոճրագործությունների մասին։

2. Այս հրոսախմբերը կազմող մարդկանց մեծամասնությունը զգեստավորված և զինված էր նույնանման։

865 *|| 3. Սրանց հետ միասին կային նաև շարքային զինվորներ և ոստիկաններ։ Ոստիկանությունը ոչ միայն չէր կանխում ամբոխի ոճրագործությունը, այլև ինքն էլ էր մասնակցում դրան։*

4. Նկատվում էր նաև, որ ոստիկանների մի մասը խուժանին բաժանում էր սուր ու դանակ և ամբոխին ցույց էր տալիս հայերի գտնված տեղերը։

5. Ամբոխը կայսերական պալատի շրջակայքում, զինվորականների և զինվորների աչքի առաջ բոլորովին ազատ թափառում էր և ոճիրներ գործում։

6. Մարդասպաններից մեկը դեսպանատան թարգմաններից մեկի կողմից ձերբակալվելու ժամանակ հայտնել է. որ զինվորները չեն կարող ձերբակալել իրեն։ Վերջը պալատ տարվելու ժամանակ պալատականների կողմից ընդունվել է որպես մտերիմ բարեկամ։

7. Եվրոպացիների մոտ ծառայության մեջ եղած և ջարդի ընթացքում անհայտացած երկու թուրքեր, վերադառնալուց հետո հայտնեցին, որ հայերին սպանելու համար իրենց տվել են սուր և դանակ»։

Ահա այս փաստերին այլևս ոչ մի խոսք չի կարելի ավելացնել։

Եթե նկատի առնվի իրական կացությունը, մեծ տերու-
866 *թյունների || ներկայացրած այս հուշագրում կար շատ մեծ*
անտեղյակություն։ Անկարելի էր ժխտել Աբդուլ Համիդի
բռնությունները։ Սակայն հասարակական հոգեբանության
տեսակետից միանգամայն բնական էր, որ, ռումբերով
Բարձրագույն Դռան և օսմանյան բանկի վրա հայերի գոր-
ծած հարձակման ժամանակ բռնակիրները և նրանց նման
անձինք խումբ-խումբ հանդես եկան միաժամանակ։ Երկ-
րորդ, ճիշտ չէր հավաքական կերպով հարձակվող ժողո-
վրրդի միատեսակ զգեստավորվածությունը։ Այս ջարդը,
բոլոր պարագաներում մի ահարկու եղեռն էր մարդկու-
թյան դեմ։ Իսկ այս եղեռնի պատճառ հանդիսացողը, ան-
կասկած, նույն Աբդուլ Համիդ երկրորդն էր, որը ղեկավա-
րում էր Յըլդըզի այդ հրոսախումբը և կոտորում էր ոչ մի-
այն հայերին, այլև դեպի կործանում էր տանում ամբողջ
հայրենիքը։

ТУРЕЦКИЕ ИСТОЧНИКИ

Книга IV

Резюме

В настоящий том «Турецких источников об Армении, армянах и других народах Закавказья» включены материалы, извлеченные из трудов турецких хронистов и историков XIX и первого десятилетия XX века.

В томе использованы труды:

Ахмеда Лютфи—летописца и историка XIX века, *Абдуррахмана Шерефа*—историка и литератора конца XIX—начала XX веков, *Мехмеда Кямиль-паши*—государственного деятеля и историка конца XIX—начала XX веков, *Османа Нури*—историка первого десятилетия XX века.

В сборнике каждому из этих авторов посвящена отдельная глава, даны краткие биографические сведения.

Хафиз Ахмед Лютфи (1815—1907) был двадцать восьмым придворным летописцем Османской империи. Родился он в Стамбуле, там и получил образование, затем служил в Видинском и Нишском районах. В 1864 году назначен редактором газеты «Таквим-и векаи» и в том же году получил должность летописца. Занимал он и государственные посты, был членом государственного совета, казаскером в Румелии и т. д. В последние годы своей жизни Ахмед Лютфи работал над историей османского государства. Его восьмитомное «Тарих-и Лютфи» охватывает историю Османской империи за период с 1825 по 1844 гг. и по описанным событиям занимает видное место в историографии Турции.

В первом томе автор подробно останавливается на событиях, связанных с греческим восстанием, с удовлетворением отмечает факт ликвидации еничерийской армии, дает некоторые сведения об Армении, армянах и о религиозных рас-

прях, связанных с деятельностью католиков-армян в Стамбуле, о высылке их из этого города.

Во втором томе описаны события русско-турецкой войны 1827—1828 годов. Из этих событий в книге переведены разделы: «Взятие Карса», «Ахалцихская битва», «Взятие Эрзерума», а также довольно подробно «Вопрос о католичестве».

Третий том содержит мало материалов, относящихся к Армении и армянам. Автор подробно останавливается на греческом восстании. В нашем сборнике третий том «Истории» Лютфи представлен материалами о внутренней жизни Османской империи (вопросы налогов, переписи, о событиях в Ване, об основании газеты «Таквим-и векаи» и т. д.).

Основным материалом для четвертого тома послужили события, развернувшиеся в Египте после 1839 года, а также англо-русские отношения. Из этого тома переведены разделы о пожаре в Стамбуле, об основании почты, а также о некоторых внутригосударственных реформах.

Из пятого тома, посвященного внутриполитической жизни страны за период с 1835 по 1839 год, переведены разделы о реформах в Курдистане, о мастере пороховых дел Ованесе, о назначении жалованья служащим и т. д.

Шестой том посвящен событиям 1839—1840 гг. Из этого тома переведены материалы об организации министерства торговли, о заключении Ункяр-Искелесийского договора, о провозглашении танзимата и Гюльханейском вердикте, о ликвидации системы илтизама и т. д.

Седьмой том представлен в сборнике материалами об армянском патриархе, об упразднении должности сборщиков налога-ашар, об организации кампаний, об упорядочении военного дела и о новой мобилизации.

Из восьмого тома «Истории» Лютфи, изданного после смерти автора историком Абдуррахманом Шерефом, для сборника переведены материалы о внутренней жизни в стране, о посещении Стамбула русским принцем, о ликвидации рынка по продаже пленников, довольно подробно о восстании курдского шейха Бедирхана, а также о шейхе Шамиле.

Абдуррахман Шереф является последним летописцем Османской империи после Ахмеда Лютфи. На эту должность

он был назначен в 1909 году султаном Мехмедом Решадом V. Свою двухтомную «Историю Османского государства» Абдуррахман Шереф написал в качестве учебника высших учебных заведений г. Стамбула. Книга содержит историю Турции с начала до конца XIX века. Работа написана не в виде летописи, как в тарихах предшествующих летописцев, а на основе важнейших политических событий. А. Шереф является первым представителем турецкой буржуазной историографии. Ему принадлежит первая попытка периодизации истории Турции. Он продолжает также описание событий, прерванное в «Истории» Лютфи, т. е. с середины и до конца XIX века.

Из «Истории Османского государства» Абдуррахмана Шерефа в переводе на армянский язык в сборнике представлены разделы: «Объявление войны России» (1853 год), «Военные действия на Дунае» (1853 год), «Синопская катастрофа» (1853 год) и «События на восточной границе».

Мехмед Кямил-паша был высокопоставленным государственным деятелем и дипломатом. За период с 1895 по 1913 год он четыре раза возглавлял правительство Османской империи, три раза при Абдул Гамиде II и один раз при Мехмеде Решаде V. В своей политической деятельности он был англофилом и арменофобом. Созданная им трехтомная «Политическая история Османского государства» дает историю Турции с начала до конца царствования султана Абдул Меджида (1861 год). Из его «Истории» переведены разделы: «О молле Идрисе», «О событиях в Иране» и т. д.

Осман Нури является одним из первых турецких буржуазных историков нового времени. Его знаменитый трехтомный труд «Абдул Гамид Второй и период его царствования» охватывает историю Турции с 1876 по 1909 год. Как отмечает автор в предисловии, ввиду того, что многие турецкие источники в Турции были «недоступны» для него, он создал свой труд, используя работы европейских историков. Из кратких биографических сведений, данных в конце трехтомника, явствует, что после выхода в свет второго тома автор работы Осман Нури скоропостижно скончался. Инициалы «А. Р.», указанные на титульном листе третьего тома, дают основа-

ние полагать, что он изложен на основе материалов Османа Нури историком Ахмедом Рефиком.

В целом исторический труд создан на основе богатых фактических материалов, описание политических событий и военных действий сопровождается глубоким, но не всегда объективным анализом. Во втором томе отдельная глава посвящена жизни Абдула Гамида, его двору, гарему, а третий том содержит главы: «Проблема Крита», «Османское государство и великие державы», «Новые Османы в Европе», «Армянский вопрос» и т. д.

Глава «Армянский вопрос» переведена полностью. Из первого и второго томов в сборник включены в переводе главы: «События на Анатолийской границе» (русско-турецкая война 1877—1878 гг.), «Битва в Зивине», «Вторая Карская битва в Анатолии», затем разделы «От Плевны до Сан-Стефано», «Сан-Стефанский договор», «Разногласия держав и Берлинский договор», «Абдул Гамид и печать».

В сборник включены факсимиле некоторых официальных документов (такриров), а также их перевод на армянский язык. Книга снабжена комментариями, именным указателем и указателем географических названий.

TURKISH SOURCES

IV Book

Summary

by A. KH. SAFRASTIAN, G. SANTURJIAN

The present collection comprises data on Armenia, the Armenians and other peoples of the Transcaucasus, culled from the writings of Turkish chroniclers and historians of the second half of the nineteenth and the first decade of the twentieth centuries.

The following is the list of Turkish authors referred to in the collection.

Ahmet Lutfi — nineteenth century chronicler and historian;

Abdurrahman Sheref — historian and man of letters of the close of the nineteenth and the onset of the twentieth centuries;

Mehmet Kyamil Pasha — statesman of the close of the nineteenth and the start of the twentieth centuries;

Osman Nuri — historian of the first decade of the twentieth century;

Ahmet Lutfi — is the twenty-eighth chronicler of the Ottoman Empire. He was appointed to the post in 1864. He was editor of the newspaper „Takvimi Vekai", in addition to holding state positions. His eight-volume „History" encompasses the history of the Ottoman Empire from 1825 to 1876, and the significance of events, described in the writing, rank the book high among Turkish chronicles. He continues the chronicle of Jevdet Pasha. All the materials translated from Ahmet Lutfi's eight volumes relate to the Greek rebellion, the elimination of the army of jenissaries, the major events in the Russo-Turkish war

of 1827—1828 („The Capture of Kars", „The Battle of Akhaltskha", „The Capture of Erzeroum"), numerous questions on the home policy of the Ottoman Empire, the reforms in Kurdistan, the decree of Gyulhaneh, the uprisings of Armenian catholics and the Kurdish sheik Badirkhan and sheik Shamil.

Abdurrahman Sheref — has been the last chronicler of the Ottoman Empire. He was appointed to that office in 1909. The twovolume „A History of the Ottoman Empire" by Abdurrahman Sheref was designed as a text-book for the high schools of Constantinople. The writing covers the history of the Ottoman Empire from its origin to the and of the nineteenth century and was written not in the form of a chronicle but after the pattern of modern western historians. We have translated passages from A. Sheref's „Declaring War on Russia" (1853), „Military Operations on the Danube" (1853), „The Tragedy of Sinop" (1853) and „Events on the Eastern Frontier".

Mehmet Kyamil Pasha — has been a high ranking statesman and diplomat. He led the Turkish government four times between 1875 and 1913. His activities as statesman have been characterised bv Anglophile and Armenophobe feelings. His three-volume „The History of the Policy of the Ottoman Empire" comprehends the history of Turkey from its origin to the end of the reign of Sultan Abdul Mejid (1861). Our collection includes translations of passages from Kyamil Pasha's „History": „About Molla Idris" and „Events in Iran".

Osman Nuri — is a representative of contemporary Turkish bourgeois historiography. His three-volume „Abdul Hamid II and His Reign" covers the history of the Ottoman Empire from 1876 to 1909. We have provided a translation of the highly interesting chapter „The Armenian Question" in Osman Nuri's writing (as from the third chapter which must have been written by the historian Ahmet Refik upon the death of Osman Nuri, relying on the data of the latter), „Events on the Anatolian Border", picked from various volumes (concerning the 1877—1878 Russo-Turkish war), the chapters on „The War In Zivin", „The Second War of Kars", „From Plevna to San Stephano", „The Treaty of San Stephano", „The Discords am-

ong States and the Treaty of Berlin" and „Abdul Hamid and the Press".

The collection is also supplemented with short biographical notes of the authors, facsimiles of „takrirs" together with their respective translations, and reference lists ot proper and place names.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀՄԵԴ ԼՈՒԹՖԻ

1. Պետական խորհուրդ *(Շուրա-ի դևլեթ) — Շուրա բառացի նշանակում է խորհուրդ, ժողով, խորհրդակցության վայր։ Շուրայ-ի դևլեթ՝ մեծ մեջլիս. Բարձրագույն Դուռը՝ իր զանազան բաժիններով։*

2. Կազասքեր *(կամ կազիասքեր) — Օսմանյան կայսրության մեջ շեյխ-ուլ-իսլամից հետո բարձրաստիճան հոգևորական անձ, որը մասնակցում էր սուլթանական դիվանին։ Կար երկու կազասքեր՝ Ռումելիի և Անատոլիայի։*

3 Ամեդի դիվան — *կայսերական դիվանի գրասենյակներից մեկն է (Ամեդի կալեմի)։ Սա ռեյիս-ուլ-քուիթթաբի (արտաքին գործերի վարիչ) հատուկ գրասենյակն էր։ Այս գրասենյակի գլխավոր պարտականությունն էր՝ կազմել սադրազամի կողմից փադիշահին ներկայացվելիք թաքրիրները, սադրազամի կողմից օտար պետություններին ուղարկվելիք գրությունները, հաշտության պայմանագրերը, բանակցությունների արձանագրությունները և այլն։ Վերոհիշյալ բոլոր գրությունների պատճենները պահվում էին այս գրասենյակում։ Դրանցից բացի, օտար երկրներում աշխատող դեսպանների և հյուպատոսների ծածկագրերը այստեղ էին բացվում։*

Թանզիմաթից հետո Ամեդի գրասենյակի նշանակությունը բարձրացավ։

Ամեդի գրասենյակի պետը կոչվում է ամեդչի։

ԹԱՐԻԽ-Ի ԼՈՒԹՖԻ

I—VIII հատորներ

1. Փալանգա *(ցցապատնեշ, ձողապատվար)։ Փալանգա բառը հունգարերեն է. գործ է ածվում նաև թուրքերենում՝ խանդակի (փոսի) շուրջը փայտից կամ հողից շինված փոքրիկ պարիսպ իմաստով։ Վարոշը նմանապես շրջապատված է լինում փալանգայով։*

Վարոշը *նույնպես հունգարերեն բառ է, գործ է ածվում քաղաքի պարսպից դուրս մնացած թաղամասի իմաստով, ուր ընդհանրապես ապրում էին քրիստոնյաները։*

2 Կափուչիբաշիության և հրացանակրության աստիճաններ: Կափուչի *բառացի նշանակում է դռնապան։ Կափուչի էին կոչվում փադիշահական ապարանքի կամ դռան պահապանները, իսկ կափուչիբաշին դրանց գլխավորն էր, որը համարվում էր բարձր և պատվավոր պաշտոն։*

Հրացանակիր, հրացանակրություն *(սիլահշորլուք). սիլահշոր (հրացանակիր) էին կոչվում զենքով զինված մարտիկները, ռազմիկները։ Գավառական ավագանիների որդիները, որոնք փադիշահի անձնապահ դնդում ծառայության մեջ էին, նույնպես կոչվում էին* **հրացանակիր** *(թյուֆենքճի)։ Հրացանակրությունը ևս համարվում էր պատվավոր տիտղոս։*

3. Սուլթանական Թուրքիայում ժողովուրդը, մասնավորապես ռայաները, գրեթե միշտ համարվում էին աղքատ։ Դա, իհարկե, համապատասխանում էր իրականությանը։ Սակայն սուլթանի, երկրի ղեկավար շրջանների կողմից ժողովրդական զանգվածներին «աղքատ» կոչելը արհամարհական բնույթ ուներ։ Նրանց հասկացողությամբ ժողովուրդը աղքատ պիտի լինի, նրանք այդ համարում էին բնական։

4. Այստեղ խոսվում է արաքա և չերքեզ ցեղերի մեջ իսլամական կրոնի տարածման համար այդ շրջաններում գործող Ֆերհ Ալի փաշայի գործունեության մասին։ Պատմագիրը խոր կսկիծով նշում է, որ այդ ցեղերի մեջ դեռևս կան «շասի» կոչված կռապաշտներ։ Մեր կարծիքով, պատմագիրը այս հարցում թյուրիմացության մեջ է։ Կովկասյան այդ ցեղերի մեջ պահպանվել են սնոտիապաշտական սովորություններ և բարքեր, բայց կռապաշտությունը չէր կարող շարունակվել մինչև XIX դարը։

5. **Էֆրենջի** *(*france *բառի աղավաղված ձևն է) — թուրքերեն գործ է ածվում «ֆրենգ», ֆրանսիացի, եվրոպացի իմաստով, հատկապես կաթոլիկ եվրոպացիների մասին։ Տեքստում խոսքը վերաբերում է հայ կաթոլիկ սարրաֆներ Հակոբին և Հովսեփին։*

6. Ղազազ Արթին և Թընգըր-զադե Դյուզ անունով հայտնի գերդաստանները Ստամբուլի հարուստ և սուլթանական արքունիքի հետ սերտ կապեր ունեցող ընտանիքներ էին։

«Հայերը թուրքական պետական ծառայության մեջ» վերնագրով աշխատության հեղինակ Ե. Դ. Ջարքը ասում է, որ նրանց նախահայրը՝ Արթինը XVII դարի սկզբին Դիվրիկից Ստամբուլ է եկել և զբաղվել ոսկերչությամբ. «Դյուզյան» անունով ոսկերչական հայտնի խանութը շարունակել է գոյություն ունենալ մինչև XIX դարի սկիզբը։ «Դյուզ» անվան մասին Ջարքը հիշում է մի ավանդություն. վալիդե սուլթանը (սուլթանի մայրը) ոսկերիչներին պատվիրած իր մատանիներից ամենից շատ հավանում է Դյուզի պատրաստած մատանին և նրան ասում է. «Ուզիր ինձանից ինչքան ցանկանաս»։ Արթինը մատանու գնից ոչ մի փարա ավելի չի պահանջում։ Սուլթանի մայրը ասում է. «ջանըմ, դու ինչքան դյուզ (ուղիղ, արդար) մարդ ես» և վճարում է մեծ գումար։ Ահա, այս ավանդությունն է այդ գերդաստանի «Դյուզ» կոչվելու պատճառը։*

Դյուզ գերդաստանի ներկայացուցիչները հետզհետե ավելի հարստացել և պետական բարձր պաշտոնների և առանձնաշնորհումների են արժանացել. արքունիքի և արքայական գերդաստանի սարրաֆ, ոսկերիչ, փողերանոցի պետ և այլն։ Դյուզ գերդաստանից հայտնի են՝ Արթին, Միքայել Հոջան (1724—1783), Օհաննես Դյուզ Հոջան (1749—1812), Սերքիս Չելեբին (1777—1819), Պողոս Դյուզ բեյը, Միքայել Դյուզ Չելեբին, Աղասի Չելեբին (1793—1847), Կարապետ Դյուզը (1779—1850), Միհրան բեյ Դյուզը (1817—1891) և այլն։

---

* *I. D. Gark,* Turk devleti hizmetinde Ermeniler (1453—1953), Istanbul, 1953, sah. 51—65.

Դյուզները հետագայում ընդունելով կաթոլիկական դավանանք, նրանցից մի քանիսը ակտիվ մասնակցություն են ունենում հայ-լուսավորչականների և հայ-կաթոլիկների պայքարին, որի մասին պատմագիր Լութֆին բավական նյութ է տալիս։ Պատմագիրը հիշում է Ղազազ Արթինին (1771—1834), որը հայտնի է նաև Բեզջյան Ամիրա անունով։ Բեզջյանը մետաքսի գործում մեծ մասնագետ լինելու պատճառով Օհաննես Չելեբի Դյուզը նրան նշանակում է իր մետաքսի արհեստանոցի գլխավոր վարպետ (ուստա-բաշի)։

*Թ*րնգրր-զադե *Թրնգրրյան գերդաստանից է. սրանց նախահայրը՝ Հոջա Գրիգորը (1701—1781) Իտալիայի Տրիեստ քաղաքում առևտրով է զբաղվել։ Տեքստում հիշված Թրնգրր-զադեն այդ գերդաստանի հայտնի հայ-կաթոլիկներից է։*

7. Ղալաթան և Բերան *Կոստանդնուպոլսի եվրոպական մասի երկու ամենակարևոր թաղամասերն են։ Ղալաթան ծովեզերքում, Կ. Պոլսի հին թաղամասերից է։ Այստեղ էին կենտրոնացած երկրի կարևոր ֆինանսական և առևտրական հիմնարկները։* Բերան *(թուրքերեն՝ Բեյօղլի) քաղաքի ամենաբարեշեն և հարուստ թաղամասն է, ուր գտնվում են օտար պետությունների դեսպանատները, կարևոր հյուրանոցները, ակումբները և այլն։ Ղալաթան Բերայի հետ կապված է թունելով։ Ղալաթայում է գտնվում հայոց սուրբ Լուսավորչական եկեղեցին, խորհրդարանը և կենտրոնական միջնակարգ դպրոցը։ Հայ հարուստները ընդհանրապես ապրում էին Բերայում և ունեին իրենց հարուստ և շքեղ բնակարանները։*

8. Մուքաթաա — *էին կոչվում այն հողերը, որոնց տասանորդի հարկը տրվում էր որոշ մարդկանց, առանց այդ հողերը ծախելու իրավունքի։*

9. Սուք — *Արևելքում, հատկապես արաբական քաղաքներում, այդպես են կոչվում այն շուկաները, որտեղ անուրդով ապրանք է վաճառվում։*

10. Քիլե — *հացահատիկի չափի միավոր Անատոլիայում, որը, սակայն հաստատուն չի եղել։ Անատոլիայի տարբեր շրջաններում այն տարբեր է եղել։*

11. Դեֆթերդար — *դեֆթերը այն մատյանն էր, որտեղ օսմանյան պետության վարչական միավորներում դրանցվում էին հաշվեհամարների տվյալները։ Այնտեղ արձանագրվում էին գյուղի կամ քաղաքի հանրային օգտագործման արոտավայրերը, խոտհարքները, ջրաղացները և այլն, ինչպես նաև վաքֆերը,* Դեֆթերդարները *այդ մատյանները վարող պաշտոնյաներն էին։*

12. Սերքերոն — *անկանոն զորքի հրամանատար։*

13. Վիրա — *վիրայով գրավել (բերդ), վիրայով դուրս գալ։* Վիրա՝ *բառացի նշանակում է հանձնվել, անձնատուր լինել։ Բերդը կամ ամրությունը վիրայով՝ անձնատուր լինելուց հետո գրավել։ Հաճախ գործ է ածվում «բերդը գրավվեց վիրայով»։*

14. Միրախոր — *կայսերական ախոռի պետը,* Խաս ախոռ՝ *փադիշահի կենդանիների ախոռը։ Միրախորությունը համարվում էր բարձր պաշտոն։*

15 Արևելքի զորաբանակ — *Արևելքի ճակատ. նկատի ունի Թուրքիայի արևելյան սահմանի վրա ռուսական բանակի դեմ գործող զորաբանակը։*

16. Սերասքեր — *բանակի գլխավոր հրամանատարը։ Հնում սերասքեր էին կոչվում նաև որոշ ուղղությամբ ուղարկված բանակի հրամանատարները (օր. Անատոլիայի սերասքեր, Իրանի վրա ուղարկված բանակի սերասքեր և այլն)։ Հետագայում սերասքեր էր կոչվում օսմանյան բոլոր բանակների ընդհանուր ղեկավարը, ռազմական մինիստրը, որը մասնակցում էր մինիստրների խորհրդին։*

194—15

17. **Այդոս և Կարին-Աբադ** — *Այդոսը Ստամբուլի վիլայեթի Կարթալի գավառում (կենտրոնը՝ Սեմանդրա) հին բերդ է։ Կարին-Աբադը, հավանաբար, այդ շրջանում մի վայր է։ Հետևաբար, ինչպես երևում է, ռուսական բանակը բավականին մոտ է եղել Ստամբուլին։*

18. **«Կանանց անարգանքի ենթարկելու»** *պատիժ (կամ սպառնալիք)։ Թեև որոշակի չի ասվում այդ պատժի բնույթի մասին, սակայն պարզ է, որ դա Արևելքին հատուկ բարբարոսական մի սովորություն էր, որով հանցավորի կինը ենթարկվում էր «անարգանքի»։*

19. **Միրզա** *հատուկ անուն և տիտղոս է։ Պարսկերեն «էմիրզադե» (էմիրի որդի) բառի կրճատված ձևն է։ Հնում Իրանում գործածվող հատուկ տիտղոս էր, որ դրվում էր անունից առաջ (Միրզա Մոհսին խան), իսկ երբ դրվում էր անունից հետո (Աբբաս Միրզա), դա շահի որդիներին տրված տիտղոս էր։*

20. **Ռեիս էֆենդի կամ ռեիս-ուլ քյուտթաբ** — *XVI և XVII դարերում արտաքին գործերի մինիստրի պարտականությունները կատարող անձը այդպես էր կոչվում։*

21. **Հաթթը շերիֆ կամ հաթթը հյումայուն։** *Հաթթ՝ բառացի նշանակում է գրություն, հրովարտակ, սուլթանի ինքնագիր հրաման։ Շերիֆ՝ նվիրական բարձր։ «Նիզամ-ի ջեդիդ-ի» իրագործման համար սուլթանի կողմից սադրաազամ Յուսուֆ փաշային ուղղված հրովարտակը այդպես է կոչվել և պատմության մեջ մնացել է այդ անունով։ Երբեմն օգտագործվում է նաև «հաթթ-ը հյումայուն» (կայսերական հրովարտակ) ձևով։*

22. **Ջեզիե, ջեզիե գյուզար** *(հարկատու ջեզիե, վճարող) — մուսուլմանական երկրներում քրիստոնյա հպատակներից հովանավորության և պահպանության համար գանձվող գլխահարկ։ Այս հարկը սկիզբ էր առել Օմեր խալիֆի ժամանակից։ Հարուստներից առնվում էր 45 դիրհեմ արծաթ, միջակ վիճակ ունեցողներից՝ 24 դիրհեմ, աղքատներից՝ 12 դիրհեմ։*

Օսմանյան կայսրության մեջ ևս գանձվում էր երեք կարգի մարդկանցից՝ բարձր, միջակ և ցածր վիճակ ունեցող հպատակներից՝ 48, 24 և 12 ղուրուշի հաշվով։ Հետագայում դա փոփոխության ենթարկվեց։ Երեխաները և կանայք ջեզիե չէին վճարում։ Այդ հարկը մտնում էր ուղղակի պետական գանձարանը, ի տարբերություն թիմար-զեամեթային հարկերի, որոնք ստանում էին թիմարի և զեամեթի տերերը (սփահիները)։

1835 թ. բարենորոգումների ֆերմանով ջեզիեի հարկը վերացվեց և քրիստոնյա հպատակները զինվորական ծառայության փոխարեն վճարում էին «բեդելի ասքերի» անունով հարկ։ Իսկ 1908 թվականի սահմանադրությամբ այդ հարկը ևս վերացվեց։

Ջեզիեդար՝ ջեզիե հարկը գանձող պաշտոնյա։

23. **Հայ-կաթոլիկական հարցի մասին սուլթանի ֆերմանը։** *Կաթոլիկական հարցի մասին գրել են այդ շրջանի պատմագիրներ Էսադ և Լութֆի էֆենդիները, ինչպես նաև նախորդ պատմագիրներից Ջևդեթ փաշան*։ Քանի որ իբրև ներքին կրոնական դավանական վեճ սկսված այդ շարժումը վերածվել է խիստ բարդ միջազգային դիվանագիտական հարցի, որը երկար ժամանակ զբաղեցնում էր հա-*

** Տե՛ս մեր «Թուրքական աղբյուրները...» հատ. Ա, 1961, «Հայ կաթոլիկների աքսորումը» վերնագրով բաժինը, էջ 300—302։*

յոց պատրիարքարանին, կառավարությանն ու սուլթանին, մենք անհրաժեշտ համարեցինք թուրքական աղբյուրներից նույնությամբ թարգմանել «Կաթոլիկական հարցի» վերաբերյալ բոլոր նյութերը և վավերագրերը (հայոց պատրիարքի՝ Բ. Դռանն ուղղած թաքրիրները — սուլթանի կարգադրությունները և ֆերմանը՝ թուրքերեն տեքստի հետ միասին), որոնք գրքի վերջում տրված են իբրև հավելված։

24. Ստամբուլի երեք քաղաքներ (թուրքերեն Բիլադ-ի սելասե) էին համարում Ղալաթա, Էյուբ և Սկյուտար թաղամասերը։

25. **Կամամե եկեղեցի** — Երուսաղեմում քրիստոնյաների ունեցած նվիրական վայրերը կոչվել են սուրբ վայրեր։ Քրիստոնյաներին վերաբերող սուրբ վայրերից են՝ Քրիստոսի ծննդավայրը համարվող Բեթղեհեմի քարայրը և եկեղեցին (Կամամե եկեղեցին), Քրիստոսի գերեզմանը և նրա եկեղեցին, Մարիամի գերեզմանը և այլն։ Քրիստոնեական դավանանքների՝ կաթոլիկների և օրթոդոքսների միջև այս սուրբ վայրերը դարեր շարունակ վեճի և անհամաձայնության առարկա են եղել։

26. **Իլթիզամ, իլթիզամի սիստեմը** — իլթիզամը բառացի նշանակում է ստանձնել, հանձն առնել, վարձով տալ։ Օսմանյան հարկային սիստեմում իլթիզամը հետևյալ իմաստն ուներ։ Կառավարությունը տասանորդի (աշար) և ոչխարի (աղնամ) հարկերը, առանձին ագարակների եկամուտը և այլն ուղղակի ինքը չէր գանձում, այլ կապալով տալիս էր որոշ մարդկանց, որոնք պարտավոր էին իրենց վճարելիք գումարի համար երաշխավոր ներկայացնել։

Իլթիզամը տրվում էր գավառների և սանջաքների մասշտաբով։ Իլթիզամ վերցնողները կոչվում էին **մյուլթեզիմ**, իսկ այդ կարգը՝ **իլթիզամի սիստեմ**։ Մյուլթեզիմները, որոնք առհասարակ հարուստ և ազդեցիկ մարդիկ էին, վայելում էին իշխանության օժանդակությունն ու հովանավորությունը։ Իշխանությունները նրանց տրամադրության տակ էին դնում ոստիկանական ուժեր։ Այսպիսի պայմաններում մյուլթեզիմ կապալառուները կատարում էին անօրինակ բռնություններ և չարաշահություններ։ Անզգամ և իրավազուրկ գյուղացու շահագործումը հաճախ հասնում էր ահավոր չափերի, երբ մյուլթեզիմները գյուղացու ստացած բերքից խլում էին առյուծի բաժինը, նրան և նրա ընտանիքին դատապարտելով կիսաքաղց վիճակի։

27. **Մյուբաշիր** էին կոչվում ա) այն պաշտոնյաները, որոնք կառավարության հրամանները հասցնում էին ըստ պատկանելվույն, գործադրում էին դրանք կամ գանձում կառավարությանը հասանելիք դրամն ու իրերը. բ) դատավորի հրամանները հաղորդող և դատավճիռները ի կատար ածող պաշտոնյաները։

28. **Թանզիմաթ-ի խայրիյե** — Թանզիմաթ բառացի նշանակում է կազմակերպում, կարգավորում, բարենորոգում, **խայր**՝ բարի, օգտակար։ Այսպես կոչվեց բարենորոգման այն ծրագիրը, որը հրապարակվեց 1839 թվականին սուլթան Աբդուլ Մեջիդի հատուկ հրովարտակով, որը պատմության մեջ հայտնի է «**Գյուլհանեի կայսերական հրովարտակ**» անունով։ Բարենորոգման այս ծրագիրը կազմել և նրա գործադրությունը ղեկավարել է այն ժամանակի պետական մեծ գործիչ և դիվանագետ Մուստաֆա Ռեշիդ փաշան։

Ռեշիդ փաշան սուլթան Մահմուդ II-ի օրոք եղել է արտաքին գործերի մինիստր, Թուրքիայի դեսպան Լոնդոնում և Փարիզում։ Ստամբուլ վերադառնալուց հետո Ռեշիդ փաշան ձեռնարկում է բարենորոգումների ծրագիրը՝ **թանզիմաթը** կազմելուն։ 1839 թ. նոյեմբերի 3-ին Գյուլհանեի այգում Ռեշիդ փաշան բոլոր մինիստրների, կառավարական բարձր պաշտոնյաների, հոգևորականների, հայ

և հույն պատրիարքների, հրեաների խախամապետի, ինչպես նաև օտար պետությունների դեսպանների ներկայությամբ մեծ հանդիսավորությամբ կարդաց սուլթան Աբդուլ Մեջիդի «Հաթթ-ը շերիֆով» հաստատված թանզիմաթը: Թուրքիայի պատմության մեջ բարենորոգումների այս երկրորդ* և ավելի կարևոր ծրագրի նախատեսած մի շարք վարչական և տնտեսական միջոցառումների հիմնական կետերն էին. 1. առանց կրոնի խտրության Օսմանյան կայսրության բոլոր հպատակների կյանքի, պատվի և ունեցվածքի ապահովություն, 2. գանձվելիք հարկերի կանոնավոր բաժանում և իլթիզամի սիստեմի վերացում, 3. զինվորական ծառայության ժամկետի և բնույթի կանոնավորում և այլն։

29. Միրմիրան. Թուրքիայի վարչական բաժանման համաձայն էյալեթների կառավարիչները կոչվում էին բեյլերբեյի կամ միրմիրան։

30. Ռիսալե բառացի նշանակում է գրքույկ, բրոշյուր, նամակ, գրություն։ Այստեղ գործ է ածված գրքույկ և զեկուցում իմաստով։ Թուրքիայի պատմության մեջ ռիսալե են կոչվել պետության գործիչների կողմից գրված և զեկուցման ձևով սուլթաններին ներկայացված գրքույկները։ Հայտնի է արքունի ծառայողներից Կոչի բեյի՝ 1631 թ. սուլթան Մուրադ V-ին ներկայացրած ռիսալեն և դրանից որոշ ժամանակ հետո սուլթան Իբրահիմին ներկայացրած նրա երկրորդ ռիսալեն։

31. Բերաթ — պարգևագիր, արտոնագիր, սուլթանի կողմից շնորհված աստիճանների, շքանշանների և արտոնությունների մասին փադիշահական ֆերման։ Ստացողները համարվում էին բերաթավոր (բերաթլի)։ Այստեղ խոսքը վերաբերում է քրիստոնյա պատրիարքներին, մետրոպոլիտներին և գավառական առաջնորդներին, որոնք ստանում էին փադիշահական բերաթ։

32. Կաթոլիկ ազգ — Պատմագիր Լութֆին և թուրք այլ հեղինակներ թույլ էին տալիս կոպիտ սխալ, կաթոլիկներին «ազգ» (կաթոլիկ ազգ) անվանելով նրանք գիտակցաբար թե անգիտակցաբար նպաստել են հայ կաթոլիկների համայնություններին: Նրանք փորձում էին Թուրքիայում ձեռք բերել հայ, հույն և այլ ազգությունների վայելած ազգային իրավունքները։

33 Միրլիվա. Օսմանյան կայսրության վարչական բաժանման մեջ էյալեթը (հետագայում — վիլայեթ) բաժանվում էր լիվաների կամ սանջաքների։ Լիվաների վարչական պետերը կոչվում էին միրլիվա (սանջաք-բեյի)։

34. Բաշ-վեքալեթ, բաշ-վեքիլ: Մինչև XIX դարի 40-ական թվականները կառավարության ղեկավարը կոչվում էր սադրազամ։ Սուլթանական հատուկ հրամանով, իբրև թանզիմաթական ռեֆորմ, սադրազամությունը վերածվում է բաշ-վեքալեթի (վարչապետության), իսկ սադրազամը կոչվում է բաշ-վեքիլ (վարչապետ)։ Դրան համապատասխան վեքալեթները վերանվանվում են մինիստրություններ, վեքիլները՝ մինիստրներ:

35. Կայսերական կամ պետական կնիքը հանդիսացել է սադրազամների և ապա բաշ-վեքիլների պաշտոնի փաստական նշանը, որ նրանք ստանում էին այդ պաշտոնին նշանակվելիս և պահում մինչև աշխատանքից ազատվելը։ Պետական բոլոր հիմնարկների պաշտոնական թղթերը կնքվում էին այդ պետական

---

* Բարենորոգումների առաջին ծրագիրը սուլթան Սելիմ III-ի 1826 թ. ենիչերիական բանակի լիկվիդացման ծրագիրն էր, որ հայտնի է «բարեբաստիկ դեպք» անունով։

կնիքով։ Կառավարական մյուս հաստատությունները չունեին այդ կնիքը։ Երբ սուլթանը ցանկանում էր սադրազամին ազատել պաշտոնից, կանչում էր նրան իր մոտ և վերցնում պետական կնիքը։

36. **Բարութչի Օհաննես** (վառոդագործ)։ Այս հատվածում պատմագիրը հաղորդում է շատ հետաքրքիր և կարևոր ռազմա-տեխնիկական ու արդյունաբերական նախաձեռնության մասին, որ կատարել է հայազգի վառոդագործ Օհաննեսը։ Վառոդագործ Օհաննեսը մեկն էր Թուրքիայի և գլխավորապես Կ. Պոլսի այն բազմաթիվ հայերից, որոնք դարեր շարունակ իրենց մասնագիտությունը և գիտելիքները, հաճախ նաև նյութական միջոցները ի սպաս են դրել երկրի ռազմական, տնտեսական և կուլտուրական զարգացման գործին։ Սակայն, միշտ չէ, որ հայերի նման նախաձեռնությունները արժանացել են ուշադրության և գնահատվել ըստ արժանվույն։

37. **Էսնաֆ**. Հնուց ի վեր արհեստավորները, խանութպանները ունեին իրենց հատուկ արհեստակցական դասերը, որոնք կոչվում էին էսնաֆ: էսնաֆներից ամեն մեկը ուներ իր էսնաֆի քեթխուդան, որը կապ էր պահպանում կառավարության հետ և վարում էսնաֆի ընդհանուր և անհատական գործերը, հավաքում հարկերը և այլն։ Քեթխուդան ընտրվում էր էսնաֆի անդամների կողմից և հաստատվում կառավարության կողմից։ Էսնաֆի հավաքման և խորհրդակցության համար կար հատուկ վայր, որ կոչվում էր էսնաֆի ոդա, այսպես էր կոչվում նաև էսնաֆի մեջլիսը։

38. **Հյունքյար Իսքելեսիի դաշնագիրը** — Հյունքյար Իսքելեսին Բոսֆորի նեղուցի ասիական ափին, Բեյքոզի գյուղի մոտ նավահանգիստ է։ Այս դաշնագիրը Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվել է 1833 թվականին։ Դաշնագիրը, ինչպես նշում է պատմագիր Լութֆին, կնքվել է սուլթան Մահմուդ II-ի և Ռուսաստանի միջև միության և պաշտպանողական սկզբունքներով։ Դաշնագիրը ուներ վեց բաց հոդված և մեկ գաղտնի հոդված, որոնցով Թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանի պահանջով փակել Դարդանելի նեղուցը օտար պետությունների ռազմական նավերի համար:

39. **Խըրքա-ի շերիֆ**. Խըրքա (խըրխա — դերվիշների հագած լայն պարեգոտը) կոչվում է նաև խըրքա-ի սեադեթ (երջանկության խըրխա)։ Ըստ իսլամական ավանդության, այդ նվիրական հագուստը (վերարկուն), իբր, մնացել է Մուհամմեդ մարգարեից՝ իբրև նվիրական ավանդ։ Խըրքան պահվում էր Թոփկափուարքունիքում, հատուկ փակ տեղում։

40. **Բարենորոգումների ֆերման** — 1839 թ. պաշտոնապես ընդունված բարենորոգումների ֆերմանը (թանզիմաթ) իրագործվում էր խիստ դանդաղ և ոչլրիվ։ Այնպես որ 1856 թվականին սուլթան Աբդուլ Մեջիդը անհրաժեշտ է համարում նոր «հաթթ-ը հյումայունով» կազմել բարենորոգումների նոր ծրագիր։ Դրանով սկսվում է **Թանզիմաթի երկրորդ շրջանը**:

41. **Ռայա** (արաբերեն) — գործ է ածվում ռայի, ռայիյե, ռայեթ (հոգնակին ռէայա) ձևերով։ Բառացի նշանակում է կենդանիների հոտ, քաղաքական իմաստով՝ մի վեհապետի իշխանության ենթակա հպատակներ, որոնք պարտավոր են հարկ վճարել։ Օսմանյան կայսրության մեջ մինչև XVII—XVIII դարերը ռայա էին կոչվում բոլոր գյուղացի հպատակները, ավելի ուշ՝ բոլոր քրիստոնյա հպատակները, հարկատուները։

42. **Իլթիզամի սիստեմի վերացումը** (տե՛ս ծանոթ. 26), Թանզիմաթի հիման վրա վերացվում է հարկահավաքման կապալառուական սիստեմը (իլթիզա-

մը), որ գարնր շարունակ գործադրվել էր և դարձել ժողովրդական մասսաների շահագործման ու կեղեքման դաժան միջոց։ Ինչպես հայտնի է, հարկերի հավաքման կապալառուները (մյուլթեզիմ) օգտվելով իրենց դիրքից և պայմաններից, առանց հաշվի առնելու հարկերի՝ օրենքով նախատեսված նորմաները և գումարները, մշտապես կատարում էին անթիվ զեղծումներ, ապօրինություններ, միշտ վայելելով, իհարկե, կառավարական օրգանների հովանավորությունը։

43. Ջեզիե (տե՛ս ծանոթ. 22)։ Թուրքիայում հարկերը հիմնականում բաժանվում էին երկու մասի՝ շարիաթական ճարկեր և սովորութային ճարկեր: Շարիաթական հարկերն էին զեքաթը, աշարը, խարաջը և ջեզիեն։ Այս հիմնական հարկերի հիման վրա նշանակվում էին հողագործության, անասնապահության, առևտրի, կալվածքների և տան, ամուսնության և այլնի վերաբերյալ բազմաթիվ, թվով 350 անուն հարկեր։ Սովորութային հարկերը նշանակվում էին սուլթանի կողմից՝ պետության անհրաժեշտ կարիքների համար թվով 97 անուն։

44. Ջեբել-Դրյուզ—Ջեբել արաբերեն լեռ, դրյուզ՝ Սիրիայում ապրող արաբացած շիի ցեղ։ Ջեբել-Դրյուզը այդ շրջանի գյուղերի լեռներն են։

45. Բերիյեթ-ուլ Շամ—Շամը՝ Դամասկոսն է (Դեմեշկ), բերիյեթ՝ ցամաքային։ Ի տարբերություն լեռնային մասի, Սիրիայի այս հարթավայրը կոչվել է Բերիյեթ ուլ-Շամ։

46. Քալֆա (արաբերեն խալիֆեի աղավաղված ձևը) — փոխանորդ, օգնական: Ունի տարբեր իմաստներ՝ ուսուցչի օգնական, տարբեր արհեստների ենթավարպետ, շինարարական ճարտարապետների ենթավարպետ, գրասենյակների քարտուղար (կա նաև սեր — քալֆա՝ գլխավոր քալֆան)։ Այսպես XVII դարի հայտնի պատմագիր-գիտնական Քյաթիբ Չելեբին երկարատև գրասենյակային ծառայության համար ստացել էր Հաջի Քալֆա (կալֆա) տիտղոսը։

Բարձրագույն Դռան շենքի կառուցող Իստեֆանը հայտնի է իբրև Իստեֆան քալֆա։

47. Բաբ-ը սերասքերի — Բաբ նշանակում է դուռ, մի շարք բարդություններով ստանում է կարևոր կառավարական հիմնարկների և վարչությունների իմաստը։ Հայտնի է Բաբ-ը Ալին (Բարձրագույն Դուռը, երբեմն պարզապես Դուռ) իբրև Օսմանյան կայսրության կենտրոնական կառավարության տուն, ուր նստում էին սադրազամը և մի շարք մինիստրներ։ Բաբ-ը մեշեյխեթ՝ շեյխ ուլ-իսլամի պաշտոնատունը, Բաբ-ը սերասքերի՝ ռազմական մինիստրությունը։

48. Բանակ — առհասարակ երկրի ամբողջ զինվորական ուժը։ Ցամաքային զինվորական ուժերը մինչև Նիզամ-ի ջեդիդը և թանզիմաթը կազմված էին տարբեր օջախներից, օրինակ՝ ենիչերիական օջախ, սիփահիների օջախ, կափուկուլիների օջախ և այլն։

Զինվորական նոր կարգով կանոնավոր զինվորական ուժերը բաժանվեցին հինգ բանակների՝ հատուկ, Ստամբուլի, Ռումելիի, Անատոլիայի և Արաբիայի բանակները։ Հետագայում բանակները անվանվեցին թվերով՝ առաջին բանակ, երկրորդ բանակ, երրորդ բանակ և այլն։

49. Յըլդըզի պալատը (Յըլդըզ քյոշք) — Ստամբուլի սուլթանական պալատներից է, ուր ապրեց և գործեց սուլթան Աբդուլ Համիդը իր իշխանության սկզբից մինչև գահազրկումը (1876—1909 թթ.)։

50. Օկկա — ծանրության չափ, որ երկար ժամանակ գործածվել է Միջին Ասիայի երկրներում և Թուրքիայում։ Օքքան (կամ քիյեն) բաժանվում է 100 տիրհեմի։ Օքքան հավասար է մեկ կիլոգրամի և 283 գրամի։ Հանրապետական Թուրքի-

այոս չափի և կշիռների բարենորոգումներով ընդունվեցին մետրական սիստեմը, ծանրության և երկարության չափերը։

51. **Փարա** — դրամական միավոր Թուրքիայում։ Առևտրում լիրան առհասարակ հավասար էր 108 ղուրուշի, իսկ ոսկու արժեքով և պաշտոնական գործունեության մեջ 100 ղուրուշ էր, ղուրուշը՝ 40 փարա։ Փարան համարժեք էր երեք աքչեի, որը երկար ժամանակ Թուրքիայի դրամական միավորն էր։

52. **Բուն Ստամբոլ** — Ստամբուլ քաղաքը Ոսկեղջյուրով բաժանվում էր երկու մասի՝ Բուն Ստամբուլ և Ղալաթա ու Բերա։ Բուն Ստամբուլը Ոսկեղջյուրի հարավային եզերքին և Մարմարայի եռանկյունում գտնվող հին Բյուզանդիոն — Կոստանդնուպոլիսն է։ Ներկայումս քաղաքի հին թաղամասն է, ուր ապրում են հիմնականում թուրքերը։ Այստեղ են քաղաքի գլխավոր շուկաները, հնությունները և պետական պաշտոնատները։

53. **Մեջլիս-ի վալա** (բարձր մեջլիս)։ Մեջլիս էին կոչվում Թուրքիայի մի շարք բարձր խորհուրդները, որտեղ քննվում էին պետության վերաբերյալ բազմաթիվ հարցեր։ Ամենաբարձր մեջլիսը դա մեջլիսի մեբուսանն էր (պատգամավորների ժողովը, պառլամենտը), հանրապետական շրջանում՝ **Ազգային մեծ ժողովը**։

Թանզիմաթից և բարենորոգումների երկրորդ ծրագրից հետո կազմակերպվեցին մի շարք մեջլիսներ երկրի վարչության, կրթության, տնտեսության այլ բնագավառների գործերի համար։ Դրանցից էր նաև **Մեջլիս վալան**, որը Բաբ-ը Ալիում ամենաբարձր մեջլիսն էր, ուր քննվում և վճռվում էին պետության համար բացառիկ կարևորություն ունեցող հարցերը։ Տվյալ դեպքում Վանում որոշ ազդեցիկ մարդկանց կողմից թանզիմաթին հակառակություն ցույց տալու հարցը քննվում է մեջլիս-ի վալայում։

54. **Դուբա** — երկաթից շինված քառակուսի սնամեջ, ջրում չընկղմվող հսկա սնդուկներ, որոնք միացվում էին իրար և վրան կառուցվում էր շարժական կամուրջ։

55. **Դերիների շուկա.** ստրկավաճառությունը իր գոյությունը պահպանել էր անգամ թանզիմաթի բարենորոգումներից հետո։ Միջնադարյան այդ բարբարոսական առևտուրը վերացնելու և ստրուկների շուկան ցրելու նախաձեռնությունը պատկանում է սուլթան Աբդուլ Մեջիդին։

56. **Բեդիրխան բեյ։** Քուրդ ցեղապետ Բեդիրխան բեյի մասին քաղվածաբար թարգմանել ենք բավական ընդարձակ նյութ։ Այստեղ անհրաժեշտ է շեշտել մի շարք հիմնական հարցեր, որոնք պատմագիրը անտեսել է։ Առաջին հարցն այն է, որ Բեդիրխան բեյի ապստամբությունը (ըստ պատմագրի՝ խռովությունը) պատահական և կղզիացած ապստամբություն չէ, դա քուրդ ցեղապետ-ֆեոդալների երկարատև հուզումների՝ իր մասշտաբով խոշոր և կարևոր էտապներից է։ Երկրորդ՝ Բեդիրխան բեյի գերդաստանը, նրա բազմաթիվ որդիները երկար ժամանակ կազմակերպել ու ղեկավարել են քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը, ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմի վերջը, մասամբ նաև Քեմալական Թուրքիայում։

57. **Խումբարա** էին կոչվում հատուկ տիպի թնդանոթները Թուրքիայում, իսկ **ճավանը** այդ թնդանոթներից արձակվող արկերն են։

58. **Միհմանդար** — միհման (պարսկերեն) հյուր, միհմանդար՝ հյուրընկալ։ Միհմանդար էին կոչվում այն մեծ պաշտոնյաները, որոնք դրվում էին օտար դեսպանների և այլ հյուրերի տրամադրության ներքո՝ նրանց առաջնորդելու և ծառայելու համար։

59. **Սյուբեղալիբե** — բռնությամբ որևէ իշխանություն և հարստություն ձեռք բերող անձ, զորբա։

60. Դյուզ-օղլու Հոջա Կարապետ և Հոջա Միհրան *(տե՛ս ծանոթ. 6)։ Հոջա Կարապետ Դյուզը (1779—1850 թթ.) այդ գերդաստանի հայտնի անձնավորություններից էր, որը սուլթանի կողմից արժանացել էր բեյ տիտղոսին։*

Հոջա Միհրան բեյ Դյուզը (1817—1891 թթ.) նշանակվել է փողերանոցի դրամահատության տնօրեն և սուլթան Աբդուլ Ազիզի մայր-սուլթանի սարաֆ է եղել։ Սուլթան Աբդուլ Ազիզի հետ միասին Փարիզ է գնացել։

61. Ջիհադ, մյուջահիդ — *արաբերեն «ջեհդ» արմատից, որը նշանակում է ջանք գործադրել (խոսքով և գործով)։ Ըստ Շարիաթի՝ պատերազմ հանուն իսլամական կրոնի։ Անհավատների՝ այլակրոնների դեմ պատերազմը բոլոր մուսուլմանների նվիրական պարտավորություններից է։ Ջիհադին մասնակցողները կոչվում էին մյուջահիդ (կրոնի համար պայքարող ռազմիկ)։*

Ջիհադին որպես հոմանիշ գործածվում էր նաև ղազա *բառը՝ սրբազան պատերազմ և այդ պատերազմում ձեռք բերված հաղթությունը։ Ղազայում հաղթողները ստանում էին* ղազի *(հաղթող) տիտղոսը։ Սուլթաններից շատերը ունեցել են այդ տիտղոսը։ Սուլթան Աբդուլ Համիդը նույնպես ստացել էր ղազի տիտղոսը, թեև իր իշխանության 33 տարիների ընթացքում Ստամբուլի իր պալատներից երբեք դուրս չէր եկել և տեղի ունեցած պատերազմներում էլ պարտություն էր կրել...*

62. Բաշբուղ — *ոչ կանոնավոր զինվորական խմբերի հրամանատար, պետ, ցեղապետ։ Նրանք կոչվում էին նաև* սերքերդե:

63. Իսլամության և խալիֆայության կենտրոնը *(Դար-ուլ-խելաֆեթ)։ Երբ խալիֆայությունը (Մուհամմեդ մարգարեի հաջորդները կոչվեցին խալիֆ) անցավ օսմանյան սուլթաններին, իսլամության ու խալիֆայության կենտրոնը, փաստորեն հանդիսացավ Ստամբուլը՝ մինչև խալիֆայության վերացումը։*

64 Մյուջահիդ — *Շեյխ Շամիլի պատերազմը մղվում էր իսլամական կրոնի անվան տակ և այդ պատճառով էլ այն համարում էին կրոնական պատերազմ (ջիհադ), իսկ շեյխ Շամիլին՝ մյուջահիդ (կրոնի մարտիկ)։*

ԱԲԴՈՒՐԱՀՄԱՆ ՇԵՐԵՖ

1. Մենշիկով — *ծովակալ իշխան, սուլթան Աբդուլ Մեջիդի իշխանության շրջանում Ռուսաստանի արտակարգ դեսպանը։ Նա եղել է նաև Ռուսաստանի ծովային մինիստր և Ղրիմի պատերազմում կարևոր դեր է կատարել։*

2. Կալիոն — *հին առագաստավոր ռազմանավ, որի վրա կան 2—3 շարք թնդանոթներ։ Առագաստանավը ուներ բազմաթիվ առագաստներ։ Կալիոնի վրա աշխատող զինվորները կոչվում էին* կալիոնջի:

3. Չանաք-կալեի նեղուցը — *Չանաք-կալեն Դարդանելի նեղուցում հին և ամրակուռ բերդ է։ Այդ կապակցությամբ նեղուցը կոչվել է նաև* Չանաք-կալեի *նեղուց։ Դարդանելի և Բոսֆորի նեղուցները միասին կոչվում են նաև* Ստամբուլի նեղուցներ:

4. Կարսի բերդը — *Ինչպես նախորդ ռուս-թուրքական պատերազմներում, 1853—1855 թթ. Ղրիմի պատերազմում ևս Կարսը, իբրև Արևելյան սահմանի կարևոր ամրակուռ բերդ, վճռական դեր է կատարել։ Պատմագիրը Կարսի համար մղված մարտերի մասին տալիս է անհրաժեշտ մանրամասնություններ։ Ռուսական բանակի գեներալ Մուրավյովը Կարսը գրավում է 1855 թ. նոյեմբերին։*

ՄԵՀՄԵԴ ՔՅԱՄԻԼ ՓԱՇԱ

1. Թուրքական պատմագրությանը Մոլլա Իդրիսը ծանոթ է նաև Իդրիս-ի Բիթլիսի անունով։ Ազգությամբ քուրդ է։ Պարսկերեն լեզվով գրել է օսմանյան պետության առաջին 8 սուլթանների պատմությունը՝ «Հեշթ բեհեշթ» («Ութ դրախտ») վերնագրով։

XIV դարի սկզբին օսմանյան Յավուզ սուլթան Սելիմի (1512—1520 թթ.) և Իրանի շահ Իսմայիլի միջև կատաղի պատերազմ է սկսվում, որը հայտնի է Չալդրանի մեծ պատերազմ անունով (920 թ.=1514 թ.)։ Օսմանյան բանակը հաղթում է, գրավում Թավրիզը և շահ Իսմայիլի հարստությունը, գրաված մեծաքանակ ավարն ու մոտ հազար լավագույն արհեստավորներ ուղարկում է Ստամբուլ։

Թուրք-իրանական այս պատերազմը նախապատրաստելու և վարելու գործում կարևոր դեր է կատարել մոլլա Իդրիսը։ Վերջինս լավ ծանոթ լինելով հատկապես քրդաբնակ շրջաններին, սուլթանի Թավրիզից վերադարձին, Բըյըքլի Մեհմեդ փաշային մեծ օժանդակություն է ցույց տվել Քուրդիստանի մի շարք կարևոր շրջանները, քաղաքները գրավելու և քրդական ցեղերին Օսմանյան կայսրությանը ենթարկելու գործում։

Լինչը իր «Հայաստան» գրքում կարևոր տեղեկություններ է տալիս Չալդրանի պատերազմի և քրդական շրջանները Օսմանյան կայսրությանը ենթարկելու մասին։

«1513 թ. Չալդրանի ճակատամարտերում, երբ պարսիկները պարտվեցին օսմանցիներին, հարկացուցիչ և քրդական ցեղերը ըլլան նստակյաց։ Այս ծրագիրը սուլթան Սելիմ Ա-ի նախարար Իդրիսինն է, որ Պիլթիսցի քուրդ մը էր. ծրագրի մեկ մասն ալ էր, փոխադրել այս անհաստատ ցեղի մեկ հատվածը և հաստատել Տաճկաստանի նոր սահմանին այն գավառներու մեջ որոնք սահմանակից էին Վրաստանի ու Պարսկաստանի՝ գրավված շահեն։ Կըսվի թե անոնց շնորհվեցավ տևական ապահովություն մը այն պայմանավ՝ որ իբրև միլիցիա ծառայեն սահմանին վրա, որը տրվեցավ իրենց ի պահպանություն»։ Լինչի վերոհիշյալ վկայությունը առնված է Հակոբ Շահպազյանի «Քուրդ-հայ պատմություն» գրքից, Կ. Պոլիս, 1911, էջ 56—57)։

2. **Դէրէբէյի** — մի շարք պետական ծառայողներ ժամանակի ընթացքում մեծ ազդեցություն և իշխանություն էին ձեռք բերում։ XVII դարում Անատոլիայում դրանք դարձել էին գրեթե ինքնիշխան։ Կառավարությունը ստիպված էր հաշտվել նման դերեբեյիների գոյության հետ, որոնք հետզհետե ուժեղանալով և հարստանալով հիմնել էին առանձին գերդաստաններ։ XIX դարում այդ գերդաստանները, կարելի է ասել, Անատոլիայում գերիշխող էին դարձել։ Սուլթան Մահմուդ II-ը այդ դերեբեյիների դեմ ուժեղ և տևական պայքարից հետո կարողացավ վերջ տալ նրանց անկարգություններին։ Անատոլիայի նշանավոր դերեբեյիներն էին՝ Կայա-Օսման-օղլուները (Այդընի, Սարուհանի շրջաններում), Չափան-օղլուները (Յոզգադի, Կեսարիայի, Ամասիայի և Անկարայի շրջաններում), Հաջի Ալի փաշա-օղլուները (Տրապիզոնում և շրջակայքում), Կուշադայի Իլյաս-օղլուները (Մենթեշեում և շրջակայքում) և այլք։

3. **Աբբաս Միրզա** — Իրանի Քաջարների դինաստիայի Ֆեթհ Ալի շահի որդին և գահաժառանգը, որը կարևոր դեր է կատարել 1821 թվականի թուրք-իրանական պատերազմում և դիվանագիտական հարաբերություններում։ Շահը, օգտվելով Թուրքիայի ծանր դրությունից (Թեփեդելենլի փաշայի և հունական ապստամբությունները), գահաժառանգ Աբբաս Միրզային բանակով ուղարկում է դեպի Արևելյան Անատոլիա, իսկ մյուս որդուն՝ Մեհմեդ Ալի Միրզային՝ դեպի

Իրաք։ Աբբաս Միրզան գրավում է Բայազիդը, Թոփրաքկալեն, Ալաշկերտը, Բիթլիսը, Մուշը և Արճեշը։ Բանակում տարածված սոսկալի խոլերայի պատճառով Աբբաս Միրզան ստիպված է լինում հաշտություն կնքել։

4. **Հաջջ. հաջի** — լուսնային 12-րդ ամսում (զիլհիջջե) մեծ հանդիսավորությամբ դեպի նվիրական Քաաբե (Մեքքա քաղաքում) կատարվող ուխտագնացությունը հաջջ էր կոչվում, իսկ ուխտավորները՝ հաջի։ Հաջիները իսլամական երկրներում համարվում են կրոնասեր, պատվավոր և հարգելի անձնավորություններ։

Քաաբե. Մեքքա նվիրական քաղաքում այն սուրբ վայրը, որը, ըստ ավանդության, մնացել էր Հայր Աբրահամից և համարվում է բոլոր մուսուլմանների ուխտագնացության վայր և Կըբլեի կողմը։

Կըբլե՝ մուսուլմանները նամազի ժամանակ երեսը դարձնում են դեպի Քաաբե։

5. **Անուն և հայրանուն** — Անցագրի սիստեմի ընդունման կապակցությամբ տրվող տեղեկանքներում, ինչպես գրում է պատմագիրը, նշվում էին տեղեկանք ստացողի անունը և հայրանունը։ Թուրքիայում առհասարակ մինչև հանրապետական կարգերի հաստատումը բոլոր պաշտոնական գրություններում (անձնագիր, վկայական, տեղեկանք և այլն) ազգանուն չէր գործածվում։ Թուրքերի մեջ ընդունված էր երկու անվան միասին գործածելու կարգը՝ օրինակ՝ Ահմեդ Իհսան, Թեֆիք Ֆիքրեթ, Աբդուլ Համիդ և այլն։ Ոչ-մուսուլմանները կոչվում էին ընդհանրապես հոր անունով, ավելացնելով «օղլի» (որդի, զավակ) բառը, օրինակ՝ Խաչիկ-օղլի, Մանուկ-օղլի և այլն։ Խոսքը վերաբերում է պաշտոնական գրություններին, որովհետև սովորաբար քրիստոնյաների շրջանում ազգանունը ընդունված էր և գործածվում էր։

Հանրապետական կառավարության հատուկ կարգադրությամբ, Թուրքիայի բոլոր քաղաքացիների համար պարտադիր համարվեց ազգանվան գործածությունը, բոլոր թուրք քաղաքացիները կամավոր ընտրեցին իրենց համար ազգանուն։

ՕՍՄԱՆ ՆՈՒՐԻ

1. **«Սաբահ»** («Առավոտ») — երկար տարիների ընթացքում Ստամբուլում հրատարակված օրաթերթ։ Վերջին շրջանի, այսինքն՝ 1908-ի սահմանադրությունից հետո մինչև 1915 թվականի ապրիլի 24-ը, խմբագիրը եղել է հայտնի հրապարակագիր, լրագրող Տիրան Քելեկյանը, որի շնորհիվ թերթը դարձավ Ստամբուլում ամենաշատ տարածվածը։ 1915 թվականին Քելեկյանը զոհ գնաց Թուրքական արյունոտ յաթաղանին։ Պատերազմից հետո զինադադարի ընթացքում այս թերթին միացավ «Փեյամ» (լուր, պատգամ) թերթը և վերանվանվեց «Փեյամ-Սաբահ», խմբագրությամբ հայտնի հրապարակագիր Ալի Քեմալի։ Սա էլ զոհ գնաց Մուստաֆա Քեմալի դիկտատուրային, որի հակառակորդն էր։ «Սաբահ»-ը չի ունեցել քաղաքական ուղղություն, մշտապես հարմարվել է օրվա քաղաքական պայմաններին, մինչև իր վերջնական փակումը՝ 1922 թ.։ «Սաբահ»-ի տերն ու տնօրենն էր հայտնի Միհրանը։

2. **«Սերվեթ-ի ֆյունուն»** («Գանձ գիտությանց») — թուրք նշանավոր գրականագետների կողմից հրատարակված գիտա-գեղարվեստական հանդես։

3. **Ֆերֆեքե** — հնում այդպես էին կոչվում երեք կայմով և ծանր սպառազեն նավերը։

4. Կորվեք — *ֆրեգատից ավելի փոքր ռազմանավ։*

5. Կանբեք — *փոքր, սակայն ծանր թնդանոթներով զինված ռազմանավ։*

6. Աբազա — *աբխազներին թուրքերը անվանել են աբազա։ Սև ծովի եզերքում, ներկա Աբխազական ինքնավար մարզի հիմնական ժողովուրդը։ Թուրքերը այդ շրջանում ապրող ցեղերին անվանել են աբազա ցեղեր։*

7. Ալի և Ֆուադ փաշաները — *սուլթան Աբդուլ Ազիզի իշխանության շըրջանում հայտնի պետական գործիչներ էին։ Եղել են սադրազամներ։*

Ալի փաշա — *լրիվ անուն և հայրանունով* Մեհմեդ էմին Ալի փաշան *հինգ անգամ սադրազամ է եղել, երեք անգամ սուլթան Ազիզի օրով։*

Ֆուադ փաշա — *հայտնի է նաև «*Մեծ Ֆուադ փաշա*» անունով։ Սուլթան Աբդուլ Ազիզի իշխանության օրով երկու անգամ սադրազամ է եղել՝ 1863 և 1866 թվականներին։*

8. Ֆեներ, Ֆեների հույն պատրիարքությունը — *Ֆեները Ոսկեղջյուրի մի թաղամասն է, ուր ապրում էին գլխավորապես հույներ։ Ֆեների հույներից մեծ թվով պետական գործիչներ կոչվել են «*ֆեներլի*»։ Արտաքին գործերի մինիստրության մեջ վարել են թարգմանի և այլ կարևոր պաշտոններ։ Ֆեներումն է գըտնըվում նաև օրթոդոքս եկեղեցու տիեզերական պատրիարքարանը։*

9. «Սելամլըքի ժամանակ... զինվորների վրա ռումբ նետելը»։ *Հակառակ Օսման Նուրիի պնդումին, այդ ռումբով հայերը նպատակ ունեին սպանել ոչ թե զինվորներին, այլ Աբդուլ Համիդին։*

ՀԱՎԵԼՎԱԾ

ԹԱՔՐԻՐՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՑԱՔՍԻՄԻԼԵՆԵՐ

(էջ 190) *(Համար 24)*

(Հայոց պատրիարքի Բարձրագույն Դռանը ներկայացրած գրության պատճենը)

Դեպի Միջերկրական ծով աքսորված խառնակիչ վարդապետները այսուհետև եռ չվերադառնան, իսկ այն մի քանիսը, որ կայսերական հրովարտակով պիտի գնային իրենց աքսորավայրերը, բայց մինչև այժմ բնակվում են Ատալիա (Անթալիա) կոչված վայրում, այդպիսիններին իրենց աքսորավայրը արտաքսելը հնարավոր չլինելու դեպքում, անկարացի լինելու պատճառով թույլ տալ, որ գնան իրենց բուն ծննդավայրը և երբեք չմեկնեն ուրիշ վայրեր։

Քանի որ բոլոր անկարացի խռովարարներն իրենց իսկական ծննդավայրից ցրվելով, իրենց էության մեջ արմատացած խառնակչությունը կատարում են նաև ուրիշ վայրերում, սրանից առաջ արձակված ինքնագիր հրամանագրով նրանք իրենց կանանց և զավակների հետ միասին, մի անգամ ևս չտեղափոխվելու պայմանով ուղարկվել են իրենց ծննդավայրը, ըստ որում նրանք հանդիսանում են ոչ թե աքսորվածներ, այլ ապրում են միայն իրենց բնակավայրում. չտեղափոխվելու դեպքում էլ նրանք դարձյալ չպիտի դադարեն խառնակչությունից. իսկ եթե, ըստ պահանջի, անհրաժեշտ լինի մի քանիսին ներել և ազատ արձակել, նրանց մեջ չարությամբ համակված մարդկանց մասին ձեզ պիտի հայտնվի ծառայականիս մյուս ցուցակով։ Սրանցից բացի բարձրագույն հրամանով տարբեր վայրեր աքսորվածներից ոմանց ներում և ազատություն շնորհվելու դեպքում Ստամբուլ գալու ժամանակ կայսերական հրամանով բնակվելու են ոչ թե Ղալաթայում, Բերայում և այլ արգելված վայրերում, այլ բարձրագույն հրամանով արտոնություն տրված և հայ հպատակների բնակած թաղերում, պայմանով, որ առաջվա նման իրենց պատրիարքին հնազանդելու գործում չընդդիմանան։

Բանավոր տրված հրամանի հիման վրա, երբ, առանց հավակնության, միտքս է գալիս, որ ակներև է սրանց նենգությունն ու ապիրատությունը, բայց, ըստ հարկի, եթե հրամայվի և թույլատրվի նրանցից ոմանց վերադարձը, սակայն, որպեսզի նրանք չկարողանան գործադրել իրենց չարությունը, դայթակղությունն ու անպատկառությունը, նրանք չպետք է եղու-

մոտ ունենան արքունական պալատ, պետական բարձրաստիճան ղեկավարների պաշտոնատեղիները, չպետք է նրանց թույլատրել խառնվելու պետական տուրևառին, գավառներում չգտնվեն մեծ վեզիրների, հարգարժան միրմիրանների, կառավարիչների, ավագանու, վոյեվոդների, մոլլաների, դատավորների մոտ և չմտնեն ծառայության մեջ. և եթե այս ձևը հարմար է ձեր կամեցողությանը և կարգադրվի կայսերական հրամանով, ապա նրանք նզովյալների նման հաջողության չեն հասնի։ Նրանք չպիտի կարողանան գործադրել նաև իրենց նենգությունը, և կարելի է հուսալ, որ օրեցօր կործանվելու են. այս հարցը այսուհետև որպես կանոն ընդունելու համար հարկ եղած տեղերը ծանուցագրեր ուղարկելը կախված է ձեր կամքից։

(Համար 16)

(Հայոց պատրիարքի հիշատակագիրը)

Ծառայականիս հուշագիրն այն է որ՝

Նվաստիս հասած մեծապանծ հրովարտակի բարձրարժեք հրամանի համաձայն ստուգվելով, որ որոշ ժամանակից ի վեր Անկարայից և այլ վայրերից եկող և Ստամբուլում բնակություն հաստատած խառնակիչները հանդգնում են կատարել հպատակության պայմաններին հակասող գործեր և համարձակվում են ընդունել այնպիսի բացասական վարքագիծ, որը գայթակղություն է պատճառում հայ ազգին, երկրի ու ազգի կարգն ու կանոնը խանգարումից պահպանելու և այսուհետև առանց Ստամբուլում ոտք դնելու, իրենց քաղաքներում առևտրով, երկրագործությամբ և հողամշակությամբ զբաղվելու վերաբերյալ տրված կայսերական հրամանի համաձայն նրանք վտարվել են Ստամբուլից։ Թեև այդ խմբի հետ միասին արտաքսվել են նաև հատկապես իրենց համար վարդապետ ընտրած խռովարար անձինք, բայց հիշյալ վարդապետները, իրենց տևական սովորության և չարակամ տարբերքում կուտակված մոլության պատճառով իրենց գնացած տեղերում էլ հանդիստ չմնալով ակներև է, որ ձգտելու են մոլորության մեջ գցել մի խումբ պարզամիտ, չարն ու բարին չճանաչող խոնարհ դասի հայերին և հպատակության կանոնին հակասող բացասական ընթացքի դրդել ու մղել, այդպիսով բացահայտորեն պատճառ են դառնալու ազգի ու երկրի կազմալուծման։ Բացի դրանից ստույգ է, որ Ստամբուլում գտնվող և նման անպատշաճ գործերով զբաղվող քաղաքացի խառնակիչների և հատկապես իրենց վարդապետների մինչև հիմա հայտնի դարձած և հաստատված անզգամության և չարագործությունների առթած պահանջից է, որ բացահայտ դարձավ այդ տհաճ գրգռիչներին կանխելու օգտակարությունը, ուստի անհրաժեշտ է պահպանել երկրի և ժողովրդի կարգն ու կանոնը խառնակություններից և քչփորիկներից։ Արտաքսված այդպիսի վարդապետները Ստամբուլում, թե՛ այսուհետև Օսմանյան երկրի որ կողմում էլ գտնվելու լինեն, հարկավոր է իրենց գտնված վայրի ոստիկանության, ինչպես նաև պատրիարքի կողմից նշանակված և բարձրագույն հրամանով պաշտոնի կոչված հոգևոր առաջնորդի միջոցով որոնել հիշյալ խառնակիչների վարդապետներին և պարզել նրանց վիճակն

ու հանգամանքները, իրենց ձեռքում պատրիարքի կողմից կնքված վկա-
յագիր ունեցողներին ստուգելուց հետո, այդպիսի վկայագիր չունեցողներին
նույն վայրի ոստիկանապետի և առաջնորդի միջոցով սաստելով
ուղարկել և հանձնել այդ կողմի հարևան ծովեզերքի նահանգապետին, որը
առանց Օսմանյան երկրի նավամատույցները դուրս բերելու, ուղղակի
վտարելու է Օսմանյան երկրից և նրանց արտաքսումը հաստատող օրի-
նական տեղեկագիրը ներկայացնելու է Բարձրագույն Դռանը։ Այդպիսի
խռովարար վարդապետներից ոմանց, որոնք ծպտվելով թաքնվել են, ինչ-
384 պես նաև նրանց թաքցնողներին || ու պահողներին ևս որոնել, իրենց գըտ-
նըված տեղերից երևան հանել, հիշյալ թաքնվողին և նրան թաքցնողնե-
րին, ուրիշներին որպես օրինակ, պատիժ սահմանել, և այս օրվանից հե-
տո, մինչև կատարածն աշխարհի, օսմանյան հավերժական պետության
հպատակ հայ ազգի միջից իսպառ վերացնել հպատակության կանոնին
ներհակ և հակազգային անպատշաճ գործունեությամբ զբաղվող չարակամ
խառնակիչների անունը։ Իսկ հպատակության կարգի մեջ անհողդողդ, կա-
տարելապես ուղղամիտ և ձեռներեց մյուս հայ հպատակները պետք է հնա-
զանդության մեջ հաստատամիտ լինեն Ստամբուլում նստող պատրիարքին,
ինչպես նաև հոգևոր առաջնորդներին այն վայրերում, ուր ապրում են հա-
յերը, և որտեղ նրանք Օսմանյան երկրում հիշյալ ազգի պատրիարքի
նման բարձրագույն հրամանով պաշտոնի են կոչված։ Որպեսզի հայ ազգի
մեջ այդպիսի հպատակության պայմաններից շեղվող և չարության հա-
կամիտելու մի կերպ հանդգնող և համարձակվող անձինք չգտնվեն և այս
պատրվակի տակ իրենց պատվով ու պարկեշտությամբ, իրենց հպատա-
կության ոգով և ազգային սովորույթի համաձայն դաստիարակված հայ
ժողովուրդը անտեղի կերպով չանիրավվի և չվնասվի, այս կետերի թվար-
կումով, որպես գործադրելի ուղեցույց, վերևում կայսերական նվիրական
և շնորհաբաշխ գրով վերնագրված մի հրովարտակ շնորհել և նրա պա-
հանջին ու տրամադրության համապատասխան տեղեկագրեր ուղարկել
նահանգապետերին ու դատավորներին և արձանագրել այն վայրերի դի-
վանատներում, որտեղ ապրում է հայ ժողովուրդը։ Հիշյալ ժողովրդի մաք-
րագործումը կատարյալ ուշադրությամբ իրականացնելու համար տալ ձեր
բարձր հրամանը և այդ հրամանի համաձայն, եթե հարմար է ձեր բարձ-
րապատվության կամքին, հիշյալ վայրերի վսեմաշուք նահանգապետներին
ուղարկել ձեր բարձր հրամանագիրը, այդ մասին կամքն ու հրամանը նո-
րին վսեմություն հրամայող իշխանությանն է։

(Հայոց պատրիարքին ուղղված կայսերական
բարձր հրովարտակի պատճենը)

385 || Հայոց պատրիարքին. թող ավելված նրան շնորհի բախտավոր վախ-
ճան, հրաման.

Իմ Օսմանյան կայսերական անսասան իշխանության հարկատու հայ հպատակներից ոմանք հանդգնում են իրենց վաղեմի սովորություններին և հպատակության կանոններին հակառակ ընթացքի մեջ գտնվել։ Թեև երբեմն ձեռնարկվել են միջոցներ այդպիսիններին զսպելու համար, բայց չափազանց շատ զբաղվածության հետևանքով հնարավոր չի եղել կատարել արժանի աշխատանք և ցուցաբերել զգուշավորություն, որով, թե՛ Ստամ-

բուլում, թե՛ Օսմանյան Երկրի տարբեր վայրերում գնալով ավելանում է այն մարդկանց թիվը, որոնք գտնվում են այդ ընթացքի մեջ։ Եթե սրանից հետո էլ պիտի աչքերը փակել այդ ամենի հանդեպ և անտեսել, ապա պարզ է, որ բոլորովին պիտի խանգարվի հպատակության կարգը։ Ստուգված լինելով, որ այդպիսի անկարգությունների հանդգնություն ունեցողները ընդհանրապես անկարացի հայ հպատակներն են, որոնք որոշ ժամանակից ի վեր, որպես սեղանավորներ, արհեստավորներ և առևտրականներ, բնակություն են հաստատել Ստամբուլում, բացառապես հպատակության կարգը վերականգնելու համար Ստամբուլում գտնվող նման անկարացի հայ հպատակները իրենց կանանց և զավակների հետ միասին խումբ-խումբ արտաքսվել են Ստամբուլից, դեպի իրենց նահանգը, պայմանով որ այսուհետև ոտք չդնեն այստեղ, իսկ ուրիշ վայրերի քաղաքացի դասից էլ գավառների զանազան հարմար տեղեր հեռացվել են այն անձինք, որոնք չեն հրաժարվել իրենց հին վարմունքից և որոնց այս կողմերում մնալը համարվում է վնասակար։ Այս խնդրի բուն սկզբնապատճառը հանդիսացող մի շարք խառնակիչ վարդապետներից Ստամբուլում գտնվողներն էլ արտաքսվել են Միջերկրական ծովի կողմերը։ Գավառացի կանանցից նրանք, որոնք կրում են մայրապետ անունը և աշխատում են մոլորության մեջ գցել հայազգի կանացի սեռից մի շարք միամիտների, արտաքսվելու են իրենց բնակավայրերը, իսկ քաղաքացի կանայք՝ Բանդըրմա և Միխալիչ*։ Արհեստավորների դասից նրանք, որոնք իրենց հին մտայնությունից հրաժարվելով կընդունվեն ազգի կողմից, և որոնց բնակությունը այսուհետև անթույլատրելի է Բերայում, Ղալաթայում և Վոսփորի անհարմար վայրերում, ապա այդ կողմերում բնակություն ունեցողները այնտեղից հեռացվելով վերաբնակեցվելու են Ստամբուլի հայ հպատակների բնակած այնպիսի թաղերում, ինչպիսիք են Քում-քափուն, Սամաթիան և Խասքյոյը։ Գավառների մի շարք վայրերում ապրող նման խառնակիչ վարդապետներին ևս հարկավոր է իմ արքայական հրամանով նշանակված առաջնորդների միջոցով հայտնաբերել և ուղարկել այդ կողմերի հարմար նավամատույցները։ Նմանապես դեպի Միջերկրական ծովի կողմերը արտաքսելու հարցում իմ կայսերական հրամանով հանձնարարված է հարկ եղածի մասին նախապես և հետագայում ձեզ հրամաններ արձակել, և գավառներում ապրող խառնակիչ վարդապետների հարցը ևս իմ
386 ազնվաբարո և խիստ ջանադիր լիազոր փոխանորդ || սադրազամի կողմից թեև գրված և ծանուցված է նահանգապետներին ու կառավարիչներին, սակայն հրամանները գործադրելու և ի կատար ածելու համար անհրաժեշտ է պահանջվածին համաձայն և հարատևորեն լինել ուշադիր և հոգատար։ Ի միջի այլոց հավանական է, որ հիշյալ վարդապետներից ոմանք ծպտվելով և իրենց կերպարանքը այլափոխելու միջոցով թաքնվեն, այդպիսիներին խստորեն որոնելու և արտաքսելու գործում հոգատար և ուշադիր լինելու համար պատրիարքարանի կողմից ևս առաջնորդի ընթերականների միջոցով, ըստ հարկի քննել և ստուգել տալով Օսմանյան երկրում գտնվող բոլոր հայ եկեղեցականների վիճակն ու հանգամանքը. իրենց ձեռքում նրա կողմից կնքված վկայագիր չունեցող խառնակիչ վարդապետների մասին նույն վիճակի առաջնորդի միջոցով հաղորդել տեղի դատավո-

* Մարմարա ծովի հարավային եզերքը (ծթ.).

րին և ոստիկանապետին, նրանց միջոցով անմիջապես ձերբակալել և Միջերկրական ծովի կողմերը արտաքսելու համար ծովեզերքին մոտ նավամատույցներն ուղարկելու գործում խիստ ուշադիր լինելու մասին իմ կայսերական հրամանի այս տրամադրության անշությամբ գործիր նաև դու և մանրամասն հայտնիր և բացատրիր ազգին և նրանց, ում հարկն է, որ այդպիսի խառնակիչներին թաքցնող, պահող, պաշտպանող և հովանավորող անձինք պիտի պատժվեն ուրիշներին իբր օրինակ։ Այս օրվանից հետո անհրաժեշտ է այդ ազգը ինչպես հարկն է զտել ու մաքրել նման խառնակիչներից, որպեսզի այդ ազգի մեջ այլևս հպատակության կանոնին հակառակ նվազագույն չափով անգամ անհարմար գործեր և հպատակության կարգին անհարիր և ազգի սովորությանը խորթ վիճակներ չստեղծվեն։ Այս առիթով իմ կայսերական հրամանն է՝ անհրաժեշտ ուժն ու կարողությունը գործադրել, որպեսզի պատվով և պարկեշտությամբ աշխատող օսմանյան իմ հպատակների նկատմամբ որևէ ոտնձգություն և թշնամանք տեղի չունենա, իսկ հակառակ ընթացքի արտանություն ցույց տվողները խստորեն զգուշանան և հեռու մնան պատասխանատվությունից և կշտամբանքի ենթարկվելուց, որի համար իր արքայական վեհափառության սքնազարդ հրովարտակի համաձայն հատուկ պատվիրումով և հոգատարությամբ արձակվել է սույն բարձրարժեք հրամանը և վերևում իմ արքայական մեծազոր ինքնագրությամբ զարդարելով, տրվել է ձեր ձեռքը։ Արդ, իմ այս նվիրական հրամանը թող պահվի պատրիարքարանում, իսկ նրա առանձին պատճենները ուղարկվեն Օսմանյան երկրի այն վայրերը, որտեղ կան հայ հպատակներ ու առաջնորդներ, որպեսզի այս հրամանի վեհիմաստ բովանդակությունը այսուհետև, Աստծու կամեցածին չափ, նրանց համար ծառայի որպես ուղեցույց կանոն. քո կողմից էլ խնդիրը ամենայն մանրամասնությամբ գրվի ու ծանուցվի և այն տառացիորեն ամեն տեղ կիրառվի և գործադրվի։ Այդ ազգի միջից վերոհիշյալ խառնակիչ վարդապետներին ամբողջովին վտարելով ու հեռացնելով, հարկավոր է այսուհետև հպատակության կանոնից դուրս որևէ անհարմար վի-
387 ճակի տեղի չտալու համար || անհրաժեշտ միջոցներ ստեղծելու և լրացնելու գործում լինել չափազանց հոգատար և ուշադիր։ Այսօրվանից հետո այդպիսի խառնակիչներին պաշտպանելու հանդգնություն ունեցող անձանց, ովքեր էլ որ լինեն, բոլոր պարագաներում անհրաժեշտ խստագույն պատիժը անհապաղ ի կատար ածելու համար աշխատեցեք տեղեկացնել։ Դու ևս այդ հարցում լինես ուշադիր և խիստ ջանադիր, հեռու մնաս այն գործերից, որոնք կարող են թյուրիմացաբար վնաս և զրկանք պատճառել խառնակչություններին մասնակցություն չունեցած անձանց. ստույգ իմացիր, որ իմ այս արքայական պատվերները կատարելու գործում որևէ ներողամիտ թույլատվությունը կարող է քո մասին դառնալ վտանգի պատճառ, պատժի ու զզվման արժանի, ուստի ըստ այդմ վարվեցեք ու գործեցեք, իսկ հակառակը գործելուց խիստ զգուշացեք և հեռու մնացեք։

1243/1828 թվականի շաբան ամսի սկզբներին

(نمرو ۲٤)   (صحیفه ۱۹۰)

(ارمنی بطریقنك باب عالیه تقدیم ایتدیکی ورقه صورتیدر)

اقدکزه تبعی اولنان مفسد پاپاسلرندن بعض کلیسالری و بر طاقیلرنی دخی باخط همایون منفالرینه کیده جك ایکن شمدی بعض قدره عدالیه (*) نام محلده اقامت اوزره اولنلرك متقرینه تأکید اولنمسی ممکن اولدیغی حالده بونلرك آکثری انقرهلی اولوب حیله وطن اصلیهلرندن ایدی دیار آخره چیقمالری

کافهٔ انقرهلی مفسدلر وطن اصلیهلرندن طاغیلوب محل آخرلرده کندو ذاتلرنده حس کوز اولان فسادلرینی اجرا ایلدکلرندن بوندن اقدم بعض اوزرینه بیورلدی ایله عیال واولادلریله برده چیقمامق اوزره وطن اصلیهمز کوندرلمش اولمغله هرسو ملرمنی صورتنده اولوب انجق کندو ولایتلرنده اسکان ایتمش اولدقلرندن اکر چیقمامق لازم کلور ایسه ینه فساددن خالی اولمیهجقلری و بالاقتضا بعضلرینك عفو واطلاقلری لازم کلور ایسه ایچلرندن فساد ایله ملمع اولنمش کندولرینك دیکر دفعه چاکر بدنیان بیورلهجغی بونلردن بشقه بافرمان عالی محل آخرده منفیلرك بعضلری عفو واطلاق بیورلدیغی حالده درعلیهیه کلدکلرنده باارادهٔ همایون غضوبلك اوغلی وسائر نوع اولان محللرده اسکان ایتدیرلك سائر بافرمان عالی رخصت وریلان ارمنی رعایاسی یونانستان محله دروغلرنده اسکان ایدرك قدیمدن اولهکلدیکی اوزره بطریقلرینه اطاعتدن برکونه قصور ایتمالری

شفقتا امر واراده بیورلدیغنه مبنی من غیر حد خاطر کترانه مه خطور ایدن بونلرك خیانت وخبثی آشکار ایکن بالایجاب بعضلرینك کامی امر واطلاق بیورلور ایسه ده خیانت وافسادلرینی وعدم رعایتلرینی اجرا ایتمالری انجق اندرون همایون واولیای امور افندیلرمزك دائرهلرینه کیروب تقیدی امری اخذ اعطاسنه دخی قارشدرماق وطشرهلرده وزرای عظام ومیرمیران کرام ومتسلم واعیان وویوده وموالی وقضات خدمتلرنده وبانرنده بولنمامق صورتنی رأی عالیهلرینه موافق کلور ایسه بااراده همایون شروطه رابط اولندقده بونلر امثالی کبی قضبان اولهجغی

وخیانتلرینی دخی اجرا ایدهمیهجکلری وکون بکون انقراض بولهجقلری دخی مأمول اولمغله خصوص مذکور بوندن بویله دستور العمل طوتلق اوزره اقتضا ایدن محللره علم وخبر ورلمسی ارادهٔ عالیهلرینه منوط ایدوکی

(*) انطالیه

(نمرو ١٦)

(ارمنی بطریقنك تقریری)

تقریر قوللریدرکه
طرف چاکری یه ورود ایدن فرمان عالیشانك مفاهم امر مزاپاسنده برمدتدنبرو
انقره و ممالك سائره دن ورود برله درسعادتده تمکن و خلاف شروط رعیت
اوبلنمز حرکتلره جرأت وارمنی ملتنك افسادینی مستلزم اوضاع ردیه یه
جسارت ایتمکده اولدقلری تحقیق اولنه رق نظام ملك و ملتی خللدن وقایت
و فیمابعد درسعادته ایاق بصمامق و مملکتلرنده کار و کسب و حراثت و زراعتلریله
مشغول اولمق اوزره متعلق بیوریلان امر و اراده سنیهٔ ملوکانه موجبنجه
درسعادتدن طرد و دفع اولنمش اولان مفسدلرك کندولرینه مخصوص پاپاس
اتخاذ ایتدکلری مفسدت پیشه لر دخی کروه مزبوره ایله معا دفع اولنمشلر ایسه ده
مسفور پاپاسلر عادت مستمره و عناصر بدخواهلرنده مرکوز خباثتلری اوزره
کندیلری محللرده دخی نوك طورمیوب برطاقم کندو یی بیلمز و نیك و بدی
عقلی ایرمز ارمنی طائفه سنی اسافلنی اضلال و طور رعیتدن خارج اوضاع ردیه یه
اجتساره سوق و ترغیب ایده جکلری درکار و بو وجهله ملك و ملتی بینه اخلاله سبب
و مستقل اوله جقلری بدیدار و ازغیر درسعادتده بولنان اومقوله حرکت ناهمواره یه
داولك ایدن شهری مفسدلری و کرك مخصوص پاپاسلرینك دخی شمدی یه قدر
معلوم و مجزوم اولان ملعنت و خباثتلری اقتضاسندن محقق و بو عرضهٔ
نامرضیه نك اوکی کسدرلمسی مستلزم فوائد مطلق اولمغله نظام ملك و ملتی
اختلال و خللدن وقایت درسعادتده کرك طرد و دفع اولنمش اولان اومقوله
پاپاسلرك بوندن بویله ممالك محروسه نك نه محلنده اولور ایسه اولسون بولندیغی
محلك ضابطانی و کرك بطریق طرفندن تعیین و بامر عالی مأمور قلنان قره باش نام
راهب معرفتی مفسدان مرسومانك پاپاسلرینی تحری و حال و کیفیتلرینی
تجسس ایدلرده بطریق طرفندن مهور سند اولملری لدی المعاینه و اولدقلری
محل مرقومك ضابطی و قره باش معرفتی ایله بالمؤاخذه ... وجوار اولان سواحل
والیسی حضرتلرینه ارسال و تسلیم و والی مشارالیه دخی درعقب مرسوماتی
ممالك محروسه اسکله لرینه چقارلمیه جق صورتلر ایله مجرد ممالك محروسه دن طرد
و دفع ایله طرد و دفعنی مبین اعلام شرعیسی باب عالی یه عرض و تقدیم اولنمق
و اومقوله مفسدت پیشه پاپاسلردن بعضی تبدیل جامه ایله کندوسنی کتم

واختفا ایدنلری دخی تحری وبولندیغی محللردن اخراج واختفاسنه مسفور ایله
کندوسنی کتم ایدنلری دخی عبرة للسائرین جزالری ترتیب اولنه‌رق بعد الیوم
دولت علیهٔ ابدی القرارک ملت ارمنیان رعایالری درونده الی یوم القیامه اومقوله
مغایر شروط رعیت وخلاف مسلک ملت او بیهوده حرکت ایدن مفسدانک
نام بدخواهلری رفع ایله سائر شروط رعیتده ثابت صدق تام ایله متشبث رعایای
ارمنیان قوللرینک دخی درسعادتده موجودی بطریقنه و کرک ملت مزبورک
ممالک محروسه‌ده بطریق مثللو با فرمان عالی مأمور قارمباش راهبلرینه محلنده
موجود رعایالرین دخی تحت اطاعتده بولنمغون ایله ملت ارمنیانده اومقوله شروط
رعیتدن انحراف وتبدیل خیانته رکونا جرأت وجسارت ایدنلری بولنماملق اوزره
و بو بهانه ایله سکنه و عرض وادب و مسلک رعیت واصول ملت اوزره
مؤدب اولان ارمنی طائفه‌سی فضولی تعدی وتجدید اولنماملق خصوصلری
درجیله دستور العمل طوتلمق اوزره بالاسی مبارک خط همایون عنایتمقرون ایله
مضمون برقطعه فرمان عالیشان اصدار وتحسانی موجب ومقتضاسی اوزره
ملت ارمنیانک بولندیغی محللرک ولات وحکامنه علم وخبر تسار و مجلانه
قیدایله ملت مزبوره تطهیرینه دفترنامه ابتدار اولنمق امرنده اراده علیه‌لری
تعلق بیوریله‌رق امر جلیل الشان مزبورک موجبنجه حلمر قومان والیلری
حضراتلرینه فرمانلر صاملری اصدار وارسالی اراده علیه‌لرینه اکرچه
موافق ایسه اولبابده امر وفرمان حضرت من له الامر کدر

(ارمنی پطریقنه خطابا اصدار اولنان فرمان عالی صورتیدر)

ارمنی پطریقی ختمت عواقبه بالخیر حکم

سلطنت سنیهٔ دائمی القرارمك جزیه گذار ارمنی رعایاسندن بعضیلری قدیم ایینلرینه واصول رعیتك خلافی اوضاعه اجتسار ایتمكده و بو سوء حرکتلری اراذل اراتق منعلری اسبابه تشبث اولنمش ایسه ده تکثر مشاغلدن ناشی لایقیله اهتمام ونقید اولنه‌مدیغنه مبنی [illegible] آستانهٔ دولتمده و کذا ممالك محروسه‌مك سائر محللرنده بو طورده اولانلر تکثر ایلمکده اولدقلرندن بوندن بویله دخی بو بابده اغماض اولنمق لازم کلسه شیرازهٔ نظام رعیت کلیا خلل پذیر اوله‌جغی ظاهر وتحقیق اولندیغنه کوره بو مقوله اویغونسزلقه جسارت ایدنلرك اکثری بر وقتدنبرو درسعادتمده صرافلق واسنافلق وتجارت صورتیله تمکن ایتمش اولان انقره‌لی ارمنی رعایاسی اولدیغی بدیهی وباهر اولدیغنه بناء مجرد نظام حال رعیتی استحصال ضمننده درسعادتمده بولنان اومثللو انقره‌لی ارمنی رعایاسی فیمابعد درسعادتمه ایاق باصمامق اوزره عیال واولادلریله طاقم طاقم ولایتلرینه طرد ودفع قلنمش وسائر ممالکلی شهری طائفه‌لك دخی ایچلرنده اسکی حاللرندن رجوع ایتمین وبوطرفده قالمسی مصر اولانلر شهرلرنده بر ومناسب محللره وبو ماده‌نك اصل منشأ وباعثی اولان برطاقم مفسد پاپاس طائفه‌سندن درسعادتمده بولنانلر دخی آق دکز طرفنه وارمنی ملتی اساقفه‌سندن برطاقم ساده‌دل اولانلرینی دخی اضلاله چالشمقده اولان مارهت تعبیر اولنور عورتلردن دخی طشره‌لی اولانلری اماکنلرینه وشهرلیلری دخی باندرمه ومخالیجه دفع اولنملری وسائر اصناف طائفه‌سندن اسکی حاللرندن رجوع ایله علاجه قبول اولنه‌جقلر ایسه دخی فیمابعد بك اوغلی وغلطه وبوغاز ایچینك مناسبتسز محللرنده اقامت ایلملری جائز اولمدیغندن اول مقوله‌لرده خانه‌سی اولانلر قالدیریلوب آستانهٔ سعادتمده قوم قپو وصماتیه وخاصکوی دخی ارمنی رعایاسی محلاتنه نقل واسکان ایتدرلمسی وطشره‌لرده بعض محلرده اولان اومثللو مفسد پاپاسلر دخی محللرنده اوامر شریفه ایله نصب اولنمش بولنان ارمنی مرخصه‌لری معرفتلریله یا اخراجی بولندقلری سمت ومناسب اولان اسکله‌لره کوندریلرك کذلك آق دکز طرفنه دفع اولنمسی خصوصلرینه ارادهٔ سنیهٔ شاهانه‌م تعلق ایدرك اقتضالری تعلیم وتوضیح طرفکه بیورلدیلر اصدار ایله تنبیه اولنمش وطشره‌لرده‌کی مفسد پاپاسلر خصوصی بالاتفاق صدر اعظم مشیرم وکیل

مطلق قوى الاهم جانبندن ولاة ومتصرفينه تحرير واشعار قلنمش ايسه ده
بو وفق مطلوب وعلى الدوام تنفيذ واجرالرينه كركى كبى دقت واهتمام اولنمسى
لازمه‌دن و ازجمله ذكر اولنان مفسد باباس طقمندن بعضيلرى تبديل هيئت
وتغيير قيافت ايله اختفا ايتمكلرى احتمالنه مبنى انلرك كركى كبى تعرفى اولنه‌رق
ظاهره اخراج وطرد ودفعلرى مقتضا وهمت اولنمق اوزره اطراف يانغمانه
طرفندن دخى قرداش معيتيله ممالك محروسه‌ده بولنان بالجمله ارمنى باباسلرينك
حال وكيفيتلرينى كركى كبى تحرى وتجسس ايتديره‌رك بدنيده طرفلكدن
جمهورسند بولنميان مفسد باباسلر محللرنده بولنان مرخصه‌لر معرفتيله اولدقلرى
محلك حاكم وضابطى طرفنه خبر ويريله‌رك درحال انلرك معرفتلريله اخذ وبحر
سفيد طرفنه طرد ودفع اولنمق اوزره سواحله قريب اولان اسكله‌لره
كوندرلمسى خصوصنه كركى كبى دقت اولنمسى ارادهٔ سنيهٔ ملوكانه‌م
مقتضاسندن اولمق ملابسه‌سيله سزدخى اكا كوره حركت وبومقوله مفسدلرى
كتم واخفا وتعصب وحمايه‌يه متجاسر اولنلر عبرة للسائرين ترتيب جزا
قلنه‌جقلرينى ملتكزدن ولازم كلنلره افرادينه افاده وتفهيم ايله بعد اليوم ملت
مرسومه‌نك بومقوله مفسدلردن كركى كبى تصفيه وتطهيريله بردخى مغاير
شروط رعيت ملت مرسومه درونده ادنى درجه اويغونسز حركت
ومغاير اصول رعيت ومنافى آيين ملت حالات وقوعه كلمسى وبو وسيله
ايله عرض وادبيله مشغول اولان رعاياى سلطنت سنيه‌مه دخى بر كونه تعدى
ورنجيده اولنمامسى خصوصنه صرف وسع وقدرت وخلافى وضعه ارائت
رخصنه مسؤل ومعاتب اولمقدن بشقه‌سى شايت تحاشى ومجانبت ايلك فرمانم
اولمغين صحيفه بيراى صدور اولان خط همايون شوكتمقرون پادشاهانه‌م
موجبنجه تنبيها واهتماما مخصوصا اشبو امر جليل القدرم اصدار وبالاسى
خط شريف شوكت رديف شاهانه‌مله تزيين ايله اعطا اولنمشدر اعدى
اشبو امر شريفمك بالطربقعانه‌ده حفظ ومضمون منيفى بوندن بويله الى ماشاء
الرحمن دستور العمل طوتمق اوزره بر قطعه صورتى دخى ممالك محروسه‌مده
ارمنى رعاياسى ومرخصه‌لرى بولنان محلله ارسال وتسيار وكيفيت اطرافله
طرفكزدن تحرير واشعار اولنه‌رق شو بر منطوق حرف بحرف تنفيذ واجراسى
وبالاده بيان اولنان مفسد باباس مقوله‌لرينك كليا ملت مرسومه درونندن
طرد ودفعلريله فيمابعد طور رعيتدن خارج بر كونه اويغونسزلق وقوعه

کماسی اسبابنک استحصال واستکماله وفور اعتنا ودقت و بعدالیوم اومقوله
مفسدلری رعنده استصحاب محافظت ایدن هر کیم اولور ایسه لهرحال حقنده لازم
کلان تأدیبات شدیده بلا امهال اجراقلنمق ایچون کیفیتی افاده واشعاره
مبادرت وسندخی شو خصوصده کماینبغی اقدام ودقت وفساددن مدخلی
اولمیانلره سوء ظن ایله غدری موجب حرکتدن مجانبت واشبو تنبیهات
بادشاهانه‌ملک اجراسی خصوصنده برکونا مسامحه صورتی حقکده موجب
وخامت ومستوجب تأدیب وندامت اوله جغنی محقق بیلوب اکا کوره عمل
وحرکت وخلافندن غایة الغایه تحاشی ومباعدت ایلمک بابنده

فی اواخرش سنه ۱۲٤۳

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբբաս բեյ, *կայսերական ախոռապետ* 26
Աբբաս Միրզա, *Իրանի Ֆեթհ Ալի շահի որդին* 80, 81, 233, 234
Աբբաս փաշա, *Եգիպտոսի վալի Մեհմեդ Ալի փաշայի որդին* 78
Աբդի փաշա, *հրամանատար* 76
Աբդուլլահ փաշա 178
Աբդուլհաք էֆենդի 36
Աբդուլհադեր աղա, *Իզմիրի մաքսապետ* 65
Աբդուրահման բեյ, *փողերանոցի պետ* 14
Աբդուրահման Շերեֆ, *տարեգիր* 6, 7, 9, 59, 71, 72, 232
Աբիդ փաշա 103
Ալեքսանդր II, *ցար* 75, 103, 108
Ալեքսանդր Կարա Թեոդոր, *Թուրքիայի հանրօգուտ շինությանց մինիստր* 137, 142
Ալի բեյ, *աչարացի, Ախալցխայի բերդի հրամանատար* 21
Ալի էֆենդի 44
Ալի Նիզամի, *գեներալ* 99
Ալի փաշա, *բրիգադի հրամանատար* 86
Ալի փաշա (Մեհմեդ Էմին Ալի փաշա), *սադրազամ* 164, 235
Ալի Քեմալ, *հայտնի հրապարակագիր* 234
Ալխազով, *գեներալ* 93, 95
Ակոբոս, *հայոց պատրիարք* 51
Ահմեդ բեյ, *միրմիրան* 13
Ահմեդ Լութֆի (Հաֆըզ Ահմեդ Լութֆի), *տարեգիր* 6—10, 18, 26, 28, 59, 71, 72, 223, 225, 226, 228, 229
Ահմեդ Խուլուսի էֆենդի 18
Ահմեդ Ռեֆիկ, *պատմաբան* 83
Ահմեդ փաշա, *Չըլդըրի բեյլերբեյի* 21, 23, 40
Ահմեդ փաշա, *գնդապետ* 64, 76
Աղասի Չելեբի, *Դյուզյան գերդաստանից* 224
Այնի Ալի էֆենդի, *տարեգիր* 5
Անդրաշի, *կոմս, Ավստրիայի արտաքին գործերի մինիստր* 123, 124, 137, 142, 149—151
Անթուան, *Ստամբուլից արտաքսված հայ կաթոլիկներից* 35
Աշըքյան, *պատրիարք* 170
Աստվածատուր վարդապետ, *հետո պատրիարք* 55, 59
Արիֆ էֆենդի, *էրզրումի դեֆթերդար* 20
Արիֆ Հիքմեթ էֆենդի, *շեյխ-ուլ-իսլամ* 68
Արսլան բեյ, *Բաթումիի երևելիներից* 24

Բարութչի Օհանես *տե՛ս Օհանես*
Բեդիրխան բեյ, *քուրդ ցեղապետ* 64—68, 231
Բեզչյան Ամիրա *տե՛ս Ղազազ Արթին*
Բելինսկի, *գնդապետ* 94
Բեշիր-ալ-Քասըմ 55
Բերար Վիկտոր, *ֆրանսիացի արևելագետ* 165, 173, 210
Բերգման, *դոկտոր* 163
Բըյըքլի Մեհմեդ փաշա, *Երզնկայի վալի* 79, 233
Բիկոնսֆիլդ, *լորդ* 101, 113, 114, 137, 149

Բիսմարկ Հերբերդ, իշխան 129, 130, 136, 137, 142, 144, 148—151, 197
Բլաէ Ալեքսանդր, «Կուրիե դը Զմիրնս» թերթի տնօրեն 159, 160
Բլյումերինգ, գնդապետ 94, 95
Բյուլով, ֆոն, Գերմանիայի արտաքին գործերի մինիստրի տեղակալ 137
Բյուխեր, 137
Բոյաջյան Համբարձում 174
Բոշ 137
Բրատիանու, Ռումինիայի վարչապետ 144

Գլադստոն 193, 202, 203
Գյոզլյումլյու Ռեշիդ փաշա, գնդապետ, Էտաջաւրում Անատոլիայի բանակի մարշալ 68
Գորչակով, գեներալ 73, 106, 108, 114, 127, 129, 137, 144, 145, 148
Գրաբե, գեներալ 93, 94
Գրիգոր վարդապետ 44
Գրոդներ, գեներալ 108
Գուրկո, գեներալ 103—106, 108, 110
Գևորգ, դեղագործ 17

Դանդևիլ, գեներալ 104
Դավիթ-օղլու Հովսեփ 16
Դավիթ-օղլու Պետրոս 35
Դելի Յանի, Հունաստանի արտաքին գործերի մինիստր 144
Դելինհաուզեն, գեներալ 104
Դենսլորդ, կոմս, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր 73
Դեպրե, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության քաղաքական բաժնի պետ 137
Դերբի, լորդ, Անգլիայի արտաքին գործերի մինիստր 101, 114, 125, 134
Դյուզ-օղլիներ (Դյուզյան), Ստամբուլի հայտնի հայ գերդաստաններից 14, 224, 225
Դյուզ-օղլու խոջա Կարապետ 68, 224, 232
Դյուզ-օղլու խոջա Միհրան 68, 224, 232
Դյումոնլե 137

Դոբրիլ, Ռուսաստանի դեսպանը Գերմանիայում 137
Դոլոնե, կոմս, Իտալիայի դեսպանը Գերմանիայում 137
Դրիո 182
Դևիլ, գեներալ, 85, 86, 88, 97

Զարիֆ Մուստաֆա փաշա, Էրզրումի, վալի 76, 77
Զիյա փաշա 69, 161

Էբուլբուդ փաշա 37
Էդհեմ բեյ, բրիգադի հրամանատար 99
Էդհեմ էֆենդի, մաքսապետ 31, 32
Էթեյի Ուզուն-օղլու Պողոս 17
Էմին աղա 25
Էմին փաշա, Կարսի բերդապահ 20
Էյուբ փաշա 109
Էնիս փաշա 176
Էսադ էֆենդի, տարեգիր, 14, 30, 36, 38, 61, 226
Էսադ Մուխլիս փաշա 68
Էսադ փաշա 38
Էսատ բեյ, գնդապետ 99

Թահսին 162
Թեմուր փաշա 38
Թեփեդելենլի փաշա 233
Թընգըր-զադե, հայտնի հայ կաթոլիկ սարրաֆ 35, 225
Թընգըր զադեներ, Թուրքիայում հայտնի հայ գերդաստաններից 14, 16, 18, 224
Թընգըր-օղլու տե՛ս Թընդըր-ղազե
Թընգըր-օղլու Գրիգոր 35
Թընգըր-օղլու Հակոբ 13, 14, 224
Թընգըր-օղլու Հովսեփ 13, 14, 224
Թուզջու-զադե, Ախալցխայի բերդի սպաշտպաններից 21

Ժոբեր 34

Իբրահիմ էֆենդի 61
Իբրահիմ փաշա 52
Իգնատև, կոմս 107, 113, 118, 124, 145
Իդրիս-ի Բիթլիսի տե՛ս Մոլլա Իդրիս
Իզզեթ Մեհմեդ փաշա, ծովակալ 15
Իզզեթ փաշա, գնդապետ 69

Իզզեթ փաշա, *սադրազամ 45*
Իզմիրլյան, *պատրիարք 164, 184, 198, 211*
Իմերեթինսկի, *իշխան 128*
Իշանսի վեզիր Աբդուրահման փաշա, *տարեգիր 9*
Իսմայիլ, *Իրանի շահ 79, 233*
Իսմայիլ փաշա *88, 90, 96*
Իստեֆան Քալֆա *57, 230*

Լազարև, *գեներալ 91—94*
Լայարդ Հանրի, *Անգլիայի դեսպանը Թուրքիայում 66, 67, 101, 113, 135*
Լինչ *233*
Լոբանով, *իշխան, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր 196, 197, 199—205, 207, 212*
Լոկման, *պատմագիր 9*
Լորիս Մելիքով, *գեներալ 84—92, 94*
Լևսկի *112*

Խալիլ Նուրի էֆենդի, *տարեգիր 5*
Խալիլ Ռիֆաթ փաշա *164*
Խալիլ փաշա, *առևտրի մինիստր 52*
Խալիս էֆենդի *44*
Խայամ *66*
Խուսրև փաշա *26, 29, 31, 79, 80*

Կալչի-օղլու Գրիգոր *16*
Կամբոն Պոլ, *Ֆրանսիայի դեսպանը Թուրքիայում 178, 202*
Կայա-Օսման-օղլուներ *233*
Կատալայ, *գեներալ 104*
Կարապետ վարդապետ, *հետագայում պատրիարք 14, 15*
Կարլոս իշխան *145, 154*
Կարոլի, *Ավստրիայի դեսպանը Բեռլինում 137*
Կարցով, *գեներալ 104*
Կըլչի-օղլու *35*
Կիյար Պիեր, *արևելագետ 181*
Կոմարով, *գեներալ 93*
Կոչի բեյ *228*
Կոստանդին, *մեծ դուքս 61*
Կորտի, *կոմս, Իտալիայի արտաքին գործերի մինիստր 137, 149*

Կուլիս Ժորժ, *արևելագետ 165, 185*
Կուշադայի Իլյաս-օղլուներ *233*

Հակոբ *տե՛ս Թընգըր-օղլու Հակոբ*
Հակոբի որդի Միքայել *35*
Հակոբ փաշա, *ֆինանսների մինիստր 168*
Հայդար փաշա, *Ստամբուլի բժշկական ինստիտուտի տնօրեն 163*
Հայման, *գեներալ 86, 88, 89, 91, 92, 96, 98*
Հայմերլեն, *բարոն, Ավստրիայի դեսպանը Հռոմում 137*
Հանոտո Գաբրիել, *Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր 164, 179—181, 196, 197, 200, 209, 212*
Հաջի Ալի փաշա-*օղլուներ 233*
Հաջի Լոյա, *Բոսնիայի ապստամբության պարագլուխ 157*
Հաջի Սայիբ էֆենդի, *ֆինանսների մինիստր 53*
Հասան բեյ զադե, *պատմագիր 5*
Հասան փաշա, *թուրքական նավատորմի հրամանատար 84, 87*
Հասան փաշա, *Տրապիզոնի վալի 26, 28*
Հարդի *125*
Հաքքը փաշա, *Սվազի վալի 27*
Հաֆըզ Ալի փաշա, *Կեսարիայի վալի 10, 11*
Հաֆըզ փաշա, *Սվազի զորահրամանատար 46, 47*
Հյուսեին Սաբրի փաշա, *զորահրամանատար Արզահանում 86*
Հյուսեին փաշա *8*
Հյուսեյին փաշա, *զորահրամանատար Արաբ ամրոցում 95, 96*
Հյուսեյին, *պատմագիր 5*
Հուքմի էֆենդի, *պատմագիր 9*
Հոլշտայն *137*
Հոհենլոհե, *Գերմանիայի դեսպանը Ֆրանսիայում 137*
Հոջա Գրիգոր, *Թընգըրյան գերդաստանի նախահայրը 225,*
Հոջա Միհրան բեյ Դյուզ *տե՛ս Դյուզ-օղլու խոջա Միհրան*
Հովսեփ *տե՛ս Թընգըր-օղլու Հովսեփ*
Հորնբի, *Անգլիայի ծովակալ 114* ,

Ղաապ Արբին, *փողերանոցի պետ 14, 30, 224, 225*
Ղալիբ փաշա, *Էրզրումի վալի 10. 13, 20, 22, 23*

Ճավճավաձե, *գեներալ 94*

Մաոմուդ խան, *քրդական ապստամբության պարագլուխներից 64*
Մահմուդ փաշա, *գեներալ 99*
Մահմուդ Ջելալեդդին փաշա *101*
Սանեյ, *հեքիմ 17*
Մատթեոս վարդապետ, *հետո պատրիարք 59*
Մարժերի Լուի, *արևելագետ 181*
Մելիքով, *փոխգնդապետ 93—95*
Մելքում խան, *Իրանի ներկայացուցիչ 150*
Մեհմեդ Ալի Միրզա, *Իրանի Ֆեթհ Ալի շահի որդին 82, 233*
Մեհմեդ Ալի փաշա, *Եգիպտոսի վալի 39, 40, 78*
Մեհմեդ Ալի փաշա, *մարշալ 99, 109 117, 137*
Մեհմեդ Հեմդեմի, *պատմագիր 5*
Մեհմեդ Ջելալեդդին փաշա *81*
Մեհմեդ փաշա *97*
Մեհմեդ փաշա, *Սվազի վալի 21, 25, 44*
Մեհմեդ Քյամիլ փաշա, *պատմագիր 7, 78, 79, 233*
Մեհմեդ Քյամիլ փաշա, *բարձր մեջլիսի անդամ 62*
Մենշիկով, *իշխան, ծովակալ 73, 232*
Մետերնիխ, *Ավստրիայի պրեմիեր-մինիստր 33*
Միդհատ փաշա, *սադրազամ 102, 161*
Միխայիլ Նիկոլաևիչ, *մեծ իշխան 84, 88, 90—92, 96, 128*
Միհրան, *«Սաբահ» թերթի տնօրեն 234*
Միհրան բեյ Դյուզ *տե՛ս Դյուզ-օղլու խոջա Միհրան*
Մինե *172*
Միրզա-օղլու Գրիգոր *17*
Միրսկի, *իշխան, հրամանատար 105, 106*
Միքայել Դյուզ Չելեբի *224*
Միքայել Հոջա *224*
Մյուրեբջիմ Ասըմ էֆենդի, *տարեգիր 5*
Մյունիր բեյ. *Թուրքիայի դեսպանը Ֆրանսիայում 209*
Մոլլա Իդրիսի, *պատմագիր 79, 233*
Մուխթար փաշա, *զորահրամանատար 88—92, 96—98*
Մուստաֆա Նուրի փաշա, *սերասքեր 55*
Մուստաֆա Ռեշիդ փաշա, *դիվանագետ 52, 227*
Մուստաֆա Քեմալ *234*
Մուրավյով, *գեներալ 95, 232*

Յուսուֆ փաշա *226*

Նախիմով, *ծովակալ 75*
Նամըք փաշա *107, 110, 111*
Նապոլեոն III *75*
Նաջերլի Ահմեդ փաշա, *հրամանատար 76*
Նարին-օղլու Աբրահամ *17*
Նելիդով, *Ռուսաստանի դեսպանը 107, 118, 202, 206*
Նեպոկոյչիցկի *112*
Նեջիբ փաշա, *գեներալ 99, 112*
Նեսելրոդե Դիմիտրի *73*
Ներսես պատրիարք *165*
Նիկիտա, *իշխան 154*
Նիկոլայ *I, ցար 75, 195*
Նիկոլայ, *մեծ իշխան 103—111, 117, 128, 165*
Նորդկոտ Ստաֆֆորդ, *Անգլիայի ֆինանսների մինիստր 114*
Նուբար բեյ, Նուբար փաշա *տե՛ս Պողոս-Նուբար փաշա*
Նուրի բեյ *69*
Նուրի փաշա *11*

Շահպազյան Հակոբ *233*
Շամիլ, *շեյխ, Դաղստանի էմիրներից 69, 70, 76, 232*
Շաքիր փաշա *105*
Շերիֆ փաշա-զադե Սայիդ բեյ *40*
Շիլդերշուլդներ, *գեներալ 108*
Շուվալով, *կոմս, գեներալ 104, 108, 109 130, 134, 137*

Չարք Ի. Դ. 224
Չափան-օղլուներ 233
Չեմբերլեն, *լորդ* 194, 198, 199
Չենգել-օղլու Թահիր փաշա, *ծովակալ* 72
Չե-նե-զադե Հասան փաշա, *Տրապիզոնի վալի* 11, 12
Չերդոս-օղլու Դեորո 17
Չերփանելի Աբդուլքերիմ Նադիր փաշա, *Անատոլիայի բանակի հրամանատար* 76

Պասկևիչ, *գեներալ* 23, 74
Պետրոս 35
Պողոս 48
Պողոս Դյուզ *բեյ* 224
Պողոս-Նուբար փաշա, *Եգիպտոսում Մեհմեդ Ալի փաշայի թարգմանը* 39, 40, 78

Ջեմիլ փաշա 176
Ջինգեզի գերդաստան, *չերքեզական ցեղից* 28
Ջինգիզ խան 106
Ջևադ փաշա 179
Ջևդեթ փաշա, *տարեգիր* 8, 226

Ռարայա-խանըմ Վիչե 17, 35
Ռադեցկի, գեներալ 103—106
Ռադովիչ 137
Ռանկարե, *Հունաստանի դեսպանը Բեռլինում* 144
Ռեդիֆ փաշա 102
Ռեշիդ Մեհմեդ փաշա *տե՛ս Մեհմեդ փաշա, Սվազի վալի*
Ռեշիդ փաշա, *սադրազամ* 52, 66, 68
Ռեուֆ փաշա, *ներքին գործերի մինիստր* 47, 82, 100, 106, 107, 116, 118
Ռիզա փաշա 56, 72
Ռիստիչ, *Սերբիայի արտաքին գործերի մինիստր* 150
Ռյուշտի բեյ 65
Ռյուստեմ փաշա, *Թուրքիայի դեսպանը Անգլիայում* 191, 193, 198
Ռոոպ, *գեներալ* 91—93
Ռուսել Օտտո, *լորդ, Անգլիայի դեսպանը Գերմանիայում* 137

Սաբրի փաշա. *Անատոլիայի բանակի շտաբի պետ* 64
Սադեդդին փաշա 186
Սադուլլահ բեյ, *Թուրքիայի դեսպանը Գերմանիայում* 118—137
Սալիհ փաշա, *Էրզրումի վալի* 23, 26, 27
Սալվադոր 209
Սամիհ փաշա 153
Սայիդ բեյ 38
Սայիդ բեյ *«Վաքիթ» թերթի տնօրեն* 161
Սայիդ փաշա, *սերասքեր* 68, 99, 170, 179, 192, 193, 207
Սանթուրջյան Գ. Հ. 7
Սավֆեթ էֆենդի, *«Թարգմանության գրասենյակ»-ի պաշտոնյա* 44
Սարի Սիմոն-օղլու Հովսեփ, *Ստամբուլից արտաքսված հայ կաթոլիկ* 16—17
Սաֆվեթ փաշա, *արտաքին գործերի մինիստր* 116—118, 135, 155
Սաֆրաստյան Ա. Խ. 5, 7
Սելիմ փաշա, *Մուշի սանջաքի մութասարիֆ* 12, 13
Սենվալիե, *կոմս, Ֆրանսիայի դեսպանը Գերմանիայում* 137
Սերվեր փաշա, *արտաքին գործերի մինիստր* 107, 111, 116
Սերքիս Չելեբի 224
Սկոբելև, *գեներալ* 104—106, 117
Սոլսբերի, *լորդ* 114, 125, 131, 134, 135, 137, 138, 142, 144, 149, 150, 167, 180, 190, 191, 194, 203, 205
Ստենլի, *Անգլիայի ռազմական մինիստր* 125
Ստեփան, *Հայոց պատրիարք* 55
Սուլեյման Հաջի էֆենդի 80
Սուլեյման փաշա, *Ջանիկի հարկահավաքի տեղակալ* 26
Սուլեյման փաշա, *Ռումելիի բանակի գլխավոր հրամանատար* 99—103, 105, 108—110
Սուլթան Աբդուլ Ազիզ 36, 83, 164, 232, 235
Սուլթան Աբդուլ Համիդ II 78, 83, 84, 100—102, 106, 107, 110, 114—116, 118, 155, 156, 158, 159, 161—164, 168—171, 173, 176, 179, 180, 184—

189, 191—209, 211—213, 230, 232, 235
Սուլթան Աբդուլ Մեջիդ 7, 51—53, 60, 66, 78, 227—230, 232
Սուլթան Իբրահիմ 228
Սուլթան Մահմուդ II 37, 38, 51, 52, 72, 159, 160, 227, 229, 233
Սուլթան Մեհմեդ V 71, 78
Սուլթան Մեհմեդ Ռեշադ V *տե՛ս Սուլթան Մեհմեդ V*
Սուլթան Մուրադ V 83, 164, 228
Սուլթան Սելիմ I (Յավուզ) 79, 233
Սուլթան Սելիմ III 228
Սուլթան Սուլեյման Կանունի 9

Վադինգտոն, *Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր* 137, 149
Վասըֆ փաշա 77
Վելիեդդին փաշա, *Կրետեի վալի* 66
Վելի փաշա-զադե Սելիմ բեյ 60
Վելյամինով, գեներալ 104, 108
Վեյսել փաշա 105, 106
Վիլհելմ կայսր 129
Վիկտորյա թագուհի 75, 127, 208
Վիշե *տե՛ս Ռաբայա-խանըմ Վիշե*
Վոժդակին, *գնդապետ* 93

Տեր-Ղուկասով, *գեներալ* 85, 86, 88—90, 96—97
Տոթլեբեն *գեներալ* 103, 128

Ուզուն Արթին 57

Փարաչելերի զադե Աբդուլ Ազիզ, *պատմագիր* 5
Քելեկյան Տիրան 234

Քեմալ փաշա. *սադրազամ* 65, 164, 169, 179, 205, 206
Քյաթիբ Մեհմեդ, *պատմագիր* 9
Քյաթիբ Չելեբի (Հաջի Կալֆա) *պատմագիր* 71, 230
Քյոր Հյուսեյին բեյ 40
Քոկալնիչանու, *Ռումինիայի արտաքին գործերի մինիստր* 144, 145

Օլենբուրգ, *իշխան* 104
Օկլոբժիո, *հրամանատար* 84
Օհաննես, *վառոդագործ* 48, 229
Օհաննես Դյուզ Հոջա 224
Օհաննես Չելեբի Դյուզ 225
Օմեր բեյ, *Բաղդադի վալի* 60
Օմեր խալիֆ 226
Օմեր փաշա, *Ռումելիի բանակի մարշալ* 55, 64, 74, 77
Օսման բեյ 26
Օսման Նուրի, *պատմաբան* 7, 83, 84, 234, 235
Օսման փաշա, *Տրապիզոնի վալի, Անատոլիայի բանակի մարշալ* 24, 26, 27, 64, 68, 109, 112

Ֆադեև, *գնդապետ* 95
Ֆայիք փաշա, *Վանի նահանգապետ* 89
Ֆեթուլլահ էֆենդի, *պատմագիր* 9
Ֆեյզի փաշա, *զորահրամանատար* 96, 97
Ֆերեհ Ալի փաշա 11, 224
Ֆրնդկլըլը Մեհմեդ, *պատմագիր* 5
Ֆիլիպով, *գնդապետ* 86
Ֆիշեր Պոլ, *արևելագետ* 158, 159
Ֆոսֆոր Մուստաֆա փաշա 100
Ֆուադ փաշա (Մեծ Ֆուադ փաշա) *սադրազամ* 164, 235
Ֆևզի փաշա, *մարշալ* 41

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբազա (Աբխազիա) *87*
Աբխազական ինքնավար մարզ *235*
Ադանա *13, 36, 166*
Ազիզիե *97*
Աթենք *156, 207*
Ալաշկերտ *149, 234*
Ալաշկերտի հովիտ *132, 150*
Ալաջա, *վայր Կարսից հարավ-արևելք 91, 96*
Ալբանիա *38, 102, 124, 152*
Ալդերշյուտ *127*
Ալեքսանդրապոլ *76, 85, 86, 89, 95, 168*
Ալեքսանդրետ *166, 183, 199*
Ախալցխա *21—23, 25, 28, 40, 76, 85*
Ախլաթ *13*
Ակն *191*
Ակշա-Դաղ, *վայր Քուրդիստանում 46*
Ահրման *104, 108*
Ահմեդլի *104*
Ամասիա *79, 233*
Ամերիկա *128, 191, 194, 208, 209*
Այդըն *56, 233*
Այդոս, *հին բերդ 28, 226*
Այնթաբ *10*
Այնորոզ—*122*
Անապա *11, 12, 24, 26, 29, 77*
Անատոլիա *14, 19, 27, 37, 39, 59, 60, 64, 68, 69, 74, 76, 84, 85, 90, 98, 123, 135, 142, 148, 152, 155, 165—167, 169, 171, 178—180, 183, 186, 189, 190, 193, 199, 201, 202, 205—207, 210, 223, 225, 230, 233*
Անգլիա *39, 44, 66, 74, 75, 78, 101, 107, 108, 111, 113—115, 117, 123—125, 127, 130—138, 149, 152, 153, 155, 158, 166, 167, 169, 173, 180, 183—186, 189—195, 197—199, 201—206, 208—210*
Անդրկովկաս *5, 6, 36*
Անկարա *17, 35, 199, 233, 237*
Աջարա *23, 40*
Ասիա *112, 135, 150, 183, 194*
Ասիական Թուրքիա *133*
Ավլյար, *լեռ 91*
Ավստրիա *33, 76, 101, 121, 123, 124, 129, 130, 137, 142, 147, 152, 154, 156—158, 196, 201, 204, 205, 208*
Ավստրո-Հունգարիա *124, 142, 143, 148, 156, 204*
Ատալիա (Անթալիա) *236*
Արաբ, *ամրոց 93, 95*
Արաբիա *59, 230*
Արաբ Քոնաք, *լեռնանցք 104*
Արարատ, *լեռ 85, 86, 183*
Արդահան *22, 85—87, 122, 135, 150*
Արճեշ *81, 234*
Արշիպելագ *119, 120, 126, 130*
Արփաչայ, *գետ 76*
Արևելյան Անատոլիա *36, 233*
Արևելյան Ռումելի *134, 138, 140, 141*
Աֆղանստան *183*
Աֆրիկա *194*

Բաբադաղ, *գավառակ Թուլչայի սանջաքում 122, 147*
Բաթումի *24, 76, 84, 85, 87, 122, 126, 133, 135 149, 150*
Բալթիկ ծով *75*

Բալկանյան թերակղզի *124, 128, 132*
Բալկանյան լեռնաշղթա *131*
Բալկաններ *6, 99—101, 103, 105, 109, 110, 138, 140, 165, 183, 196*
Բաղդադ *38, 60, 65, 80, 110*
Բայազիդ, *սանջաք, բերդ 22, 80, 81, 85, 86, 89, 122, 149, 150, 189, 234*
Բայբուրդ (Բաբերդ) *25, 27, 98*
Բանդրմա, *վայր Մարմարա ծովի հարավային ափերին 239*
Բար, *նավահանգիստ 118, 146, 147*
Բեբեք *197*
Բեթղեհեմ, *քարայր Երուսաղեմում 227*
Բելգրադ *207*
Բելկրատչըք, *բերդ 133*
Բեյքոզ *229*
Բեռլին *44, 118, 123, 129, 137, 138, 143, 144, 147, 149—156, 158, 164, 166, 167, 170, 183, 189, 203*
Բեսարաբիա *122, 126, 132, 145, 151*
Բերա (Բեյօղլի), *թաղամաս Ստամբուլում 15, 17, 18, 33, 39, 61, 225, 231, 236, 239*
Բերեջիկ *79*
Բերիյեթ ուլ Շամ, *հարթավայր Սիրիայում 55, 59, 230*
Բիթլիս *79, 81, 166, 198—200, 208, 234*
Բիթոլ *152*
Բյուզանդիոն *231*
Բոգդան, *էյալեթ Մոլդավիայում 73, 76*
Բոզոք, *սանջաք 27*
Բոմբեյ *127*
Բոյանա, *գետ 147*
Բոսնիա *102, 112, 121, 124, 128, 142, 143, 152, 154, 156, 157*
Բոսնիա-Հերցեգովինա *142*
Բոսֆոր, *նեղուց Սև ծովում 8, 19, 39, 229, 232*
Բրուսա *62, 116*
Բուլղարիա *103, 111, 119, 120, 124, 126, 128, 130, 131, 134, 137—141, 147, 152, 179, 183, 202*
Բուխարեստ *145, 207*
Բուրգազ, *նավահանգիստ Սև ծովում 141*

Գաբրովո *103*
Գալաց *148*
Գելիբոլի (Գալիպոլի) *23, 49, 50, 108, 110, 111, 115*
Գերմանիա *41, 103, 113, 129, 130, 137, 190, 201, 204, 206*
Գյումրի *տե՛ս Ալեքսանդրապոլ*
Գրանի. *վայր Քուրդիստանում 46*

Դալմացիա *147*
Դաղստան *70, 76*
Դամասկոս *13, 67, 180, 230*
Դանուբ, *գետ 74—76, 102, 103, 119—122, 134, 142, 145, 147, 148, 152*
Դարդանել, *նեղուց 19, 62, 75, 112, 114—116, 229*
Դելի բաբա *89*
Դիարբեքիր *13, 37, 44, 60, 65, 79, 81, 166, 173, 175, 176, 200, 201, 207*
Դիվրիկ *224*
Դոբրուջա *145, 152*
Դոպոլինցայի հովիտ *108*
Դրինայի հովիտ *119*
Դևե-Բոյնու, *կիրճ 96, 97*

Եգիպտոս *13, 39, 40, 52, 78, 208—210*
Եկատերինոսլավ *91*
Եմեն *180*
Ենիչեկալե *209*
Եվրոպա *42, 44, 47, 48, 52, 72, 73, 84, 112, 113, 123—125, 127—129, 131, 133, 134, 138, 143, 144, 149, 151, 153, 156, 167—169, 171, 172, 175, 179, 186, 187, 195, 210*
Երզնկա *79*
Երուսաղեմ *33, 183, 227*
Երևան *5, 85, 89*

Զաբլիաք *118*
Զայիմ *86, 87*
Զեյթուն *166, 180*
Զերք *45 5*
Զիլան *176*
Զիվին *87—90*
Զոփութ *104*

Էգեյան կղզիներ 62
Էգիրնե 27, 28, 42, 99, 102, 103, 106, 109—111, 113, 117, 123
Էբրոպոլ, *լեռնաշղթա* 103
Էյուբ, *թաղամաս Ստամբուլում* 227
Էջմիածին 184, 195
Էսքիշեհիր 54
Էրզրում 10, 12, 13, 20—23, 25—27, 38, 46, 59, 60, 62, 76, 80, 81, 88, 89, 92, 93, 95—98, 112, 149, 152, 160, 166, 169, 170, 189, 190, 194, 200, 207, 208
Էրղանի 79
Էֆլաք, *էյալեթ Վալախիայում* 17, 73, 76

Թաթար Փազարջըք 104, 109
Թաշ-Թեփե 21
Թավրիզ 79, 81, 233
Թարաբիա 204
Թելաֆեր, *բերդ* 46
Թեսալիա 121, 128, 132, 146, 155
Թերհալե 69
Թիար 65, 66
Թիմուրքափուներ 148
Թիֆլիս 21, 84, 86—88, 168, 210
Թոփխանե 204
Թոփկափու 229
Թոփրաք-Կալե 80, 81, 234
Թոքաթ 10, 173
Թուլչա (Թուլչի) 122, 147
Թունիս 154
Թուրքահայաստան 190
Թուրքիա 5—8, 11, 13, 14, 16, 17, 28, 33, 36, 37, 39, 41, 57, 71, 72, 74—76, 78, 80, 83, 103, 109, 112, 124, 126, 133, 138, 140, 153, 167—169, 171, 179—181, 184, 185, 189, 190, 192, 193, 195, 196, 203, 204 207. 209, 210, 223—231, 233, 234, 237—240

Իգդիր 89
Իզմիր 17, 41, 42, 52, 62, 65, 68, 159, 183
Իմերեթիա 70
Իսաքչի 122, 147
Իվրանիե, *գավառ* 144, 157
Իտալիա 101, 137, 154, 201, 204, 208, 225
Իրան 79—82, 126, 132, 149, 150, 152, 189, 190, 225, 233
Իրաք 234

Լագոսի ծովախորշ 130
Լազթեփե, *ամրոց* 93, 95
Լազիստան 158
Լարնաքա 153
Լեֆկոսիա 78
Լիբանան 199
Լոնդոն 75, 125, 130, 134, 137, 168, 180, 190—193, 197, 198, 201, 203, 205, 227
Լուֆչե 105

Խային Քյոյ 104
Խասքյոյ, *թաղամաս Ստամբուլում* 239
Խարբերդ 191, 200, 209
Խարսով, *գավառ* 122, 147
Խուդավենդիգյար, *սանջաք* 49, 50

Կաբարթայ 70
Կաղզվան 80
Կամազով 93
Կամամե, *եկեղեցի Երուսաղեմում* 33, 227
Կանդիա 66, 67
Կաշքա 118
Կասպից ծով 189
Կարադաղ, *ամրոց* 93—95
Կարահիսար-ի Շարքի 27, 54
Կարա-Քյոյ 63
Կարթալ (*Քարթալ*), *գավառ Ստամբուլի վիլայեթում* 42, 226
Կարին-Աբադ 28, 226
Կարլովա 104
Կարս, *բերդ* 20, 22, 23, 25, 26, 77, 80, 85, 88—93, 95, 96, 122, 135, 136, 150, 232
Կարս, *գետ* 23, 94, 95
Կեսարիա 10, 14, 19, 233
Կըզանլըք 106, 107
Կըրք-Քիլիսե 27
Կիպրոս, *կղզի* 76, 78, 135, 136, 152—154, 166—183, 189, 192

Կոբուր 132, 150, 152
Կոնարեկսնիլ 196
Կոսովո 152
Կովկաս 69, 85, 121, 168, 184, 185
Կոստանդնուպոլիս *տե՛ս Ստամբուլ*
Կրետե, *կղզի* 66, 67, 84, 121, 128, 144, 146, 155

Հաբեշստան 208
Հալեպ 13
Հայաստան 5, 36, 78, 79, 126, 131, 133, 136, 165, 167, 169, 172, 175, 180, 184, 188, 190, 199, 201, 210
Հանիա 67
Հաջի-օղլի Փազարջըք, *բերդ* 113
Հասանկալա, *բերդ* 27, 96, 169
Հաֆըզ (Հաֆըզ-փաշա), *ամրոց* 93—95
Հերցեգովինա 102, 112, 121, 124, 142, 143, 154, 156, 157
Հեքյար, *էյալեթ* 69
Հիսար 197
Հիսնի-Քեֆ 79
Հյունքյար Իսքելեսի, *նավահանգիստ Բոսֆորի նեղուցում* 52, 229
Հյուսիսային Ալբանիա 158
Հնդկաստան 125, 128
Հռոմ 17, 137
Հունաստան 9, 102, 144, 146, 150, 152, 154—156, 158

Ղալաթա (Ղալաթիա), *թաղամաս Ստամբուլում* 15, 17, 30, 33, 39, 41, 61, 62, 225, 227, 231, 236, 239
Ղարաքիլիսե 89
Ղարզա, *լեռներ Քուրդիստանում* 46
Ղրիմ 24, 75, 77, 113, 232

Մալաթիա 79, 127
Մալթա 153, 160
Մակեդոնիա 128, 179, 204, 205, 208
Մահմուդիե, *գավառակ Թուլչայի սանջաքում* 122, 147
Մանասթիր, *նահանգ* 119
Մանչեստր 190
Մաչին, *գավառակ Թուլչայի սանջաքում* 122, 147
Մարաշ 166
Մարդին 79
Մարզվան 172
Մարիցա, *գետ* 109
Մարմարա ծով 114, 115, 117, 231, 239
Մեգրելիա 70
Մեծ Բրիտանիա *տե՛ս Անգլիա*
Մեծ կղզի 114, 115
Մենբեշե 233
Մեչկա 100, 108
Մեջիդիյե, *գավառակ Թուլչայի սանջաքում* 122, 147
Մեստաքարասու, *գետ* 138
Մեքքա 234
Միլրիդիս, *վայր Ջիվինից արևելք* 89
Միխալիչ, *վայր Մարմարա ծովի ափին* 239
Միջերկրական ծով 14, 15, 17, 19, 62, 183, 236, 239, 240
Միջին Ասիա 190, 230
Մոլդավիա 73
Մոսուլ, *վիլայեթ* 64, 65
Մորա 9
Մուդանիա, *նավահանգիստ* 115
Մուխլիս, *ամրոց* 93
Մուշ 12, 13, 79, 81, 166, 173, 174, 197, 234

Յանինա 105, 121, 128, 132, 146, 152, 155
Յոզգադ 233

Նիշ, *բերդ* 8, 119, 143
Նիքշից 118, 146
Նովի Փազար 143, 157

Շամ *տե՛ս Դամասկոս*
Շեքաթել, *բերդ Սև ծովի ափին* 76
Շեքումթել, *գետ* 25
Շիպկայի կիրճ 103—106, 108, 109
Շիրվան 70
Շկոդրա 102
Շորաքի բլուրներ 93

Ոսկեղջյուր 231, 235

Չաթալջա 117
Չալդրան 233
Չանաք-կալե, *որս բերդ Դարդանելի նեղուցում* 232
Չանաք-կալե, *նեղուց տե՛ս Դարդանել*
Չեքանե 74
Չեռնոգորիա 83, 111—113, 118, 119, 142, 146, 147, 152, 154, 157, 158
Չեսթեր 202
Չերքեզստան 9, 29, 70
Չըլդըր, *էյալեթ* 22, 23, 28
Չիմ, *ամրոց* 93—95
Չիֆթիլեր (Չիֆթլիք), *ագարակ* 54
Չյուրուք-սու (Ճորոխ), *գետ* 25, 76
Չվարտիցա 104

Պարսկաստան *տե՛ս Իրան*
Պետերբուրգ 73, 103, 106, 110, 111, 128—130, 183, 184, 199, 201
Պերմ 94
Պիրոտ, *գավառ* 144
Պլովդիվ 103, 104, 106, 108—110, 119
Պլևնա 92, 99—101, 103, 109, 128
Պոդգորիցա 118, 146, 157
Պրուսիա *տե՛ս Գերմանիա*
Պրուտ, *գետ* 73, 74

Ջանիկ 26
Ջեբել-Դրյուզ, *լեռներ Սիրիայում* 17, 55, 230
Ջերմիկ 79
Ջիզրե 64, 65, 67

Ռազգրադ 113
Ռիոն 84, 90
Ռոդոպի լեռնաշղթա 109, 128
Ռումելի 8, 19, 28, 37, 39, 45, 59, 74, 101, 102, 121, 128, 146, 154, 183, 190, 223, 230
Ռումելի 197
Ռումինիա 112, 119, 120, 126, 128, 133, 141, 142, 144—148, 150, 152, 154, 158, 183
Ռուսահայաստան 185, 190
Ռուսաստան 18, 20, 23, 24, 28, 29, 52, 62, 69, 70, 73—76, 85, 90, 101, 106, 107, 111—115, 118—135, 137, 138, 142, 144, 145, 147—150, 152, 153, 158, 160, 164—166, 169, 171, 173, 183—186, 189, 194—196, 198—203, 207—209, 212, 229, 232
Ռուսչուք, *բերդ* 103, 112, 139

Սալոնիկ 113, 119, 124
Սամաթիա, *թաղամաս Ստամբուլում* 239
Սամակով 108
Սամսոն 190
Սան-Ստեֆանո 99, 111, 113, 117, 118, 121, 123—125, 130—133, 143, 145, 149, 150, 152—154, 164—166, 189, 195, 199
Սասուն 164, 166, 173, 174, 176, 181, 183—185, 195, 197, 198, 201
Սարուխան 233
Սեբաստիա 173, 200, 207
Սելվի 103
Սեմանդրա, *Կարթալի գավառի կենտրոնը* 226
Սեյդա 13, 17, 26
Սեն Նիկոլա, *լեռ* 105
Սենջար, *լեռ* 46, 79
Սերայ Բոսնիա 157
Սերբիա 83, 112, 119, 142—144, 146, 150, 152, 154, 157, 158
Սեփուչ 118
Սիլիստրե 74, 112
Սինե, *նեղուց, գավառ* 121, 122, 147
Սինոպ, *նավահանգիստ Սև ծովում* 74, 75
Սիրիա 230
Սկյուտար 17, 41, 42, 227
Սղերտ 79
Սյուվար, *ամրոց* 93—95
Սյուրմենե 25
Սողանլուի լեռներ 122
Սոֆիա 99, 100, 103, 104, 108, 110, 138
Սպիզա 147
Սվազ 10, 14, 21, 25—27, 44, 46
Ստամբուլ 8, 9, 11—20, 22, 24, 29, 30, 33, 36, 39—42, 45, 48, 51, 55, 57, 59—68, 70, 71, 73, 75, 78, 81, 83,

87, 92, 98—102, 105—108, 110, 111, 113—118, 121, 126, 128—130, 135, 140, 143, 155, 159, 160, 165, 167, 169, 176, 179, 180, 183, 184, 187, 191, 193, 195, 196, 198, 200—204, 209—212, 224—227, 229—234, 236—239
Ստրանջա 128
Ստրումա քարասու 138
Սուլթան Բայազիդ, *հրապարակ Ստամբուլում* 61
Սուխումի 76, 77, 85, 87
Սուրբ Նիկոլայ, *ամրոց Փոթիի մոտ* 85, 87
Սուրբ Օհանես, *հայկական հին վանք* 89
Սևաստոպոլ 75, 77, 94
Սև ծով 19, 74—76, 84, 112, 120, 126, 130, 141, 150, 154, 189, 235

Վալախիա 17, 73
Վան 38, 62, 89, 186, 190, 198, 200, 209, 210, 231
Վանա լիճ 89, 166, 173
Վառնա 100, 138, 139, 141
Վիդին 8, 69, 112
Վիեննա 44, 73, 123, 124, 156, 196
Վլադիկավկազ 91, 95
Վոլոս, *նավահանգիստ* 155
Վոսփոր *տե՛ս Բոսֆոր*
Վրաստան 70, 168, 233

Տաճկաստան 233
Տիգրիս, *գետ* 175
Տրապիզոն 9, 11, 12, 24, 26—29, 96, 98, 126, 152, 180, 182, 204, 233
Տրենտինո 154
Տրիեստ 154, 225
Տրնովո 119, 138
Տրոյանի կիրճ 104, 108

Ուսակ, *բերդ* 64
Ուրմիայի լիճ 79
Ուրֆա 79, 207

Փարիզ 44, 75, 76, 124, 131, 133, 137, 147, 168, 202, 209, 227, 232
Փոթի 24, 85, 87
Փոքր Իզվորնիկ 119

Քաաբե, *սրբավայր Մեքքա քաղաքում* 234
Քանդիլ 197
Քանլը, *ամրոց* 93, 94
Քերքուք 79
Քիլիա, *գավառ Թուլչայի սանջաքում* 122, 147
Քյոսթենջե, *գավառ Թուլչայի սանջաքում* 122, 147
Քյոփրյու-քյոյ 96
Քյութահիա 52
Քոնիա 52
Քութաիսի 87
Քում-քափու, *թաղամաս Ստամբուլում* 239
Քուրդիստան 44, 46, 65—68, 79, 126, 233

Օրթլուք-քյոյ 108
Օլբանջայ 74
Օլթի 21, 40
Օլկոն, *նավահանգիստ* 146
Օձի կղզիներ 145, 147
Օսմանյան երկիր *տե՛ս Թուրքիա*
Օսմանյան կայսրություն *տե՛ս Թուրքիա*
Օրխանիե 103
Օֆի 25

Ֆաշի բերդ *տե՛ս Փոթի*
Ֆեներ, *թաղամաս Ոսկեղջյուրում (Ստամբուլ)* 183, 235
Ֆիզան 174
Ֆրանսիա 29, 32, 66, 74, 75, 113, 129, 154, 160, 179—181, 185, 190, 195, 196, 198—204, 207, 209, 210, 212
Ֆրիդրիխսրուհե 129—130

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արևելագիտության ինստիտուտի կողմից 5

Ահմեդ Լութֆի 6

Թարիխ-ի Լութֆի 8

Հատոր I 8

Հատոր II 18

Հատոր III 36

Հատոր IV 39

Հատոր V 41

Հատոր VI 51

Հատոր VII 54

Հատոր VIII 59

Աբդուրահման Շերեֆ 71

Աբդուրահման Շերեֆի «Օսմանյան պետության պատմությունը» . 72

Մեհմեդ Քյամիլ Փաշա 78

Օսման Նուրի 83

Աբդուլ Համիդ II *և նրա իշխանության շրջանը* . . . .

Հատոր I 84

Հատոր III (Հայկական հարցը) 164

Резюме 214

Summary 218

Ծանոթագրություններ 225

Հավելված 236

Անձնանունների ցանկ 247

Տեղանունների ցանկ 253

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Դ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ
ԳԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր
Հ. Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Հրատարակչական խմբագիր
Ս. Ա. ԱՆԱՍՏԱՍՅԱՆ
Նկարչ. ձևավորումը՝
Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ
Տեխնիկական խմբագիր
Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ
Ա. Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՎՖ 03743 Պատվեր 194 Տպաքանակ 3000
ԽՀԽ 1203: Հրատ. 3142: Հանձնված է արտադրության 12/XI 1970 թ.
ստորագրված է տպագրության 22/VI 1972 թ., տպագր. 16,25 մամուլ,
հրատ. 13,71 մամուլ, թուղթ № 1, 60×901/16: Գինը 1 ռ. 10 կ.:
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան,
Երևան, Բարեկամության 24